



IOM • OIM

Միգրացիայի միջազգային կազմակերպություն



Հայաստանի Հանրապետության
ազգային վիճակագրական ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՁԵԿՈՒՅՑ



Եվրոպական միություն



Միավորված ազգերի
կազմակերպության Եվրոպայի
հարցերով տնտեսական
հանձնաժողով



Հայ-ռուսական
(ալվժնական)
համալսարան



IOM • OIM

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն



ՀՀ անրապետության
ազգային վիճակագրական
ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան
2014



Եվրոպական
միություն



UNECE

Միավորված ազգերի
կազմակերպության
Եվրոպայի հարցերով
տնտեսական
հանձնաժողով



Հայ-ռուսական
(սլավոնական)
համալսարան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ Հ 247 ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.- 214էջ:

Հետազոտությունն իրականացվել է և զեկույցը պատրաստվել է Ջորջթաունի համալսարանի միջազգային միգրացիայի ինստիտուտի կողմից Ջոն Դ. և Քեթրին Թ. ՄակԱրթուր հիմնադրամի միջոցներով ֆինանսավորվող՝ ՄՄԿ-ի «Հայաստանի տնտեսական զարգացման ու աղքատության նվազեցման հարցում միգրացիայի դերի վերաբերյալ գիտելիքների ու քաղաքականության մասով երկխոսության մակարդակի բարձրացում» ծրագրի և Եվրոպական միության ու ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող՝ «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության Պետական կոմիտեի ֆինանսավորմամբ ՀՌՀ «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատումը ընտրանքային հետազոտության միջոցով» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի հեղինակ՝ Պեդրո Գոիշ

Չնայած ՄՄԿ-ն փորձում է ապահովել այս հրատարակության բովանդակության ճշգրտությունն ու ամբողջականությունը, այնուամենայնիվ, դրանում ներկայացված տեսակետները, տվյալները, մեկնաբանությունները և եզրակացությունները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄՄԿ-ի, իր անդամ պետությունների կամ սույն զեկույցի պատրաստմանը աջակցած այլ կազմակերպությունների՝ Եվրոպական միության, Ջորջթաունի համալսարանի, Ջոն Դ. և Քեթրին Թ. ՄակԱրթուր հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի պաշտոնական դիրքորոշումը:

ՄՄԿ-ն պատասխանատվություն չի կրում որևէ կորստի կամ վնասի համար, որը կարող է առաջանալ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները հիմք ընդունելու կամ դրանք օգտագործելու հետևանքով:



Հրատարակիչ՝ **Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելություն**
Հայաստան, քաղ. Երևան, 0010, ՄԱԿ-ի տուն, Պետրոս Ադամյան 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92
Ֆաքս՝ (+374 10) 54 33 65
<http://www.iom.int>

© **Հեղինակային իրավունք.** բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:

**Հայաստանում միգրացիայի վերաբերյալ
տնային տնտեսությունների
հետազոտության մասին զեկույց**

Նախաբան, ներածական մաս, հակիրճ նկարագրություն, երախտիքի խոսքեր

Սույն հետազոտությունը Հայաստանում միգրացիայի ոլորտի ամենաընդգրկուն մասնագիտական հետազոտությունն է: Հետազոտությունն ընդգրկել է 7890 տնային տնտեսություններ, մի ընտրանք, որով ապահովված են ներկայացուցչական տվյալներ ոչ միայն ազգային, այլ նաև Հայաստանի վարչատարածքային բաժանման միավորների (մարզերի) մակարդակով: Հետազոտությունում վերլուծության են ենթարկվում ոչ միայն ներքին ու արտաքին տեղաշարժերը, ներգաղթի և արտագաղթի ու վերադարձի հետ կապված հարցերը, այլ նաև միգրանտների խնայողություններն ու դրամական փոխանցումները և բնակչության ու տնային տնտեսությունների վրա միգրացիայի զարգացման ազդեցությունը:

Հետազոտությունը եզակի էր նրանով, որ այն օգտագործել է երեք ծրագրերի ռեսուրսները՝ ապահովելով միջազգային զարգացման դերակատարների և Հայաստանի Հանրապետության պետական ռեսուրսների խմբավորումը: Հետազոտությունն իրականացվել է ՄՄԿ երկու ծրագրերի շրջանակներում՝ «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում (ֆինանսավորված Եվրոպական հանձնաժողովի ու ՄՄԿ Զարգացման հիմնադրամի կողմից) և «Հայաստանի տնտեսական զարգացման ու աղքատության կրճատման գործում միգրացիայի դերի վերաբերյալ գիտելիքների ու քաղաքական երկխոսության խթանումը» ծրագրի շրջանակներում (ֆինանսավորված Զորջթաունի համալսարանի միջազգային միգրացիայի ինստիտուտի կողմից՝ Զոն Դ. և Բեթթին Թ. ՄակԱրթուր հիմնադրամի միջոցներով), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն իրավիճակի գնահատում ընտրանքային հետազոտության միջոցով» ծրագրի շրջանակներում (ֆինանսավորված Կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից ու իրականացված Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի (ՀՌՀ) կողմից:

Նախքան հետազոտության իրականացումը՝ ՄՄԿ-ն կազմակերպել է Հայաստանում միգրացիոն տվյալների վերաբերյալ վերապատրաստման խորացված դասընթաց: 2009-2010 թվականներին անցկացվել է միգրացիոն տվյալների վերաբերյալ կարիքների գնահատում: Հիմք ընդունելով «Միգրացիոն տվյալների կառավարման հետ կապված կարիքների գնահատումը Հայաստանում» ՄՄԿ պատրաստած փաստաթղթի¹ (որով համակարգված ուղի է առաջարկվում միգրացիոն վիճակագրական տվյալների հավաքագրման, փոխանակման ու վերլուծության համար, ինչպես պահանջվում է միջազգային և տարածաշրջանային չափանիշներով) արդյունքները՝ միգրացիոն տվյալների հավաքագրման ու համապատասխան մարմինների հետ փոխանակման կայուն համակարգի համար նախատեսված սկզբունքները ձևավորվել են որպես երկրում միգրացիոն թվաքանակների ու հոսքերի մասին պարբերական զեկույցի պատրաստման համար՝ միջազգայնորեն համեմատելի ու երկրին ներհատուկ մեթոդաբանություն ու ընթացակարգեր: Հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է «Հայաստանում միգրացիայի նպատակների և առանցքային թեմաների, դրա ազդեցության ու դրամական փոխանցումների հետազոտության» շրջանակներում: Միգրացիայի շուրջ համազգային հետազոտության նպատակները և հետազոտության հարցաշարը մշակվել են ՄՄԿ-ի կողմից՝ ծրագրի գործընկերների հետ համագործակցությամբ և քննարկվել են Հայաստանի միգրացիոն տվյալների հավաքման ու քաղաքականության մշակման ու իրականացման հարցերում ներգրավված հիմնական շահագրգիռ մարմինների հետ:

«Հայաստանում միգրացիայի նպատակների և առանցքային թեմաների, դրա ազդեցության ու դրամական փոխանցումների 2013 թվականի հետազոտության» նպատակներն են՝ i) Հայաստանում միգրացիայի գերակշռության խնդրի գնահատումը, ii) միգրանտների հիմնական կատեգորիաների նախանշումը, iii) միգրանտների և տնային տնտեսությունների վրա միգրացիայի ազդեցության գնահատումը, iv) դրամական փոխանցումների ձևերի և միգրանտների ու տնային տնտեսությունների ընդհանուր ֆինանսական դրության նկարագրումը: Արդյունքները համեմատվել են ԱՄԿ 2006 և

1 Մանկե, Մարինա, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Միգրացիոն տվյալների հավաքագրման, մշակման և փոխանակման կատարելագործումը Հայաստանի Հանրապետությունում. կարիքների գնահատում և առկա բացերի վերլուծություն» զեկույց, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, 2010 թվական: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1178



2007 թթ. ուսումնասիրության,² ինչպես նաև, ՄԱԲՀ 2007-2008 թթ. հետազոտության³ արդյունքների հետ: 2013 թվականի հետազոտության մեջ արտացոլված են՝ i) Հայաստանում միգրացիայի ընդհանուր հատկանիշները, ii) Հայաստանում միգրացիայի հիմնական տեսակները, iii) միգրանտների առանձնահատկությունները (սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական/հմտությունների նկարագիրը)՝ ամբողջ բնակչության համեմատությամբ, iv) միգրացիայի ազդեցությունը (առողջություն, ֆինանսական բարեկեցություն, աշխատանքային գործունեության առաջընթաց, սոցիալական ազդեցություն, դրամական փոխանցումներ և դրանց օգտագործում): Այդ նպատակների հիման վրա մշակվել է հետազոտության մեթոդաբանությունը, որի հիմքում միգրացիոն տվյալների հավաքագրման ու Հայաստանում տարածման վերաբերյալ միջազգային ու ԵՄ չափանիշներն են:

Հետազոտության մեթոդաբանությունը և հարցաշարը մշակվել են Հայաստանի շահագրգիռ հաստատությունների ներկայացուցիչների հետ, ինչպես օրինակ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև համապատասխան միջազգային կազմակերպությունների՝ ՄՄԿ և Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) ներկայացուցիչների հետ:

Հայաստանում համազգային հետազոտությունն իրականացնելիս ՄՄԿ-ն համագործակցել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի (ՀՌՀ) հետ, ինչը հնարավորություն տվեց ավելի ընդլայնել միգրացիայի վերաբերյալ հետազոտության շրջանակը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ու ՀՌՀ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն իրավիճակի գնահատման ընտրանքային հետազոտություն» ծրագրով նախատեսվում է իրականացնել ընտրանքային հետազոտություն միգրացիոն հոսքերի ծավալն ու կառուցվածքը գնահատելու համար: Գործողությունների փոխլրացումն ապահովելու և կրկնակի ջանքեր գործադրելուց խուսափելու համար՝ Ծրագրով զբաղվող թիմը ՀՀ Միգրացիոն պետական ծառայության (ՄՊԾ) և համապատասխան այլ շահագրգիռ մարմինների հետ բանակցություններ է սկսել այն հարցերի շուրջ, թե ինչպես միավորել սույն Ծրագրով նախատեսվող ռեսուրսները և պետական ֆինանսավորումը՝ առավել մեծ ազդեցություն և առավել բարձր որակ ապահովելու համար: Արդյունքում, Ծրագրով զբաղվող թիմը, ՀՀ Միգրացիոն պետական ծառայությունը և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, ՀՌՀ-ը համաձայնել են իրականացնել առավել մեծ թվով տնային տնտեսություններ ներառող առավել համապարփակ հետազոտություն՝ միգրացիայի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման գոյություն ունեցող մեթոդաբանության մանրակրկիտ վերլուծությամբ և միջազգային գործելակերպերին ու չափանիշներին դրա համապատասխանության ապահովմամբ: Այդ առնչությամբ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՄՄԿ-ի և ՀՌՀ-ի միջև կնքվել է միգրացիոն հետազոտության շուրջ փոխգործակցությանն առնչվող՝ Համագործակցության մասին եռակողմ հուշագիր: Համագործակցության մեկ այլ երկկողմ հուշագիր է ստորագրվել ՄՄԿ-ի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միջև՝ հետազոտության իրականացման շուրջ համագործակցության շրջանակը և հետազոտության եղանակները սահմանելու համար:

ՀՌՀ-ի և ՄՄԿ-ի միջև աշխատանքի բաժանումը կատարվել է հետևյալ կերպ:

ՀՌՀ-ն մասնակցել է հետազոտության մեթոդաբանության, հարցաշարերի և այլ գործիքների մշակմանը և հովանավորել ու իրականացրել է դաշտային աշխատանքները՝ հարցում անցկացնելով 2200 ընտրանքային տնային տնտեսություններում (Երևանում):

2 Աշխատանքի միջազգային կազմակերպություն և ՀՀ ԱՎԾ, Հայաստանում Աշխատանքային միգրացիայի ուսումնասիրություն 2007 (<http://www.armstat.am/am/?id=555&nid=81>), և Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Միգրացիա և զարգացում: Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, 2009 (http://www.ilo.org/public/russian/region/eurpro/moscow/info/publ/migr_dev_study_arm.pdf).

3 ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2007 թվական, «ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն» իրականացված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, Երևան http://www.armstat.am/file/article/rep_migr_08e.pdf: Գնահատում է 2002-2007 թթ-ին (մինչ հետազոտության անցկացումը նախորդող ժամանակաշրջանը) երկրում արձանագրված սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետևանքով հանրապետության արտաքին և ներքին միգրացիոն միտումներում արձանագրված փոփոխությունները, ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերում ներգրավված բնակչության առանձին համախմբերի ծավալային և որակական բնութագրիչները, նրանց սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական բնութագրերը և նրանց հետագա միգրացիոն ծրագրերը:



ՄՄԿ-ի իրականացրած ծրագրերը հովանավորել են հարցում անցկացնող բոլոր անձանց վերապատրաստումը, հետազոտության մեկնարկը, հարցաշարերի հրապարակումը, 5690 տնային տնտեսություններում դաշտային աշխատանքների իրականացումը, 7890 (ՄՄԿ և ՀՌՀ) հարցաշարերի տվյալների մուտքագրումն ու կողմավորումը, միջազգային փորձագետի կողմից հետազոտության վերաբերյալ վերլուծական զեկույցի կազմումը, վերջնական զեկույցի հայերեն թարգմանությունը և զեկույցի հրապարակումը հայերենով ու անգլերենով:

Զեկույցը մշակվել է միջազգային փորձագետի կողմից, իսկ ՄՊԾ-ն և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (վերջինս միայն մեթոդաբանական մասով) ներկայացրել են իրենց դիտողությունները դրա վերաբերյալ:

Զեկույցը հրատարակվել է ՄՄԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամի գումարներով:

Հարցման արդյունքում հավաքվել է մեծածավալ տեղեկատվություն և մեկ զեկույցում հնարավոր չէր անդրադառնալ բոլոր հարցերին: Այս առումով հարցման շտեմարանը՝ անվանազերծված տվյալների բազան, առկա է առցանց (<http://armstat.am/file/doc/99486863.7z>) և կարող է օգտագործվել Հայաստանում միգրացիայի վերաբերյալ հետազոտությունների համար:

Արդյունավետ աշխատանքի համար երախտագիտություն ենք հայտնում հետազոտության և դրա արդյունքներով զեկույցի վրա աշխատած թիմի անդամներին՝ Պեդրո Գոիշին (զեկույցի հեղինակ), Մարինա Մանկեին (մեթոդաբանության մշակում և ուսուցում), Զեյսոն Շախտերին (մեթոդաբանության մշակում և ուսուցում), Թոմաս Մորթենսենին (ուսուցում), Ռուբեն Եգանյանին (ՀՌՀ-ից հետազոտության աշխատանքների համակարգող), Լուսինե Քալանթարյանին (ԱՎԾ), Կարինե Կույունջյանին (ԱՎԾ), Քրիստինա Գալստյանին (ՄՄԿ ծրագրերի ղեկավար), Նունե Ասատրյանին (ՄՄԿ), որոնք բոլորն էլ օժանդակել են հետազոտության աշխատանքներին:


Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Ծրագրի դոնորներին՝ Եվրոպական միությանը, Ջոն Դ. և Քեթրին Թ. ՄակԱրթուր հիմնադրամին, ՄՄԿ Զարգացման հիմնադրամին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ Հայաստանում միգրացիոն տվյալների կառավարման հարցում տեխնիկական աջակցության հնարավորություն ընձեռելու և հետազոտությունն ու զեկույցը ֆինանսավորելու հարցում նրանց ֆինանսական աջակցության համար:


Հետազոտության և զեկույցին մեծապես նպաստել են Հայաստանի Կառավարության պաշտոնյաների, գիտական շրջանակների ու միջկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների ներդրումն ու ուղղորդումները: Ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Հայաստանի վիճակագրության պետական խորհրդին և մասնավորապես պարոն Գազիկ Գևորգյանին նրա արժեքավոր ուղղորդումների ու աջակցության համար: Շատ երախտապարտ ենք Հայաստանի միգրացիոն պետական ծառայության և դրա ղեկավար պարոն Գազիկ Եգանյանի կողմից ստացված ուղղորդումների համար:

Թիմի աշխատանքն արդյունավետ իրականացված չէր լինի առանց Հայաստանի Կառավարության արժեքավոր աջակցության, որը օգնություն է ցուցաբերել փորձագիտական թիմի ընդունելության և ուղեկցության հարցում, մասնավորապես, ի թիվս այլ կառույցների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել համագործակցության համար Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանին՝ ի դեմս ռեկտոր ակադեմիկոս Ա. Դարբինյանի, և ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեին:

Մեր երախտիքի խոսքն ենք հղում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովին:

Լիահույս ենք, որ հետազոտության և զեկույցի հիմնական արդյունքները լայնորեն կօգտագործվեն ավանավորման համար:


Ազգային վիճակագրական
ծառայության նախագահ


ՄՄԿ Հայաստանյան առաքելության
գրասենյակի ղեկավար



Բովանդակություն

Նախաբան, ներածական մաս, հակիրճ նկարագրություն, երախտիքի խոսքեր	4
Բովանդակություն	7
Հապավումների ցանկ	9
Աղյուսակների ցանկ	10
Գծապատկերների ցանկ	12
Ամփոփ նկարագիր	14
Գլուխ 1. Ներածություն	34
Գլուխ 2. Հետազոտության պլանը, իրականացումն ու մեթոքանությունը	40
Հետազոտության նպատակն ու խնդիրները	40
Տնային տնտեսությունների ընտրությունը	42
Կշիռների հաշվարկը	43
Հետազոտության իրականացումը	43
Հետազոտության կազմակերպումը	44
Դաշտային աշխատանքների ժամանակ առաջացած խնդիրները	44
Չպատասխանելու հատվածը	44
Տվյալների հետ կապված սահմանափակումները	45
Օգտագործված հարցաշարերի նկարագիրը (Հարցաշարի բովանդակությունը)	46
Տվյալների մուտքագրումը և տվյալների մշակումը (տվյալների կոդավորումն ու ստուգումը)	47
Համապատասխանությունն ու խաչաձև ստուգումը	48
Գլուխ 3. Հետազոտված տնային տնտեսությունների առանձնահատկությունները (Տնային տնտեսության ցանկը)	50
Ընտրանքային բնակչության նկարագրությունը	51
Տնային տնտեսության չափը	53
Ժողովրդագրական առանձնահատկությունները	54
Հետազոտված տնային տնտեսության անդամների բաշխումը՝ ըստ սեռի և տարիքի	54
Հետազոտված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ծննդավայրի	56
Հարցված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ազգության	56
Հարցված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ մայրենի լեզվի	57
Հարցված տնային տնտեսությունների անդամների ընտանեկան դրությունը	57
Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ կրթության մակարդակի	58
Հետազոտված տնային տնտեսությունների տնտեսական առանձնահատկությունները	60
Հետազոտված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության հատվածը	65
Հարցված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության հատվածը	67
ՀՀ բնակչության միգրացիոն պոտենցիալը	69
Կրթական մակարդակը և միգրացիայի ուղին բռնելու մտադրությունը	71
Մոտ ապագայում միգրացիայի ուղին բռնելու մտադրությունը	72
Պոտենցիալ միգրանտների շարքում միգրացիայի պատճառները	72
Տնային տնտեսության նախկին անդամների միգրացիան	74
Միգրացիոն միջոցառումներում ներգրավված՝ տնային տնտեսության անդամները 2007 թվականից ի վեր	74
Գլուխ 4. Միգրանտ բնակչության առանձնահատկությունները (արտահոսքերը) (արտագաղթածները)	77
Սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները	77
Կրթության և արտագաղթի միջև կապը	79
Նպատակակետ երկրները	84
Նպատակակետ երկրում արտագաղթածների կարգավիճակը	86



Ցանցերն ու միջնորդները.....	87
Նպատակակետ երկրում միգրանտների տնտեսական առանձնահատկությունները.....	88
Նպատակակետ երկրում արտագաղթածների տնտեսական կարգավիճակը	89
Շրջանառության և միգրացիայի միջև կապը բացահայտելը.....	90
Միգրանտի ու իր ընտանիքի անդամների միջև հաղորդակցությունն ու կապը.....	92
Միգրացիոն ծրագրի շարունակական գնահատումն ու պլանները.....	93
Միգրացիան Հայաստանի Հանրապետությունից մինչև 2007 թվականը	93
Ապագա միգրացիոն պլանները.....	95
Միգրանտ ուղարկող տնային տնտեսությունների սոցիալական կարգավիճակում փոփոխությունը	97
Գլուխ 5. Վերադարձած միգրանտների առանձնահատկությունները	98
Վերադարձած միգրանտների ժողովրդագրական առանձնահատկությունները	98
Միգրացիան և «ուղեղների ներհոսքը» ու Միգրացիան և «հմտությունների ներհոսքը»	101
Նպատակակետ երկրում վերադարձած միգրանտների ցանցը.....	102
Հյուրընկալող երկրները՝ նախքան վերադարձը	104
Հյուրընկալող երկրում վերադարձած միգրանտների կարգավիճակը	105
Տնտեսական ներգրավվածությունը նպատակակետ երկրում.....	106
Խնդիրներն արտերկրում	111
Վերադառնալու պատճառները.....	113
Վերախնտեգրման ծրագրերը.....	115
Գլուխ 6. Միգրանտ բնակչության առանձնահատկությունները (ներհոսքերը, այդ թվում՝ դեպի ԼՂ), (ներգաղթածները)	116
Օտարերկրյա պետություններից միգրացիայի ուղին բռնած՝ հարցված տնային տնտեսությունների առանձնահատկությունները	119
Ազգությունը՝ ի տարբերություն նորեկների քաղաքացիության.....	120
Հայաստանի Հանրապետությունը՝ որպես նպատակակետ երկիր	121
Բնակչության ներհոսքերի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները	122
Իրավական կարգավիճակը և ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունը.....	125
Գլուխ 7. Փոխանցումները, դրանց օգտագործումը և ֆինանսական բարգավաճումը.....	127
Ներկայիս արտագաղթածների կողմից ՀՀ կատարված փոխանցումները	129
Վերադարձած միգրանտների կողմից ՀՀ կատարվող փոխանցումները	130
Արտերկրից ֆինանսական աջակցությունը փոխանցելու եղանակները	131
ՀՀ-ում արտերկրից փոխանցումներ ստացող տնային տնտեսությունները	132
Միգրացիոն փոխանցումների տնտեսական ազդեցությունը	133
ՀՀ-ից օտարերկրյա պետություններում ապրող տնային տնտեսություններին կատարվող փոխանցումները.....	134
Արտերկրից ստացված փոխանցումների օգտագործումը.....	135
Եզրակացություններ և առաջարկություններ.....	137
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	145
Հավելվածներ/լրացումներ	147



Հապավումների ցանկ

ԱՄԿ՝	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ՝	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ դոլար՝	Միացյալ Նահանգների դոլար
ԱՍՀՆ	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ՝	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԵՀ՝	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ՝	Եվրոպական միություն
ԵՎՐՈ՝	Եվրոպական արժույթ
ԵՊՀ՝	Երևանի պետական համալսարան
ԿՊՀՀ՝	Կենսապայմանների համալիր հետազոտություն
ԼՂ՝	Լեռնային Ղարաբաղ
ՀԴ՝	Հայկական դրամ
ՀԿ՝	Հասարակական կազմակերպություն
ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՀՌՀ՝	Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
ՄԱԿ ԵՏՀ՝	Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՄԱԿ՝	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ՝	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԱԿ ԲՀ՝	Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամ
ՄԹ՝	Միացյալ Թագավորություն
ՄՄԿ՝	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՌԿ՝	Միգրացիոն ռեսուրս կենտրոն
ՌՌ՝	Ռուսական ռուբլի
ՌԴ՝	Ռուսաստանի Դաշնություն
ՎՅՈՒ՝	Վեստերն Յունիոն
ՏՆՏ՝	Տնային տնտեսություն



Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1.	Ընտրանքի հիմնական առանձնահատկությունները	42
Աղյուսակ 2.	Չպատասխանելու պատճառներն ու կշիռը	45
Աղյուսակ 3.	Հետազոտված տնային տնտեսությունների թիվն ու բաշխումը՝ ըստ մարզերի	51
Աղյուսակ 4.	Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսության անդամներն ըստ մարզերի՝ թվաքանակով և տոկոսով	52
Աղյուսակ 5.	Հետազոտված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ բնակչության վայրերի, 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ	52
Աղյուսակ 6.	Այն տնային տնտեսությունների բաշխումը, որոնք փոխել են իրենց կացարանը՝ տեղափոխման հիմնական նպատակով	53
Աղյուսակ 7.	Հետազոտված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ անդամների թվի	54
Աղյուսակ 8.	Հետազոտված բնակչության տարիքային կազմը՝ ըստ սեռի (%)	55
Աղյուսակ 9.	Հետազոտված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ ծննդավայրի	56
Աղյուսակ 10.	Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ազգության և սեռի (%)	56
Աղյուսակ 11.	Տանը հաղորդակցման հիմնական լեզուն՝ ըստ հարցվածների ազգության (հիմնական ազգություններ) (%)	57
Աղյուսակ 12.	Ընտանեկան դրությունը՝ ըստ սեռի (%)	57
Աղյուսակ 13.	Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ կրթության մակարդակի	58
Աղյուսակ 14.	Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ տարիքային խմբի	58
Աղյուսակ 15.	Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ բնակչության մարզի ...	59
Աղյուսակ 16.	Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ սեռի (%)	60
Աղյուսակ 17.	Հարցված տնային տնտեսությունների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ սեռի (%)	61
Աղյուսակ 18.	Հարցված տնային տնտեսությունների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ տարիքային խմբերի (%)	62
Աղյուսակ 19.	Հարցված տնային տնտեսությունների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ հարցվածների բնակության մարզի (%)	62
Աղյուսակ 20.	Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ սեռի (%)	63
Աղյուսակ 21.	Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ տարիքային խմբի (%)	64
Աղյուսակ 22.	Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ մարզի (%)	64
Աղյուսակ 23.	Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ սեռի (%)	65
Աղյուսակ 24.	Տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ մարզի (%)	65
Աղյուսակ 25.	Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ տարիքային խմբերի (%)	66
Աղյուսակ 26.	Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ սեռի (%)	67
Աղյուսակ 27.	Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը՝ ըստ մարզի (%)	68
Աղյուսակ 28.	Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը՝ ըստ տարիքային խմբերի (%)	68
Աղյուսակ 29.	Հետազոտված տնային տնտեսության անդամների աշխատանքի վայրը՝ ըստ սեռի (%)	69
Աղյուսակ 30.	3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ սեռի (%)	70



Աղյուսակ 31. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ սեռի (կշռված ընտրանք)	70
Աղյուսակ 32. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ ընտանեկան դրության (%)	71
Աղյուսակ 33. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ կրթական մակարդակի (%)	71
Աղյուսակ 34. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ տարիքային խմբերի (%)	72
Աղյուսակ 35. 3 և ավելի ամսով միգրացիոն ուղևորության մեկնած (2007 թվականից ի վեր) տնային տնտեսության անդամները՝ ըստ մարզերի.....	75
Աղյուսակ 36. 2007 թվականից ի վեր միգրացիոն ուղևորության մեկնածները՝ ըստ տարիքային խմբերի	75
Աղյուսակ 37. Ուղևորության տարին՝ ուղևորության նպատակի հետ համեմատությամբ (%).....	76
Աղյուսակ 38. 2007 թվականի հունվարից հետո արտերկիր մեկնած տնային տնտեսության անդամները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված).....	78
Աղյուսակ 39. 2007 թվականի հունվարից հետո արտերկիր մեկնած տնային տնտեսությունների անդամները՝ ըստ մարզերի.....	79
Աղյուսակ 40 Արտագաղթածների կրթական կարգավիճակը.....	80
Աղյուսակ 41. Արտերկիր մեկնած՝ տնային տնտեսությունների հարցված անդամների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (%)	81
Աղյուսակ 42. Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը՝ արտագաղթածների սոցիալ-տնտեսական կարգավիճակը	81
Աղյուսակ 43. Վերջին ուղևորության երկիրը/մարզը.....	85
Աղյուսակ 44. Ուղևորության ամիսը (կշռված).....	91
Աղյուսակ 45. Հետազոտված տնային տնտեսությունների՝ ՀՀ-ից արտագաղթածների բաշխումը՝ ըստ սեռի.....	93
Աղյուսակ 46. Մինչև 2007 թվականը ՀՀ-ից մեկնած՝ տնային տնտեսության հարցված անդամների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (%)	94
Աղյուսակ 47. Վերադարձած միգրանտների կրթական կարգավիճակը.....	94
Աղյուսակ 48. Վերադարձած միգրանտների կրթական կարգավիճակը	100
Աղյուսակ 49. Հայաստանից վերադարձած միգրանտների կողմից արտերկրում ստացած կրթությունը (%)	101
Աղյուսակ 50. Միգրացիայի նախնական փուլում հարազատների (ընկերների) կողմից աջակցությունը	102
Աղյուսակ 51. Միգրացիոն ուղևորությանը աջակցելու բնույթը	102
Աղյուսակ 52. Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը և վերադառնալուց հետո վերադարձածների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (%).....	108
Աղյուսակ 53. Ներքին միգրանտների կրթական կարգավիճակը (%).....	119
Աղյուսակ 54. Մինչև Հայաստան ժամանելը՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակը.....	122
Աղյուսակ 55. Տնային տնտեսության կեցության միջոցների հիմնական ընթացիկ աղբյուրները (%)....	133



Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1.	Հետազոտված տնային տնտեսությունների անդամների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի և ընտրված տարիքային խմբերի.....	55
Գծապատկեր 2.	Մեկնելու պատճառները (%).....	73
Գծապատկեր 3.	Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ արտագաղթածների համախառն եկամուտը (%)	83
Գծապատկեր 4.	ՀՀ-ից միգրացիայի հիմնական պատճառները (%).....	84
Գծապատկեր 5.	Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառները (%).....	86
Գծապատկեր 6.	Կարգավիճակը նպատակակետ երկրում	86
Գծապատկեր 7.	Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ նպատակակետ երկրում ընտանիքից (ընկերներից) ստացված աջակցությունը	87
Գծապատկեր 8.	Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ նպատակակետ (հյուրընկալող) երկրում ընտանիքից (ընկերներից) ստացվող աջակցության համեմատումը (արտագաղթածներ՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ).....	88
Գծապատկեր 9.	Աշխատանքի առաջարկի համար պատասխանատու անհատը կամ կառույցը	89
Գծապատկեր 10.	Հաջորդական ուղևորությունների բաշխումը՝ ըստ միգրանտների (%).....	91
Գծապատկեր 11.	Բացակայողի ընտանիքի և (կամ) ընկերների հետ հաղորդակցումը (%).....	92
Գծապատկեր 12.	Ժամանակակից արտագաղթածների ապագա պլանները	96
Գծապատկեր 13.	Վերադառնալու հիմնական պատճառները.....	96
Գծապատկեր 14.	Արտերկրից վերադարձածները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված)	99
Գծապատկեր 15.	Արտերկրից վերադարձած տնային տնտեսությունների անդամները՝ արտագաղթածների հետ համեմատությամբ՝ ըստ մարզերի	100
Գծապատկեր 16.	Մեկնելու պատճառները (վերադարձած միգրանտներ).....	103
Գծապատկեր 17.	Մեկնելու պատճառները (վերադարձած միգրանտների, պոտենցիալ միգրանտների, արտագաղթածների համեմատություն)	103
Գծապատկեր 18.	Վերադարձած միգրանտների դեպքում կոնկրետ հյուրընկալող երկրի ընտրության հիմնական պատճառները (%).....	104
Գծապատկեր 19.	Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառների համեմատությունը (վերադարձած միգրանտներ՝ արտագաղթածների հետ համեմատությամբ) (%)	104
Գծապատկեր 20.	Հյուրընկալող երկրում վերադարձած միգրանտների կարգավիճակը.....	105
Գծապատկեր 21.	Հյուրընկալող երկրում վերադարձած միգրանտների՝ արտագաղթածների հետ համեմատությամբ, կարգավիճակի համեմատությունը	106
Գծապատկեր 22.	Նախքան ՀՀ մեկնելը՝ հյուրընկալող երկրում ընտանիքից (ընկերներից) ստացված աջակցությունը.....	107
Գծապատկեր 23.	Աշխատանքի բնույթի համեմատությունը ՀՀ-ից մեկնելուց առաջ և հյուրընկալող երկրում (%)	108
Գծապատկեր 24.	Աշխատանքային հատվածների համեմատությունը նախքան միգրացիան և դրա ընթացքում (%).....	109
Գծապատկեր 25.	ՀՀ-ում և հյուրընկալող երկրում շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերի համեմատությունը	110
Գծապատկեր 26.	Հյուրընկալող երկրում գտնվելիս տնային տնտեսության եկամուտը ծախսելը	111
Գծապատկեր 27.	Նպատակակետ երկրում աշխատանքին առնչվող խնդիրները (%).....	112
Գծապատկեր 28.	Արտերկրում գտնվելիս խնդիրների լուծմանն օժանդակող կառույցները.....	112
Գծապատկեր 29.	Վերադառնալու հիմնական պատճառները (%).....	113
Գծապատկեր 30.	Աշխատանք չունենալը, զբաղվածությունն ու աշխատանք փնտրելը վերադառնալուց հետո (%)	114



Գծապատկեր 31.	Հայաստանում կրկին հարմարվելու հարցում դժվարությունների մակարդակները (5).....	115
Գծապատկեր 32.	Վերադարձած միգրանտների համար օգտակար դասընթացների տեսակները (%).....	115
Գծապատկեր 33.	Տարբեր միգրացիոն հոսքերի գենդերային կազմի համեմատությունը (%).....	116
Գծապատկեր 34.	2007 թվականի հունվարից հետո արտերկրից առաջին անգամ ժամանած տնային տնտեսության անդամները՝ ըստ մարզերի	117
Գծապատկեր 35.	Հայաստանի Հանրապետության սահմաններում ներգաղթածների տարածքային բաշխումը (%).....	117
Գծապատկեր 36.	Տնային տնտեսությունների համեմատական չափերը (անձինք տնային տնտեսությունում)	118
Գծապատկեր 37.	Միգրացիոն հոսքերում ընտանեկան դրության համեմատությունը (%).....	118
Գծապատկեր 38.	2007 թվականի հունվարից հետո արտերկրից առաջին անգամ ժամանած տնային տնտեսության անդամները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված).....	119
Գծապատկեր 39.	Նախքան ՀՀ ժամանելը՝ հաճախած կրթական հաստատությունը.....	120
Գծապատկեր 40.	Հայրենի երկիրը լքելու և դեպի ՀՀ միգրացիոն ուղին բռնելու հիմնական պատճառները (%).....	121
Գծապատկեր 41.	ՀՀ-ն որպես նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառները.....	122
Գծապատկեր 42.	Հայրենի երկրում միջին ամսական աշխատավարձը (ԱՄՆ դոլարով).....	123
Գծապատկեր 43.	ՀՀ-ում վերջին վեց ամսում աշխատանքային ներգրավվածությունը (%).....	123
Գծապատկեր 44.	ՀՀ-ում զբաղվածության հատվածները (%).....	124
Գծապատկեր 45.	ՀՀ-ում աշխատանք գտնելու հարցում աջակցություն տրամադրող կառույցը (%).....	125
Գծապատկեր 46.	Հայաստանի Հանրապետությունում իրավական կարգավիճակը (%)	125
Գծապատկեր 47.	ՀՀ-ում հարմարվելու հարցերում առաջացած խնդիրները (%)	126
Գծապատկեր 48.	Վերջին 12 ամիսների ընթացքում արտերկրից ստացված գումարները՝ ըստ միգրացիոն հոսքերի (%).....	129
Գծապատկեր 49.	Ներկայիս արտագաղթածների կողմից տնային տնտեսություններին ցուցաբերված ֆինանսական աջակցության հաճախականությունը	129
Գծապատկեր 50.	Արտագաղթածների կողմից՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ, տնային տնտեսությունների անդամներին ցուցաբերված ֆինանսական աջակցությունը.....	130
Գծապատկեր 51.	Արտերկրից ֆինանսական փոխանցումներ կատարելու եղանակները, արտագաղթածներ՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ (%).....	131
Գծապատկեր 52.	Տնային տնտեսություններում արտերկրից ստացվող փոխանցումները (ըստ մարզերի) (%).....	132
Գծապատկեր 53.	Արտագաղթի, վերադարձի միգրացիայի հետ կապ ունեցող և փոխանցում ստացող տնային տնտեսությունների տարածքային բաշխումը (%).....	133
Գծապատկեր 54.	Վերջին 12 ամիսների ընթացքում արտերկիր ուղարկված գումարը կամ ապրանքները՝ ըստ խմբերի (%)	134
Գծապատկեր 55.	Տնային տնտեսություններին ցուցաբերված ֆինանսական աջակցության թվաքանակը (%).....	135
Գծապատկեր 56.	Արտերկրից ստացվող գումարը հնարավորություն է տալիս՝	135
Գծապատկեր 57.	Միգրանտների խմբի կողմից արտերկրից ստացված ապրանքները (%).....	136



Ամփոփ նկարագիր

Ընդհանուր համաձայնություն կա մի հարցում, որ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ վիճակագրությունը շատ սահմանափակ է և կախված համադրելիության խնդիրներից: Երկրում ընթացիկ տվյալների, հատկապես ճշգրիտ վարչական տվյալների անբավարար լինելը, բարձրացնում է այդ բացերը լրացնելու նպատակով հետազոտություններից օգտվելու հավանականությունը: Այս վերջնական զեկույցը ներկայացնում է Հայաստանում միգրացիայի իրավիճակի համապարփակ գնահատում, որը հիմնված է 2013 թվականին Հայաստանի Հանրապետությունում բնակչության շրջանում իրականացված՝ տնային տնտեսությունների լայնընդգրկուն և համազգային մակարդակով ներկայացուցչական հետազոտության վրա:

Միգրացիայի մասով տնային տնտեսությունների հետազոտության միջոցով ուսումնասիրվում են դեպի Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հարապետությունից և Հայաստանի Հանրապետության տարածքում միգրանտների տարբեր կատեգորիաների ընդհանուր առանձնահատկությունները: Այն նպատակ ունեն հավաքելու միգրացիոն և դրա հարակից ցուցանիշները, որոնք էական նշանակություն ունեն երկրում միգրացիոն պատկերի և գիտավերլուծական պլանավորման, որոշումների կայացման ու հաշվետվողականության համար առաջնահերթություններ սահմանելու համար: Ընտրանքով սահմանվում են միգրացիայի և բնակչության ցուցանիշների արտաքինից հուսալի գնահատումներ, որոնք պահանջվում են արդյունավետ պլանավորման ու կառավարման նպատակներով:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ բարելավված տվյալների երկարամյա պահանջը՝ տնային տնտեսությունների հետազոտությունների միջոցով ամենամեծ հնարավորությունն է ստեղծվում երկրում ճշգրիտ ու ակտուալ տվյալների հավաքման համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով տնային տնտեսությունների հետազոտության մասով առկա սահմանափակումները՝ ծախսատարությունը և բարդությունը, Հայաստանի Հանրապետության շահերից է բխում՝ փորձել ու ավելի լավ զարգացնել իր տնօրինման տակ եղած վարչական տվյալների աղբյուրները: Այդուհանդերձ, հաշվի առնելով երկրում չգրանցված արտագաղթի գերակշռությունը՝ դա կարող է սահմանափակ լինել, քանի դեռ չկա նպատակակետ երկրների հետ համագործակցությունը: Լայնածավալ մասնագիտացված միգրացիոն հետազոտություններ անցկացնելուց բացի, պետք է կանոնավոր և հետևողական կերպով որոշակի միգրացիոն տեղեկատվություն ձեռք բերել տնային տնտեսություններում ընթացիկ հարցումներ անցկացնելու միջոցով: Անհրաժեշտ են հետազոտության որակյալ ընտրանքն ու հարցաշարի կառուցվածքը, ինչպես նաև այդ որակն ու մասնագիտական ուսումնասիրությունն ամրապնդելու համար անհրաժեշտ ֆինանսավորումը: Առանց ամբողջ տարածքից ստացված միգրացիոն տվյալների ու ստանդարտացված վիճակագրության՝ ամբողջական պատկերը կշարունակի աղոտ լինել, իսկ միգրացիոն տվյալների մասին արդյունավետ կերպով տեղեկացնելու կարողության մակարդակը՝ ցածր:

Տնային տնտեսությունների սույն հետազոտության հիմնական նպատակն է եղել միգրացիայի ու միգրացիոն գործընթացների վերաբերյալ համապարփակ և բազմակողմանի տեղեկատվություն հավաքելը, իսկ հարցաշարն էլ հարմարեցված է եղել այն ընտրանքում միգրացիային վերաբերող երևույթները գնահատելու համար, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչությունը: Այս հետազոտությունը, ինչպես և մյուս ընտրանքային հետազոտությունները, անցկացվել են բնակչության համընդհանուր



առանձնահատկությունների վերաբերյալ եզրահանգումների նպատակով, ինչպիսիք են՝ միջինացված տվյալները (կամ համամասնությունները) կամ ընդհանուր տվյալները: Ուսումնասիրության ենթարկված բնակչությունը դիտարկվել էր որպես հստակ սահմանված և որոշակի, իսկ հավանական ընտրանքը կատարվել է բնակչության հենց այդ հատվածից: Այնուամենայնիվ, սույն ընտրանքային հետազոտությունում առկա են առանձնահատուկ ուսումնասիրվող խմբեր. ներկայիս միգրանտները (ներգաղթածներն ու արտագաղթածները), վերադարձած միգրանտները (այն միգրանտները, որոնք նախկինում ապրել են արտերկրում, բայց վերադարձել են), ներքին միգրանտներ, և այն անձինք, որոնք միգրացիայի ուղին երբեք չեն բռնել (տեղաշարժվելու նրանց մտադրությունը գնահատելու կամ որպես համեմատական խումբ):

Ընթացիկ զեկույցում ներկայացվում է հավաքված տեղեկատվության ընդհանուր նկարագրությունը, որով առանձնացվում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հիմնական միգրացիոն ու բնակչության առանձնահատկությունները: Այս զեկույցով նաև գնահատվում է ամբողջ երկրի բնակչությունից ներկայացուցչական ընտրանքի հիման վրա տնային տնտեսությունների հետազոտությունների կիրառման ուժեղ և թույլ կողմերը՝ միգրացիոն երևույթը չափելու համար, որը քիչ կշիռ ունի և, որպես այդպիսին, ի հայտ է գալիս որպես մեղմացնող երևույթ, քանի որ միգրացիան ոչ միայն համեմատաբար հազվադեպ երևույթ է, այլ նաև դրա ուսումնասիրումը իրենից ներկայացնում է անհայտ և, երբեմն, թաքնված բնակչության թիրախավորում:⁴

4 Այս տեսակի բնակչության դեպքում, բնակչության որոշակի խմբերի հայտնի ընտրանքը չի թույլատրվում՝ հիմնականում հետևյալ պատճառներով: Բնակչության թիվը N անհայտ է, իսկ թիրախային բնակչության սպառիչ ցանկերը դեռ հասանելի չեն, այնպես որ պիտակավորումը հնարավոր չէ, և բացի դրանից որոշ խմբեր պահանջել են մնալ անանուն, և, ընդհանուր առմամբ, առկա է բացահայտման խնդիր:



Հիմնական արդյունքները

Դաշտային աշխատանքն իրականացվել է 2013 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում: Հետազոտության ընթացքում պատասխանողների մասնաբաժինը կազմել է գրեթե 52%:⁵

Վերջնական ընտրանքի չափը կազմված է տնային տնտեսության 7890 հարցվածներից, որոնք Հայաստանի Հանրապետության բնակիչներ են, շեղումը՝ 3%՝ 95% վստահության միջակայքով, և որում ընդգրկված են տնային տնտեսության 31.118 հետազոտված անդամներ:

Սույն հետազոտությունը որպես ելակետ է վերցնում տնային տնտեսության դե յուրե (բնակության սովորական վայրը) սահմանումը, և ոչ թե դե ֆակտո (այն վայրը, որտեղ յուրաքանչյուր անձ գտնվել է հետազոտությունն անցկացնելուց մեկ գիշեր առաջ) սահմանումը: Բացի դրանից՝ հետազոտությունը պարունակում է տնային տնտեսության 1972 անդամների մասին տեղեկատվություն, որոնք մեկնել են արտերկիր մինչև 2007 թվականը, սակայն շարունակում են համարվել տնային տնտեսության անդամներ, այսինքն՝ ընդհանուր առմամբ, տնային տնտեսության հետազոտության մեջ ներառվել է տնային տնտեսության 33.090 անդամի վերաբերյալ տեղեկատվություն:

Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների թիվը, որոնք առնչություն են ունեցել միգրացիային, միջինում, շատ բարձր է եղել ամբողջ ընտրանքի կազմում՝ կազմելով միգրացիային առնչվող երկու տնային տնտեսություններից գրեթե մեկը (հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների ընդհանուր թվի 48.6%-ը կապ է ունեցել 2007 թվականի հունվարից միգրացիոն տեղաշարժերի հետ):

Տնային տնտեսությունները, որոնցում միգրացիայի հետ առնչություն ունեցող անդամներ առկա չեն եղել, հասել են, միջինում, Արագածոտնի մարզում՝ 74.5%-ի (չորս տնային տնտեսություններից երեքն առնչություն չեն ունեցել միգրացիային), իսկ ամենացածր թիվը եղել է Տավուշի մարզում (հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների միայն 1.86%-ը առնչություն չի ունեցել միգրացիային, կամ տնային տնտեսությունների 92%-ն է կապված եղել տարբեր բնույթի միգրացիոն տեղաշարժերի հետ): Երևանում հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների 63.1%-ում միգրանտներ չեն եղել, Արարատում՝ 42%, Արմավիրում՝ 57.6%, Գեղարքունիքում՝ 47.9%, Լոռիում՝ 54.1%, Կոտայքում՝ 22.1%, Շիրակում՝ 27.1%, Սյունիքում՝ 63.7% և Վայոց Ձորում՝ 42.8% հարցազրույցի մասնակցած տնային տնտեսություններում միգրանտներ չեն եղել:

Բոլոր տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ սեռի ցույց է տալիս, որ կանանց թիվը մի փոքր գերազանցել է տղամարդկանց թիվը: Հետազոտության տվյալների համաձայն՝ հետազոտված տնային տնտեսության անդամների 47.5%-ը տղամարդիկ են եղել (n=14788), իսկ 52.5%-ը՝ կանայք (n=16330):

Տնային տնտեսությունում հարցազրույցին մասնակցողը տնային տնտեսության ամենատեղեկացված անդամն է եղել: Որպես կանոն՝ հարցմանը մասնակցողը եղել է տան ղեկավարը, որը համապարփակ տեղեկատվության է տիրապետել տնային տնտեսության և տնային տնտեսության բոլոր անդամների սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների

⁵ Այս հետազոտության ժամանակ օգտագործվել են 2001 թվականի մարդահամարի արդյունքների հիման վրա ձևավորված մասնավոր տնային տնտեսությունների հասցեների հին ցուցակը, ինչն էլ բացատրում է տնային տնտեսությունների պատասխանելիության այս մակարդակը:



վերաբերյալ:

Հարցազրույցը վերցվել է տնային տնտեսության ամենատեղեկացված անդամից: Որպես կանոն հարցվողը եղել է տնային տնտեսության ղեկավարը, որը տիրապետել է տնային տնտեսության գործունեությունների և տնային տնտեսության բոլոր անդամների սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրի վերաբերյալ տեղեկության: Հետազոտված տնային տնտեսությունների 71%-ի դեպքում, հարցազրույցին մասնակցողը տղամարդիկ են եղել, որպես տնային տնտեսության ղեկավար, 22% դեպքերում՝ կանայք, որպես տնային տնտեսության ղեկավար, 4.4% դեպքերում՝ ընտանիքի որդին կամ դուստրը, 2.2% դեպքերում՝ տնային տնտեսության ղեկավարի հայրը կամ մայրը, և 1% -ից պակաս (0.4%) դեպքերում՝ ընտանիքի կամ տնային տնտեսության մյուս անդամները:

2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ (կամ ավելի ուշ), հետազոտվող տնային տնտեսությունների 89.3%-ը բնակվել է տվյալ բնակավայրում, 2%-ը բնակվել է Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրում, 1%-ը բնակվել է արտերկրում, իսկ տնային տնտեսության անդամների 7.7%-ը ծնվել է 2007 թվականի հունվարի 1-ից հետո: Ավելին, հետազոտությամբ հաստատվել է, որ հետազոտված տնային տնտեսությունների 3.9%-ը տեղափոխվել է մեկ այլ կացարան տվյալ բնակավայրում 2007 թվականի հունվարի 1-ից մինչև օրս:

Հետազոտված տնային տնտեսության չափը տարբեր է եղել՝ սկսած նվազագույնից, «մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունից», որտեղ մեկ անձը միայնակ է ապրել ամբողջ բնակելի միավորում կամ դրա մի մասում և անկախ սպառող է եղել, և մինչև 14 անդամից բաղկացած տնային տնտեսություն: Տվյալների համաձայն՝ հետազոտված տնային տնտեսությունների 21%-ը բաղկացած է եղել 4 անդամից, 18%-ը՝ 5 անդամից, 14.4%-ը՝ 3 անդամից, 14%-ը՝ 2 անդամից, 12.5%-ը՝ 6 անդամից, 6.6%-ը՝ 7 անդամից և 2%-ը՝ 8 կամ ավելի անդամներից:

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների բաշխումն ըստ տարիքային խմբի ու սեռի ցույց է տալիս որոշակի համաչափություն տարիքային խմբերում սեռերի շրջանում՝ կանանց մասով դեպի ամենաբարձր տարիքային խմբի շեղումով: 0-14 և 65 տարեկան և ավելի բարձր տարիքային խմբերը կազմում են բնակչության համապատասխանաբար 16.7%-ը և 16.9%-ը, մինչդեռ 15-59 տարիքային խումբը՝ բնակչության 66.5%-ը, այսպես կոչված, «ակտիվ տարիքում» են:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 99.1%-ը, հայեր են եղել, 0.4%-ը՝ եզդիներ, 0.3%-ը՝ ռուսներ: Ներգրավված են եղել նաև այլ էթնիկ խմբեր, ինչպիսիք են՝ քրդերը, ուկրաինացիները, ասորիները, հույները, պարսիկները և հնդիկները, սակայն նրանց համամասնությունը 0.1%-ից ցածր է եղել:

Ինչ վերաբերում է հարցվածների ընտանեկան դրությանը, ապա ընտրանքում ընդգրկված չափահասների 61.3%-ը նշել է, որ ամուսնացած է, իսկ 25.4%-ը երբեք ամուսնացած չի եղել: Ընտրանքում չափահասների 10.4%-ը այրի կամ ամուրի է եղել, 2.9%-ը՝ ամուսնալուծված:

Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը ցույց է տվել, որ հարցազրույցի մասնակցածների ավելի քան 80%-ը կրթություն ստացած անձինք են, որոնք առնվազն ստացել են ընդհանուր միջնակարգ կրթություն: Հարցված տնային տնտեսությունների մեծամասնությունը ունեցել է միջնակարգ կրթություն (37.3%), 0.4%-ը ստացել է հետբուհական կրթություն, 22.1%-ը՝ բուհական կրթություն, 18.5%-ը՝ միջին մասնագիտական վերապատրաստում է անցել, իսկ 2.2%-ը՝ նախամասնագիտական դասընթացներ:



31.118 հարցված տնային տնտեսությունների մոտ 38%-ն իրենց նկարագրել են որպես աշխատաշուկայի մասնակիցներ (զբաղվածներ, ներառյալ՝ ինքնազբաղվածներ), և այդ անձանցից 61%-ը եղել են տղամարդիկ: Մոտ 13.9%-ը չի ունեցել աշխատանք, և այդ անձանցից 59.5%-ը եղել են կանայք: Ընտրանքի 14.9%-ը կազմել են թոշակառուները և նպաստառուները, ընտրանքի մոտ 8.6%-ը կազմել են տնային տնտեսություն վարողները (դրանց 97%-ը եղել են կանայք), աշակերտներն ու ուսանողները կազմել են ընդհանուր թվի 15.5%-ը, իսկ խնամքի տակ գտնվող մյուս անձինք կազմել են հարցվածների մոտ 8.5%-ը:

Այդ ցուցանիշներն ըստ տարիքային խմբերի վերլուծելիս կարելի է նկատել գործազրկության ավելի մեծ թվաքանակ 20-29 տարիքային խմբերի շրջանում, և 35-ից 54 տարիքային խմբերում աշխատողների (ինքնազբաղվածների) գերակշռությունը: Ինչպես և ակնկալվում էր, ուսանողների (աշակերտների) գերակշռությունը նկատվում է 19 և ավելի ցածր տարիքային խմբերում: Թոշակառուների (նպաստառուների) թիվը սկսել է աճել 60 տարեկանից հետո, որը բնական է և կանխատեսելի:

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների միայն 8.2%-ն է մտադիր մեկնել արտերկիր: Եթե դիտարկվում է կռված ընտրանքը, ապա Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնակչության կազմում այն անձանց թիվը, որոնք միգրացիան դիտարկում են որպես տարբերակ ապագան կառուցելու համար, կկազմի 213.468 անձ: Հետազոտության արդյունքում բացահայտվել են արտերկիր մեկնելու հարցում լուրջ մտադրություն ունեցող տղամարդկանց ու կանանց միջև հստակ տարբերություններ: Հավանական միգրանտ տղամարդկանց մոտ 53.4%-ը նշել են, որ իրենք լրջորեն մտածում են արտերկիր տեղափոխվելու մասին, մինչդեռ հավանական միգրանտ կանանց միայն 46.6%-ն են հայտնել արտերկիր մեկնելու պատրաստակամության մասին: Եթե տեղափոխվելու հավանականությունը շարունակում է մտադրություն մնալ (այլ ոչ թե դրական պատասխան), ապա գենդերային բացն էլ ավելի է մեծանում (55.7% տղամարդ՝ կանանց 44.3%-ի համեմատությամբ):

Այն անձանցից, որոնք մտադիր են միգրացիայի ուղին բռնել ապագայում, 56%-ը ծրագրում է դա անել գալիք 12 ամսվա ընթացքում, մի թիվ, որն իրենից ներկայացնում է բավականին հիմնավոր միգրացիոն ծրագիր, իսկ այդ անձանցից, միգրացիայի ուղին բռնելու ամենամեծ պատրաստակամությունը նկատվել է հարցված տղամարդկանց շրջանում: Հարցված տնային տնտեսությունների անդամների 27%-ը, որոնք մտադրություն ունեն բռնելու միգրացիայի ուղին մոտակա 12 ամիսների ընթացքում, արդեն լուծել են որոշ կազմակերպչական հարցեր (օրինակ՝ գնել է տոմս, աշխատանքի կամ այլ հարցերի հետ կապված պայմանավորվածություններ է ձեռք բերել): Դա հավաստի միգրացիայի հավանականության նշան է՝ տնային տնտեսությունների հարցված անդամների տասից մեկի դեպքում: Ստացված տվյալները վկայում են միգրացիայի պոտենցիալի մասին մոտ 115.000 անձանց շրջանում, և այդ անձանցից՝ 29%-ը (կամ մոտ 33.3 հազար մարդ) արդեն իսկ համապատասխան կազմակերպչական հարցեր են լուծել՝ իրենց միգրացիոն ծրագիրն իրականացնելու համար: Դա բավականին հավաստի (և իրականում կանխատեսելի) պատկեր է և համապատասխանում է վերջին տարիներին նկատվող ընդհանուր արտահոսքերին:

Հայաստանի Հանրապետությունում պոտենցիալ միգրանտների շրջանում միգրացիայի ուղին բռնելու պատճառները մեծամասամբ տնտեսական բնույթ ունենին: Միգրացիայի ուղին բռնելու պատճառների շարքում առանձնանում են չորս մեծ դրդապատճառներ՝ աշխատատեղերի բացակայությունը Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում ստացվող վարձատրության անբավարար չափը, տնային տնտեսության համար գումար վաստակելը և ապագայի նկատմամբ անորոշությունը:



Ներկայիս արտագաղթածները

Հետազոտության տվյալներից մենք եզրահանգել ենք, որ հարցված տնային տնտեսության անդամների մոտ 7.2%-ն առնչություն է ունեցել արտագաղթի (արտահոսքերի) հետ, ինչը համապատասխանում է մոտ 2.250 հարցվածների կամ Հայաստանի Հանրապետության բնակչության մոտ 224 հազար մարդու, եթե հաշվի է առնվում ընտրանքային կշիռը: Դա նախկին ժամանակահատվածներում բնակչության արտահոսքի մակարդակի շարունակականության ցուցանիշ է, ինչպես առաջարկվել է Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի կողմից 2007⁶ թվականին իրականացված հետազոտությունում կամ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2009⁷ թվականին ներկայացված զեկույցում: Այս հետազոտության միջոցով հնարավոր է որոշել, որ միջինում տարեկան 35 հազար մարդ է մեկնել Հայաստանից 2007-2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:⁸ Դա անսպասելի արդյունք է, որը պայմանավորված է 2008 թվականի հետտնտեսական ճգնաժամով, սակայն, ինչպես մենք դա կներկայացնենք ստորև, կարող է կապված լինել նպատակակետ երկրների փոփոխության հետ և դեպի Ռուսաստանի Դաշնություն (որը վերջին տարիներին հիմնական նպատակակետ երկիրն է հայերի համար) մեկնողների թվի աճով:

Այդ արտագաղթածներից՝ 82.1%-ը եղել են տղամարդիկ, իսկ 17.9%-ը՝ կանայք, ինչը նշանակում է երկրում միգրացիայի ուղին բռնած տղամարդկանց շատ բարձր մակարդակ:

Արտագաղթածների տարիքային խմբերի վերլուծության միջոցով բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից արտագաղթածների տարբեր տեսակների առաջին պատկերը, որտեղ արտագաղթի շատ մեծ թիվ են կազմել ակտիվ տարիքային խմբերը (20-54), և նվազ թվով դեպքեր թե՛ երիտասարդ տարիքային խմբերում, և թե՛ ավելի բարձր տարիքային խմբերում:

Կրթական կարգավիճակից կախված՝ Հայաստանի Հանրապետությունից արտագաղթածները կարող են բաժանվել առնվազն չորս կատեգորիաների՝ 1) կրթություն ստացած միգրատներ՝ բուհական աստիճանի կրթությամբ, որը կազմում է ընդհանուր արտագաղթածների 17.2%-ը, 2) բարձր որակավորում ունեցող միգրանտներ, որոնք բաղկացած են հետբուհական կրթություն ստացած անձանցից՝ կազմելով 0.6%, 3) ցածր որակավորում ունեցող միգրանտներ, որոնք ունեն մինչև ընդհանուր միջնակարգ կրթություն, որոնք կազմում են արտագաղթածների ընդհանուր թվի 49.8%-ը, և 4) նախամասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությամբ անձինք (23.9%):

6 ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2008 թվական, «ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն»՝ իրականացված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, Երևան www.unfpa.am/migration-survey

7 Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Միգրացիա և զարգացում: Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, 2009 (http://www.ilo.org/public/russian/region/euro-pro/moscow/info/publ/migr_dev_study_arm.pdf).

8 Հետազոտությունը նույնացրել է 224.048 անհատների (տնային տնտեսության անդամներ), ովքեր 2007 թվականից սկսած կատարել են միգրացիոն ուղևորություն (մեկ կամ ավելի) (անհատների թվաքանակը որոշվել է հետազոտության հարցաշարի Բաժին 2-ի «2.3. Ուղևորության բնույթը» հարցի «2. Մեկնում արտերկիր» պատասխանով): Տվյալները հավաքագրվել են 2013 թ առաջին կիսամյակում, այդ իսկ պատճառով տվյալ տարին հաշվված է 0.5: Հետևաբար, 6.5 բաժանարարն է կիրառվել 224.048 բաժանելիի համար:



Տվյալները ցույց են տալիս կոմպլեքս, բազմուղի և ուստի անորոշ կապ կրթության և արտագաղթի միջև՝ առանց որևէ միասնական համընդհանուր շրջանակի, որը որ կառաջանար այդ երկուսի միջև կապից: Այսպիսով, այս հետազոտության միջոցով հնարավոր չէ նախանշել որակավորված մասնագետների զանգվածային մեկնումը: Այնուամենայնիվ, վերջին վեց տարիների ընթացքում բուհական և հետբուհական կրթությամբ մոտ 39.000 մարդ է լքել երկիրը վերջին վեց տարվա ընթացքում (սակայն նույն ժամանակահատվածում բուհական և հետբուհական կրթությամբ 21.000 մարդ է վերադարձել արտերկրից կամ ներգաղթել է Հայաստանի Հանրապետություն):

Նույնականացված արտագաղթածների 62.8%-ը Հայաստանի Հանրապետությունում աշխատանք չի ունեցել՝ արտագաղթելու ժամանակ, և միայն չորսից մեկն է (25.1%) աշխատանք ունեցել (այդ թվում՝ ինքնազբաղվածությունը), 5.2%-ը եղել են ուսանողներ, 2.3%-ը եղել են տնային տնտեսություն վարողներ, իսկ 3.6%-ը եղել են խնամքի տակ: Այդ անձանցից՝ չորսից երեքը աշխատանք չի ունեցել վերջին վեց ամիսների ընթացքում՝ մինչև ՀՀ-ից մեկնելը, և միայն 14%-ն է աշխատել նախորդող վեց ամսվա ընթացքում: Դրանք լուրջ վանող գործոններ են արտագաղթի համար:

Ընդհանուր առմամբ, արտագաղթածների 51.8%-ը աշխատանք չի փնտրել երկրից հեռանալուց վեց ամիս առաջ (համապատասխանում է անհույս՝ աշխատանք չունեցողներին), սակայն 22.5%-ը ակտիվորեն փնտրել է աշխատանք այդ ամբողջ կես տարվա ընթացքում՝ մինչև մեկնելը, սակայն աշխատանք չի գտել: Վանող գործոնը այդ անձանց համար եղել է աշխատանքի բացակայությունը կամ աշխատանքի հնարավորությունների բացակայությունը, և այդ փաստը հաստատում է, որ Հայաստանից ժամանակակից միգրացիայի հիմնարար պատճառը տնտեսական գործոններն են:

Միգրացիոն ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսները, 35.5% դեպքերում, հիմնականում տնային տնտեսությունների խնայողություններն են եղել, գույքի վաճառքը՝ 4.8%, անհատույց տրված օգնությունը՝ 9.7%: 12.9% դեպքերում գործատուն է հոգում միգրացիայի համար անհրաժեշտ միջոցները: Շատ կարևոր ֆինանսական աջակցություն է ստացվում նաև ֆինանսական հաստատություններից՝ բանկից փոխառություն (5.5%), սեփականության գրավադրում (1.2%) և ամենաշատը՝ պարտքեր (28.9%): Առկա են նաև 1.3% տոկոս կազմող այլ ֆինանսական աղբյուրներ, որոնք չեն նշվել:

Տվյալներից կարելի է հասկանալ, որ միգրացիոն հիմնական նպատակակետը Ռուսաստանի Դաշնությունն (ՌԴ) է, մի երկիր, որը համեմատաբար մոտ է Հայաստանին աշխարհագրորեն, և որը համարվում է բարեկամական պետություն և հայտնի է արագ աճող տնտեսությամբ և ունի ազատ վիզային ռեժիմ Հայաստանի հետ: Զարմանալիորեն, կամ ոչ այդքան, վերջին միգրացիոն ուղիները վերլուծելիս մենք պարզել ենք, որ ավելի շատ մարդ արտագաղթում է ՌԴ, քան տեղաշարժվում է ՀՀ-ի տարածքում:

Վերջին միգրացիոն ուղևորության նպատակակետի վերաբերյալ հետազոտության արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունը դիտարկվում է որպես հիմնական նպատակակետ երկիր (90.6%): Լեռնային Ղարաբաղ (ԼՂ) (1.3%), ԱՄՆ-ը (0.8%), Ուկրաինան (0.6%), Լեհաստանը (0.4%), Բելգիան (0.2%), Գերմանիան (0.6%), Ֆրանսիան (1.2%), Իսպանիան (0.8%), Վրաստանը (0.3%), Թուրքիան (0.4%), Բրազիլիան (0.1%), Իրանը (0.4%) նույնպես համարվում են նպատակակետ վայրեր: Եթե միավորենք Եվրոպական միության 28 անդամ երկրները, ապա ԵՄ-ն դառնում է երկրորդ կարևոր նպատակակետը՝ ընդհանուր առմամբ 4.1%:



Հարցված տնային տնտեսության անդամներից տասից ութը ունեցել է ընկերներ և (կամ) հարազատներ նպատակակետ երկրում՝ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկ-ները: Դա շատ մեծ թիվ է և կապված է Հայաստանի՝ միգրացիային վերաբերող երկարամյա պատմությամբ XX դարում և ներկայումս: Մեծ սփյուռքի առկայությունը և վերջին երկու տասնամյակի ընթացքում մեկնումների շարունակական հոսքերը վստահեցնում են նորեկներին միգրացիայի ցածր վտանգի մասին և բացատրում միգրանտների կողմից կոնկրետ գտնվելու վայրի վերաբերյալ որոշում կայացնելու մասին երեք ուղու միջոցով՝ առաջին, նրանք ներկայացնում են տեղեկատվություն հյուրընկալող երկրի (տարածաշրջանի) աշխատանքային շուկայի մասին, երկրորդ, միգրանտների կենցաղային ծախսերն ավելանում են տվյալ վայրում առկա՝ էթնիկ ապրանքների թվի հետ մեկտեղ, երրորդ՝ միգրանտներն ակնկալում են, որ նախկին միգրանտներն իրենց կօգնեն տեղավորվելու հարցում:

Այդ ցանցի արտաքին գործոնների ազդեցությունը կարող է տարբերվել միգրանտների տարբեր տեսակների համար: Օրինակ՝ անկանոն կարգավիճակով միգրանտները կամ ոչ պաշտոնական աշխատանքային շուկաներում աշխատող միգրանտները կարող են ավելի շատ կախված լինել միգրացիոն ցանցերից, քան օրինական կարգավիճակով միգրանտները:

Աշխատանքային միգրացիայի հոսքը հաստատվում է այն փաստով, որ արտագաղթածների 79.3%-ը մտադիր է եղել աշխատել արտերկրում մինչև ՀՀ-ից մեկնելը: Հարցված տնային տնտեսությունների անդամներից՝ 71.5%-ը ստացել է աշխատանքի խոստում՝ նախքան ՀՀ-ից մեկնելը, 4.4%-ը՝ աշխատանքային գրավոր պայմանագիր և 1.1%-ը՝ աշխատանք ստանալու այլ պայմանավորվածություն: Հարցվածների 22.9%-ը չի ունեցել աշխատանքի որևէ տեսակի առաջարկ կամ դրա վերաբերյալ համաձայնություն:

Արտագաղթածների տնտեսական կարգավիճակը, թվում է, բարելավվում է հարցվածների գերակշիռ մեծամասնության մոտ՝ ի տարբերություն ՀՀ-ում նրանց նախնական վիճակի: Աշխատանքային շուկայի կարգավիճակի մասով փոփոխությունն էական է աշխատանք չունեցողների համար, որոնց մեծ մասը կարողացել է վարձատրվող աշխատանք գտնել միգրացիայի ուղին բռնելուց հետո:

Չնայած հայտնի է, որ հայ միգրանտները շատ հաճախ ներգրավվում են ժամանակավոր միգրացիոն գործընթացներում՝ տեղափոխվելով մեկ այլ երկիր և փնտրելով ցածր որակավորմամբ աշխատանք նախքան ՀՀ վերադառնալը, այնուամենայնիվ, դրա մասին հստակ անդրադարձ չի կատարվում այս հետազոտությունում: Բացառություններ կարելի է գտնել վերադարձած միգրանտների վերաբերյալ տվյալներում: Մեկ հարցին ի պատասխան, որը վերաբերել է վերադարձի մասին ՀՀ-ի իշխանություններին չհայտնելու պատճառներին, վերադարձած միգրանտների 8.2%-ը նշել է, որ իրենք ժամանակավոր միգրանտներ են (Հայաստանի Հանրապետության տարածքից վեց ամսից պակաս բացակայողներ): Այս համամասնությունը համապատասխանել է մոտավորապես 4.000 անձի՝ կշռված ընտրանքում:

Օտարերկրյա պետություններում նախկինում (ներկայում) գտնվող միգրանտները (արտագաղթածներ, վերադարձած միգրանտներ ու ներգաղթածներ) միջինում 3.2 ուղևորություն են կատարել 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում:

Միգրանտները պարբերական կապի մեջ են իրենց ընտանիքների հետ, շատ հաճախ՝ ամեն օր (արտերկրում ապրող՝ տնային տնտեսությունների հարցված անդամների



52%-ը շփվում է իրենց ընտանիքի անդամների և (կամ) ընկերների հետ ամեն օր, 38.5%-ը՝ շաբաթը մեկ անգամ և 1.5%-ը՝ հազվադեպ): Միգրանտների մեծամասնությունը որպես հաղորդակցման միջոց օգտագործում է իրենց հեռախոսները (ընդհանուր թվի 57%-ը): Ինտերնետը նույնպես կարևոր դեր է խաղում հաղորդակցման հարցում (հարցվածների 15.4%-ն օգտագործում է էլեկտրոնային փոստ ու սկայպ): Փաստացի, տեխնոլոգիական զարգացումները, ինչպիսիք են՝ բջջային հեռախոսները, էժան՝ հեռահար հեռախոսային զանգերը, սոցիալական ցանցերը և սկայպը հեշտացրել են միգրանտների համար ընտանիքի անդամների ու ընկերների հետ շփվելու գործը՝ այդպիսով հեշտացնելով միգրացիոն գործընթացը: Որոշ չափով, էլեկտրոնային փոստը, սկայպը և մատչելի հեռախոսային զանգերը կարող են թույլ տալ՝ պահպանելու ամուր կապեր ընտանիքի անդամների ու ընկերների հետ ծագման երկրում:

Հարցվածների 22.9%-ի դեպքում նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները էականորեն բարելավվել են արտագաղթի ընթացքում, 43.1%-ի դեպքում նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները բարելավվել են որոշ չափով, իսկ 30.6%-ի դեպքում՝ նրանց գիտելիքները և հմտությունները չեն զարգացել:

Ստացված և հավաքված պատասխանների համաձայն՝ այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնց անդամները արտագաղթել են 2007 թվականին նախորդող ժամանակահատվածում, տասից մեկն է եղել, դա, մոտավորապես հարցազրույցի մասնակցած 7.890 տնային տնտեսությունների 10.3%-ն է եղել: Այս տնային տնտեսություններից՝ տնային տնտեսության հարցված անդամների պարագայում, որոնք արտագաղթել են մինչև 2007 թվականը և այլևս չեն վերադարձել արտերկրից (n=2.360), 60%-ը եղել են տղամարդ միգրանտներ, իսկ 40%-ը՝ կին միգրանտներ: Այս համամասնությունը համապատասխանում է մոտավորապես 245.000 անձի՝ կշռված ընտրանքում:

Այս տարիքային բաշխման համաձայն՝ 2007 թվականից առաջ մեկնած արտագաղթածների գերակշիռ մեծամասնությունը աշխատանքային տարիքային խմբում են եղել (մինչև 2007 թվականը մեկնած՝ տնային տնտեսությունների հարցված՝ ՀՀ-ից արտագաղթածների 79.5%-ը 20-ից 65 տարեկան անձինք են եղել): այս ենթաընտրանքի 2.2%-ը ծնվել է արտերկրում 2007 թվականից հետո, իսկ արտագաղթածների ընդհանուր թվի 2%-ը մահացել է արտերկրում:

Տվյալներով հիմնավորվում է, որ 2007 թվականից առաջ մեկնած արտագաղթածների 35.3%-ը ունեցել է ընդհանուր միջնակարգ կրթություն (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 37.3%-ի հետ), 2.3%-ն ունեցել է նախամասնագիտական կրթության (քոլեջի) դիպլոմ (ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 2.2%-ը), 18.6%-ը՝ միջին մասնագիտական դիպլոմ (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 18.5%-ի հետ):

Հետազոտության տվյալների համաձայն՝ մինչև 2007 թվականը մեկնած՝ հետազոտված տնային տնտեսությունների՝ ՀՀ-ից արտագաղթածների մեկնման տարեթվերը ներկայացված են հետևյալ բաշխմամբ՝ 36.4%-ը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից 1991-ից 1999 թվականներն ընկած ժամանակահատվածում (նրանցից 62%-ը եղել են տղամարդ միգրանտներ), 46.5%-ը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից 2000-ից 2006 թվականներն ընկած ժամանակահատվածում (նրանցից 59%-ը եղել են տղամարդ միգրանտներ):



2007 թվականից առաջ մեկնածներից (n=1.924)՝ 77%-ը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն (61%-ը տղամարդ միգրանտներ), 14.8%-ը տեղափոխվել է մարզեր կամ արտերկիր (55%-ը տղամարդ միգրանտներ), 6.3%-ը տեղափոխվել է ԱՄՆ (53.3%-ը տղամարդ միգրանտներ), իսկ 1%-ը՝ ԼՂ (67.9%-ը տղամարդ միգրանտներ), 1%-ից պակասը չի նշել նպատակակետ մարզը (երկիրը):

Ապագա միգրացիոն պլանները թվում է, թե կախված են Հայաստանի Հանրապետության և հյուրընկալող երկրի սոցիալական և տնտեսական զարգացումից: 37.8% արտագաղթածների մոտ առկա է 2013 թվականին վերադառնալու մտադրություն, 5.1%-ը մտադիր է վերադառնալ 2014 թվականին, 10.8%-ն ի վերջո վերադառնալու է (անհրաժեշտ է ընդգծել, որ հարցվածների ընդհանուր թվի 54.7%-ը վերադառնալու մտադրություն ունի): 22.7%-ի համար դա կախված կլինի իրավիճակի զարգացումից, 12.7%-ը դիտարկում է ՀՀ չվերադառնալու հարցը, 5.1%-ը մտադիր է վերամիավորվել իր ընտանիքի հետ հյուրընկալող երկրում, շատ փոքր թիվ (0.2%-ը) դիտարկում է մեկ այլ հյուրընկալող երկիր վերաարտագաղթելու հարցը:

Վերադարձի հիմնական պատճառները ընտանեկան բնույթի են, դրանք են՝ ընտանիքի վերամիավորումը (34.9%), ամուսնությունը (5.7%), ընտանեկան այլ հանգամանքներ (9.9%), միգրացիոն ծրագրի ավարտը (22.8%), հյուրընկալող երկրում աշխատանքի բացակայությունը (12.9%), աշխատանքի առաջարկը ՀՀ-ում (3.8%), աշխատանքային վատ պայմանները (3.7%), կրթությունը կամ որակավորումը (0,5%), այլ պատճառներ (5,8%):

Մինչդեռ միգրանտների մեծ մասը չի ընդունել ներկայիս բնակության վայրի քաղաքացիությունը, վերջին շրջանում արտագաղթած բնակչության հիմնական մասը (6.8%) արդեն ընդունել է քաղաքացիությունը:

Նրանց գերակշիռ մեծամասնությունը ուներ օրինական կարգավիճակ. նրանց բավականին մեծ մաս (երեքից երկուսը) ուներ միայն ժամանակավոր կամ ոչ մշտական գրանցում: Հյուրընկալող երկրում հարցվածների ընդհանուր թվի 4.9%-ը անկանոն կարգավիճակ է ունեցել հյուրընկալող երկրում:

Տնային տնտեսության արտագաղթածները սովորաբար բնակվում են վարձակալած բնակարաններում/տներում (34.5%), վարձակալած սենյակներում (23.7%), հարազատի կամ ընկերոջ տանը (15.6%), հանրակացարաններում (11.5%), ոչ բնակելի կացարաններում (8.2%) և առանձնատներում (5.1%):

Ինչ վերաբերում է առողջության ապահովագրությանը, ապա նույնականացված արտագաղթածների ընդհանուր թվի 76.7%-ի դեպքում այն բացակայել է, 6.1%-ը ունեցել է մշտական ապահովագրություն, իսկ 12.6%-ը՝ ժամանակավոր ապահովագրություն:



Վերադարձած միգրանտները

Վերադարձի միգրացիայով նկարագրվում է մի իրավիճակ, երբ միգրանտները վերադառնում են Հայաստանի Հանրապետություն՝ սովորաբար իրենց սեփական նախաձեռնությամբ՝ հաճախ արտերկրում գտնվելուց որոշ ժամանակահատված անց: Ուղղակիորեն, տնային տնտեսությունների անդամների 2.7%-ը (n=828) առնչություն է ունեցել արտերկրից վերադարձի հետ: Վերադարձած արտագաղթածների մասնաբաժինը կազմել է միգրացիոն արտահոսքերի 37.8%-ը 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում, որը համապատասխանում է, կշռված ընտրանքի հաշվարկով, 82.530 անձի: Այս թվերը հուշում են, որ վերադարձի միգրացիան բավականին նշանակալի է, և վերադարձի հետ կապված հարցերը պետք է հասցեագրվեն՝ անմիջականորեն միգրացիոն ներհոսքի հաջողությունը բարելավելուն ուղղված քաղաքականությունների միջոցով:

Վերադարձած միգրանտների 66%-ը եղել են տղամարդիկ՝ հաստատելով Հայաստանի Հանրապետությունից արտահոսքերի մասով տղամարդկանց թվային գերակշռությունը:

Վերադարձած միգրանտների տարածքային բաշխումը տարբերվում է արտագաղթածների տարածքային բաշխումից՝ տարածքների միջև զգալի տարբերակմամբ: Կարելի է նկատել, որ Երևանին բաժին է ընկնում վերադարձած միգրանտների միջինում 35%-ը, սակայն այն արտագաղթածների 18.4%-ի համար է միայն սկզբնակետ տարածք: Դրան հակառակ՝ Շիրակի տարածքին բաժին է ընկնում վերադարձած միգրանտների միայն 6.7%-ը, սակայն այն ընդհանուր արտագաղթածների 17.6%-ի համար է սկզբնակետ տարածք: Այս տվյալները հուշում են այն մասին, որ Հայաստանում նկատվում է միգրացիոն հոսքերով պայմանավորված բնակչության վերաբաշխում, որն արտահայտվում է, բնակչության նվազումով որոշ մարզերում և աճով՝ ՀՀ մյուս մարզերում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերադարձած միգրանտների կրթությունը որոշ չափով բարելավվել է՝ համեմատած ՀՀ բնակչության միջին թվի հետ: Տվյալներով հիմնավորվում է, որ վերադարձած արտագաղթածների 41.7%-ը ունեցել է ընդհանուր միջնակարգ կրթություն (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 37.3%-ի հետ), 3.1%-ն ունի նախամասնագիտական կրթության (քուլտ) դիպլոմ (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 2.2%-ի հետ), 21.5%-ը՝ միջին մասնագիտական դիպլոմ (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 18.5%-ի հետ):

Հետազոտության տվյալների վերլուծությունը չի ներկայացնում բարձր որակավորում ունեցող անձանց մեկնումը, ոչ էլ «ուղեղների զանգվածային արտահոսքը»՝ գոնե վերջին տարիների ընթացքում, ինչպես ներկայացված է վերևում: «Ուղեղների ներհոսք» չի նկատվում նաև վերադարձի հոսքի պայմաններում:

Ինչ վերաբերում է հնարավոր «հմտությունների ներհոսքին», ապա արտերկրից վերադարձած՝ հարցված տնային տնտեսություններից երկուսից մեկը նշել է, որ իրենք ավելացրել են իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները արտերկրում գտնվելու ընթացքում (15.5%-ը ավելացրել է էականորեն, 36.9%-ը՝ ավելացրել է որոշ չափով): 47.5%-ի համար նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները չեն ավելացել արտերկրում գտնվելու ընթացքում:



Հարցազրույցի մասնակցածների 78.5%-ը, որոնք վերադարձել են արտերկրից (n=766), ուներ հարազատներ (ընկերներ) նպատակակետ երկրում՝ նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը, որը հզոր աջակցության ցանցի նշան է: Այս աջակցության ցանցը տեսանելի է՝ հաշվի առնելով օժանդակության տեսակը, որ նրանք ստանում են՝ 29.6%-ը օգնություն է ստացել աշխատանք գտնելու հարցում, 24.2%-ը՝ կացարան գտնելու հարցում, 18%-ը օգնություն է ստացել ուղևորության ծախսերի հարցում, 13.7%-ը՝ մենդիկամ կացարանի, 1.4%-ը՝ վիզա ստանալու հարցում, իսկ 0.5%-ը՝ այլ տեսակի աջակցություն: Միայն 12.6%-ն է, որ որևէ օգնություն չի ստացել:

Վերադարձած միգրանտների 39.2%-ը հոգացել է իր միգրացիոն ուղևորությունը սեփական խնայողությունների հաշվին, 26.1%-ը՝ ֆինանսավորել է իր ուղևորությունը՝ պարտքեր կուտակելով, 16.6%-ը՝ անհատույց տրված օգնության միջոցով, 6.4%-ի ուղևորության համար վճարել է գործատուն, 4.6%-ը՝ վաճառել է գույք, 3%-ը՝ բանկից փոխառություն է վերցրել, իսկ 1%-ը՝ ուղևորության համար միջոցներ է ձեռք բերել գույքի գրավադրմամբ կամ վարկով:

Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառներից են ցանցային միգրացիայի գերակշռությունը (ընկերների և (կամ) հարազատների ցանցի առկայությունը նպատակակետ երկրում) 40.5% դեպքերում: Այստեղ անհրաժեշտ է նշել աշխատանքային շուկան (աշխատանքի առաջարկները կազմել են ընտրված նպատակակետի 21.9%-ը), լեզվական խնդիրը (լեզվի իմացությամբ է բացատրվում նպատակակետ երկիր ընտրելու տարբերակի 11.7%-ը, մուտքի վիզայի բացակայությունը՝ (5.7%), այլընտրանքային տարբերակների բացակայությունը (6.3%): Նպատակակետ երկրում նախկինում բնակվելու փաստով է բացատրվում տնային տնտեսությունների հարցված անդամների 3%-ի համար այդ նույն նպատակակետն ընտրելու նախընտրությունը:

Ինչ վերաբերում է հյուրընկալող երկրում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկում գրանցվելուն, ապա վերադարձած միգրանտների ընդհանուր թվի միայն 26.4%-ն է այնտեղ գրանցվել: 6.8%-ի համար պատճառը կարճաժամկետ միգրացիան է եղել (6 ամսից պակաս ժամանակահատվածը), 30.4%-ը պնդել է, որ իրենք չեն տեղեկացվել գրանցվելու պարտավորության մասին, 43.8%-ը որոշել է չգրանցվել, քանի որ հարկ չի համարել, 2.5%-ը պնդել է, որ դրա համար ժամանակ չի ունեցել, 4.1%-ը նշել է, որ բյուրոկրատական քաշքշուկներն են շատ եղել, վերադարձած միգրանտների 7%-ը նշել է, որ այդ նպատակակետ երկրում (տարածքում) ՀՀ-ի հյուպատոսական հիմնարկ չի եղել, 3.2%-ի համար դժվար է եղել հասնել Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկ, 1.9%-ի համար այլ չնշված պատճառներ են եղել:

Վերադարձած միգրանտներից մոտավորապես տասից մեկը ձեռք է բերել տվյալ պահին ընդունող երկրի քաղաքացիություն (8.5%), այս վերադարձած միգրանտների զգալի մասը ունեցել է բնակության թույլտվություն (15%), 44%-ն ունեցել է ժամանակավոր գրանցում, 18.9%-ը՝ աշխատանքի թույլտվություն, 0.8%-ը փախստականներ են եղել, 0.8%ը՝ ապաստան հայցողներ, 0.6%-ն ունեցել է այլ կարգավիճակ, որը չի հստակեցվել: Չնայած որ ճշող մեծամասնությունն ունեցել է օրինական կարգավիճակ, միևնույն ժամանակ բավականին մեծ թիվ (հարցվածներից ավելի, քան 10-ից մեկը կամ 11%-ը) ունեցել է անօրինական կարգավիճակ հյուրընկալող երկրում:

Հարցված տնային տնտեսությունները, որոնք վերադարձել են արտագաղթից, հյուրընկալող երկրում գտնվելիս սովորաբար բնակվել են վարձակալված բնակարաններում (առանձնատներում) (30%), ունեցել են ծանոթներ կամ հարազատներ (29%), վարձակալեն



են սենյակներ (19.7%), հանրակացարաններ (7.3%), սեփական տներ (6.7%), հարմարեցված ոչ բնակելի կացարաններ (5.4%) և այլ չնշված կացարաններ (1.8%):

Վերադարձած միգրանտների ճնշող մեծամասնությունը արտերկրում բնակվելիս չի ունեցել բժշկական ապահովագրություն. 13.7%-ն ունեցել է ժամանակավոր բժշկական ապահովագրություն, իսկ 8.2%-ն ունեցել է մշտական բժշկական ապահովագրություն:

Վերադարձողների 70.4%-ը, նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը, մտադրություն է ունեցել աշխատել արտերկրում: Աշխատանքային միգրացիայի հոսքերը մեկ անգամ ևս հաստատվում են այն փաստով, որ այդ հարցված տնային տնտեսությունների թվից՝ 58.3%-ը ստացել է աշխատանքի խոստում՝ նախքան ՀՀ-ից մեկնելը, 5.9%-ը՝ աշխատանքային գրավոր պայմանագիր և 0.7%-ը՝ աշխատանք ստանալու այլ պայմանավորվածություն: Հարցվածների 34.9%-ը չի ունեցել աշխատանքի որևէ տեսակի առաջարկ կամ դրա վերաբերյալ համաձայնություն:

70% դեպքերում այդ պայմանավորվածությունները ձեռք են բերվում օտարերկրյա գործատուների, միջնորդների կամ բրիգադիրների հետ: Բրիգադիրները կամ միջնորդները, մասնավոր և պետական գործակալությունները Հայաստանի Հանրապետությունում հուսալի են աշխատանքների հետ կապված հարցերի կազմակերպման դեպքերից 24.6% դեպքում:

Ընդհանուր թվից 5.4%-ի դեպքում, աշխատանքի հետ կապված կազմակերպչական հարցեր չեն իրականացվել: Հարցված տնային տնտեսությունների 40.9%-ի դեպքում, այդ հարցերը ամբողջությամբ իրականացվել են, 38.3%-ի դեպքում հիմնականում իրականացվել են, 15.4%-ի դեպքում՝ առնվազն մասնակիորեն իրականացվել են: Ձախողումների պատճառը հիմնականում վերագրվել է անկանխատեսելի իրավիճակներին՝ 40.3% դեպքերում, գործատուին՝ 29.2% դեպքերում կամ միջնորդին՝ 23.6% դեպքերում:

Հետազոտված տնային տնտեսությունների վերադարձած միգրանտների 36.3%-ը աշխատանք չի ունեցել ամբողջ վեց ամիսը մինչև հետազոտությունը, իսկ 40.6%-ն աշխատել է այդ ամբողջ վեց ամիսը: Եթե վերջին խմբին ավելացնենք նաև թոշակառուներին (նպաստառուներին) (5.9%), ապա կհասկանանք, որ ընտանիք կերակրողների թիվը կազմում է վերադարձածների 50%-ից քիչ: Ընդհանուր առմամբ, աշխատանք չունեցող վերադարձած արտագաղթածների միայն 13.4%-ը չի փնտրել աշխատանք վեց ամիս մինչև հետազոտությունը, մնացած 86.4%-ը ակտիվորեն փորձել է աշխատանքի հնարավորություն գտնել:

Աշխատանքի հավանականությունը բավականին բարձր է վերադարձած միգրանտների այդ խմբի համար: Չնայած որ, մինչև վերադարձը, 7.8%-ը ունեցել է երեք ամսից պակաս ժամանակավոր աշխատանք, 48.4%-ը՝ մեկ տարվանից քիչ ժամանակավոր պայմանագիր և 42.6%-ը՝ անժամկետ պայմանագիր: Մինչև միգրացիան և միգրացիայից հետո աշխատանքի բնույթի համեմատությունները հետաքրքիր փոփոխություններ են արձանագրում (տես գծապատկեր 26-ը): Կարճաժամկետ աշխատանքից ավելի քիչ անկայուն աշխատանքի տեղափոխվելը, թվում է շատ ակնհայտ:

Այդ անձանցից՝ 60.7%-ն աշխատել է շինարարության ոլորտում, 10.2%-ը՝ առևտրի ու նորոգումների, 8.6%-ը՝ արդյունաբերության, 1.4%-ը՝ կրթության, 1.2%-ը՝ գյուղատնտեսության, 0.8%-ը՝ պետական կառավարման և 16.6%-ը այլ ծառայություններում: Մինչև ՀՀ-ից մեկնելը և հյուրընկալող երկրում զբաղվածության ոլորտների համեմատությունները ցույց են տալիս շարժ գյուղատնտեսությունից դեպի շինարարություն՝ որպես ամենաէական փաստը (տես գծապատկեր 24-ը):



Հարցվածների 23.8% դեպքերում, հյուրընկալող երկրում իրենց զբաղվածության մասով (n=488)՝ իրենց ունեցած աշխատանքը ամբողջությամբ համապատասխանել է իրենց մասնագիտությանը, 19.3% դեպքերում այն համապատասխանել է գոնե մասնակիորեն, 12.1% դեպքերում այն ավելի բարձր է եղել իրենց մասնագիտական մակարդակից, 21.5% դեպքերում տեղի է ունեցել մասնագիտական արժեզրկում: 23.4% դեպքերում նրանք նշել են, որ արտագաղթից առաջ մասնագիտությունն չեն ունեցել:

Ինչ վերաբերում է որակավորումներին, ապա տնային տնտեսությունների հարցված անդամների 38.7%-ի համար աշխատանքը համապատասխանել է ամբողջությամբ, իսկ 35.7%-ի համար՝ մասնակիորեն: 22.1% դեպքերում, իրենց ունեցած աշխատանքը իրենց որակավորումից ավելի ցածր է եղել, 2.0% դեպքերում՝ իրենց որակավորումից ավելի բարձր: Թվում է, ինչպես և վերջին արտագաղթածների դեպքում, թե վերադարձողներից շատերը միգրացիան դիտարկել են որպես իրենց երկրում գործազրկության այլընտրանք կամ իրենց զարգացրած հմտությունների համար հնարավորությունների բացակայության այլընտրանք:

Ինչ վերաբերում է շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերին, ապա հետազոտությունում առկա է նաև դրա վերաբերյալ տեղեկատվություն: Հարցված տնային տնտեսությունների անդամների 4.4%-ը շաբաթական աշխատել է 4-ից 35 ժամ, 12.5%-ը՝ շաբաթական 36-ից 40 ժամ, 25.5%-ը՝ շաբաթական 41-ից 50 ժամ, 24.5%-ը՝ շաբաթական 51-ից 60 ժամ, 25%-ը՝ շաբաթական ավելի քան 61 ժամ: Հարցվածների 7.9%-ը որոշել է չպատասխանել այս հարցին: ՀՀ-ից մեկնելուց հետո և առաջ շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերի համեմատությունը ցույց է տալիս աշխատանքային ժամերի աճ թե՛ բացարձակ, և թե՛ տոկոսային արտահայտությամբ:

Արտերկրում վերադարձողներից 11.3%-ը եղել են ինքնազբաղվածներ, ընդհանուր թվի 9.8%-ի դեպքում գործատուն եղել է հայաստանցի հայրենակից, 49.2%-ի դեպքում՝ տեղացի հայրենակից կամ տեղական կառույց, 24.2%-ի դեպքում՝ պետությունը, իսկ 0.8%-ի դեպքում՝ այլ գործատուներ, որոնք չեն նշվել:

44% դեպքերում հարցվածներն իրենց աշխատանքը գտել են հյուրընկալող երկրում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 19.6% դեպքերում՝ Հայաստանում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 13.1% դեպքերում՝ օտարերկրյա գործատուի միջոցով, 4.2% դեպքերում՝ Հայաստանում բրիգադիրների միջոցով, 2.7% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով, 2.3%-ը սեփական կամ ընտանեկան բիզնես է ունեցել արտերկրում, Հայաստանում ապրող գործատուի միջոցով, 1.3% դեպքերում՝ ինտերնետով, 1.1% դեպքերում՝ օտարերկրյա պետության գործակալության միջոցով, 1% դեպքերում՝ մասնավոր գործակալության միջոցով, 2.7% դեպքերում՝ չի նշվել, և միայն մեկ անձ է աշխատանք գտել ՀՀ զբաղվածության պետական ծառայության միջոցով:

Հարցված տնային տնտեսություններից 47.9%-ի դեպքում (2%-ը նշել է, որ իրենք պարտքեր են կուտակել շատ ցածր եկամտի պատճառով) ամբողջ եկամուտը բավարար չի եղել խնայողություններ կուտակելու համար: Հարցվածների 8.2%-ի դեպքում, եկամուտը բավարար է եղել խնայողություններ կուտակելու համար, 29.6%-ը նշել է, որ մասամբ է հնարավոր եղել խնայել որոշ գումար, և հարցվածների 8%-ն է կարողացել շատ քիչ գումար խնայել իրենց եկամտից:



Վերը նշված խնայողություններից կատարված ծախսերից՝ ամենամեծ մասնաբաժինն ընկնում է տնային տնտեսության ընթացիկ կարիքների վրա (40.8%): Ծախսերի զգալի մասը բաժին է ընկել կոմունալ ծախսերին (13%) կամ սոցիալական կարիքներին, ինչպիսիք են՝ կրթությունը, առողջապահությունը և այլն (9.1%), անկանխատեսելի հանգամանքների դեպքում կատարված ծախսերը կազմել են 7.6%, իսկ եկամուտներից խնայումները՝ 11.5%:

Վերադարձած միգրանտների ճնշող մեծամասնությունը հայտարարել են, որ իրենք խնդիրներ չեն ունեցել արտերկրում գտնվելու ընթացքում (86.2%): Հարցվածների մնացած մասի դեպքում՝ 5.1%-ը հյուրընկալող երկրում խնդիրներ է ունեցել ոստիկանության հետ, 3.1%-ը՝ իր գործատուի հետ, իսկ առողջության հետ կապված խնդիրներին բաժին է ընկել ընդհանուր թվի 1.6%-ը:

38.7% դեպքերում այդ խնդիրները լուծվել են ծանոթությամբ՝ հյուրընկալող երկրում գտնվող տեղացիների միջոցով, 21.7% դեպքերում այդ խնդիրներն ընդհանրապես չեն լուծվել, 12.3% դեպքերում այդ խնդիրները լուծվել են գործատուի կողմից և շատ քիչ դեպքերում՝ դատարանի (6.6%) կամ ոստիկանության (7.5%) միջամտությամբ:

Վերադառնալու վերաբերյալ որոշումը, թվում է, ավելի շատ կապված է եղել ընտանիքի հետ (ընդհանուր թվի 56.1%), քան տարբեր երկրներում եկամտի հնարավորությունների (տե՛ս Գծապատկեր 31-ը): Թվում է, թե վերադարձի միգրացիան ստանում է պրակտիկ բնույթ տնային տնտեսության մասով կայացված որոշման համատեքստում: Վերադարձը նաև տեղի է ունենում կոնկրետ շրջափուլի սահմաններում, երբ միգրացիոն ծրագիրն ավարտվում է (20.9%): Տնային տնտեսությունները նաև ընտրում են արտերկրում գտնվելու այնպիսի տևողություն, որի պարագայում հավասարակշռություն է ապահովվում արտերկրում ավելի մեծ խնայողություններից ստացվող առավելագույն օգուտի (հետևաբար կյանքի ընթացքում սպառման ավելի մեծ ծավալի) և արտերկրում աշխատանքի հետ կապված առավելագույն ծախսերի միջև: Որոշ միգրանտների համար դա նշանակում է շատ կարճ, ժամանակավոր, սեզոնային կամ շրջանակային միգրացիա, կրկնվող վերադարձով, իսկ մյուսների համար մի ժամանակահատված (կարճ կամ երկար), որը կախված է տնային տնտեսությունից ֆինանսական կարիքներից կամ ակնկալիքներից:

Միգրացիոն ծրագրի գնահատումը վերադարձից հետո ՀՀ աշխատանքային շուկայում մրցունակության տեսանկյունից, միջինում, լավատեսական չէ: Հարցվածների 47.5%-ի համար իրենց մրցունակությունն աշխատանքային շուկայում չի բարելավվել, 18.3%-ի համար՝ թվում է, թե չի բարելավվել: Հարցվածների 13.4%-ի համար միգրացիոն ծրագիրը նրանց մրցակցային առավելություն է տալիս ՀՀ աշխատանքային շուկայի հետ համեմատությամբ, իսկ 20.1%-ը համոզված է, որ դա բավականին դրական է եղել:

Վերադարձած միգրանտների համար ամենամեծ խնդիրը տեղեկատվության պակասն է, որը վերադարձի ու վերաբնակեցման խոչընդոտի է վերածվում: Այս տեղեկատվությունը կարող է երկուստեք բարենպաստ լինել, սակայն անհրաժեշտ տվյալների հավաքման հստակ կառուցվածք ստեղծել՝ երկրի ու միգրանտների կարիքների վրա կենտրոնանալու համար:

Վերադարձած միգրանտների միայն 30.4%-ն է տեղեկացրել Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը իրենց վերադարձի մասին:



Վերադարձած միգրանտների 52.7%-ի համար իրենց վիճակը չի փոխվել վերադարձից հետո, այդ վիճակն էլ ավելի է վատացել 32.8%-ի համար, այն բարելավվել է 12.8%-ի համար և հիմնականում բարելավվել է Հայաստանի Հանրապետություն վերադարձածների 1.6%-ի համար:

Ճնշող մեծամասնությունը ոչ մի խնդիր չի ունեցել Հայաստանում վերադարձից հետո (67.1%), իսկ 14.9%-ը՝ շատ քիչ խնդիրներ է ունեցել: 8.1%-ի համար վերադառնալը խնդրահարույց է եղել, իսկ 9.8%-ի համար՝ բավականին խնդրահարույց:

Հայաստանում կրկին հարմարվելու հարցում հիմնական խնդիրներն առնչվել են աշխատանքային շուկայում վերաինտեգրվելու հետ (46%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են աշխատանքին), ինչպես նաև հանգստի կազմակերպման կարողություններին (24.8%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են հանգստի կազմակերպման կարողություններին):



Ներգաղթածները (ներհոսքը)

Տնային տնտեսությունների այս հետազոտությունում նշվել են մի շարք հարցեր (ընդհանուրը 37 հարց) միգրացիոն ներհոսքերի վերաբերյալ (տե՛ս հավելվածում ներառված հարցաշարի բաժին 5-ը): Ներգաղթածների ընտրվածությունը կարելի է նկատել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների միջոցով՝ նպատակակետ երկրում միգրանտներ չհանդիսացողների մասով նույն առանձնահատկությունների կամ միգրացիոն այլ հոսքերի հետ համեմատած:

Արտերկրից առաջին անգամ վերադարձածները հարցվածների շատ փոքր թիվն են կազմել (այս անձինք ներգաղթածներ են եղել ու արտերկրում ծնված հայերի ժառանգներ), 129 անձանց ընդհանուր թվում, համապատասխանելով, կշռված ընտրանքում, 14.312 անձի: Հարցվածների այս շատ սահմանափակ թիվը, ինչպես և ակնկալվում էր, վիճակագրական հետևանքներ ունի շատ փոփոխականների մասով՝ հնարավորություն չտալով ավելի խորը վերլուծություն կատարելու համար:

Հարցվածների ընդհանուր թվից՝ 41.2%-ը եղել են տղամարդիկ (կշռված ընտրանքում համապատասխանում է 5.893 անձի), իսկ 58.8%-ը՝ կանայք (կշռված ընտրանքում համապատասխանում է 8.419 անձի):

Երևանը համարվում է ներհոսքերի համար հիմնական նպատակակետը (ներգաղթ և վերադարձի միգրացիա), սակայն ոչ գերակա նպատակակետը ներքին միգրացիայի համար: Արարատը ներգաղթածների երկրորդ նպատակակետն է, իսկ Կոտայքը ներքին միգրացիայի կարևոր նպատակակետ է:

Դեպի Հայաստանի Հանրապետություն միգրացիայի ուղին բռնելու վերաբերյալ որոշումը 34.3% դեպքերում կայացվել է անհատապես հարցվողի կողմից, իսկ մնացած 65.7% դեպքերում դա եղել է ընտանիքի որոշումը:

Հարցմանը մասնակցած՝ արտերկրում ծնվածների շրջանում միայն 43.3%-ն է ամուսնացած եղել՝ բոլոր հետազոտված միգրացիոն խմբերից ամենափոքր համամասնությունը:

Ներգաղթածների տարիքային խմբերի վերլուծության միջոցով բացահայտվել են դեպի Հայաստանի Հանրապետություն ժամանակակից տարբեր ներհոսքերի առաջին տվյալները, որտեղ ներգաղթի շատ մեծ թիվ են կազմել երիտասարդ տարիքային խմբերը (0-24), և նվազ թվով՝ ակտիվ տարիքային խմբերը (25-59): Իրականում, դեպքերի մեծ մասում այս ներհոսքը անմիջականորեն կապված չի եղել ներգաղթային հոսքի հետ, սակայն դա երկրորդ սերնդի արտագաղթածների վերադարձի արդյունքն է եղել, որոնք ծնվել են արտերկրում և վերադառնել են իրենց ծնողների հետ Հայաստանի Հանրապետություն: Նորեկների 13,2%-ը ծնվել է 2007 թվականից հետո: Դա, մասամբ, արտացոլում է ՀՀ-ի նախկին միգրացիոն պատմությունը և, միաժամանակ, երկրի աշխարհաքաղաքական ներգրավվածությունը հետկոնֆլիկտային տարածաշրջանում:

Մինչմիջնակարգ կրթությամբ հարցվածների մասնաբաժինը անհամաչափ է եղել ՀՀ միջին թվի և վերլուծության ենթարկվող այլ միգրացիոն խմբերի հետ: Տեղացի բնակչության և նորեկների միջև կրթության ստացման հարցում բաժանումը ամենայն հավանականությամբ կնվազի ապագայում, եթե ներհոսքային բնակչությունը ինտեգրվի ՀՀ կրթական համակարգում:



Ինչպես նշվել է ավելի վաղ, կարևոր տարբերակում կարելի է մտցնել «քաղաքացիություն» և «ազգություն» փոփոխականներից ստացվող տվյալների միջև: Հետազոտությունից անակնկալ տվյալներ են ստացվել հարցազրույցի մասնակցած՝ տնային տնտեսությունների այն անդամների քաղաքացիության մասով, որոնք միգրացիոն ուղին բռնել են արտերկրից. 34.2%-ը եղել են արտերկրում ծնված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այդ տնային տնտեսությունների 24%-ը ունեցել է Հայաստանի քաղաքացիություն և մեկ այլ երկրի քաղաքացիություն, այսինքն՝ երկքաղաքացիություն, 40.7%-ը ունեցել է օտարերկրյա քաղաքացիություն, իսկ 1.1%-ը քաղաքացիություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է ազգությանը, ապա 97.7%-ը նշել է, որ իրենք հայեր են, 0.7%-ը՝ ռուսներ, 0.6%-ը՝ հնդիկներ, 0.8%-ը՝ այլ ազգության:

Այս ներգաղթային հոսքում «վանող» գործոնները, թվում է, հիմնական գործոններն են: Ստացված տվյալների արդյունքում արված հետաքրքիր բացահայտումն այն է, որ աշխարհաքաղաքական անկայունությունն առաջ է բերում հյուրընկալող երկիրը լքելու կարևոր պատճառ (37.4%). քաղաքական հայացքների համար հետապնդվողների հավելյալ 2.8%-ը դա նշել է որպես միգրացիայի պատճառ: Ընտանեկան պատճառները կապված են եղել արտագաղթի պատճառների 36.5%-ի հետ, զբաղվածության բացակայությունը կամ այլ տնտեսական պատճառները վերաբերել են հարցվածների շատ փոքր թվին:

ՀՀ-ն որպես նպատակակետ ընտրելու հիմնավորումը հիմնականում կապված է եղել զգացմունքային պատճառների կամ ընտանիքի հետ (ընդհանուր թվի 58.2%-ը), հարցվածների փոքր թվի դեպքում, տնտեսական կամ զբաղվածության պատճառներ են նշվել (4.7%), կրթությունը կամ վերապատրաստումը կարևոր է եղել ընդհանուր թվի 4.6% դեպքերում, մյուս չնշված շարժառիթները կազմել են 10.3%:

Հարցվածների ընդհանուր թվի 65.5% դեպքում դեպի Հայաստանի Հանրապետություն միգրացիան միակ հասանելի նպատակակետն է եղել: Լրացուցիչ ուսումնասիրություններ են անհրաժեշտ այս երևույթի պատճառները հասկանալու համար:

Ներհոսքային բնակչության առանձնահատկությունները տարբերվում են մի քանի կարևոր առումներով՝ վերը նշված նախկին միգրանտների ընդհանուր նկարագրերից: Մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակին վերաբերող տվյալների վերլուծությունը ցույց է տալիս անգործության մեծ թիվ հարցվածների շրջանում (60.6%), միգրացիայից առաջ հինգից մեկն առանց աշխատանքի է եղել: Չնայած այն հանգամանքին, որ չափազանց պարզ է նշել ներգաղթի, անգործության չափի և գործազրկության միջև կապը, միգրացիոն ներհոսքի շրջանակներում պետք է ակնկալել աշխատանքային միգրանտների ավելի բարձր թիվ: Այս առանձնահատկությունները մեզ մղում են մի վարկածի. այս հոսքը արտագաղթի պատմական տեղաշարժերի հակադարձ հոսքն է ավելի շատ, քան աշխատանքային միգրացիոն հոսքը:

Ինչ վերաբերում է արտերկրում ծնվածների իրավական կարգավիճակին Հայաստանի Հանրապետությունում, ապա 41.3%-ը ՀՀ քաղաքացիներ են եղել, արտերկրում ծնվածների 17.4%-ը դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, արտերկրում ծնվածների 4.8%-ը ունեցել է կացության թույլտվություն, 2.5%-ը՝ աշխատանքի իրավունք, արտերկրում ծնվածների 14.5%-ը ունեցել է ժամանակավոր գրանցում, իսկ արտերկրում ծնվածների 17.6%-ը (համապատասխանում է 1787 անձի կշռված արժեքի) չի ունեցել օրինական կարգավիճակ:



Տնտեսությունը և փոխանցումները

ՀՀ արտագաղթածների կողմից իրենց ընտանիքներին ուղարկված մեծածավալ փոխանցումները օգնել են աղքատության նվազեցման հարցում, նպաստել են մարդկային զարգացմանը և մեղմացրել են սոցիալական լարվածությունը: Հայաստանը առաջին 20 երկրների շարքում է, որոնք ստանում են ամենաբարձր փոխանցումները (իրենց ՀՆԱ-ի մասով) (Մակարյան և Գալստյան, 2012:7):

Ինչպես և ակնկալվում էր, ստացվող փոխանցումները համամասնորեն ավելի բարձր են եղել ժամանակակից արտագաղթած տնային տնտեսությունների շրջանում, քանի որ արտագաղթածներ ունեցող տնային տնտեսությունների 78.5%-ը արտերկրից փոխանցումները ստացել է վերջին 12 ամսվա ընթացքում: Ներքին միգրանտներից չորսից մեկը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին մեկ տարում, վերադարձած միգրանտներից տասից չորսը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին 12 ամսվա ընթացքում, իսկ արտերկրում ծնված բնակիչներից երկուսից մեկը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին 12 ամսվա ընթացքում:

Վերադարձած միգրանտներից չորսից երկուսը ուղարկել են փոխանցումներ իրենց տնային տնտեսության անդամներին՝ արտերկրում գտնվելու ընթացքում: Հարցվածների 47.7%-ը դա արել է պարբերաբար, 13.1%-ը ժամանակ առ ժամանակ, իսկ 4.4%-ը՝ հազվադեպ: Մոտ 15.9%-ը ի վիճակի չի եղել օգնել իր տնային տնտեսությանը, 11.4% դեպքերում՝ անհրաժեշտ չի եղել, իսկ 0.7% դեպքերում ՀՀ-ում գտնվող տնային տնտեսությունն է ուղարկել գումար արտերկր:

Ներկա և նախկին արտագաղթածների միջև դրամական փոխանցումների կազմաձևերը համեմատելիս պատկերը թվում է շատ հստակ կանոնակարգված: Ներկայումս, արտագաղթածները հակված են ավելի պարբերաբար գումարներ փոխանցել իրենց տնային տնտեսություններին (քանի որ տնտեսական պատճառները ՀՀ-ից մեկնելու հիմնական շարժառիթն են եղել, և դա բնական է թվում): Վերադարձած միգրանտների որոշակի համամասնության համար անհնար է եղել փոխանցումներ կատարել իրենց տնային տնտեսություններին (և կարող ենք ենթադրել, որ անձանց այդ մասի համար դա եղել է վերադառնալու հիմնական պատճառը):

Արտերկրում գտնվող ժամանակակից միգրանտները սովորաբար ֆինանսական փոխանցումներ են ուղարկել Հայաստանի Հանրապետություն բանկային փոխանցումների (82.8%), փոխանցման ծառայություններ մատուցողների (օրինակ՝ Վեսթերն Յունիոնը [Western Union]) միջոցով՝ (8.5%), սուրհանդակի միջոցով՝ (0.2%), նրանք գումարներն իրենց հետ են բերել՝ տուն այցելելիս (3.8%) կամ նրանք գումարն ուղարկել են եկողների միջոցով (4.5%):

Նախկին միգրանտները նույնպես շատ նման եղանակով են գործել: Տնային տնտեսություններին փոխանցումներն ուղարկելու նախընտրելի եղանակը բանկային ուղին է եղել (79.1%), փոխանցման ծառայություններ մատուցողները (Վեսթերն Յունիոնը [Western Union])՝ (7.3%), փոստով՝ (0.4%), սուրհանդակի միջոցով՝ (0.2%): Գումարի մի մասնաբաժինն էլ փոխանցվել է ընկերների կամ հարազատների միջոցով, երբ նրանք այցելել են իրենց երկիրը (5.3%), կամ հենց միգրանտների միջոցով, երբ նրանք տուն են այցելել (7.3%):

Այս հետազոտության համաձայն՝ միգրանտ ունեցող տնային տնտեսություններից չորսից մեկը կամ հարցվածների 25% -ը փոխանցումներ է ստացել իրենց միգրանտ գործ-



ընկերներից: Դա համապատասխանում է ներքին միգրանտների գրեթե 25.5%-ին: Դա մի փոքր քիչ է՝ 28% կազմող պետության մակարդակով միջին թվից՝ դիտարկելով հարցվածների ընդհանուր թիվը:

Ֆինանսական փոխանցումները, որոնք ստացվել են Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների մեկ քառորդի կողմից, ներկայումս դարձել են շատ տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու կարևոր եղանակ:

Փոխանցումները հավասարապես բաշխված չեն Հայաստանի տարածքով մեկ: Մեծ անհամապատասխանություն է առկա շրջանների միջև՝ Տավուշի մարզում տասը տնային տնտեսություններից չորսը արտերկրից փոխանցումներ է ստացել (40,7%), Երևանում՝ տասից միայն երկուսն է (19,6%) արտերկրից փոխանցումներ ստացել, իսկ Արագածոտնում տնային տնտեսությունների միայն 16,7%-ն է փոխանցումներ ստացել արտերկրից:

Հարցվածների մոտավորապես 1.9%-ի համար (61.063 անձ կշռված ընտրանքում), կեցության հիմնական աղբյուրը արտերկրում մշտապես բնակվող՝ տնային տնտեսության անդամների եկամուտն է եղել: Այդ փոխանցումները Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 127.000 մարդու (կամ 4%) կեցության շատ կարևոր աղբյուրն է եղել:

Հարցվածների ընդհանուր թվի 11.2%-ի համար (353.869 անձ կշռված ընտրանքում), կեցության հիմնական աղբյուրը արտերկրում ժամանակավորապես բնակվող՝ տնային տնտեսության անդամների եկամուտն է եղել: Այդ փոխանցումները Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 500.000 մարդու (կամ 17%) կեցության շատ կարևոր աղբյուրն է եղել:

Ինչպես և ակնկալվում էր, փոխանցումների մեծ մասը օգտագործվել է սպառման ուղղությամբ և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ու ծառայությունների համար (օրինակ՝ բժշկական ծառայություններ): Որոշակի միգրացիոն խմբերի միջև տարբերությունները էական չեն եղել: Միգրանտները նաև ժամանակ առ ժամանակ գումար են ուղարկել կոնկրետ նպատակներով՝ այնպիսի ծախսեր հոգալու համար, ինչպիսիք են՝ ամուսնությունը, բժշկական ծառայությունների համար վճարումը և այլն:

Հարցվածների միայն փոքր թիվն է ապրանքներ ստացել արտերկրից: Տարբերությունները էական չեն եղել՝ համեմատելով միգրանտների խմբերը ներքին միգրանտների խմբի հետ՝ որպես ստացողների ավելի նվազ համամասնություն (3,7%), իսկ վերադարձած միգրանտների շրջանում մենք հայտնաբերել ենք արտերկրից ապրանքներ ստացող տնային տնտեսությունների ամենամեծ համամասնությունը:



Գլուխ 1. Ներածություն

Քանի որ միջազգային միգրացիան շարունակում է մեծ կարևորություն ստանալ համաշխարհային մակարդակով, անհրաժեշտություն է առաջանում նաև բարելավել միգրացիոն տվյալների հավաքումն ու որակը: Այդ անհրաժեշտությունը մի քանի գործոնների արդյունք է, այդ թվում՝ միգրացիայի համար ընդհանուր սահմանումներ ընդունելու դժվարությունը, տվյալների հավաքման հետ կապված հարցերը, միգրացիայի ճիշտ ծավալները չափելու հետ կապված խնդիրները, ինչպես նաև ընդունող և ուղարկող երկրների համար միգրացիայի գնահատման ազդեցությունը չափելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը: Տեղեկատվության մասով այս սղության հարցը մեղմացնելու համար, տնային տնտեսությունների հետազոտությունները կարող են կարևոր դեր խաղալ միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքման ու բարելավման հարցում՝ մասնավորապես, ներկայիս ու նախկին միգրանտների ազդեցության և առանձնահատկությունների մասով (Շախտեր, 2008): Այնուամենայնիվ, միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների հետազոտություններն իրենցից ներկայացնում են մեթոդաբանական խնդիր, հատկապես ծագման երկրներում: Միջազգային միգրացիայի ծավալները չափելիս հետազոտություն իրականացնողները պետք է սահմանեն ընտրանքային լավ շրջանակ և մշակեն եղանակներ՝ զբաղվելու ընտրանքային մեծ ծավալների ու բուն հետազոտության բարդության հետ կապված հարցերով:

Ամենահիմնարար մակարդակում, տնային տնտեսությունների հետազոտություններով հավաքվում է տեղեկատվություն՝ հարցազրույցին մասնակցողներին հարցեր ուղղելով: Չնայած որ միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների հետազոտություններ իրականացնելու հետ կապված ամենամեծ խնդիրը համեմատաբար հազվագյուտ այն տնային տնտեսություններ հայտնաբերելն է, որոնք ունեն միգրանտներ: Այնպիսի հեղինակները, ինչպիսիք են՝ ՄքՔենզլին (McKenzie) և Միսթիեն (Mistiaen) (2007) նշում են, որ նույնիսկ այն երկրներում, որտեղ միջազգային միգրացիայի ծավալները շատ են, արտերկրում գտնվող արտագաղթած կամ վերադարձած միգրանտ գտնելը տնային տնտեսությունում կարող է շատ դժվար լինել, քանի որ միգրացիան մշտապես համեմատաբար հազվագյուտ իրադարձություն է:

Ընտրանքային հետազոտությունները համեմատելի են մարդահամարի հետ, սակայն փոխարենը դրանք սահմանափակվում են սահմանափակ թվով անձանցով, որոնք ներկայացնում են բնակչությանը՝ որպես մեկ ամբողջություն: Քանի որ բնակչության ընտրված մասին են ուղղվում հարցեր, ընտրանքային հետազոտություններն ավելի քիչ ծախսատար են, քան մարդահամարները, և կարող են անցկացվել ավելի հաճախ: Դրանցով նաև ճկունության հնարավորություն է ընձեռվում տրվող հարցերի քանակի ու տեսակների մասով: Հետազոտությունները կարող են լինել կամ տարբեր խմբեր ներառող (անցկացված կոնկրետ ժամանակահատվածում, ինչպես մարդահամարի դեպքում է) կամ տևողությանը վերաբերող (որոշ ժամանակ հետևել կոնկրետ անձի կամ տնային տնտեսությունների, օրինակ՝ «պանելային» տվյալներ): Հետազոտություն իրականացնողները հաճախ կիրառում են տարբեր հատվածներ ներառող հետազոտություններ պատմական տվյալները չափելու համար՝ տալով կենսագրությանն առնչվող հետահայաց հարցեր (Շախտեր, 2008): Այս ծրագրի դեպքում, տնտեսապես նպատակահարմար ու ծախսարդյունավետ չի եղել արձանագրել բացառապես միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների աշխարհագրական բաշխման վերաբերյալ տվյալներ, և ուստի ընտրանքային հետազոտությունով ուղղակիորեն կամ բացառապես չեն թիրախավորվել միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունները: Ստացված



արդյունքները կարող են, այնուամենայնիվ, տարածվել Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչության վրա, քանի որ ընտրանքը նախագծվել է ներկայացուցչական լինելու նպատակով (տե՛ս ստորև): Ներկայացուցչական ասելով՝ նկատի ունենք ոչ թե միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների ներկայացուցչին, այլ Հայաստանի Հանրապետության բնակչության ներկայացուցչին, այդ թվում՝ միգրացիոն հոսքերի ու դինամիկայի հետ փոխկապված բնակչության տոկոսը:

Ինչպես նշվել է, եթե ճշգրիտ նախագծվեն, ապա միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների հետազոտությունները կարող են հանդիսանալ թաքնված միգրանտ բնակչության վերլուծության համար անհրաժեշտ միկրոմակարդակային տվյալների անկյունաքարը: Դրանք առանձնահատուկ կարևորություն ունեն քիչ ռեսուրսներ ունեցող երկրների դեպքում, որտեղ տվյալները չեն կարող ներկայացվել սովորական կամ վարչական տվյալների համակարգերով: Ինչպես նշվել է վերևում, ընտրանքային հետազոտության որակն անմիջականորեն առնչվում է ընտրանքի կառուցվածքի որակին: Եթե ընտրանքը բավականին մեծ է ու կազմված է բնակչության ներկայացուցչական խմբից, ապա կարող են արվել ընդհանուր բնակչության նկատմամբ կիրառելի եզրահանգումներ: Ընտրանքի չափը կարևոր է, քանի որ ավելի մեծ ընտրանքի չափը սովորաբար նվազեցնում է միջին քառակուսային շեղումը, որը կապված է ընտրանքի միջին թվի հետ (որի հիման վրա կատարվում են հաշվարկները), թեև անհրաժեշտ իրական չափը կախված է բնակչությունում դիսպերսիայի չափից: Որակյալ ընտրանքային կառուցվածքի անհրաժեշտությունը նույնիսկ ավելի կարևոր է միգրացիան չափելու համար, քանի որ այն համեմատաբար հազվագյուտ իրադարձություն է՝ համեմատած բնակչության մյուս առանձնահատկությունների հետ, ինչպես որ ցույց կտա այս հետազոտությունը: Միգրացիոն հոսքերը, շրջանակներն ու գործընթացները երկրի ժողովրդագրության մասն են կազմում, սակայն, ինչպես պարզ կդառնա այս հետազոտությունից, դրանց նկատմամբ դրսևորվել է համապարփակ ու որակական մոտեցում՝ չնայած որ դրանք կատարվել են Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչության մասով:

Կոնկրետ այս հետազոտությունում «վիճակագրական տնային տնտեսություն» արտահայտությունը սահմանվել է նույն կերպ, ինչ Հայաստանի Հանրապետությունում վերջերս անցկացված՝ տնային տնտեսությունների այլ հետազոտությունների (օրինակ՝ ILCS) դեպքում, դա կարծես սոցիալ-տնտեսական միավոր լինի, որը բաղկացած է մեկ կամ մի քանի անձանցից, որոնք ունեն նույնատիպ կենցաղային ու սննդի ապահովման պայմաններ: Այդպիսի անձինք սովորաբար (սակայն ոչ միշտ) միմյանց հետ ունեն արյունակցական կամ ամուսնական կապեր, և մենք պետք է ընդգծենք ընտանիքի ու տնային տնտեսության միջև տարբերությունը: Այս հետազոտությունը միգրացիոն ընտանիքի հետազոտությունն է, այլ միգրացիայի հետ կապված տնային տնտեսության ուսումնասիրություն: Այս «գործընթացի սահմանումը» չի ներկայացվել այն մտադրությամբ, որ ստեղծվի վերլուծական փոփոխական՝ կոնկրետ միգրացիոն հոսքերն ու գործընթացները հետազոտելու համար, այլ ավելի շատ որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական պատկերի ներկայացում: Մենք գիտակցում ենք, որ դժվար է չափել այն արտագաղթածների ծավալները, որոնք ներկայումս ներկա չեն տնային տնտեսությունում: Պատասխանները կախված են, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսության հետ դեռ որոշ կապ ունեցող միգրանտից, այն հարցից, թե տնային տնտեսության կազմն ինչպես է սահմանվել կոնկրետ հետազոտությունում, և այն հարցից, թե ինչպես են բացակա անդամների փոխարեն հարցված անձինք իրենց գիտելիքներն արտահայտել այդ թեմաների վերաբերյալ:



Միգրացիան չափելու համար անհրաժեշտ՝ տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններն օգտագործելու մի շարք առավելություններ կան՝ հատկապես այն երկրներում, որտեղ բացակայում են տվյալների այլ ընտրանքային ռեսուրսները: Մասնավորապես, տնային տնտեսությունների հետազոտությունների դեպքում առկա է ավելի շատ ճկունություն այն հարցում, թե ինչ հարցեր կարող են տրվել՝ միգրացիային առնչվող կոնկրետ թեմաներ գնահատելու համար: Չնայած որ տրվող հարցերի թվաքանակի մասով որոշակի սահմանափակումներ կան (կախված շատ գործոններից, սովորաբար՝ ծախսից), հարցերը կարող են միտված լինել կոնկրետ հետազոտական կարիքներին կամ քաղաքականության մասով մտահոգություններին, որը ծայրահեղ կարևոր է: Կան նաև այլ առավելություններ տասը տարին մեկ անցկացվող մարդահամարի հետ համեմատած, այն տեսանկյունից, որ բնակչության ներկայացուցչական ընտրանքի կիրառումը նվազեցնում է ծախսն ու ավելացնում է տվյալների հավաքման հաճախականությունը: Այնուամենայնիվ, տնային տնտեսությունների հետազոտություններն իրենց սահմանափակումները նույնպես ունեն, այդ թվում՝ դրանք իրականացնելու ծախսը, հոսքերը չափելու համար անհրաժեշտ ընտրանքային մեծ չափերը, պարբերական ընտրանքային շրջանակներում միգրանտներ գտնելու դժվարությունը (ընդգրկվածությունը և չպատասխանելը), հարցերի «զգայուն» բնույթը (հատկապես, երբ դրանք վերաբերում են գումարին, օրինակ՝ փոխանցումներին), հարցվողի կողմից որոշ իրադարձությունների մասին հիշելուն կամ հարցվողի վրա ծանրաբեռնվածությանը, ինչպես նաև տվյալների որակին առնչվող այլ մտահոգություններին, որն էլ ավելի է բարդանում բացակա անդամների փոխարեն հարցվածների դեպքում (Շախտեր, 2008):

Միջազգային միգրացիայի ծավալը չափվում է՝ գործածելով երկու հասկացություններ՝ թվաքանակներ և հոսքեր: Միջազգային միգրանտների թվաքանակը միջազգային միգրանտների այն թիվն է, որն ապրում է երկրում կոնկրետ ժամանակային հատվածում, որը չափվում է կամ արտերկրում ծնվածների (ծննդյան երկիր) կամ օտարերկրացիների (քաղաքացիություն) թվով: Միգրացիոն հոսքերը տեղի են ունենում երկու աշխարհագրական տարածքների միջև՝ ծագման և նպատակակետ վայրեր: Ներհոսքը այն թիվն է, որը տեղաշարժվում է դեպի կոնկրետ աշխարհագրական տարածք (օրինակ՝ նպատակակետ երկիր) կոնկրետ ժամանակային հատվածում (սովորաբար 12 ամիս), մինչդեռ արտահոսքը այն թիվն է, որը տեղաշարժվում է այդ նույն տարածքից (օրինակ մարզից կամ ՀՀ-ից) և ժամանակահատվածում: Հոսքերը կարող են չափվել միջազգային կամ ներքին աշխարհագրական տարածքների տեսանկյունից (Շախտեր, 2008):

Ինչպես նշվել է վերևում, բազային ժամանակահատվածի սահմանումը կարևոր է՝ միգրացիայի ծավալներն արտահայտելու ու չափելու համար, ինչպես նաև շարժման սկզբնակետն ու նպատակակետը նախանշելու համար: Որոշ հետազոտություններում դիտարկվում է վեց ամիս կամ դրանից ավելի գտնվելու ցանկացած տևողության հարցը, որը բավարար է միգրանտին նույնականացնելու համար, մինչդեռ ՄԱԿ-ի առաջարկություններով կոչ է արվում նախատեսել 12 ամիս երկարաժամկետ միգրանտների ու 3 ամիս՝ կարճաժամկետ միգրանտների համար: Վերադարձած միգրանտների դեպքում, որոնք կարող էին միգրացիայի ուղին բռնած լինել իրենց կյանքի ցանկացած ժամանակահատվածում, բազային ժամանակահատվածը կիրառվում է՝ չափումը սահմանափակելու համեմատաբար վերջերս տեղի ունեցած վերադարձի միգրացիայի շրջանակներով: Այս հետազոտության դեպքում, դա վերջին վեց տարիներն են եղել (կամ 2007 թվականից ի վեր): Այս գլխում նշված է տեղեկատվություն տնային տնտեսությունների այն անդամների վերաբերյալ, որոնց միգրացիոն տեղաշարժերը, որոնց տևողությունը 2007-ից 2013 թվականներն (և ավելի քիչ դեպքերում՝ մինչև 2007 թվա-



կանն ընկած ժամանակահատվածը) ընկած ժամանակահատվածում ավելի քան երեք ամիս է եղել, տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, այսինքն՝ այն տնային տնտեսության անդամները, որոնք ապրել են (ապրում են) օտարերկրյա պետություններում: Ամփոփելով՝ պետք է նշել, որ տնային տնտեսության այս հետազոտությունում մենք ընդունում ենք Հայաստանի Հանրապետությունից միջազգային արտագաղթի վերաբերյալ տեղեկատվության տարբեր խմբեր՝ մեկը վերաբերում է միգրացիոն արտահոսքերին, որոնք տեղի են ունեցել մինչև 2007 թվականը, երկրորդը՝ մի շարք հարցեր տնային տնտեսության այն անդամների համար, որոնք մեկնել են երկրից 2007 թվականից առաջ:

Ինչ վերաբերում է տեղեկատվության այս վերջին խմբին, ապա հետազոտությամբ փորձ է արվել տեղեկատվություն ստանալ տնային տնտեսությունների անդամներից՝ ներկայումս արտերկրում ապրող իրենց միգրանտ անդամների մասին, եթե այդպիսիք կան: Բացակա անդամների փոխարեն հարցվածներին (ներկայումս ոչ միգրանտներ) տրվել են հարցեր (տարիքը, սեռը, ներկայիս բնակությունը, երկիրը և մեկնման առաջին ժամանակը, ինչպես նաև որոշ տեղեկատվություն աշխատանքային ստաժի վերաբերյալ, տեղափոխման պատճառները, նպատակակետ երկրում օրինական կարգավիճակը, վիզայի տեսակը, միգրանտի սոցիալական ինտեգրումը, սոցիալական ցանցերը և այլն)՝ արտերկրում ապրող տնային տնտեսության անդամների մասին տեղեկատվություն հավաքելու նպատակով: Ակնհայտ է, որ այս մոդուլով ձեռք բերված տվյալները մասնակի են և կողմնակալ, քանի որ անհայտ թվով միգրանտներ մերձավոր հարազատներ չունեն իրենց ծագման վայրերում:⁹ Այս մոդուլը, արտերկրում գտնվող հարազատների մասով, հատկապես կարևոր է, այնուամենայնիվ, ֆինանսական հոսքերը (օրինակ՝ փոխանցումները) և ներկայիս միգրանտների հետ մյուս կապերը գնահատելու, ինչպես նաև հենց միգրանտների վրա լույս սփռելու, նրանց առանձնահատկությունների, բնակության վայրերի և այլնի վրա:

Միգրացիայի վերաբերյալ մասնագիտական հետազոտությունների, ինչպիսին է այս հետազոտությունը, առավելությունը կայանում է նրանում, որ այն միտված է չափելու միգրացիային վերաբերող երևույթները: Ուստի հարցերը կարող են լինել այնքան մանրամասն, որքան անհրաժեշտ է: Սահմանները նույնպես շատ տեսանելի են հատկապես միգրացիայում ներգրավված տնային տնտեսությունների անդամների թվաքանակներում, որոնք մշտապես կազմում են տնային տնտեսությունների ամբողջական ընտրանքի շատ փոքր մասնաբաժինը:

Տնային տնտեսության հետազոտությունների ժամանակ հնչող հարցերին տրված պատասխանները հնարավորություն են տալիս հետազոտություն իրականացնողներին ստանալու ընտրանքային վիճակագրական տվյալներ, ինչպիսիք են՝ միջինը կամ համամասնությունը: Այս վիճակագրական տվյալներն օգտագործվում են ընտրանքից դեպի ամբողջ բնակչություն ընդհանրացում կատարելու համար (այս հետազոտությունում ճշգրտումը կատարվել է կշռի պարամետրերի գնահատման միջոցով): Ընտրանքային

9 Աղյուսակ 2-ի մասով դիտարկումը (պատասխանների բացակայություն ուսումնասիրության պահին) խոսում է որոշ տարածքներում միգրացիայի բարձր ծավալների անուղղակի ցուցանիշի մասին: Միջինում պատասխանների բացակայության 21.3%-ը պայմանավորված է եղել տնային տնտեսությունների չմասնակցությամբ՝ արտագաղթի պատճառով: Եթե դիտարկվեն որոշ մարզեր, ապա այս թիվը կարող է շատ բարձր լինել՝ 62.5% պատասխանների բացակայություն Տավուշում, 54.3% պատասխանների բացակայություն Գեղարքունիքում, 42.2% պատասխանների բացակայություն Շիրակում, 28% պատասխանների բացակայություն Վայոց Ձորում, պայմանավորված է արտերկրում գտնվող անդամների բացակայությամբ:



վիճակագրությունով տրվում է իրական բնակչության պարամետրի կետային գնահատում: Այնուամենայնիվ, ընտրանքային սխալի պատճառով՝ բացառիկ համընկնում կլինի, եթե ընտրանքային վիճակագրությամբ սահմանված կետային գնահատումը նույնական լիներ բնակչության պարամետրին:

Վերլուծական զեկույցը հիմնականում հիմնված կլինի 2013 թվականին Հայաստանում իրականացված միգրացիայի վերաբերյալ համազգային հետազոտության վրա՝ **«ՀՀ բնակչության միգրացիայի վերաբերյալ համալիր հետազոտություն 2007-2013»**: Հետազոտությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունից (ԱՎԾ), Ռուս-հայկական սլավոնական համալսարանից և Միգրացիայի միջազգային կազմակերպությունից կազմված կոնսորցիումը: Հետազոտության արդյունքում հավաքված տվյալները բավականին համապարփակ են՝ հետագա հետազոտությունների համար ընձեռելով լիարժեք հնարավորություններ՝ առկա հարցերն առավել մանրամասն հասցեագրելու համար:

Հետազոտության նպատակն է եղել չափել ներգաղթը, արտագաղթը, ներքին միգրացիան, վերադարձը, ինչպես նաև անդրադառնալ միգրանտների խնայողություններին, փոխանցումներին կամ բնակչության և տնային տնտեսությունների վրա միգրացիոն զարգացումների ազդեցություններին: Հետազոտությունը Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող՝ «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի և Զորջթաունի համալսարանի միջազգային միգրացիայի ինստիտուտի կողմից՝ Զոն Դ. և Քեթրին Թ. ՄակԱրթուր հիմնադրամի միջոցներով համաֆինանսավորվող՝ «Հայաստանի տնտեսական զարգացման ու աղքատության նվազեցման հարցում միգրացիայի դերի վերաբերյալ գիտելիքների ու քաղաքականության մասով երկխոսության մակարդակի բարձրացում» ծրագրի մաս է կազմում:

2-րդ գլխում ներկայացված են հստակեցումներ հետազոտության նպատակների ու խնդիրների վերաբերյալ, տրված է թիրախային խմբերի նկարագրությունը, օգտագործված հարցաշարերի նկարագիրը, ընտրանքային տեխնիկայի հիմնավորումը, ոլորտում առկա գործընթացներն ու խնդիրները, ինչպես նաև տվյալների վերլուծության համար կիրառված մեթոդաբանությունը: Այս գլխում ուսումնասիրվում է այն հարցը, թե ինչպես է նախագծվել հետազոտությունը, ինչպես նաև օգտագործված փոփոխական տվյալներն ու վիճակագրական մեթոդները՝ ներառյալ ընտրված մասնակիցների տեսակի ու թվի վերաբերյալ բացատրությունը:

3-րդ գլուխն անդրադառնում է ընտրանքային տվյալներով տնային տնտեսությունների բնութագրմանը, ինչպես նաև հետազոտության արդյունքների նկարագրությանը, որոնք ցուցադրում են, խաչաձև աղյուսակավորման միջոցով, մի քանի կրիտիկական գործոններով տվյալները: Նկարագրվում են հիմնական ժողովրդագրական առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը, ընտանեկան դրությունը կամ քաղաքացիությունը: Մենք նաև վերլուծում ենք աշխատուժի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ զբաղվածության վիճակը, զբաղմունքը կամ եկամուտը և տնային տնտեսությունների ընտրանքային առանձնահատկությունները (օրինակ՝ չափ, կազմ, տարածքային բաշխում)՝ որպես մեկ ամբողջություն: Մենք ընդունում ենք, որ միգրանտ չհանդիսացողների առանձնահատկությունները շատ կարևոր են՝ որպես միգրանտների հետ համեմատության խումբ, իսկ այս հետազոտության դեպքում՝ դրանք համապատասխանում են հարցվածների ճշող մեծամասնությանը (87%): Հետազոտության արդյունքները մեծամասամբ ներկայացված են աղյուսակների տեսքով, չնայած որ որոշ գրաֆիկներ են ներառվել՝ տվյալների տեսանելիությունն ապահովելու համար:



4-րդ գլուխը նկարագրում է միգրանտ բնակչության (արտահոսքերը) սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների վերաբերյալ դաշտային հետազոտության արդյունքները՝ մասնավորապես, ներգրավված տնային տնտեսությունների տոկոսը, միջին տևողությունը, հիմնական նպատակակետ երկրները, վանող/ձգող գործոնները, միգրացիայի պատճառները, նպատակակետ երկրում իրավական կարգավիճակը, ցանցերն ու միջնորդները: Միգրացիան բարդ ու բազմակողմանի գործընթաց է: Այն իր մեջ ներառում է բազմապիսի դերակատարներ ու գործոններ, որոնք նպաստում են դրա առաջացմանը թե՛ ծագման, և թե՛ նպատակակետ վայրերում: Ի հավելումն անհատ միգրանտների ու նրանց ընտանիքների «առավելությունների» կամ դրանց փոխարեն՝ այն տարբերակիչ ազդեցություն է գործում ուղարկող և ընդունող վայրերի մարդկանց ու համայնքների վրա: Միգրացիայի ազդեցությունը չափելու համար՝ մենք վերլուծել ենք մարդկանց առանձնահատկությունները թե՛ մինչև (մինչմիգրացիոն վիճակ), և թե՛ տեղաշարժից հետո (ներկայիս առանձնահատկությունները):

5-րդ գլխում ներկայացվում են վիճակագրական տվյալներ տնային տնտեսության այն անդամների վերաբերյալ, որոնք վերադարձել են Հայաստան, սակայն բնակվել են արտերկրում ավելի քան երեք ամիս 2007 թվականին նախորդող ժամանակահատվածում և 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում՝ ներգրավված տնային տնտեսությունների տոկոսը, միջին տևողությունը, հիմնական նպատակակետ երկրները, վանող/ձգող գործոնները, միգրացիայի պատճառները, նպատակակետ երկրում օրինական կարգավիճակը, ցանցերն ու միջնորդները: Վերադարձած միգրանտներին հարցրել են նաև իրենց տեղափոխման պատճառների մասին, որը հատկապես կարևոր է աշխատանքային միգրանտների, ուսանողների, ընտանեկան հիմքերով միգրանտների կամ փախստականների միջև տարբերակում մտցնելու համար: Պատճառները կարող են հավաքվել կամ օբյեկտիվ (նրանք ինչ իրավական կարգավիճակ ունեին երկրում (վիզայի տեսակը)), կամ սուբյեկտիվ եղանակներով (ինչու՞ են նրանք տեղափոխվել)՝ հարցնելով ծագման երկրից մեկնելու և (կամ) վերադառնալու պատճառների մասին: Եվ վերջապես, վերլուծվել են նաև միգրանտի սոցիալական ինտեգրման հետ կապված հարցեր: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում արձանագրվել է միգրացիայի աննախադեպ բարձր ցուցանիշ, սակայն ինչպես դա միշտ է տեղի ունենում, վերադարձած միգրանտները կարող են օգնել մեզ ավելի լավ հասկանալ այս միգրացիոն պատմությունը:

6-րդ գլխում շեշտը դրվում է միգրանտ բնակչության (ներհոսքեր) սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական առանձնահատկությունների վերաբերյալ դաշտային հետազոտությունների արդյունքների վրա: Այս հետազոտությունում նշվել են մի շարք հարցեր (ընդհանուրը 37 հարց) միգրացիոն ներհոսքերի վերաբերյալ (տե՛ս հավելվածում ներառված հարցաշարի բաժին 5-ը): Ներգաղթածների ընտրվածությունը կարելի է նկատել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների միջոցով՝ նպատակակետ երկրում միգրանտներ չհանդիսացողների մասով՝ նույն առանձնահատկությունների կամ միգրացիոն այլ հոսքերի հետ համեմատած:

7-րդ գլխում հատուկ ուշադրություն է դարձվում փոխանցումների վերաբերյալ դաշտային հետազոտության արդյունքներին:

Եզրափակիչ գլխում մենք կքննարկենք առանցքային եզրահանգումները ու քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները՝ հիմնված հետազոտության արդյունքների վրա:



Գլուխ 2. Հետազոտության պլանը, իրականացումն ու մեթոդանությունը

Ըստ Կառլետտոյի (Carletto) և դե Բրոյի (de Braw) (2008)՝ գոյություն ունի տնային տնտեսությունների հետազոտությունների երկու տեսակ՝ ա) մասնագիտական հետազոտություններ և բ) ընդհանուր նպատակներով իրականացվող հետազոտություններ (ինչպիսին է՝ Կենսապայմանների համալիր հետազոտությունը): Այս հետազոտությունում որոշվել է կիրառել մասնագիտական հետազոտության տեսակը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունից և դրա տարածքում միգրացիայի վերաբերյալ տվյալներ ստանալուն: Վերը նշված հեղինակները նշել են, որ երկու այլընտրանքային ընտրանքային կառուցվածքներ են առկա, որոնք կարող են կիրառվել միգրացիայի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար՝ 1) հիմնական ընտրանքային միավորներում (ՀԸՄ) բարձր ցուցանիշով միգրացիայի անհամաչափ ընտրանք և 2) ՀԸՄ-ի շրջանակներում շերտավորված հավանական ընտրանք (երկաստիճան ընտրանք) Կառլետտո (Carletto) և դե Բրո (de Braw) (2008): Այս երկու հեղինակների կարծիքով՝ այդ երկու մեթոդները կարող են կամ օգտագործվել առանձին, կամ միավորված՝ մեկը մյուսի հետ, սակայն եթե որոշվում է կիրառել այդ մոտեցումները, ապա մենք կարող ենք հեռանալ մեր նպատակներից՝ հետազոտելու միգրանտներին, քանի որ, թվում է՝ նրանք մշտապես հազվագյուտ բնակչության կազմում են: Բիլսբորոուն և մյուսները (Bilsborrow and others) (1997) կարծում են, որ միջազգային միգրանտներ ունեցող տնային տնտեսություններին գտնելու համար ամենալավ տարբերակը շերտավորված անհամաչափ ընտրանք իրականացնելն է: Մք-Քենզին և Միսթենը (McKenzie and Mistien) (2007) ուրվագծում են ընտրանքի հազվագյուտ տարրերի մասով երեք մոտեցում՝ i) շերտավորված ընտրանք՝ կիրառելով անհամաչափ ընտրանքի մոտեցումներ՝ երկաստիճան ընտրանքով, ii) «ձնագնդի» մեթոդով իրականացվող ընտրանք և iii) ժամանակային ու տարածական ընտրանք: Այս մոտեցումներից ոչ մեկն էլ չի կիրառվել այս հետազոտությունում, դժվարություններից մեկն էլ այն է եղել (ընտրանքում միգրանտ բնակչության ներկայացվածությունը), որ այս հնարավորությունը նախապես չի կանխատեսվել, և ուստի միգրանտներ ունեցող տնային տնտեսություններ հայտնաբերելու մոտեցումն առնվազն մասնակիորեն ձախողվել է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականին անցկացված մարդահամարը շրջանակ է ստեղծել ընտրանքի որոշման հարցում: Ընտրանքը շերտավորված է՝ ըստ հետևյալ գործոնների՝ աշխարհագրական տարածք, ուրբանիզացում և տեղանքում բնակչության չափը: Հետազոտությունները, սովորաբար, բնորոշ կերպով նախագծվում են՝ ներկայացնելու բնակչության համեմատաբար ճշգրիտ մակարդակի գնահատումներ՝ ըստ տարիքային խմբերի, սեռի, քաղաքային (գյուղական) բնակչության և տարածքների: Այս հետազոտությունում առկա են եղել երկու ընտրանքային փուլեր, իսկ վերջնական ընտրանքային միավորը եղել է տնային տնտեսությունը: Վիճակագրական նպատակն է եղել ստանալ հետազոտության տվյալներ, որոնք ներկայացուցչական կլինեին մարզային մակարդակով: Այդ նպատակով, թիմը փորձել է գտնել Հայաստանի Հանրապետության բնակչության ներկայացուցչական ընտրանք՝ չնայած այն փաստին, որ երեք կատեգորիաներից մեկը ներկա չի եղել (ներքին միգրանտներ ունեցող տնային տնտեսություններ):



սություններ, միջազգային միգրանտներ ունեցող տնային տնտեսություններ, միգրանտներ չունեցող տնային տնտեսություններ): Հաշվի առնելով միգրացիոն հոսքերը չափելու ու միգրացիայի գործընթացը բացատրելու երկակի նպատակը՝ օգտագործվել է մասնագիտական միգրացիոն հետազոտություն, որով ստացվում է տեղեկատվություն անհատների ու տնային տնտեսությունների վերաբերյալ:

Վերջնական ընտրանքի չափը կազմված է տնային տնտեսության 7.890 հարցվածներից (դրանում ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բնակչությունը, և այն համեմատելի է 7.872 տնային տնտեսություն պարունակող ԿՊՀՈՒ ընտրանքի չափին),¹⁰ և որում ընդգրկված են հետազոտված տնային տնտեսության թվով 31.118 անդամներ: Բացի դրանից՝ հետազոտությունը պարունակում է տնային տնտեսության 1.972 անդամների մասին տեղեկատվություն, որոնք մեկնել են արտերկիր մինչև 2007 թվականը: Տնային տնտեսության հետազոտության մեջ ներառվել է տնային տնտեսության 33.090 անդամի վերաբերյալ տեղեկատվություն:

Հետազոտությունում անդրադարձ է կատարվում սովորաբար ներկա գտնվող բնակիչներին, ժամանակավորապես բացակա բնակիչներին, միգրանտներին (ներքին ու միջազգային միգրանտներ, որոնք, 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ, տնային տնտեսության մաս են կազմել, ինչպես նաև տնային տնտեսության այն անդամների ենթաընտրանքի վերաբերյալ հիմնական հարցերին, որոնք մեկնել են արտերկիր մինչև 2007 թվականը, և այդ ժամանակվանից ի վեր չեն վերադարձել Հայաստան): Ընտրանքը ներառում է այն անձանց ենթաընտրանքներ, որոնք կամ մտադիր են միգրացիայի ուղին բռնել, կամ որոնք մեկնել են երկրից և ավելի ուշ վերադարձել են, երրորդ երկրների քաղաքացիները և ներքին միգրանտները:¹¹ Միգրացիան սահմանվում է այստեղ որպես տեղաշարժ բնակչության մեկ վայրից՝ մեկնելու և բնակվելու մեկ այլ վայրում՝ առնվազն երեք ամիս շարունակական ժամանակահատվածով¹²: Ընտրանքը համամասնորեն բաշխվել է Երևանով և 10 մարզերով՝ տարածքներից յուրաքանչյուրում ընդհանուր բնակչության հիման վրա: Ընտրված տնային տնտեսությունների թիվը, ըստ մարզերի ընտրված վայրերով բաշխումը և երկրի կտրվածքով համապատասխան թիրախային խմբերի և անձանց պատասխանը ներկայացված են հետևյալ աղյուսակում:

10 Կենսապայմանների համալիր հետազոտությունը (ԿՊՀՀ) առաջին անգամ անցկացվել է Հայաստանում 1996 թվականին (մեկամսյա ժամկետում), որին հետևել է մեկ այլ հետազոտություն 1998/99 թվականներին: Դրանից հետո այդ հետազոտությունն իրականացվել է ամեն տարի 2001 թվականից ի վեր:

11 Այն անձանց վերաբերյալ տվյալները, որոնք մեկնել են (արտագաղթել են) տնային տնտեսություններից, ստացվել են տնային տնտեսության այն անդամներից, որոնք տանն են մնացել (բացակա անդամների փոխարեն հարցվածներ), սակայն ակնհայտորեն սահմանափակումներ կան այս տեսակի հարցվածներից ստացված տվյալներում:

12 Հնարավոր տարբերակներն եղել են՝ աշխատանք /աշխատանք փնտրել; ընտանեկան պատճառներ (ընտանիքի վերամիավորում, ամուսնություն, ամուսնալուծություն և այլն); մշտական բնակություն; կրթություն; բռնի միգրացիա /փախուստ



Աղյուսակ 1. Ընտրանքի հիմնական առանձնահատկությունները

«Վարձեր և Երևան քաղաք»	D	R	Տնային տնտեսությունները, որոնց հետ աջողությամբ հարցազրույց է անցկացվել	Տնային տնտեսությունների ընդհանուր թիվը՝ ըստ տնային տնտեսության ներկայիս կամ նախկին անդամների միգրացիայի կարգավիճակի				
				Ոչ միգրանտներ	Արտագաղթողներ	Ներքին միգրանտներ	Ներգաղթողներ	Վերադարձած միգրանտներ
Երևան քաղաք	0,018	0,082	2200	1388	364	150	58	240
Արագածոտն	0,045	0,125	400	298	80	7	0	15
Արարատ	0,033	0,100	660	277	158	104	27	94
Արմավիր	0,024	0,045	620	357	162	37	11	53
Գեղարքունիք	0,041	0,160	620	297	275	36	3	9
Լոռի	0,042	0,180	680	368	205	25	2	80
Կոտայք	0,025	0,059	740	164	271	176	9	120
Շիրակ	0,042	0,176	620	168	340	57	3	52
Սյունիք	0,033	0,080	520	331	104	59	2	24
Վայոց Ձոր	0,049	0,144	400	171	112	82	1	34
Տավուշ	0,045	0,134	430	8	179	113	13	107
Ընդհանուրը	0,011	0,107	7890	3837	2250	846	129	828

Ծանոթագրություններ. R-ն գնահատվող ցուցանիշի (բնակչության պատասխանի չափը, %) համար կանխատեսվող կամ նախատեսվող ելակետն է (ընդգրկվածության աստիճան) (վերցված են ԿՊՀՀ տվյալներից), D-ն սխալվելու թույլատրելի շեմն է՝ 95% վստահության միջակայքում:

Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների թիվը, որոնք առնչություն են ունեցել միգրացիային, միջինում, շատ բարձր է եղել ամբողջ ընտրանքում՝ կազմելով միգրացիային առնչվող տնային տնտեսություններից երկուսից գրեթե մեկը (հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների ընդհանուր թվի 48.6%-ը փոխկապակցված են եղել միգրացիոն տեղաշարժերի հետ 2007 թվականի հունվարից ի վեր): Երբ մենք վերլուծում ենք ամբողջ ընտրանքում միգրացիային մասնակցող տնային տնտեսությունների տոկոսին վերաբերող տվյալները, ապա պարզվում է, որ անձանց թիվն ըստ միգրացիայի հետ կապված տնային տնտեսությունների անհավասարակշռված է ըստ մարզերի: Տնային տնտեսությունները, որոնցում միգրացիայի հետ առնչություն ունեցող անդամներ առկա չեն եղել, հասել են, միջինում, Արագածոտնի մարզում՝ 74.5%-ի (չորս տնային տնտեսություններից երեքն առնչություն չունեին միգրացիային), իսկ ամենացածր թիվը՝ Տավուշի մարզում է եղել (հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների միայն 1.86%-ը առնչություն չի ունեցել միգրացիային): Երևանում հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների 63.1%-ում միգրանտներ չեն եղել, Արարատում՝ 42%, Արմավիրում՝ 57.6%, Գեղարքունիքում՝ 47.9%, Լոռիում՝ 54.1%, Կոտայքում՝ 22.1%, Շիրակում՝ 27.1%, Սյունիքում՝ 63.7% և Վայոց Ձորում՝ 42.8% հարցազրույցի մասնակցած տնային տնտեսություններում միգրանտներ չեն եղել:

Տնային տնտեսությունների ընտրությունը

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ընտրանքի շրջանակը, որտեղ մարզերը, որպես շերտ, բաղկացած են եղել թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական վայրերից:¹³ Ուսումնա-

13 Աշխարհագրորեն Հայաստանը բաժանված է 10 մարզերի, այդ թվում՝ մայրաքաղաքը: Հայաստանի ընդհանուր բնակչության երկու երրորդը բնակվում է Երևանից դուրս գտնվող տասը մարզերում՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր և Տավուշ: Մայրաքաղաք Երևանի կազմի մեջ են մտնում մյուս բոլոր տարածքները:



սիրության համար նախատեսված ընտրանքի կառուցվածքը եղել է բազմափուլ, և առաջին փուլն ընդգրկել է այն մարզերը, որոնք հետազոտվել են 2001 թվականի մարդահամարի ընթացքում: Ընտրանքի ընտրության շրջանակը մշակվել է մասնավոր տնային տնտեսությունների հասցեների բազայի համաձայն՝ հիմնված 2001 թվականի մարդահամարի արդյունքների վրա:¹⁴ Ընտրանքը նախապատրաստելու համար՝ ընդհանուր բնակչությունը բաշխվել է 48 շերտի՝ ներառելով Երևան քաղաքի 12 համայնքները (ներկայումս՝ վարչական տարածքներ): Այս բաժանման համաձայն՝ երկմակարդակ ընտրանք է նախապատրաստվել՝ ըստ շրջանների ու Երևանի: Բոլոր շրջաններն ու Երևանը, ինչպես նաև քաղաքային ու գյուղական ամբողջ բնակչությունն ընդգրկվել է ընտրանքում՝ ըստ իրենց տվյալ բնակավայրում տնային տնտեսությունների մասնաբաժնի՝ երկրում տնային տնտեսությունների ընդհանուր թվի մեջ: Առաջին փուլում, հարցման տարածքը, այսինքն՝ առաջնային ընտրանքային միավորները ընտրվել են՝ կիրառելով Չափին համաչափ հավանականության մեթոդը (PPS): Հետազոտված տնային տնտեսությունները ընտրվել են երկրորդ փուլում յուրաքանչյուր ՀԸՄ-ից (հարցման տարածք)՝ օգտագործելով հավանական ընտրության համակարգված մեթոդը: Տնային տնտեսության մակարդակում, հարցազրույցներն անցկացվել են տնային տնտեսության ամենատեղեկացված անդամի հետ: Սա մի տեխնիկա է, որը շատ է կիրառվում զարգացած երկրներում իրականացվող տնային տնտեսությունների հետազոտություններում, այսինքն՝ հիմնված բազմաստիճան շերտավորված հավանականություն ունեցող կառուցվածքի վրա: Առաջին փուլի միավորները կամ հիմնական ընտրանքի միավորները սովորաբար աշխարհագրական վայրի միավորներ են: Երկրորդ փուլում ստեղծվում է տնային տնտեսությունների կամ կացարանային միավորների ցանկ, որից ընտրվում է տնային տնտեսությունների ընտրանքը: Վերջին փուլում ստեղծվում է տնային տնտեսությունների կամ բնակիչների ցանկ, որից ընտրվում է անձանց ընտրանքը:

Կշիռների հաշվարկը

Հետազոտություն ներկայացնողները նախատեսել են կշիռներ իրենց տվյալների ֆայլերում՝ իրենց որոշակի թիրախային բնակչության (Հայաստանի Հանրապետության բնակչություն) առանձնահատկությունների գնահատման հնարավորություն տալու համար: Այս կշիռները պարունակում են ճշգրտումներ հետազոտություններ ներկայացնողների հետազոտության և թիրախային բնակչության (ՏՆՏ) միջև հայտնի տարբերությունների մասով: Ընտրանքային կշիռներն անհրաժեշտ են եղել ընտրանքում այնպիսի թերությունները շտկելու համար, որոնք կարող են հանգեցնել շեղումների և այլ հակասությունների ընտրանքի ու հետազոտվող բնակչության միջև:

Հետազոտության իրականացումը

Տվյալների հավաքման հիմնական եղանակը եղել է դեմ հանդիման հարցազրույցները («թուղթ ու մատիտ»): Հարցազրույցներն անցկացվել են բացառապես հարցվածի բնակության վայրում, այսինքն՝ բնակարաններում կամ առանձնատներում: Դաշտային աշխատանքների համար նախատեսված անձնակազմը հիմնականում ընտրվել է հատուկ այդ հետազոտության համար: Հարցվածների մասնակցությունը հետազոտությանը պարտադիր բնույթ չի կրել: Վերջնական ընտրանքային միավորը, որին հնարավոր չի եղել

¹⁴ 2011 թվականին անցկացված մարդահամարի արդյունքների հիման վրա տվյալների նոր բազայի ստեղծումը դեռևս ընթացքի մեջ է և, որպես այդպիսին, այս փուլում այն չի օգտագործվել:



Նախանշել, փոխարինվել է: Վերջնական ընտրանքային միավորը, որի հետ հնարավոր չի եղել կապ հաստատել, փոխարինվել է: Վերջնական ընտրանքային միավորը, որը հրաժարվել է մասնակցել, փոխարինվել է:

Հետազոտության կազմակերպումը

Դաշտային աշխատանքներին մասնակցող և հետազոտությունից հետո ընդգրկված անձնակազմի համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: Դաշտային աշխատանքն իրականացվել է 2013 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում. հարցազրույց անցկացնողները այցելեն են տնային տնտեսություններ: Հարցաշարի թղթային տարբերակը լրացվել է գրիչով, մինչդեռ դաշտային աշխատանքն ստուգվել է՝ հարցազրույցները երկու անգամ ստուգելով (ընտրողաբար): Հարցվածների տարբեր խմբերի (երբ դա հնարավոր է եղել) հետ տվյալների հավաքման հիմնական եղանակը դեմ հանդիման հարցազրույցներն են եղել, կամ հարցազրույցն անցկացվել է տնային տնտեսության ամենատեղեկացված անդամի հետ:

Հարցազրույց անցկացնողները ներկայացրել են լրացված հարցաշարերը գլխավոր գրասենյակ՝ ստուգման ու կողմնորոման համար: Հավաքված տեղեկատվությունը կողմնորոմվել է՝ օգտագործելով համապատասխան դասակարգիչներ: Այն նաև ենթարկվել է տրամաբանական ստուգման և երկակի ներմուծման: Դրանից հետո, տվյալների երկու բազաները համեմատվել են՝ անցնելով տրամաբանական ծրագրավորման ստուգում և ճշգրտում: Արդյունքում, ստեղծվել է 7.890 տնային տնտեսություններից բաղկացած տվյալների բազա:

Դաշտային աշխատանքների ժամանակ առաջացած խնդիրները

Դաշտային աշխատանքների ժամանակ առաջացած հիմնական խնդիրներն են եղել՝ ա) հասցեների հին ցանկերի հետ հակասությունները, որոնք դժվարություններ են առաջացրել հարցազրույց անցկացնողների համար մի քանի հարցերում (աշխատանքային ծանրաբեռնվածություն, ժամանակ և այլն), բ) հետազոտությանը մասնակցելու հարցվածների պատրաստակամությունը՝ պայմանավորված, օրինակ, հետազոտության ցավալի թեմայով, զգայուն հարցերի (հատկապես եկամտին վերաբերող) զգալի թվով, հարցազրույցի տևողությամբ՝ բավականին երկար հարցաշարի պատճառով:

Չպատասխանելու հատվածը

Չպատասխանելը սոցիալական հետազոտություններում հաճախ հանդիպող երևույթ է: Չպատասխանելու տոկոսներն էլ օգտագործվել են որպես հետազոտության որակի համար վստահելի միջոց, քանի որ դրանցով մատնանշվում է չպատասխանելու մասով շեղման հարաբերական հավանականությունը: Չպատասխանելու ազդեցությունը հետազոտության վիճակագրական վերլուծության վրա կախված է այն փոփոխական գործոններից, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել: Եթե նպատակ կա կիրառել հետազոտությունը կոնկրետ առանձնահատկությունով բնակչության մասնաբաժինը գնահատելու համար, ապա պարբերաբար չպատասխանելու բարձր կամ ցածր թիվը այն անձանց շրջանում, որոնց մոտ առկա է այդպիսի առանձնահատկություն, ազդեցություն է ունենում այդ գնահատման վրա: Եթե նպատակը մոդելի գնահատումն է, և հարցվածների վերջնական ընտրանքի և հետազոտության կանխատեսվող ընտրանքի միջև միակ տարբերությունը բացատրելի [անկախ] փոփոխականների բաշխումն է (որոնց



մասով որևէ մեկը պայման է սահմանում վերլուծությունում), ապա չպատասխանելը ազդեցություն չի ունենում գնահատման արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի համալիր հետազոտությունում 2007-2013, չպատասխանելու դեպքերի շատ բարձր թիվ է արձանագրվել, որը հինականում պայմանավորված է եղել դաշտային աշխատանքների ընթացքում ի հայտ եկած առանցքային խնդիրներով: Հետազոտությունում պատասխանողների չափը մոտ 52% է եղել¹⁵: Չպատասխանելու հիմնական պատճառները ներկայացված են աղյուսակ 2-ում: Չպատասխանելու տարբեր պատճառների շարքում պետք է ուշադրությամբ հետևել «փակ դուռ (դատարկ կացարան), քանի որ տնային տնտեսությունները մեկնել են արտերկիր» ցուցանիշին և «հետազոտության հարցաշարին պատասխանելուց հրաժարում» ցուցանիշին: «Փակ դռների» հարցը էական խնդիր է եղել: Կողպված տները հաճախ պատկանել են ամբողջ ընտանիքների, որոնք միգրացիայի ուղին են բռնել Հայաստանի տարածքում կամ դեպի արտերկիր՝ հարցազրույցի ընթացքում չթողնելով կացարանում բնակվող՝ տնային տնտեսության գեթ մեկ անդամ: Հաշվի առնելով այս հետազոտության գործընթացի սահմանափակումներն ու սահմանափակ հասանելիությունը՝ հետազոտությամբ հնարավոր չի եղել ստանալ տվյալներ այդպիսի տնային տնտեսությունների անդամներից: Ուստի, դա կարող է դիտարկվել որպես հետազոտության սահմանափակում: Չպատասխանելու պատճառների ու կշռի սինթեզը կարելի դիտարկել հաջորդ աղյուսակում:

Աղյուսակ 2. Չպատասխանելու պատճառներն ու կշիռը

ՀՀ մարզեր	Հարցազրույցը տեղի է ունեցել ամբողջությամբ	Փակ դուռ (դատարկ կացարան), տնային տնտեսությունները ՀՀ-ում	Փակ դուռ (դատարկ կացարան), տնային տնտեսությունները արտերկրում	Հասցեն չի գտնվել	Հասցեն օգտագործվել է այլ նպատակով	Հրաժարվող տնային տնտեսություններ	Հարցազրույցը հնարավոր չի եղել անցկացնել հայերենով	Չպատասխանելու դեպքեր՝ այլ պատճառներ	Չպատասխանելու ընդհանուր թիվը
Երևան	2.200	625	163	244	32	779	24	909	2.776
Արագածոտն	400	129	51	7	3	22	0	24	236
Արարատ	660	167	151	0	0	20	0	12	350
Արմավիր	620	269	153	34	3	21	0	41	521
Գեղարքունիք	620	231	298	13	0	6	1	0	549
Լոռի	680	439	231	44	8	68	10	19	819
Կոտայք	740	405	207	13	2	74	0	9	710
Շիրակ	620	159	158	71	25	45	0	11	469
Սյունիք	520	366	39	7	26	1	0	10	449
Վայոց Ձոր	400	128	21	13	1	4	0	0	167
Տավուշ	430	248	112	5	3	28	0	1	397
Ընդամենը	7.890	3.166	1.584	451	103	1.068	35	1.036	7.443

Տվյալների հետ կապված սահմանափակումները

Առկա են մեթոդաբանության ու տվյալների հետ կապված մի շարք կարևոր հարցեր, որոնց մասին օգտվողները պետք է իրազեկված լինեն՝ այս հետազոտությունից տվյալներ օգտագործելու ժամանակ: Ինչպես և բոլոր ընտրանքային հետազոտությունների պարա-

15 Այս հետազոտության ժամանակ օգտագործվել են 2001 թվականի մարդահամարի արդյունքների հիման վրա ձևավորված մասնավոր տնային տնտեսությունների հասցեների հին ցուցակը, ինչն էլ բացատրում է տնային տնտեսությունների պատասխանելիության այս մակարդակը:



գայում, միգրացիայի ու փոխանցումների մասով տնային տնտեսությունների այս հետազոտության արդյունքում հնարավոր է միայն ստանալ հաշվարկային տվյալներ, իսկ այդ հաշվարկային տվյալները սահմանափակված են մի շարք գործոնների պատճառով՝ մասնավորապես, ընտրանքի դիսպերսիայի, այսինքն՝ ընտրանքները կարող են պատահականորեն շեղված լինել «ամբողջից»»: Սա կոչվում է «ընտրանքային սխալ»: Հետազոտությունից ստացված արդյունքները, թվում է, հաստատում են կոնկրետ գործոնների վերաբերյալ այլ հետազոտություններից ստացված նախկին արդյունքները, սակայն այս հետազոտությունում, եթե ընտրանքը վատ է ներկայացնում բնակչության հատվածները, կամ եթե մարդկանց մեծ մասը չի պատասխանում որոշ հարցերի, հաշվարկային տվյալները, որոնք պատահականության արդյունք չեն, կարող են էապես տարբերվել իրականությունից (այսինքն՝ հնարավոր է, որ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի մասով ընտրանքի հարցում շեղումներ տեղի ունենան):

Օգտագործված հարցաշարերի նկարագիրը (Հարցաշարի բովանդակությունը)

Հետազոտության հարցաշարի միջոցով տեղեկատվություն է ստացվել ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական տարբեր առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպիսիք են՝ կրթությունը, ընտանեկան դրությունը, կենցաղային պայմանները, աշխատուժի մասնակցությունը, հմտությունները, լեզուները և ֆինանսավորման հասանելիությունը: Այս թեմաները ներառվել են ութ բաժիններ պարունակող մոդուլներում (տես Հավելվածում 1-ում ներկայացված հարցաշարը):

1-ին բաժինը ներառում է հետազոտված տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական և աշխատանքային շուկա մուտք գործելու առանձնահատկությունները: 2007 թվականի հունվարի 1-ից ի վեր բնակվող տնային տնտեսություններ, այդ թվում՝ օտարերկրյա պետություններից, Հայաստանի Հանրապետության այլ մարզերից կամ նույն մարզի մեկ այլ բնակատեղից վերաբնակեցված տնային տնտեսությունները: 1-ին բաժինը նաև ներառում է մի շարք հարցեր տնային տնտեսությունների անդամների միգրացիոն հեռանկարների, պլանների, նպատակակետերի և կարիքների վերաբերյալ:

2-րդ բաժինը ներառում է հարցեր տնային տնտեսությունների ներկայիս և նախկին անդամների և նրանց միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ (մեկնումներն ու ժամանումները, ինչպես նաև ներքին միգրացիան Հայաստանի Հանրապետության տարածքում) 2007 թվականից ի վեր: Այն ընդգրկում է միգրացիայի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայիս բնակության վայրը, տեղաշարժման պատճառները, միգրանտի կրթական մակարդակը, զբաղվածության վիճակը (նախա և հետմիգրացիան), ժողովրդագրական առանձնահատկությունները և այլն:

3-րդ բաժինը ներառում է արտերկրից, այդ թվում՝ ԼՂ-ից վերադարձածների վերաբերյալ հարցեր: Վերադարձած միգրանտ է համարվել տնային տնտեսությունում ներկայումս բնակվող մեծահասակ անդամը (16 տարեկանից բարձր), որը բնակվել է մեկ այլ երկրում կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող այլ վայրում՝ հետազոտությանը նախորդող 6 տարվա ընթացքում առնվազն 3 ամիս: Այս բաժնում փնտրվող տեղեկատվությունը վերաբերել է յուրաքանչյուր վերադարձած միգրանտի մասով միգրացիոն վերջին դիպվածին: Հարցերը վերաբերել են վերադարձի միգրացիային հանգեցնող գործոններին, վերադարձած միգրանտների սոցիալական ու տնտեսական վիճակին, նրանց գործունեության ոլորտին,



Նրանց եկամուտներին, նրանց խնայողություններին, ինտեգրման կոնկրետ ցուցանիշներին, աշխատանքի ու բնակարանային ապահովման ցուցանիշներին, փոխանցումների առանձնահատկությունների սահմանմանը, ապրած դժվարություններին ու ապագա միգրացիոն պլաններին:

4-րդ բաժինը ներառում է հարցեր այն տնային տնտեսությունների անդամների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասին, որոնք ապրում են արտերկրում: Հարցերը վերաբերում են երկրի սահմաններից դուրս միգրացիային հանգեցնող գործոններին, արտագաղթածների իրավական, սոցիալական և տնտեսական կարգավիճակին, նրանց գործունեության ոլորտին, նրանց եկամուտներին, նրանց խնայողություններին, ինտեգրման կոնկրետ ցուցանիշներին, աշխատանքի ու բնակարանային ապահովման ցուցանիշներին, հաղորդակցման առանձնահատկություններին ու ռազմավարություններին, փոխանցումների առանձնահատկությունների սահմանմանը, ապրած դժվարություններին ու ապագա միգրացիոն և (կամ) վերադարձի պլաններին:

5-րդ բաժինը ներառում է հարցեր ներգաղթածների կամ Հայաստան Հանրապետություն ժամանածների վերաբերյալ, այդ թվում՝ այն անձանց վերաբերյալ, որոնք ժամանել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից: Հարցերը վերաբերում են դեպի երկիր միգրացիային հանգեցնող գործոններին, ներգաղթածների իրավական, սոցիալական ու տնտեսական կարգավիճակին, նրանց գործունեության ոլորտին, նրանց եկամուտներին, նրանց խնայողություններին, ինտեգրման կոնկրետ ցուցանիշներին, աշխատանքի ցուցանիշներին, ապրած դժվարություններին ու միգրացիոն ծրագրի իրենց գնահատմանը:

6-րդ բաժինը ներառում է հարցեր Հայաստանի տարածքում ճամփորդողների, Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերից վերադարձած միգրանտների և (կամ) Հայաստանի այլ բնակավայրերում գտնվող միգրանտների մասին: Հարցերը վերաբերում են ներքին միգրացիային հանգեցնող գործոններին, ներքին միգրանտների սոցիալական ու տնտեսական կարգավիճակին, նրանց գործունեության ոլորտին, նրանց եկամուտներին, նրանց խնայողություններին, ինտեգրման կոնկրետ ցուցանիշներին, աշխատանքի ցուցանիշներին և դժվարություններին:

7Ա բաժինը ներառում է հարցեր տնային տնտեսության ու տնային տնտեսության այն անդամների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության մասին, որոնք մեկնել են արտերկիր մինչև 2007 թվականը և չեն վերադարձել այդ ժամանակվանից ի վեր, այդ թվում՝ մահացած անձինք:

7Բ բաժինը ներառում է հարցեր փոխանցումների (փոխանցումների շարժի, փոխանցումների ուղիների, ուղարկված գումարների և այլն) և տնային տնտեսության ֆինանսական բարգավաճման մասին:

Բացի դրանից՝ մեկ առանձին էջում ներառվել են հարցազրույցի տվյալները, այդ թվում՝ հարցազրույց անցկացնողի անունը, հարցազրույցի ամսաթիվը, տևողությունը և արդյունքը:

Տվյալների մուտքագրումը և տվյալների մշակումը (տվյալների կոդավորումն ու ստուգումը)

Դաշտային աշխատանքն ավարտելուց հետո հետազոտության թիմն անցել է լրացված հարցաշարերը մեխանիկորեն ստուգելուն: Տվյալները մաքրելուց հետո առկա արդյունքները չափաբերվել են՝ կիրառելով Սոցիալական գիտությունների համար նախատեսված



վիճակագրական փաթեթը: Հարցաշարերում առկա տվյալները, որոնք պետք է մի քանի տեսակի ստուգումներ անցնեին, որոնցից են սահմանային նշանակությունների ստուգումը, բազային տվյալների հետ ստուգումը, բացթողումների ստուգումները, համապատասխանության մասով ստուգումները և տպագրական սխալների ստուգումները (Munoz 2003): Ջնջելով անունների դաշտերը, հարցազրույց անցկացնողների անուններն ու հասցեները՝ ապահովվել է ստացված տվյալների անանունությունը: Ստուգման ու սխալների ուղղման գործընթացում, բաց թողնված նշանակությունների դեպքում, վերականգնում չի իրականացվել:

Սույն զեկույցը մշակելու համար օգտագործվել է բազմափուլ վերլուծական շրջանակ: Տվյալների վերլուծությունը պարունակել է մեթոդների հավաքածու՝ հետազոտության միջոցով ստացված տվյալների (տեղեկատվության) հետ աշխատանքի համար: Տվյալների վերլուծության նպատակն ու խնդիրն է եղել՝ ստանալ ուսումնասիրվող հարցին վերաբերող այնքան տեղեկատվություն, որքան հնարավոր է: Արդյունքների մեծ մասը ստացվել է՝ կիրառելով վիճակագրական աղյուսակավորումներ, տրամադրելով ամփոփ վիճակագրական տվյալներ:

Իրականացված վերլուծական մեթոդով հաշվի են առնվել ընտրանքային կշիռները և որդեգրվել է կառուցվածքի վրա հիմնված մոտեցում՝ հետազոտության տվյալները վերլուծելու համար: Մեծածավալ հետազոտությունների շրջանակներում կոնկրետ բնակչության քանակը գնահատելու համար դա ամենահաճախ որդեգրվող մոտեցումն է: Հետազոտության կշռում է տեղի ունեցել՝ անհայտ որոշակի բնակչության քանակի գնահատումներ ներկայացնելու համար, որոնք տոկոսի նկարագրական թվաքանակներն են որոշակի թիրախային բնակչության դեպքում:

Հետազոտության տվյալները վերլուծվել են ՍԳՍՓ ծրագրակազմի փաթեթն օգտագործելով: Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի մանրամասն նկարագրություն՝ հիմնված միջազգային խորհրդատուի կողմից ներկայացված վերլուծությունների վրա, որին աջակցել է Հայաստանում ՄՄԿ գրասենյակը: Քանի որ ՍԳՍՓ-ի տվյալների շարքերը ներառում են ավելի քան 500 փոփոխականներ հետազոտության համար, տվյալների ներկայացումն անպայմանորեն եղել է ընտրողական: Այս հետազոտական նախագծով օգտագործվել են հիմնականում նկարագրական վիճակագրական տեխնիկաներ, ինչպիսիք են՝ թվաքանակներն ու խաչաձև աղյուսակավորումները: Զեկույցը ներկայացնում է արդյունքների նկարագրական վերլուծություն՝ ըստ առանցքային փոփոխականների ու առանցքային թեմաների, այնուհետ սկսում է վերլուծել հիմնական եզրահանգումները եզրափակիչ գլուխներում:

Համապատասխանությունն ու խաչաձև ստուգումը

Հարցաշարի երկարության (277 հարց) հետ կապված խնդիրը հեշտացվել է այն հանգամանքով, որ որոշ հարցեր ուղղված են եղել միգրացիոն գործընթացների կոնկրետ առանձնահատկություններին (օրինակ՝ դեպի միգրացիոն ներհոսքեր կամ արտահոսքեր, վերադարձի միգրացիա կամ ներքին միգրացիա): Հարցազրույցների տևողությունը կախված է եղել տնային տնտեսությունների չափից ու միգրացիայի վերաբերյալ փորձից: Հարցազրույցի տևողությունը միջինում կազմել է 45 րոպե, իսկ հիմնականում՝ 40 րոպե:

Տնային տնտեսությունում հարցազրույցին մասնակցողը տնային տնտեսության անդամներից ամենատեղեկացվածն է եղել: Որպես կանոն՝ հարցմանը մասնակցողը տան ղեկավարն է եղել, որը համապարփակ տեղեկատվության է տիրապետել տնային



տնտեսության և տնային տնտեսության բոլոր անդամների սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների վերաբերյալ: Հետազոտված տնային տնտեսությունների 71%-ի դեպքում, հարցազրույցին մասնակցածը տղամարդ է եղել, 22% դեպքերում՝ կին, 4.4% դեպքերում՝ ընտանիքի դուստրը կամ որդին, 2.2% դեպքերում՝ ընտանիքի ղեկավարի հայրը կամ մայրը, և 1%-ից մի փոքր քիչ դեպքերում՝ ընտանիքի կամ տնային տնտեսության մյուս անդամները:



Գլուխ 3. Հետազոտված տնային տնտեսությունների առանձնահատկությունները (Տնային տնտեսության ցանկը)

Այս գլխում առանձնահատուկ կերպով դիտարկվում են տնային տնտեսություններ սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական առանձնահատկությունների մասին դաշտային հետազոտության արդյունքները, չնայած որ վերլուծության հիմնական միավորը որպես կանոն անհատն է լինելու: Սակայն զեկույցում անդրադարձ է կատարվում նաև տնային տնտեսությունների միգրացիոն վարքագծին: Տնային տնտեսությունները, հետևաբար, վերլուծական նպատակներով բաժանվում են միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների և միգրանտներ չունեցող տնային տնտեսությունների: Այս գլխում տրված է հետազոտության արդյունքների նկարագրական պատկեր՝ ցուցադրված մի քանի փոփոխականների տվյալների խաչաձև աղյուսակավորման միջոցով: Նկարագրվում են հիմնական ժողովրդագրական առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը, ընտանեկան դրությունը կամ քաղաքացիությունը: Մենք նաև վերլուծում ենք աշխատուժի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ զբաղվածության վիճակը, զբաղմունքը կամ եկամուտը և տնային տնտեսությունների ընտանքային առանձնահատկությունները (օրինակ՝ չափ, կազմ, տարածքային բաշխում)՝ որպես մեկ ամբողջություն:

Մենք գիտակցում ենք, որ միգրանտ չհանդիսացողների առանձնահատկությունները կարևոր են՝ որպես միգրանտների հետ համեմատական խումբ, և այս հետազոտության դեպքում, դրանք համապատասխանում են հարցվածների գերակշիռ մասին (հարցված տնային տնտեսությունների անդամների մոտ 87%-ը միգրանտներ չեն եղել (չեն)):

Միգրանտ ունեցող տնային տնտեսությունը սահմանվել է որպես տնային տնտեսություն, որտեղ տնային տնտեսության առնվազն մեկ անդամ միգրանտ է, ինչպես սահմանված է վերևում: Միգրանտ չունեցող տնային տնտեսությունը այն տնային տնտեսությունն է, որի որևէ անդամ երբեք չի լքել ներկայիս բնակության վայրը, կամ մտադրություն չունի գտնվելու այլ երկրում առնվազն երեք ամիս ժամանակահատվածով:

Անցյալում, համազգային մակարդակով շատ քիչ ներկայացուցչական տնային տնտեսությունների հետազոտություններ են հավաքել մանրամասն տվյալներ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի ու փոխանցումների մասին՝ բացառությամբ 2008 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի կողմից ֆինանսավորված՝ «Հայաստանի Հանրապետությունում արտաքին և ներքին միգրացիայի վերաբերյալ ընտրանքային հետազոտության», ինչպես նաև 2011 և 2012 թվականներին Հայաստանում Եվրոպական վերապատրաստման հիմնադրամի կողմից իրականացված միգրացիայի և հմտությունների վերաբերյալ մեծածավալ հետազոտության: Արդյունքում, շատ քիչ տվյալներ են հայտնի այն տնային տնտեսությունների առանձնահատկությունների մասին, որոնք ունեն ներքին կամ միջազգային միգրանտներ հանդիսացող անդամներ, ներքին կամ միջազգային փոխանցումներ են ստացել տնային տնտեսության նախկին և ներկա անդամներից: Նույնիսկ ավելի քիչ բան է հայտնի Հայաստանի Հանրապետությունում ներքին և միջազգային միգրանտների տարիքի, սեռի և հմտությունների մասին: Այդ պատճառներով՝ տնային տնտեսությունների վերաբերյալ այս հետազոտությունն իրենից ներկայացնում է հետևյալի վերաբերյալ տեղեկատվության եզակի աղբյուր՝ տնային տնտեսության կազմն ու առանձնահատկությունները, և անհատական մակարդակում միգրացիոն արտահոսքն ու ներհոսքը, ներքին միգրացիոն շրջանակներում կատարվող փոխանցումները և վերադարձի միգրացիայի ձևերը:



Ընտրանքային բնակչության նկարագրությունը

Վերջնական ընտրանքը բաղկացած է 7.890 հարցված տնային տնտեսություններից՝ բաղկացած հետազոտված տնային տնտեսության 31.118 անդամներից: Բացի դրանից՝ հետազոտությունը պարունակում է տնային տնտեսության 1.972 անդամների մասին տեղեկատվություն, որոնք մեկնել են արտերկիր մինչև 2007 թվականը: Ընդհանուր առմամբ, տնային տնտեսության հետազոտության մեջ ներառվել է տնային տնտեսության 33.090 անդամի վերաբերյալ տեղեկատվություն: Սույն հետազոտությունը որպես ելակետ է վերցրել տնային տնտեսության *դե յուրե* (բնակչության սովորական վայրը) սահմանումը, և ոչ թե *դե ֆակտո* (այն վայրը, որտեղ յուրաքանչյուր անձ գտնվել է հարցումն անցկացնելուց մեկ գիշեր առաջ) սահմանումը: Մինչև 2007 թվականը մեկնած՝ տնային տնտեսության այդ 1.972 անդամների վերաբերյալ վերլուծություն կիրականացվի առանձին բաժնում: Ըստ մարզերի հետազոտված տնային տնտեսությունների թիվը, ընտրանքի ընդգրկվածությունը, մասնաբաժինը ընտրանքում և բաշխումը ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Հետազոտված տնային տնտեսությունների թիվն ու բաշխումը՝ ըստ մարզերի

ՀՀ մարզեր և Երևան քաղաք	D	R	Ընտրանքի ընդգրկվածությունը	Մասնաբաժինը ընտրանքում (%)
Երևան քաղաք	0,018	0,082	2200	27.9
Արագածոտն	0,045	0,125	400	5.1
Արարատ	0,033	0,100	660	8.4
Արմավիր	0,024	0,045	620	7.9
Գեղարքունիք	0,041	0,160	620	7.9
Լոռի	0,042	0,180	680	8.6
Կոտայք	0,025	0,059	740	9.4
Շիրակ	0,042	0,176	620	7.9
Սյունիք	0,033	0,080	520	6.5
Վայոց Ձոր	0,049	0,144	400	5.1
Տավուշ	0,045	0,134	430	5.5
Ընդամենը	0,011	0,107	7890	100

Ծանոթագրություններ. R-ն գնահատվող ցուցանիշի (բնակչության պատասխանի չափը, %) համար կանխատեսվող կամ նախատեսվող ելակետն է (ընդգրկվածության աստիճան) (վերցված են ԿՊՀՀ տվյալներից), D-ն սխալվելու թույլատրելի շեմն է՝ 95% վստահության միջակայքում:

Աղյուսակ 3-ում ներկայացված են հետազոտված տնային տնտեսությունների թիվն ու կառուցվածքը՝ ըստ մարզերի: Ամենամեծ մասը, ինչպես և նախատեսվում էր, բաժին է հասել Երևան քաղաքին (27.9%), որին հաջորդել են Կոտայքը (9.4%) և Լոռին (8.6%) ու Արարատը (8.4%), Արմավիրը, Գեղարքունիքը և Շիրակը՝ հավասար չափով (7.9%), Սյունիքը (6.5%), Տավուշը (5.5%) և Արագածոտն ու Վայոց Ձորը (5.1%): Միջինում տնային տնտեսություններից հարցազրույցին մասնակցողները նկարագրվել են որպես 71.7%-ը քաղաքային տնային տնտեսություններ և 28.3%-ը գյուղական տնային տնտեսություններ:

Բոլոր տնային տնտեսությունների անդամների բաշխումը ըստ սեռի ցույց է տալիս, որ կանանց թիվը մի փոքր գերազանցում է տղամարդկանց թիվը: Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների բնակչության 52.5%-ը կազմում են կանայք, իսկ մնացած մասը՝ տղամարդիկ:

Հետազոտության արդյունքում տնային տնտեսությունների տարածքային բաշխումը՝ ըստ թվաքանակի, ներկայացված է Աղյուսակ 4-ում:



Աղյուսակ 4. Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսության անդամները ըստ մարզերի՝ թվաքանակով և տոկոսով

ՀՀ մարզեր (և Երևան քաղաք)	Թվաքանակ	Տոկոս
Երևան քաղաք	8.854	27.5
Արագածոտն	1.567	5
Արարատ	2.383	7.7
Արմավիր	2.560	8.2
Գեղարքունիք	2.500	8.0
Լոռի	2.408	7.7
Կոտայք	3.280	10.5
Շիրակ	2.576	8.3
Սյունիք	1.778	5.7
Վայոց Ձոր	1.672	5.4
Տավուշ	1.840	5.9
Ընդամենը	31.118	100

Տնային տնտեսությունների առանձնահատկությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն

Հետազոտության համաձայն՝ հետազոտված տնային տնտեսությունների 99.8%-ը հաստատվել է մինչև 2007 թվականը, այսինքն՝ մինչև այս հետազոտության համար հաշվետու տարին: Միայն 0.2%-ն է ձևավորվել 2007 թվականի հունվարի 1-ից հետո:

Աղյուսակ 5. Հետազոտված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ բնակության վայրերի, 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ

	Տոկոս
Նշված բնակատեղին	89.3
Այլ բնակատեղի ՀՀ-ում	2.0
Արտասահման (այդ թվում՝ ԼՂ-ն)	1.0
Ծնվել է 2007 թվականի հունվարի 1-ից հետո	7.7

Բացի դրանից՝ հետազոտությունով նախանշվում են հետազոտված տնային տնտեսությունների բնակության վայրերը 2007 թվականին (Տես Աղյուսակ 5-ը): 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ (կամ ավելի ուշ), հետազոտված տնային տնտեսությունների 89.3%-ը բնակվել է տվյալ բնակավայրում, իսկ 2%-ը բնակվել է Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրում, 1%-ը բնակվել է արտերկրում, իսկ տնային տնտեսության անդամների 7.7%-ը ծնվել է 2007 թվականի հունվարի 1-ից հետո: Ավելին, հետազոտությամբ հաստատվել է, որ հետազոտված տնային տնտեսությունների 3.9%-ը տեղափոխվել է մեկ այլ կացարան տվյալ բնակավայրում 2007 թվականի 1-ից մինչև օրս:



Աղյուսակ 6. Այն տնային տնտեսությունների բաշխումը, որոնք փոխել են իրենց կացարանը՝ տեղափոխման հիմնական նպատակով

	18.9
Բնակարանային պայմանների բարելավում	7.9
Բնակելի շրջանի բարելավում	25.2
Ծնողներից առանձնացում	28.5
Ընտանեկան հանգամանքներ	10.3
Տնային տնտեսության ֆինանսական խնդիրների լուծում	9
Այլ	0.2
Չի նշվել	0.2
Ընդամենը	100

Այս թեմայի վերաբերյալ ստացված տվյալների ուսումնասիրությամբ (n=445) կպարզվի, որ իրենց կացարանը փոխած տնային տնտեսությունների ավելի քան 50%-ը, այդ քայլին դիմել են ընտանիքի հետ կապված պատճառներով, և նրանցից՝ 28.5%-ը ընտանեկան հանգամանքների պատճառով (նշված չէ), իսկ 25.2%-ը՝ ծնողներից առանձնանալու պատճառով (Տե՛ս Աղյուսակ 6-ը): Տասից մեկը (10.3%) փոխել է իր կացարանը ֆինանսական խնդիրների պատճառով, 18.9%-ը տեղափոխվել է՝ բնակարանային պայմանները բարելավելու համար, իսկ 7.9%-ը՝ բնակելի շրջանի բարելավման համար:

Ստացված ու հավաքված պատասխանների համաձայն (n=445)՝ տնային տնտեսության նախկին բնակիչների 30.1%-ը տեղափոխվել է մեկ այլ կացարան տվյալ բնակատեղում, 6.7%-ը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող մեկ այլ բնակատեղի, իսկ 27%-ը տեղափոխվել է օտարերկրյա պետություն: Պատասխանների 24% դեպքերում, հետազոտված տնային տնտեսությունից առաջ այդ վայրում որևէ մեկը չի բնակվել, 1.3%-ն շարունակում է ապրել հետազոտված տնային տնտեսության նույն կացարանում, հետազոտված տնային տնտեսության 5.6%-ը նախընտրել է չպատասխանել այդ հարցին:

Այդ 27%-ից, որոնք մեկնել են արտերկիր (n=125), մենք ունենք տեղեկատվություն նպատակակետ երկրի վերաբերյալ. 59%-ը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն, 9.6%-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2.4%-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, իսկ 15.2%-ը՝ այլ երկրներ (13.6%-ը չի նշել նպատակակետ երկիրը):¹⁶

Տնային տնտեսության չափը

Հետազոտված տնային տնտեսությունների միջին չափը եղել է 3.89 հետազոտության ընթացքում՝ ի տարբերություն 2007 թվականի հունվարին արձանագրված՝ 3.95 անձ մեկ տնային տնտեսության համար: Տնային տնտեսության չափը տատանվում է ըստ ընտրանքի (Տե՛ս Աղյուսակ 7-ը): Հետազոտված տնային տնտեսությունների չափը տարբերվում է՝ սկսած նվազագույնից, «մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունից», որտեղ մեկ անձը միայնակ է ապրել ամբողջ բնակելի միավորում կամ դրա մի մասում և անկախ սպառող է եղել, մինչև 14 անդամից բաղկացած տնային տնտեսություն: Տվյալների համաձայն՝ հետազոտված տնային տնտեսությունների 21%-ը բաղկացած է եղել 4 անդամից,

16 Բացի այդ հիմնական նպատակակետերից՝ օտարերկրյա պետություն մեկնած այդ 27%-ից մենք տեղեկատվություն ունենք հետևյալ երկրների մասին՝ Ֆրանսիա, Բելգիա, Գերմանիա, Հունաստան, Ղազախստան, Նիդեռլանդներ, Ուկրաինա:



18%-ը՝ 5 անդամից, 14.4%-ը՝ 3 անդամից, 14%-ը՝ 2 անդամից, 12.5%-ը՝ 6 անդամից, 6.6%-ը՝ 7 անդամից և 2%-ը՝ 8 կամ ավելի անդամներից: Այս տվյալները համեմատական են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2008 թվականին իրականացված հետազոտության հետ, որտեղ տնային տնտեսությունները բաղկացած են եղել 2-5 անդամից՝ հասնելով 68.4%-ի, մինչդեռ 2001 թվականի մարդահամարով՝ այդ ցուցիչը եղել է 66.6%: Համեմատած 2001 թվականի մարդահամարի հետ՝ միայն չնչին փոփոխություններ են եղել 4 անդամից կազմված տնային տնտեսության կոնկրետ կշռի մասով, սակայն համապատասխանաբար 0.6 տոկոսային կետի և 0.8 տոկոսային կետի աճ է նկատվել 5-6 անդամից բաղկացած տնային տնտեսությունների մասնաբաժնում: Բացի դրանից՝ (1.7 տոկոսային կետով) անկում է նկատվել 1-2 անդամից բաղկացած տնային տնտեսությունների կոնկրետ կշռում, և (1.1 տոկոսային կետով)՝ 7 և ավելի անդամից բաղկացած տնային տնտեսությունների կոնկրետ կշռում: Տնային տնտեսության անդամների ընդհանուր թիվը եղել է 4.1 անձ՝ համաձայն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (2007) հետազոտության և մարդահամարի, և նվազել է մինչև 3.89 անձի այս հետազոտությունում:

Աղյուսակ 7. Հետազոտված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ անդամների թվի

	1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	5 անձ	6 անձ	7 անձ	8 և ավելի անձ	Միջին թիվը	Ընդամենը
ՄԱԿ հետազոտություն	7.11	14	14.4	21	18.5	12.5	6.6	2	3.89	100
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ընտրանք 2008	9.8	11.8	13.4	22	21.2	13.8	4.8	3.2	4.1	100
Ըստ 2001 թվականի մարդահամարի	11	12.8	13.2	22	18.6	11.9	5.8	4.7	4.2	100

Ժողովրդագրական առանձնահատկությունները


Ժողովրդագրական առանձնահատկությունները կոնկրետ բնակչության քանակապես հաշվելի վիճակագրական տվյալներն են: Հետազոտված ընդհանուր տնային տնտեսության ժողովրդագրական պատկերը, այդ թվում՝ տնային տնտեսության կազմը, տարիքը, ծննդավայրը, քաղաքացիությունը, ընտանեկան դրությունը և կրթությունը զեկույցում ներկայացված են՝ նպաստելու տարբեր միգրանտների և միգրացիայի հետ առնչություն ունեցող տնային տնտեսությունների ընդհանուր պատկերի ու տիպաբանության ձևավորմանը:

Հետազոտված տնային տնտեսության անդամների բաշխումը՝ ըստ սեռի և տարիքի

Հետազոտված տվյալների համաձայն՝ հետազոտված տնային տնտեսությունների անդամների 47.5%-ը եղել են տղամարդիկ (n=14.788), իսկ 52.5%-ը՝ կանայք (n=16.330): Համամասնությունները համեմատելի են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 2008 թվականի հետազոտության արդյունքների և 2001 թվականի մարդահամարի արդյունքների հետ (48% տղամարդիկ և 52% կանայք): Բաշխումն ըստ սեռի համապատասխանում է ակնկալվող արդյունքին, որը հիմնված է ընտրանքի տեսական ձևավորման վրա: (տես ստորև՝ Գծապատկեր 1-ը):



Գծապատկեր 1. Հետազոտված տնային տնտեսությունների անդամների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի և ընտրված տարիքային խմբերի



(-Տղամարդիկ -Կանայք)
0-15 16-25 26-35 36-45 46-55 56-65 66-75 76 տարեկան և ավելի բարձր

Հետազոտված տնային տնտեսության անդամների բաշխումն ըստ տարիքային խմբի ու սեռի ցույց է տալիս տարիքային խմբերում սեռերի համաչափությունը՝ տարեցների տարիքային խմբերում կանանց թվային առավելությամբ (տես վերը՝ Գծապատկեր 1-ը): 0-14 և 65 տարեկան և բարձր տարիքային խմբերը կազմում են բնակչության համապատասխանաբար 16.7%-ը և 16.9%-ը, մինչդեռ 15-59 տարիքային խումբը՝ բնակչության 66.5%-ը, այսպես կոչված, «ակտիվ տարիքում» են:

Հետազոտության տվյալների համաձայն՝ տարիքային կազմը ներկայացված է եղել հետևյալ համամասնությամբ՝ 16,7%-ը՝ 0-14 տարեկաններ, 66.5%-ը՝ աշխատունակ տարիքի բնակչություն (15-59 տարեկան) և 16.9%-ը՝ աշխատունակության տարիքից բարձր (60-64 տարեկան՝ 5.3% ու 65 տարեկան և ավելի բարձր՝ 11.6%): Հարցված բնակչության 25.7%-ը կազմել են 15-29 տարեկան երիտասարդները (այդ խմբում 49.5%-ը եղել են տղամարդիկ, իսկ 50.5%-ը՝ կանայք): (Տես ստորև՝ Աղյուսակ 8-ը):

Աղյուսակ 8. Հետազոտված բնակչության տարիքային կազմը՝ ըստ սեռի (%)

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
0-4	7	5.6	6.3
5-9	6.2	4.6	5.4
10-14	5.5	4.4	5
15-19	6.8	6.2	6.5
20-24	10	9.7	9.9
25-29	9.8	8.8	9.3
30-34	7.8	7.3	7.5
35-39	6	5.7	5.8
40-44	5.5	5.6	5.5
45-49	5.9	6.8	6.4
50-54	7.9	8.7	8.3
55-59	7.2	7.3	7.3
60-64	4.9	5.6	5.3
65 տարեկան և ավելի բարձր	9.4	13.6	11.6
Ընդամենը	100	100	100



Հետազոտված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ծննդավայրի

2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ (կամ ավելի ուշ)՝ հետազոտված տնային տնտեսությունների 77.1%-ը բնակվել է նույն վայրում, որտեղ ծնվել է (n=24.078), 6.8%-ը ծնվել է նույն մարզի տարածքում գտնվող այլ վայրում, 9.9%-ը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող այլ վայրում, տնային տնտեսությունների անդամների 6.2%-ը ծնվել է արտերկրում (այդ թվում՝ ԼՂ-ում) (n=1.774), այսինքն՝ տնային տնտեսությունների անդամների մոտ 17%-ը ծնվել է այլ վայրերում: Հարցված տնային տնտեսությունների անդամների 7.7%-ը ծնվել է 2007 թվականի հունվարից հետո: Այս տվյալները մեզ տալիս են դեպի Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունից դուրս և Հայաստանի Հանրապետության տարածքում միգրացիոն գործընթացների վերաբերյալ առաջին ցուցանիշները: Հիմնական գործընթացները շարժունակության բացակայության մասով են (77.1%), բայց հարցազրույցի մասնակցածների 22.9%-ը ներգրավված է եղել միգրացիոն գործընթացներում:

Աղյուսակ 9. Հետազոտված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ծննդավայրի

	Տոկոս
Տվյալ բնակավայրում	77.1
Նույն մարզում գտնվող այլ բնակավայրում	6.8
ՀՀ այլ մարզեր	9.9
Օտարերկրյա պետություններ (այդ թվում՝ ԼՂ-ն)	6.2
2007 թվականի հունվարի 1-ից հետո ծնվածներ	7.7

Հարցված տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ազգության

Հարցվածների ճշող մեծամասնությունը՝ 99.1%-ը եղել են հայեր, 0.4%-ը՝ եզդիներ, 0.3%-ը՝ ռուսներ: Ներգրավված են եղել նաև այլ էթնիկ խմբեր, ինչպիսիք են՝ քրդերը, ուկրաինացիները, ասորիները, հույները, պարսիկները և հնդիկները, սակայն նրանց համամասնությունը քիչ է եղել՝ 0.1%-ից ցածր, հետևաբար նրանք առանձին չեն ներկայացվել:

Անհրաժեշտ է նշել մի շարք կոնկրետ տարբերություններ հայ չհանդիսացող՝ հարցվածների ազգության և սեռի միջև (տես ստորև՝ Աղյուսակ 10-ը):

Աղյուսակ 10. Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ ազգության և սեռի (%)

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը (n=)
հայ	47.6	52.4	30.844
ռուս	18.5	81.5	81
եզդի	55.5	44.5	137
քուրդ	42.9	57.1	21
ասորի	42.9	57.1	7
հույն	0	100	1
ուկրաինացի	0	100	10
պարսիկ	66.7	33.3	3
հնդիկ	50	50	2
այլ	41.7	58.3	12
ընդամենը	47.5	52.5	31.118



Հայերի դեպքում, նրանցից 0.6%-ը (n=183) ունեցել է երկքաղաքացիություն, իսկ 18 հարցվածներ նշել են, որ քաղաքացիություն չունեն (քաղաքացիություն չունեցողներ): Հարցված տնային տնտեսությունների 1.1%-ը եղել են օտարերկրացիներ են:

Հարցված տնային տնտեսությունների բաշխումը՝ ըստ մայրենի լեզվի

Մինչդեռ տնային տնտեսությունների անդամների կողմից գործածվող հիմնական լեզուն հայերենն է եղել (98.8%-ը հայերենը գործածել է որպես առաջին լեզու), հարցվածների շրջանում հայտնի մյուս լեզվական խմբերն են եղել՝ ռուսերենը, եզդիերենը, քրդերենը, ասորերենը և ուկրաիներենը (տես ստորև՝ Աղյուսակ 11-ը):

Աղյուսակ 11. Տանը հաղորդակցման հիմնական լեզուն՝ ըստ հարցվածների ազգության (հիմնական ազգություններ) (%)

	հայ	ռուս	եզդի	քրդ	ասորի	ուկրաինացի	Ընդամենը
հայերեն	99.5	0.4	-	-	-	-	100
ռուսերեն	24.7	75.3	-	-	-	-	100
եզդիերեն	8.8	-	91.2	-	-	-	100
քրդերեն	85.7	-	-	14.3	-	-	100
ասորերեն	14.3	14.3	-	-	71.4	-	100
ուկրաիներեն	40	30	-	-	-	30	100

Հարցված տնային տնտեսությունների անդամների ընտանեկան դրությունը

Ինչ վերաբերում է հարցվածների ընտանեկան դրությանը, ապա ընտրանքում ընդգրկված մեծահասակների 61.3%-ը նշել է, որ իրենք ամուսնացած են, իսկ 25.4%-ը՝ որ երբեք ամուսնացած չեն եղել: Ընտրանքում ընդգրկված մեծահասակների 10.4%-ը այրի կամ ամուրի է եղել, 2.9%-ը՝ ամուսնալուծված: Որոշակի տարբերություններ կան տղամարդկանց և կանանց ընտանեկան դրության միջև: Հարցազրույցի մասնակիցների ընտանեկան դրության վերաբերյալ տվյալներն առավել մանրամասն վերլուծելիս, առավել շատ կանայք են կորցրել իրենց ամուսիններին (իրենց ամուսիններին կորցրած՝ տնային տնտեսության հարցվածների 84.8%-ը կանայք են եղել) և ամուսնալուծվել (տնային տնտեսություններում ամուսնալուծվածների 78.2%-ը կանայք են եղել), քան հարցված տղամարդիկ: Ավելի շատ տղամարդ հարցվածներ ամուսնացած չի եղել (տնային տնտեսություններում չամուսնացածների 56.5%-ը տղամարդիկ են եղել), և նաև ավելի շատ տղամարդ հարցվածներն են ամուսնացած եղել (չնայած որ տնային տնտեսություններում ամուսնացածների միայն 48.7%-ն է տղամարդ եղել):

Աղյուսակ 12. Ընտանեկան դրությունը՝ ըստ սեռի (%)

	Տղամարդիկ	Կանայք
Երբեք ամուսնացած չեն եղել	30.9	20.6
Ամուսնացածներ	64.3	58.7
Այրի (ամուրիներ)	3.4	16.5
Ամուսնալուծվածներ	1.4	4.2



Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ կրթության մակարդակի

Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը ցույց է տվել, որ հարցազրույցի մասնակցածների ավելի քան 80%-ը կրթություն ստացած անձինք են եղել, որոնք առնվազն ստացել են ընդհանուր միջնակարգ կրթություն: Հարցված տնային տնտեսությունների մեծամասնությունը ունեցել է միջնակարգ կրթություն (37.3%), 0.4%-ը՝ ստացել է հետբուհական կրթություն, 22.1%-ը՝ բուհական կրթություն, 18.5%-ը՝ միջին մասնագիտական վերապատրաստում է անցել, իսկ 2.2%-ը՝ նախամասնագիտական դասընթացներ է անցել (տես Աղյուսակ 13-ը): Տարբերությունն ըստ սեռի՝ կրթության մակարդակի մասով էական է: Կանայք սովորաբար ավելի կրթված են, քան տղամարդիկ: Հարցված կանայք ունեն ավելի բարձր կրթական նկարագիր, որը համապատասխանում է միջին մասնագիտական (միջինից 4.5% բարձր) ու բարձրագույն կրթությամբ կանանց մեծ թվին (միջինից 2.2% բարձր): Տնային տնտեսության տղամարդ հարցվածների շրջանում այդ ցուցանիշը միջինից բարձր է հետբուհական կրթության (0.5%՝ 0.3%-ի համեմատությամբ) և նախամասնագիտական կրթության (քոլեջ) մասով: Ստորև նշված աղյուսակում ներկայացված է հարցվածների բաշխումն ըստ իրենց կրթական ձեռքբերումների:

Աղյուսակ 13. Տնային տնտեսությունների անդամների բաշխումը՝ ըստ կրթության մակարդակի

	Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր միջինը
Տարրական և ցածր	11.2	9.7	10.4
Հիմնական դպրոց (8-9 դասարաններ)	9.7	8.4	9
Միջնակարգ ընդհանուր	38.8	35.9	37.3
Նախամասնագիտական (քոլեջ)	2.7	1.8	2.2
Միջին մասնագիտական	16.1	20.6	18.5
Բարձրագույն	20.9	23.1	22.1
Հետբուհական	0.5	0.3	0.4

«Տարիքային խումբ» և «կրթության մակարդակ» փոփոխականների խաչաձև աղյուսակավորումը ներկայացնում է հետաքրքիր արդյունքներ, դրանց որոշ մասը հազիվ թե զարմացնեն: Առաջին, բուհական կրթություն ստացածների թիվը տարեց սերնդի ներկայացուցիչների շրջանում ավելի քիչ է, իսկ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները ավելի շատ են ստանում հետբուհական կրթություն: Երկրորդ, նկատվում է փոփոխվող պատկեր բնակչության շրջանում, այն մասով, որ բարձրագույն կրթությունը գերադասելի է միջին մասնագիտական կրթությունից: Երրորդ, գրանցվում է դպրոց անչափահասների հաճախելիության 100% արդյունք:



Աղյուսակ 14. Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ տարիքային խմբի

	Տարրական և ցածր	Հիմնական դպրոց (8-9 դասարաններ)	Միջնակարգ ընդհանուր	Նախամասնագիտական (քոլեջ)	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Հետբուհական
0-9	1.399	0	0	0	0	0	0
10-14	1.099	413	38	0	1	0	0
15-19	5	632	1.136	25	93	103	0
20-24	9	85	1.306	76	442	1.077	27
25-29	13	123	1.167	60	474	1.026	20
30-34	12	132	1.029	45	486	683	16
35-39	8	74	821	49	409	459	7
40-44	7	81	677	53	459	422	8
45-49	4	64	806	53	537	482	5
50-54	7	118	1.071	86	739	570	6
55-59	16	129	902	66	611	525	6
60-64	12	111	612	52	466	403	6
65 տարեկան և ավելի բարձր	416	639	1.170	76	601	611	16
Ընդամենը	3,007 (10.4%)	2,601 (9.%)	10,735 (37.3%)	641 (2.2%)	5,318 (18.5%)	6,361 (22.1%)	117 (0.4%)

Երբ անդրադարձ է կատարվում կրթության ու բնակության մարզի փոփոխականներին, օրինակ, պարզվում է, որ էական տարբերություններ կան: Երևանում գրանցված է ամենաշատ որակավորում ստացած բնակչության թիվը, որոնք ավելի շատ բարձրագույն կրթություն ստացած հարցվածներ են (միջին համազգային մակարդակից 12.3% բարձր) և հետբուհական կրթություն ստացածների կրկնակին՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության միջին ցուցանիշի: Ի հակադրություն՝ Գեղարքունիքում տարրական ու ցածր կրթություն ունեցող հարցվածների ամենաբարձր մակարդակն է (12.1%), և միջին մասնագիտական կրթության դիպլոմ ունեցող հարցվածների ամենացածր թիվը (12.3%):

Աղյուսակ 15. Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ բնակության մարզի

	Նախնական և ավելի ցածր մակարդակ	Հիմնական դպրոց (8-9 դասարաններ)	Ընդհանուր միջնակարգ	Մասնագիտական (քոլեջ)	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն	Հետբուհական
Երևան	9.6	7.6	27.6	1.5	18.5	34.4	0.9
Արագածոտն	12.1	10.2	45.6	2.1	12.8	16.8	0.4
Արարատ	9.3	8.5	35.7	1.5	24.4	20.5	0.1
Արմավիր	9.5	8.3	45.7	4	17.2	15.2	0.1
Գեղարքունիք	12.1	9.4	49.6	0.2	12.3	16.1	0.3
Լոռի	9.8	12	40.3	1.2	19.4	17	0.3
Կոտայք	12.4	10.2	40.9	3	17.4	15.8	0.3
Շիրակ	8.5	8.2	44.7	3.1	15.9	19.5	0.1
Սյունիք	10.8	7.8	30.5	5.9	23.1	21.4	0.6
Վայոց ձոր	9.4	8	40.8	1.1	24.1	16.4	0.3
Տավուշ	14.5	13.2	31.5	3.5	20.8	16.5	0
Ընդամենը	10.4	9	37.3	2.2	18.5	22.1	0.4



Ըստ սեռի՝ կրթության մասով թվերը վերլուծելիս մենք ընդունում ենք, որ տղամարդկանց շրջանում կրթական մակարդակը գերազանցել է կանանց շրջանում կրթական մակարդակը՝ տարրական ու ցածր մակարդակում (1.5%-ով), ընդհանուր միջնակարգ կրթության մակարդակում (2.9%-ով), հետբուհական կրթության մակարդակում (0.2%-ով): Կանանց շրջանում կրթական մակարդակը գերազանցել է տղամարդկանց շրջանում կրթական մակարդակը՝ միջին մասնագիտական կրթության (4.5%-ով) և բարձրագույն կրթության մասով (2.2%-ով):

Աղյուսակ 16. Տնային տնտեսության անդամների կրթական մակարդակը՝ ըստ սեռի (%)

	Տարրական և ցածր	Հիմնական դպրոց (8-9 դասարաններ)	Միջնակարգ ընդհանուր	Նախա-մասնագիտական (քոլեջ)	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Հետբուհական
Տղամարդիկ	11.2	9.7	38.8	2.7	16.1	20.9	0.5
Կանայք	9.7	8.4	35.9	1.8	20.6	23.1	0.3
Ընդամենը	10.4	9	37.3	2.2	18.5	22.1	0.4

Հետազոտված տնային տնտեսությունների տնտեսական առանձնահատկությունները

Բնակչությանը նկարագրող տնտեսական առանձնահատկությունները բաղկացած են զբաղվածության կարգավիճակից, մասնագիտական կարգավիճակի տեսակից, մասնավոր կամ պետական զբաղվածության կարգավիճակից, գրավոր պայմանագրի առկայությունից, աշխատանքի բնույթից, աշխատանքային ժամերից, աշխատավարձից, աշխատանք չունեցողների զբաղմունքից և աշխատատեղերի վայրից: Բացի դրանից՝ այդ առանձնահատկությունները կարող են միավորվել տնային տնտեսության ընտրանքից՝ առանձին փոփոխականների աղյուսակավորման միջոցով զբաղվածության վիճակի ու զբաղվածության կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

Բոլոր հարցված տնային տնտեսության անդամներին խնդրել են նկարագրել իրենց ներկայիս հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը: Աղյուսակ 18-ի համաձայն՝ 31.118 հարցված տնային տնտեսությունների մոտ 38%-ը իրենց նկարագրել է որպես աշխատաշուկայի մասնակիցներ (աշխատողներ կամ ինքնազբաղվածներ), և այդ անձանցից 61%-ը եղել են տղամարդիկ: Մոտ 13.9%-ը եղել են աշխատանք չունեցողներ, սակայն ակտիվորեն աշխատանք են փնտրել (եկամտաբեր զբաղմունք (աշխատանք) են փնտրել վերջին 4 շաբաթվա ընթացքում), իսկ այդ անձանցից՝ 59.5%-ը եղել են կանայք: Ընտրանքի 14.9%-ը կազմել են պաշտոնաթող չափահասները, թոշակառուները և նպաստառուները, ընտրանքի 8.6%-ը կազմել են տնային տնտեսություն վարողները (դրանց 97%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են եղել), աշակերտներն ու ուսանողները կազմել են ընդհանուր թվի 15.5%, իսկ խնամքի տակ գտնվող մյուս անձինք կազմել են հարցվածների մոտ 8.5%-ը: Կարևոր է նշել, որ հետազոտված հարցվածների միայն 47%-ն է աշխատել առնվազն մեկ ժամ հետազոտությանը նախորդող ժամանակահատվածում:¹⁷

17 Աշխատուժի վերաբերյալ 2010 թվականի հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանում ամբողջ զբաղվածության 19%-ը կրում է ժամանակավոր, սեզոնային, ոչ պարբերական կամ մեկանգամյա աշխատանքի բնույթ: Բնակչության մեծ մասը չունի սոցիալական պաշտպանություն, միայն զուտ իրենց կարիքները բավարարելու հնարավորություն (Եվրոպական վերապատրաստման հիմնադրամ, 2013:6):



Աղյուսակ 17. Հարցված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ սեռի (%)

Զբաղվածության կարգավիճակ	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Զբաղվածություն ունեցողներ (այդ թվում՝ ինքնազբաղվածներ)	48.7	28.2	38
Աշակերտ/ուսանող	16.5	14.7	15.5
Տնային տնտեսություն վարողներ	0.5	15.8	8.6
Թոշակառուներ / նպաստառուներ	12	17.5	14.9
Խնամքի տակ գտնվողներ	9.4	7.7	8.5
Աշխատանք չունեցողներ	11.8	15.7	13.9
Այլ	1.1	0.3	0.7
Ընդամենը	100	100	100

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2008 թվականին իրականացված հետազոտության հետ այս հետազոտությունը համեմատելիս կարելի է հստակ նկատել գործազրկության մակարդակի աճ (9.2%-ից 2008 թվականին մինչև 13.9% 2013 թվականին), զբաղվածություն ունեցողների/ինքնազբաղվածների թվի անկում (40.4%-ից 2008 թվականին մինչև 38% 2013 թվականին), տնային տնտեսություն վարողների տոկոսի կրճատում (10.3%-ից 2008 թվականին մինչև 8.6% 2013 թվականին) և թոշակառուների/խնամքի տակ գտնվողների թվի աճ (13.1%-ից 2008 թվականին մինչև 14.9% 2013 թվականին):¹⁸

Այդ ցուցանիշներն ըստ տարիքային խմբերի վերլուծելիս (տե՛ս Աղյուսակ 19-ը) կարելի է նկատել գործազրկության բարձր մակարդակ 20-29 տարեկան տարիքային խմբերի շրջանում, և 35-ից 54 տարեկան տարիքային խմբերում զբաղվածություն ունեցողների (ինքնազբաղվածների) գերակշռությունը: Ինչպես և ակնկալվում էր, ուսանողների (աշակերտների) գերակշռությունը նկատվում է 19 և ավելի ցածր տարիքային խմբերում: Թոշակառուների (նպաստառուների) թիվը սկսվում է աճել 60 տարեկանից հետո:

Աղյուսակ 18 Հարցված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ տարիքային խմբերի (%)

	Զբաղվածություն ունեցողներ (այդ թվում՝ ինքնազբաղվածներ)	Աշակերտներ/ուսանողներ	Տնային տնտեսություն վարողներ	Թոշակառուներ / նպաստառուներ	Խնամքի տակ գտնվողներ	Աշխատանք չունեցողներ	Այլ
0-4	0	0	0	0	100	0	0
5-9	0	72.5	0	0.1	26.9	0.5	0
10-14	0.1	98.6	0	0	1.3	0	0
15-19	4.4	68.4	1.2	0.4	2.4	18.5	4.7
20-24	35.8	18.5	9.6	0.7	1.2	32.8	1.4
25-29	54.2	2.2	16.1	1.4	1	24.6	0.5
30-34	59.5	0.9	15.9	2.5	1	19.7	0.4
35-39	65	0.2	13.6	3.7	0.7	16.5	0.4
40-44	66.8	0	12.5	4.3	0.3	15.5	0.5
45-49	66.4	0	15	4.7	0.5	13.1	0.4
50-54	63.7	0.1	13.1	7.1	0.4	15.3	0.3
55-59	58.4	0	12.2	11.7	0.3	16.9	0.5
60-64	46.1	0	7.2	36.6	0.3	9.6	0.1
65 տարեկան և դրանից բարձր	8.2	0	0.4	91.1	0.1	0	0.2
Ընդհանուր միջինը	38	15.5	8.6	14.9	8.5	13.9	0.7

18 2011 թվականին, զբաղվածության ընդհանուր չափը եղել է 51.4%՝ 18.4% գործազրկության մակարդակով: Հատկապես բարձր է եղել երիտասարդների շրջանում գործազրկությունը (39% 2010 թվականին), բարձր մակարդակի միտում է նկատվել կանանց ու քաղաքային և ավելի լավ կրթություն ստացած երիտասարդների շրջանում: Ավելին, ոչ պաշտոնական զբաղվածության չափը (ինքնազբաղվածներ և չգրանցված զբաղվածություն) շատ բարձր է եղել՝ հասնելով աշխատանքային տարիքի բնակչության ընդհանուր թվի 59.2%-ին (Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), 2011 թվական):



Ըստ բնակչության վայրի՝ հարցված տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ միջավայրերի տարբերությունները: Զբաղվածության (ինքնազբաղվածության) կարգավիճակը վերլուծելիս մենք կարևորում ենք այն փաստը, որ Արագածոտնից հարցվածները 10% քիչ են երկրի միջին ցուցանիշից և գրեթե 8% բարձր միջին ցուցանիշից՝ գործազրկության մասով: Սյուս կողմից մենք նկատում ենք, որ Սյունիքում հարցվածները ավելի քան 7% բարձր են ՀՀ-ի միջին ցուցանիշից՝ զբաղվածության և ինքնազբաղվածության մասով, և 5% ցածր միջին ցուցանիշից՝ հարցվածների շրջանում աշխատանք չունեցողների մասով: Սյունիքի հետ նույն ցուցանիշներն ունի նաև Գեղարքունիքը (հարցվածները ավելի քան 7% բարձր են ՀՀ-ի միջին ցուցանիշից՝ զբաղվածության և ինքնազբաղվածության մասով, և 4% ցածր միջին ցուցանիշից՝ հարցվածների շրջանում աշխատանք չունեցողների մասով):

Աղյուսակ 19. Հարցված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության կարգավիճակը / հիմնական սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ ըստ հարցվածների բնակչության մարզի (%)

	Զբաղվածությունն ցողներ (այդ թվում՝ ինքնազբաղվածներ)	Աշակերտներ/ուսանողներ	Տնային տնտեսություն վարողներ	Թոշակառուներ / նպաստառուներ	Խնամքի տակ գտնվողներ	Աշխատանք չունեցողներ	Այլ
Երևան	35.2	15.7	8.6	14.8	7.7	17.9	0.2
Արագածոտն	28.2	17.3	8	17	6.6	21.4	1.4
Արարատ	44.5	14.5	10	11.7	9.4	9.3	0.5
Արմավիր	39.5	15.2	10.8	12.1	8.4	13	1.1
Գեղարքունիք	45.1	15.4	5.8	15	8.2	9.2	1.4
Լոռի	36.8	15.9	7.1	18.1	7.1	14.2	0.8
Կոտայք	34.7	15.5	13.4	12.2	10.4	12.9	0.9
Շիրակ	37.8	14.2	8	16.8	8.5	13.6	1.1
Սյունիք	45.3	16.5	5.6	15.8	8.2	8	0.6
Վայոց Ձոր	37.6	14.1	5.6	18.4	10.4	13.5	0.6
Տավուշ	39.9	16.8	7.4	15.5	10.5	9.3	0.4
Ընդհանուր միջինը	38	15.5	8.6	14.9	8.5	13.9	0.7

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը

Հետազոտված հարցվածների շրջանում զբաղմունքի ամենամեծ թիվը բաժին է ընկել բարձր որակավորում ունեցող մասնագետների կատեգորիային (24.8%), բարձր որակավորում ունեցող մասնագետների կատեգորիան կազմել է հարցվածների ընդհանուր թվի 20%-ը: Ծառայությունների ոլորտի աշխատողներին բաժին է ընկել հարցվածների 2.5%-ը, գյուղատնտեսական հատվածին՝ 4.5%, ոչ գյուղատնտեսական հատվածում որակավորում ունեցող աշխատողները կազմել են ընդհանուր թվի 8.2%-ը, գրասենյակային աշխատողները՝ մոտ 0.7%, իսկ զինվորականները՝ 0.6%: Եվ վերջապես, հարցվածների 38.6%-ը հայտարարել է, որ մասնագիտություն չի ունեցել:



Աղյուսակ 20. Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ սեռի (%)

Մասնագիտություն և զբաղմունք	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Բարձր որակավորում ունեցող մասնագետներ	22.5	24.5	24.8
Որակավորված մասնագետներ	18.4	22.8	20
Գրասենյակային աշխատողներ	0.4	1.1	0.7
Ծառայությունների ոլորտի աշխատողներ	3.7	2.4	2.5
Որակավորված մասնագետներ գյուղատնտեսական ոլորտում	4	4.2	4.5
Որակավորված մասնագետներ ոչ գյուղատնտեսական ոլորտում	13.6	3.6	8.2
Զինվորականներ	1.3	0	0.6
Մասնագիտություն չունեցողներ	36	41.5	38.6
Ընդամենը	100	100	100

Ըստ սեռի՝ նույն վիճակագրական տվյալների վերլուծությամբ ներկայացվել են դիտարկման ենթակա այլ տվյալներ (տես վերը՝ Աղյուսակ 20-ը): Բարձր որակավորում ունեցող մասնագետների 55.7%-ը եղել են կանայք: Որակավորված մասնագետների 58.8%-ը նույնպես եղել են կանայք, ինչպես նաև գրասենյակային աշխատողների (77%-ը եղել են կանայք) և որակավորված աշխատողներ գյուղատնտեսական ոլորտում: Մյուս կողմից, հարցվածների 57.1%-ը, որոնք մասնագիտություն չեն ունեցել, նույնպես կանայք են եղել: Տղամարդիկ մեծամասնություն են կազմել ծառայությունների հատվածի կատեգորիայում (56.6%), ոչ գյուղատնտեսական հատվածի որակավորված աշխատողների կատեգորիայում (76.8%) և զինվորականների կատեգորիայում (97.5%):

Տարիքային խմբերի ու մասնագիտությունների և զբաղմունքների միջև խաչաձև աղյուսակավորումը մատնանշում է 20-ից 29 տարեկանների միջև ընկած միջակայքում բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ գերակշռություն, 50-ից 59 տարեկանների միջակայքում գյուղատնտեսական հատվածում որակավորված աշխատողների գերակշռություն, ինչպես նաև 30-ից 44 տարեկանների միջև ընկած միջակայքում ոչ գյուղատնտեսական հատվածում որակավորված աշխատողների բարձր թիվ: Տնային տնտեսությունների անդամների մասնագիտության ու զբաղմունքի և տարիքի միջև աղյուսակավորումը ներկայացված է Աղյուսակ 21-ում:

Աղյուսակ 21. Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ տարիքային խմբի (%)

	Բարձր որակավորում ունեցող մասնագետներ	Որակավորված մասնագետներ	Գրասենյակային աշխատողներ	Ծառայությունների ոլորտի աշխատողներ	Որակավորված մասնագետներ գյուղատնտեսական ոլորտում	Որակավորված մասնագետներ ոչ գյուղատնտեսական ոլորտում	Զինվորականներ	Մասնագիտություն ունեցողներ/չունեցողներ	Ընդամենը
15-19	4.6	4.9	0.1	1	0.3	0.9	1.4	86.9	100
20-24	34.4	15.6	0.5	2.4	1.3	5.7	1	39	100
25-29	33.9	17.5	0.7	3.5	2.2	7.9	1.2	33.1	100
30-34	26.9	20.3	0.9	3.5	2.7	10.5	1.2	34	100
35-39	24	22.9	1.2	5.1	4.2	10.3	0.4	32	100
40-44	23.8	26.2	1	3.8	4.1	11.4	0.5	29.2	100
45-49	23.7	27.4	1	3.5	5.9	8.7	0.6	29.2	100
50-54	21	28.2	0.7	3.3	7.5	10.1	0.2	28.9	100
55-59	22.4	27.1	0.9	3.9	6.1	9.3	0.2	30	100
60-64	23.6	26.2	1.1	3.5	5.4	8	0.1	32	100
65 և ավելի	16.7	17.5	0.5	1.3	5.5	8.4	0	50.1	100
Ընդհանուր միջինը	23.6	20.7	0.7	3	4.1	8.2	0.6	39	100



«Մասնագիտություն և զբաղմունք» փոփոխականի խաչաձև աղյուսակավորման վերլուծությունը՝ ըստ մարզի, շատ կարևոր է և առաջարկում է փոփոխություններ, ինչպես ցուցադրված է հաջորդ աղյուսակում: Երևանում բարձր որակավորում ունեցող մասնագետների թիվը հարցվածների շրջանում շատ բարձր է եղել (համազգային մակարդակում միջինից 14.2% բարձր): Վայոց Ձորից հարցվածները կազմել են որակավորված մասնագետների բարձր տոկոս (համազգային մակարդակում միջինից 5.5% բարձր): Գյուղատնտեսական հատվածում որակավորված աշխատողները գերներկայացված են եղել Գեղարքունիքում (<< միջինից 13.2% բարձր):

Աղյուսակ 22. Տնային տնտեսության անդամների մասնագիտությունն ու զբաղմունքը՝ ըստ մարզի (%)

	Բարձր որակավորում ունեցող մասնագետներ	Որակավորված մասնագետներ	Գրասենյակային աշխատողներ	Ծառայությունների ոլորտի աշխատողներ	Որակավորված մասնագետներ գյուղատնտեսական ոլորտում	Որակավորված մասնագետներ ոչ գյուղատնտեսական ոլորտում	Զինվորականներ	Մասնագիտություն ունեցողներ/չունեցողներ	Ընդամենը
Երևան	37.8	21.3	0.3	1	0.2	4	0.2	35.3	100
Արագածոտն	16.9	17.5	1.3	2.3	2.3	2.9	1.1	55.6	100
Արարատ	21.7	22.9	0.6	4.2	5.4	11.3	0.5	33.2	100
Արմավիր	15.1	21.1	0.5	2.8	2.8	6.2	0.7	50.7	100
Գեղարքունիք	17.8	12	0.3	4.1	17.3	16.8	0.4	31.3	100
Լոռի	16.6	23.1	0.7	1.2	6.3	14.2	0.9	37	100
Կոտայք	17.5	18.9	1	6.1	2.2	13.7	0.8	40	100
Շիրակ	19.2	20.6	1	2.4	4.6	7.6	0.6	44	100
Սյունիք	21.9	26	2	5.4	2.2	10.2	1.3	30.9	100
Վայոց Ձոր	17.4	26.2	0.4	1.7	0.1	0.9	0.4	52.4	100
Տավուշ	18	19.8	1.9	7.7	11	8.1	1.3	32.1	100
Ընդհանուր միջինը	23.6	20.7	0.7	3.0	4.1	8.2	0.6	39	100

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության հատվածը

Ինչ վերաբերում է հետազոտված տնային տնտեսությունների անդամների զբաղվածության հատվածին, ապա ըստ սեռի կատարված խաչաձև աղյուսակավորումը ցույց է տալիս էական տարբերություններ բնակչության առանձնահատկությունների սահմանման վերաբերյալ: Հարցված կանայք գերներկայացված են եղել «վարձու աշխատող՝ պետական հատվածում կատեգորիայում», «ինքնազբաղվածներ՝ գյուղացիական տնտեսությունում», առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ կատեգորիայում: (տես ստորև՝ Աղյուսակ 23-ը):



Աղյուսակ 23. Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ սեռի (%)

Զբաղվածության հատված	Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր միջինը
Վարձու աշխատող՝ պետական հատվածում	18.6	37.3	26
Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	52.4	31.1	43.9
Գործատու	1.6	0.5	1.2
Ինքնազբաղվածներ՝ գյուղացիական տնտեսությունում	12.4	19.2	15.1
Ինքնազբաղվածներ՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	12.6	6.2	10
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	2.3	5.5	3.6
Նշված չէ	0.1	0.1	0.1
Ընդամենը	100	100	100

«Զբաղվածության տեսակ» փոփոխականի խաչաձև աղյուսակավորման վերլուծությունը՝ ըստ մարզի, շատ կարևոր է և առաջարկում է փոփոխություններ, ինչպես ցուցադրված է հաջորդ աղյուսակում: Արագածոտնից հարցվածների շրջանում շատ բարձր է պետական հատվածում վարձու աշխատողների թիվը (համազգային մակարդակում միջինից 8.4% բարձր): Երևանից հարցվածների շրջանում շատ բարձր է եղել պետական հատվածում վարձու աշխատողների թիվը (համազգային մակարդակում միջինից 11.2% բարձր): Ինքնազբաղվածների թիվը գյուղացիական տնտեսությունում գերներկայացված է եղել Գեղարքունիքում (<< միջինից 8.4% բարձր): Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները ընտրանքի մաս չեն կազմել Երևանում, իսկ Տավուշում՝ << միջին ցուցանիշի գրեթե կրկնակին է եղել:

Աղյուսակ 24. Տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ մարզի (%)

	Վարձու աշխատող՝ պետական հատվածում	Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	Գործատու	Ինքնազբաղվածներ՝ գյուղացիական տնտեսությունում	Ինքնազբաղվածներ՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	Նշված չէ	Ընդամենը
Երևան	33.9	54.1	1.3	0.5	9.9	0	0.2	100
Արագածոտն	35.6	42.9	0.7	15.3	4.4	1.1	0	100
Արարատ	27.3	41.1	1.4	18.7	9	2.3	0.2	100
Արմավիր	21	38.1	1.4	19.3	12.8	7.4	0	100
Գեղարքունիք	17.4	35.1	1.5	24.7	11.2	10.1	0	100
Լոռի	24.2	37.7	0.6	24	10.7	2.6	0.2	100
Կոտայք	23.1	52.7	1.3	11.9	9.6	1.5	0	100
Շիրակ	18	48.3	0.7	18.2	7.5	7.2	0.2	100
Սյունիք	27.8	35.8	1.3	17.1	13.4	4.7	0	100
Վայոց ձոր	23.9	35.5	1.6	31.2	6.8	0.5	0.5	100
Տավուշ	25.5	34.1	0.4	19.2	12.9	7.9	0	100
Ընդհանուր միջինը	26	43.9	1.2	15.1	10	3.6	0.1	100

«Տարիքային խմբերի» ու «զբաղվածության տեսակի» միջև խաչաձև աղյուսակավորումը մատնանշում է երիտասարդ տարիքային խմբերում մասնավոր հատվածում աշխատողների



բարձր թիվ, ավելի բարձր տարիքային խմբերում մասնավոր հատվածում աշխատողների գերակշռություն (45-49 տարեկաններից բարձր) և երիտասարդ տարիքային խմբերում չվճարվող աշխատողների բարձր ցուցանիշ: Տնային տնտեսությունների անդամների զբաղվածության տեսակի և տարիքի միջև աղյուսակավորումը ներկայացված է Աղյուսակ 25-ում:

Աղյուսակ 25. Տնային տնտեսության անդամների զբաղվածության տեսակը՝ ըստ տարիքային խմբերի (%)

	Վարձու աշխատող՝ պետական հատվածում	Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	Գործատու	Ինքնազբաղվածներ՝ գյուղացիական տնտեսությունում	Ինքնազբաղվածներ՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	Նշված չէ	Ընդամենը
15-19	11.2	50.5	0	7.5	9.3	20.6	0.9	100
20-24	20.9	57.9	0.5	6.6	8.3	5.7	0.1	100
25-29	26.7	52.1	0.8	6.6	9.2	4.5	0.1	100
30-34	24.6	50.4	1	8.9	11.8	3.1	0.3	100
35-39	24.7	45.2	1.6	13.5	12	2.8	0.3	100
40-44	25.8	41.9	1.5	15.4	13.3	1.6	0.6	100
45-49	25.4	41.4	1.4	18.2	9.8	3.7	0.1	100
50-54	26.4	38.7	1.2	21.4	9.2	3.1	0	100
55-59	28.4	38.7	1.2	18.8	9.8	3	0	100
60-64	34.8	32.3	1	20	8.4	3.5	0	100
65 տարեկան և դրանից բարձր	26.2	23.1	2.2	38.4	6	4.2	0	100
Ընդհանուր միջինը	26	43.9	1.2	15.1	10	3.6	0.1	100

Հարցված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը

Զբաղվածության հատվածի ու սեռի փոխկախվածությունն ըմբռնելու համար հաջորդ աղյուսակում ներկայացնում ենք վերլուծական խաչաձև աղյուսակավորում՝ կախյալ փոփոխականի (սեռ) կատեգորիաները տեղադրելով որպես աղյուսակի վերնագրեր, իսկ անկախ փոփոխականը (զբաղվածության հատված) որպես տողի վերնագրեր: Կարելի է նկատել հարցված կանանց գերներկայացվածություն՝ ի հակադրություն գյուղատնտեսական հատվածում, կրթության և առողջապահության ոլորտում ներկայացվածության, և ինչպես և ակնկալվում էր՝ շատ քիչ ներկայացվածություն շինարարական ոլորտում:



Աղյուսակ 26. Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը՝ ըստ սեռի (%)

Զբաղվածության հատված	Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր միջինը
Գյուղատնտեսություն	17.2	26.7	21
Արդյունաբերություն	8.6	6	7.5
Շինարարություն	26.2	0.9	16.1
Առևտուր և նորոգում	12.2	11.7	12
Պետական կառավարում	7.7	6.6	7.3
Կրթություն	2.9	18.8	9.2
Առողջապահություն	1.7	9.4	4.8
Այլ ծառայություններ	23.3	19.7	21.9
Նշված չէ	0.1	0.2	0.1
Ընդամենը	100	100	100

Զբաղվածության հատվածի խաչաձև աղյուսակավորման վերլուծությունը՝ ըստ մարզի, շատ կարևոր է և առաջարկում է տարածքային փոփոխություններ, ինչպես ցուցադրված է հաջորդ աղյուսակում: Երևանում հարցվածների շրջանում գյուղատնտեսական հատվածում ներգրավված անձանց թիվը ամենացածրն է եղել: Գեղարքունիքից, Արմավիրից և Վայոց Ձորից հարցվածները գերներկայացված են եղել գյուղատնտեսական ոլորտում: Կոտայքի մարզում զբաղվածության հատվածի մոտ 15%-ը արդյունաբերությունն է եղել (ՀՀ-ի մասով ընդհանուր միջինի գրեթե կրկնակին): Շինարարական հատվածը Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության հատվածի վերլուծության լավ օրինակ է: Երևանում հարցվածների միայն 9.9%-ն է աշխատել այդ հատվածում, հարցվածների 26%-ը (գրեթե բոլորը տղամարդիկ են եղել) աշխատել են այս հատվածում Շիրակում, 22.9%-ը՝ Գեղարքունիքում: Անհրաժեշտ է նաև ընդգծել «մյուս ծառայությունների» գերակշռությունը Երևանում (հարցվածների 39.3%-ը): Քաջ հայտնի է, որ երկրի ներսում և (կամ) շրջանում աշխատանքային շուկայում առկա անհավասարակշռությունը խթանում և շարունակելու է խթանել միգրացիոն գործընթացները, և սա այնպիսի ցուցանիշ է, որը շարունակելու ենք ուսումնասիրել այս զեկույցում:



Աղյուսակ 27. Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը՝ ըստ մարզի (%)

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր և նորոգում	Պետական կառավարում	Կրթություն	Առողջապահություն	Այլ ծառայություններ	Նշված չէ	Ընդամենը
Երևան	1.6	8.2	9.9	14.5	7.9	10.6	7.7	39.3	0.3	100
Արագածոտն	17.7	4.6	17.9	7.1	13.7	14.6	5.1	19.2	0	100
Արարատ	24.6	13.2	13.6	13.5	4.7	11.1	5.8	13.3	0.2	100
Արմավիր	34.2	2.6	14.3	10.8	8.1	6.4	2.3	21.2	0.1	100
Գեղարքունիք	36.4	2.4	22.9	10.2	4.9	8.6	3.9	10.7	0	100
Լոռի	28.9	5.9	22.1	11.3	6	8.2	3.6	13.2	0.6	100
Կոտայք	15.6	14.8	21.6	10	8.4	6.1	4.2	19.3	0	100
Շիրակ	26	4.8	26	12	3	10.7	2.5	15	0.1	100
Սյունիք	25.2	12.4	10.6	10.6	8.9	9.9	3.7	18.6	0	100
Վայոց ձոր	33.9	7.2	12.1	10.4	8.5	5.6	5.1	16.6	0.6	100
Տավուշ	27.3	2.9	16.5	13.9	9.5	9.6	2.6	17.6	0	100
Ընդհանուր միջինը	21	7.5	16.1	12	7.3	9.2	4.8	21.9	0.1	100

«Տարիքային խմբերի» և «զբաղվածության հատվածի» միջև խաչաձև աղյուսակավորման միջոցով մատնանշվում է գյուղատնտեսական հատվածում երիտասարդ և տարեց տարիքային խմբերի բևեռացված աշխատողների բարձր ներկայացվածություն, «մյուս ծառայությունների» հատվածում մինչև 35 տարեկանների գերակշռություն: Տնային տնտեսությունների անդամների զբաղվածության հատվածի և տարիքի միջև աղյուսակավորումը ներկայացված է Աղյուսակ 28-ում:

Աղյուսակ 28. Հետազոտված տնային տնտեսության անդամների զբաղվածության հատվածը՝ ըստ տարիքային խմբերի (%)

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր և նորոգում	Պետական կառավարում	Կրթություն	Առողջապահություն	Այլ ծառայություններ	Նշված չէ
15-19	34.6	4.7	14	13.1	2.8	7.5	1.9	20.6	0.9
20-24	14.2	6.8	19.7	14.3	7.9	6.3	3.7	26.9	0.3
25-29	12.5	8.1	19.5	14.2	8.6	7	4.3	25.7	0.2
30-34	14.4	6.6	18.6	13.7	9.3	6.9	4.3	25.9	0.2
35-39	17.4	7	19.3	14.3	7.2	8	4.1	22.7	0.2
40-44	19.4	7.6	15.8	15.4	8.1	9.5	5.3	18.5	0.5
45-49	25.4	7	15	10.3	6.8	10	5	20.3	0.3
50-54	26.9	9.1	14.9	9.3	5.7	10.5	5.4	18.1	0.1
55-59	24.5	8.2	13.4	9.7	5.9	11	5.8	21.4	0.1
60-64	25.8	7.2	11.2	8.3	7.4	15.4	5.5	19.3	0
65 տարեկան և դրանից բարձր	44.3	6.4	5.5	6.4	5.1	11.3	5.1	15.7	0
Ընդհանուր միջինը	21	7.5	16.1	12	7.3	9.2	4.8	21.9	0.1



Զբաղվածությունը և եկամուտների ստացումը հարցվածների տնտեսական վիճակի առանձնահատկության սահմանման հիմնարար տարրերն են: Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ ընտրանքի հարցվածների միայն 47.5%-ն է ունեցել եկամտաբեր զբաղվածություն/աշխատանք առնվազն մեկ ժամվա համար՝ հետազոտությանը նախորդող վերջին յոթ օրերի ընթացքում (n=25.831): Այդ հարցվածների 60.2%-ը եղել են տղամարդիկ, կանանց հետ համեմատությամբ տղամարդկանց մոտ որոշակի թվային առավելություն կա եկամտաբեր զբաղվածության մասով:

Աշխատավայրի վերաբերյալ հարցի դեպքում, հարցվածների 81.7%-ը պատասխանել է, որ իրենք աշխատում են նույն մարզում, որտեղ ապրում են (ընդհանուր թվի 1.6%-ը աշխատել է նույն մարզում գտնվող այլ բնակավայրում, այսինքն՝ նրանք մարզային աշխատողներ են եղել), 3.2%-ն աշխատել է այլ մարզում (տարածքային աշխատողներ), իսկ 15.1%-ը աշխատել է արտերկրում (այդ թվում՝ ԼՂ-ում): Այս հարցի մասով հարցվածների ընդհանուր թվաքանակը կազմել է 12.272 մարդ:

Աղյուսակ 29. Հետազոտված տնային տնտեսության անդամների աշխատանքի վայրը՝ ըստ սեռի (%)

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Նույն բնակավայրում	53.4	46.6	100
ՀՀ այդ մարզի այլ բնակավայրում	64.7	35.3	100
ՀՀ այլ մարզում	75.7	24.3	100
Արտերկրում (այդ թվում՝ ԼՂ-ում)	90.7	9.3	100
Ընդհանուր միջինը	60.2	39.8	100

ՀՀ բնակչության միգրացիոն պոտենցիալը

Հետազոտության միջոցով նաև հավաքվել է տեղեկատվություն տնային տնտեսության անդամների միգրացիոն մտադրությունների վերաբերյալ: Տվյալները լույս են սփռում շատ հարցերի վրա: Առաջին հերթին, հստակ բացատրություն կա հետազոտված տնային տնտեսությունների անդամների ընդհանուր թվի 8.1%-ին հասնող տնային տնտեսությունների անդամների միգրացիոն կշռի վերաբերյալ (որը հետևյալն է՝ 8.1%-ը նշել է, որ տնային տնտեսության անդամներն արդեն արտերկրում են, երբ նրանց հարց է ուղղվել երեք և ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրության մասին): Երկրորդ, առկա է միգրացիոն հարցերում սեռերի մասով որոշակի շեղում՝ արդեն արտերկրում գտնվող՝ տնային տնտեսության անդամների 84.1%-ը եղել են տղամարդիկ և միգրացիայի ուղին բռնելու մտադրության հարցում տղամարդկանց թիվն ավելի մեծ է եղել, մինչդեռ միգրացիայի ուղին չբռնելու մտադրության հարցում՝ կանանց թիվը (տես ստորև՝ Աղյուսակ 30-ը):

Ապագա միգրանտների վերաբերյալ տվյալները հետևյալ հարցին տրված՝ հարցվածների պատասխանների արդյունքներն են. «Արդյո՞ք դուք / Ձեր տնային տնտեսության անդամը մտադիր է միգրացիոն աշխատանքի մեկնել արտերկիր 3 կամ ավելի ամսով»: Նրանք, որոնք պատասխանել են «այո», ապագա միգրանտներն են, իսկ որոնք պատասխանել են «ոչ» դասակարգվում են որպես միգրանտներ չհանդիսացողներ: Պոտենցիալ միգրանտների վերաբերյալ տվյալները կշռվել են բնակչությունը որպես մեկ ամբողջություն ներկայացնելու համար, ինչպես նաև ցույց տալու Հայաստանի Հանրապետությունում միջազգային միգրացիայի իրական պոտենցիալը:



Աղյուսակ 30. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ սեռի (%)

	Տղամարդիկ	Կանայք	Ընդհանուր միջինը
Ոչ	42.5	57.5	76.5
Ավելի շատ՝ ոչ	43.8	56.2	8
Արդեն արտերկրում	84.1	15.9	8.1
Ավելի շատ՝ այո	55.7	44.3	2.8
Այո	53.4	46.6	4.6
Ընդամենը	46.8	53.2	100

Հետազոտված տնային տնտեսությունների անդամների միայն 7.4%-ն է մտադիր մեկնել արտերկիր (2.8% + 4.6%)։ Եթե դիտարկվում է կշռված ընտրանքը, ապա Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնակչության կազմում այն անձանց թիվը, որոնք միգրացիան դիտարկում են որպես տարբերակ ապագան կառուցելու համար, կկազմի 213.468 անձ։ Հետազոտության արդյունքում բացահայտվել են արտերկիր մեկնելու հարցում լուրջ մտադրություն ունեցող տղամարդկանց ու կանանց միջև տարբերությունները։ Տղամարդկանց մոտ 53.4%-ը նշել է, որ իրենք լրջորեն մտածում են արտերկիր տեղափոխվելու մասին, մինչդեռ կանանց միայն 46.6%-ն է հայտնել արտերկիր մեկնելու ծրագրերի մասին։ Եթե տեղափոխվելու պոտենցիալը շարունակում է մտադրություն մնալ (այլ ոչ թե դրական պատասխան), ապա բացն էլ ավելի է մեծանում (55.7% տղամարդկանց դեպքում՝ կանանց 44.3%-ի համեմատությամբ)։

Աղյուսակ 31. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ սեռի (կշռված ընտրանք)

	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
Ոչ	828,680	1,128,785	1,957,465
Ավելի շատ՝ ոչ	98,746	123,882	222,628
Արդեն արտերկրում	172,750	123,882	204,259
Ավելի շատ՝ այո	47,285	36,696	83,981
Այո	69,298	60,188	129,486
Նշված չէ	305	460	725
Ընդամենը	1,217,064	1,381,520	2,598,584

Միգրանտներ չհանդիսացողները Հայաստանի Հանրապետությունում հետազոտության ընտրանքում մեծամասնություն են կազմել, և արտերկիր մեկնելու հարցը լրջորեն չքննարկող հարցվածների տոկոսն ուստի գերակշռող է եղել (76%-ը պատասխանել է «Ոչ», իսկ 8%-ը՝ «Ավելի շատ՝ ոչ» հետևյալ հարցին. «Արդյո՞ք դուք / Ձեր տնային տնտեսության անդամը մտադիր եք / է միգրացիոն աշխատանքի մեկնել արտերկիր 3 կամ ավելի ամսով»)։ Եթե դիտարկվում է կշռված ընտրանքը, ապա ընտրանքում 6 անձանցից 5-ը մտադիր չէ մեկնել արտերկիր։ Այն հարցվածները, որոնք լրջորեն դիտարկում են արտերկիր մեկնելու հարցը, դասակարգվում են որպես ապագա միգրանտներ, որը համապատասխանում է վերը նշված հարցին՝ հարցված տնային տնտեսությունների 2,8%-ի կողմից «Ավելի շատ՝ այո» և 4,6%-ի կողմից «Այո» պատասխանին։ Եթե դիտարկվում է կշռված ընտրանքը, ապա այն անձանց թիվը, որոնք միգրացիան դիտարկում են որպես տարբերակ ապագան կառուցելու համար, կգերազանցի ընդհանուր բնակչության 200.000-ը։



Աղյուսակ 32. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ ընտանեկան դրության (%)

	Երբեք ամուսնացած չի եղել	Ամուսնացած	Այրի/ ամուրի	Ամուսնա- լուծված	Ընդհանուր միջինը
Ոչ	74	74.5	88.3	78.8	76.5
Ավելի շատ՝ ոչ	8	8.3	5.8	7.5	8
Արդեն արտերկրում	9.3	9	1.2	3.8	8.1
Այո	3.3	2.8	1.6	3.7	2.8
Ավելի շատ՝ այո	5.4	4.4	3.2	6.3	4.6
Ընդամենը	100	100	100	100	100

Ապագա միգրանտների՝ ընտանեկան դրության հետ կապված ակնկալիքները չեն իրա- կանացել (տես Աղյուսակ 32-ը): Ակնկալվում է, որ երբեք չամուսնացած անձինք ավելի հակված են միգրացիայի ուղին բռնելու, այնուամենայնիվ, տվյալների համաձայն՝ գրեթե նույն բաշխումն է եղել ընտանեկան դրության խմբերում: Հավասարապես հավանական է, որ ապագա միգրանտները ամուսնացածներ են (հարցվածների 4.4%-ը պատասխանել է «այո», իսկ 2.8%՝ «ավելի շատ՝ այո», չամուսնացածներ (հարցվածների 5.4%-ը պատասխանել է «այո», իսկ 3.3%-ը՝ «ավելի շատ՝ այո») կամ ամուրիներ (հարցվածների 1.6%-ը պատասխանել է «այո», իսկ 3.2%-ը՝ «ավելի շատ՝ այո»):

Կրթական մակարդակը և միգրացիայի ուղին բռնելու մտադրությունը

Հարցվածների՝ «3 և ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրության» և «կրթական մակար- դակի» խաչաձև աղյուսակավորումը ցույց է տալիս, որ միգրացիայի մասով բարձր կրթական մակարդակ ունեցողները ավելի շատ նախատրամադրվածություն ունեն (տես ստորև՝ Աղ- յուսակ 33-ը), որը միգրացիայի ուղին բռնելու մասով էլ ավելի մեծ նախատրամադրվածության է վերածվում բուհական կամ բարձրագույն կրթություն ունեցող անձանց շրջանում:

Հետաքրքիր կապ կա նաև տղամարդկանց և կանանց կրթական մակարդակների և միգրացիայի ուղին բռնելու մտադրության միջև: Հայաստանի Հանրապետության դեպքում համընդհանուր միտումն այն է, որ միգրացիայի ուղին բռնելու մտադրությունն ավելի զգալի է կրթության ավելի ցածր մակարդակներում՝ տղամարդկանց դեպքում, իսկ ավելի բարձր մակարդակներում՝ կանանց դեպքում: Պոստենցիալ միգրանտների կառուցվածքը կարող է էական ազդեցություն ունենալ արտագաղթած բնակչության բնույթի և արտերկրում ստացած զբաղվածության տեսակի վրա:

Աղյուսակ 33. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ կրթական մակարդակի (%)

	Տարրա- կան և ցածր	Հիմնական դպրոց (8-9-րդ դասարաններ)	Միջնա- կարգ ընդհանուր	Նախամա- նագիտական (թուխ)	Միջին մասնա- գիտական	Բուհա- կան	Հետբու- հական	Ընդա- մենը
Ոչ	2.4	9.1	41	2.4	20.5	24.2	0.4	100
Ավելի շատ՝ ոչ	0.7	8	42.1	3.1	20.1	25.5	0.5	100
Արդեն արտերկրում	0.2	5.5	51.1	3.3	21.6	17.7	0.6	100
Ավելի շատ՝ այո	0.4	7.9	37.3	2.5	22.3	29	0.6	100
Այո	1	6.2	38.3	1.2	21.9	30.8	0.6	100
Ընդհանուր միջինը	2	8.6	41.6	2.5	20.6	24.2	0.4	100



Բացի դրանից՝ հավաքվել է տեղեկատվություն տնային տնտեսության՝ միգրացիայի ուղին բռնելու 15 տարեկանից բարձր անդամների մտադրության մասին՝ ըստ տարիքային խմբերի: Բաշխումը շատ համասեռ է՝ համազգային մակարդակի միջին ցուցանիշի համեմատությամբ, չնայած որ կարելի է գտնել ավելի շատ անձանց, որոնք մտադիր են միգրացիայի ուղին բռնելու 20-44 տարիքային խմբերում (տե՛ս ստորև՝ Աղյուսակ 34-ը):

Աղյուսակ 34. 3 կամ ավելի ամսով արտերկիր մեկնելու մտադրությունը՝ ըստ տարիքային խմբերի (%)

	15-19	20-24	25-29	30-34	35-39	40-44	45-49	50-54	55-59	60-64	65 տարեկան և բարձր	Ընդհանուր միջինը
Ոչ	85.4	71.4	65.9	68.3	70.3	72.2	74.4	76.2	79.1	83.4	91.1	76.5
Ավելի շատ՝ ոչ	7.3	9.7	10.2	9.4	9.1	7.3	7.7	7.1	7.6	6.7	5.4	8
Արդեն արտերկրում	2	9.7	13.4	13.2	11.3	11.5	9.9	9	6.9	3.6	0.6	8.1
Ավելի շատ՝ այո	2	3.4	4.3	3.7	4	3.4	2.4	2.9	2.4	2.2	1.1	2.8
Այո	3.3	5.8	6.1	5.4	5.1	5.6	5.5	4.9	3.9	4.1	1.8	4.6
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Մոտ ապագայում միգրացիայի ուղին բռնելու մտադրությունը


Այն անձանցից, որոնք մտադիր են միգրացիայի ուղին բռնել ապագայում, 56%-ը ծրագրում է միգրացիայի ուղին բռնել գալիք 12 ամսվա ընթացքում, մի թիվ, որն իրենից ներկայացնում է բավականին հիմնավոր միգրացիոն ծրագիր, և կրկին, միգրացիայի ուղին բռնելու ամենամեծ պատրաստակամությունը նկատվել է հարցված տղամարդկանց շրջանում: Հարցված տնային տնտեսությունների 27%-ը, որոնք մտադրություն ունեն բռնելու միգրացիայի ուղին մոտակա 12 ամիսների ընթացքում, արդեն լուծել է որոշ կազմակերպչական հարցեր (օրինակ՝ գնել է տոմս, աշխատանքի կամ այլ հարցերի հետ կապված պայմանավորվածություններ է ձեռք բերել): Դա հավաստի միգրացիայի հավանականության նշան է՝ հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների անդամների տասից մեկի դեպքում: Ստացված տվյալները վկայում են միգրացիայի հավանականության մասին մոտ 115.000 անձանց շրջանում, և այդ անձանցից՝ 29%-ը (կամ մոտ 33.3 հազար մարդ) արդեն իսկ համապատասխան կազմակերպչական հարցեր է լուծել՝ իրենց միգրացիոն ծրագիրն իրականացնելու համար: Դա բավականին հավաստի (և իրականում կանխատեսելի) պատկեր է և համապատասխանում է վերջին տարիներին նկատվող ընդհանուր արտահոսքերին:

Պոտենցիալ միգրանտների շարքում միգրացիայի պատճառները

Հայաստանի Հանրապետությունում պոտենցիալ միգրանտների շրջանում միգրացիայի ուղին բռնելու պատճառները մեծամասամբ տնտեսական բնույթ են ունեցել: Միգրացիայի ուղին բռնելու պատճառների շարքում առանձնացել են չորս մեծ դրդապատճառներ՝ աշխատատեղերի բացակայությունը Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում ստացվող վարձատրության անբավարար չափը, տնային տնտեսության համար գումար վաստակելը և ապագայի նկատմամբ անորոշությունը: Այդ դրդապատճառները միասին կազմել են արտագաղթի չորս պատճառներից երեքը (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 2-ը):



Գծապատկեր 2. Մեկնելու պատճառները (%)



(Աշխատանք չկա, ավելի բարձր աշխատանք, տնային տնտեսության համար գումար վաստակել, աշխատանքային վատ պայմաններ, ... համար դժվարություններ, ուսում և բարելավում, կրթության ցածր մակարդակ, ... միավորում, ընտանիք կազմել, ընտանեկան այլ հանգամանքներ, անառողջ բարոյական, մասով անորոշություն, աղտոտված, խտրականություն, քաղաքական հայացքների համար հետապնդումներ/վախ..., այլ)

Մինչդեռ սրանք մեկնելու հիմնական պատճառներն են, հետազոտված տնային տնտեսությունների անդամները, որոնք մտադրություն են ունեցել բռնելու միգրացիայի ուղին մոտակա 12 ամիսների ընթացքում, նշել են մի քանի նպատակներ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու համար: Տղամարդ ապագա միգրանտների շրջանում մեկնելու հիմնական պատճառը աշխատանք փնտրելն է (70.3%), արտերկրում մշտական բնակության թույլտվություն ստանալն է (22,3%), ընտանեկան պատճառները (4.7%), կրթությանը վերաբերող պատճառները (1.3%) կամ այլ պատճառներ, որոնք չեն նշվել (1.3%): Տնային տնտեսության կին ապագա միգրանտների շրջանում, որոնք մտադիր են միգրացիայի ուղին բռնել մոտակա 12 ամիսների ընթացքում, ազդեցություն ունեցող պատճառները շատ տարբեր են: Մեկնելու հիմնական նպատակը աշխատանք փնտրելն է, սակայն ավելի քիչ չափով, քան տղամարդիկ (39.8%) կամ մշտական բնակության թույլտվություն ստանալու համար (33,8%): Ընտանեկան պատճառները հինգից մեկի դեպքում (20%), իսկ կրթության պատճառը երեք անգամ ավելի շատ է նշվել, քան հարցված տնային տնտեսություններում ընդգրկված տղամարդկանց դեպքում (3.8%), իսկ 2.6%-ը Հայաստանի Հանրապետությունից հեռանալու վանող գործոններ է նշել այլ նպատակներ:

Ինչ վերաբերում է ապագա արտագաղթածներին, ապա տասից մոտ վեցը կանխատեսել են որոշ տեսակի աջակցություն՝ իրենց միգրացիոն ուղևորության մասով: Ակնկալվող հիմնական աջակցությունը նշված է կարևորության նվազող հերթականությամբ՝ աշխատանքի փնտրում, տեղավորման հարցում օգնություն, ուղևորության համար ֆինանսավորման տրամադրում, վիզա ստանալու համար հովանավորի առկայություն: Այս աջակցությունն ակնկալվում է ստանալ արտերկրում բնակվող անձանցից (76.8%), թե՛ Հայաստանի Հանրապետությունում, և թե՛ արտերկրում բնակվող անձանցից (14.1%), Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանցից (8.7%):

Ինչպես և ակնկալվում էր, հիմնական նպատակակետ երկրներն են եղել՝ Ռուսաստանի Դաշնությունը (76%), ԵՄ երկրները (7,5%), ԱՄՆ-ն (7.2%), ԼՂ-ն (2%) և այլ չնշված երկրներ,



որոնք կազմել են ընդհանուր թվի 8%-ը:¹⁹ Պետք է նշել առկա միգրացիայի ուղին դեպի ԼՂ բռնելու հարցում հարցված կանանց թվի (ԼՂ-ի մասով ապագա/պոտենցիալ միգրանտներից տասից ութը կանայք են եղել) և հարցված տղամարդկանց թվի (դեպի Ռուսաստանի Դաշնություն տասից վեցը տղամարդիկ են եղել) առումով շեղման մասին: Պետք է ընդգծել, որ վիզային սահմանափակումները ազդեցություն են ունեցել միգրացիոն հոսքերի վրա: Հայաստանի քաղաքացիների համար Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու համար վիզա չի պահանջվում, սակայն նրանք պետք է վիզա ստանան ԵՄ երկրների ու ԱՄՆ-ի համար:

Տնային տնտեսության նախկին անդամների միգրացիան

Հետազոտությունում ներառվել են մի շարք հարցեր, որոնք վերաբերվել են տնային տնտեսության նախկին անդամներին ու նրանց առնչությանը միգրացիային: Ընդհանուր ընտրանքի մոտ 1.5%-ը, որը համապատասխանում է 47 հազար անձի, կացարանից մեկնել է արտերկիր. այդ մասին տեղեկացրել են ներկայիս կացարանի բնակիչները:

2007 թվականի հունվարի 1-ից հետո մեկնած՝ տնային տնտեսության անդամներին հարցերի այլ շարք էլ է ուղղվել: Այդ անդամներից միայն շատ փոքր մասն է առնչություն ունեցել միգրացիային (n=132), մինչդեռ նրանց մեծ մասը պարզապես լքել է տնային տնտեսությունը (n=342), որը համապատասխանում է մոտ 15 հազար անձանց թվին: Միգրացիայի հետ առնչություն ունեցողներից՝ 93%-ը կատարել է մեկ ուղևորություն միգրացիայի նպատակով, անձանց 2.9%-ը երկու ուղևորություն է կատարել միգրացիայի նպատակով, 3.8%-ը՝ երեք ուղևորություն, իսկ 0.3%-ը՝ 5 ուղևորություն միգրացիայի նպատակով: Դա նշում է այդ տնային տնտեսությունների անդամների տեղաշարժի ցածր մակարդակի մասին:

Միգրացիոն միջոցառումներում ներգրավված՝ տնային տնտեսության անդամները 2007 թվականից ի վեր

Այս միտման վերաբերյալ տվյալները ստացվել են տնային տնտեսության հարցաշարից, որտեղ թվարկված են այն բոլոր անձինք, որոնք տնային տնտեսության մաս են կազմում (կազմել), բայց որոնք 2007 թվականից ի վեր կատարել են մեկ կամ մի քանի ուղևորություն միգրացիայի նպատակով:

Այդ թվերում ներառված են եղել ներքին և արտաքին միգրանտները (արտահոսք, ներհոսք և վերադարձի միգրացիա): Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների անդամների ընդհանուր թվից՝ 12.8%-ը մեկ կամ մի քանի ուղևորություն է կատարել 2007 թվականից հետո: Նրանցից 66.8%-ը եղել են տղամարդիկ, իսկ 33.2%-ը՝ կանայք, որը որոշակի շեղում է պարունակում հոգուտ տղամարդկանց՝ ՀՀ-ում միգրացիոն հոսքերի մասով [տղամարդկանց համամասնության առումով չնչին ավելացում է արձանագրվել, երբ այս հետազոտությունը համեմատում ենք ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 2007 թվականի հետազոտության հետ (տղամարդկանց 62.3%-ը և կանանց 37.7%-ը)]:

Ըստ մարզերի ուսումնասիրության դեպքում, կարելի է ստանալ ավելի հստակ տվյալներ միգրանտների տարածքային բաշխման վերաբերյալ՝ վերահսկելով երկրի ներսում նրանց տարածքային բաշխումը:

19 Բրազիլիա, Բելառուս, Կանադա, Չեխիայի Հանրապետություն, Իրան, Լիբանան, Լատվիա, Նորվեգիա, Շվեյցարիա, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Թուրքիա, Ուկրաինա և Ուզբեկստան:



Աղյուսակ 35. 3 և ավելի ամսով միգրացիոն ուղևորության մեկնած (2007 թվականից ի վեր) տնային տնտեսության անդամները՝ ըստ մարզերի

	Տոկոս	Թիվ
Երևան	19.4	815
Արագածոտն	2.6	102
Արարատ	9.1	383
Արմավիր	6.7	263
Գեղարքունիք	8.1	323
Լոռի	7.9	312
Կոտայք	14.1	576
Շիրակ	11.2	452
Սյունիք	48	189
Վայոց Ձոր	5.8	229
Տավուշ	10.3	412
Ընդամենը	100	4,056

Միգրացիոն ուղևորությունների մեծ թիվ է նկատվում ակտիվ տարիքային խմբերում (20-54), և ավելի քիչ դեպքերում երիտասարդ տարիքային խմբերում ու տարեց տարիքային խմբերում (տես ստորև՝ Աղյուսակ 36-ը): Տարիքային խմբերում այդ ցրվածությունը անսպասելի չէ և փոխկապված է, որպես կանոն, աշխատանքային միգրացիոն հոսքերի հետ, բայց նաև հոսքերի տարբեր տեսակների հետ, որոնք միաժամանակ տեղի են ունենում այս աշխատանքային միգրացիայի հետ: Ընտանիքի վերամիավորման նպատակով հոսքերը, վերադարձի հոսքերը և շրջանառու միգրացիոն հոսքերը նույնպես այս վիճակագրական բաշխման մի մասն են կազմում:

Աղյուսակ 36. 2007 թվականից ի վեր միգրացիոն ուղևորության մեկնածները՝ ըստ տարիքային խմբերի

	Թիվ	Տոկոս
0-4	2.5	103
5-9	3.5	141
10-14	2.4	98
15-19	3.3	134
20-24	15.6	634
25-29	18.1	733
30-34	12.9	522
35-39	8.2	331
40-44	7.3	295
45-49	6.8	274
50-54	8.6	348
55-59	6	244
60-64	2.6	104
65 տարեկան և դրանից բարձր	2.3	95
Ընդամենը	100	4,056



Վերջին 6 տարիների ընթացքում այդ միգրանտների ընդհանուր նկարագիրը վերլուծելիս, այսինքն՝ թե ովքեր են 2007 թվականի հունվարին միգրացիային առնչվող տնային տնտեսության անդամները՝ ըստ բնակության վայրի, մենք բացահայտեցինք այն փաստը, որ այն անձինք, որոնք բնակվել են այդ վայրում 69.9% դեպքերում ներքին միգրանտներ են եղել (Հայաստանի Հանրապետության նույն մարզի այլ բնակավայրերից) 8.5% դեպքերում (տեղացի միգրանտներ), իսկ 13.5% դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության այլ մարզերից), և (կամ) ներգաղթել են կամ վերադարձել են արտերկրից (այդ թվում՝ ԼՂ-ից) 8.6% դեպքերում:

«2007 թվականից ի վեր միգրացիոն ուղևորության մեկնածուների» և «ազգության» միջև աղյուսակավորման դեպքում, կարելի է նկատել, որ այդ միգրանտների 98.9%-ը եղել են ազգությամբ հայեր, 0.4%-ը՝ ռուսներ, 0.5%-ը՝ եզդիներ և 0.2%-ը՝ այլ ազգություններ:

Հիմնական պատճառը, որ միգրանտները մեկնում են ՀՀ-ից, տնտեսական հնարավորությունների հետապնդումն է, որին հաջորդում է ամուսնությունը կամ ընտանեկան պատճառները, արտերկրում բնակության թույլտվություն ստանալը, և, ի վերջո, կրթությունը: Միջինում տնային տնտեսության անդամների 55.8%-ը, որոնք ճամփորդել են 2007-ից 2013 թվականն ընկած ժամանակահատվածում, այդ քայլին դիմել են աշխատանք փնտրելու նպատակով: 3-ից մեկը (30.1%)՝ ընտանեկան պատճառներով, 10.2%-ը՝ մշտական բնակության, 3.2%-ը՝ կրթության կամ ուսուցման նպատակով, իսկ 0.7%-ը հարկադրված միգրացիայի պատճառով:

Աղյուսակ 37. Ուղևորության տարին՝ ուղևորության նպատակի հետ համեմատությամբ (%)

	Աշխատանք/ Աշխատանք փնտրող	Ընտանեկան պատճառներ (ընտանիքի միավորում, ամուսնություն, ամուսնալու- ծություն, և այլն)	Մշտական բնակություն	Ուսում/ կրթություն	Հարկադրված միգրացիա / փախուստ	Ընդհանուր միջինը
2007	47.5	39.3	10.1	3.0	0.1	100
2008	47.6	34.1	15.8	2.5	0	100
2009	57.3	25.8	12.1	4.7	0	100
2010	56.7	30.6	8.5	4.3	0	100
2011	59.4	30.3	7.4	2.9	0	100
2012	55.5	30.1	8.4	4.0	2.0	100
2013	69.3	17.5	9.8	1.3	2.1	100
Ընդհանուր միջինը	55.8	30.1	10.2	3.2	0.7	100

Ստորև նշված գլուխներում մենք կվերլուծենք միգրացիայի հստակ տեսակը. այդ միգրացիոն ուղևորությունները հանգեցրել են, մասնավորապես, արտագաղթի, ներքին միգրացիայի ու վերադարձի միգրացիայի: Դրանով ցույց կտրվի հոսքերի այդ տեսակների միջև տարբերություններն ու նմանությունները, ինչպես նաև այդ հոսքերի հետ առնչություն ունեցող անհատ միգրանտների առանձնահատկությունների սահմանումը: Այս գլուխը հիմնականում նվիրված կլինի տնային տնտեսության բացակա անդամների փոխարեն հարցվածների պատասխաններին, եթե արտագաղթածները բացակա են եղել կացարանից:



Գլուխ 4. Միգրանտ բնակչության առանձնահատկությունները (արտահոսքերը) (արտագաղթածները)

Այս գլխում շեշտը դրվում է միգրանտ բնակչության սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական առանձնահատկությունների վերաբերյալ դաշտային հետազոտությունների արդյունքների վրա, մասնավորապես՝ ներգրավված տնային տնտեսությունների տոկոսին, միջին տևողությանը, հիմնական նպատակակետ երկրներին, վանող/ձգող գործոններին, միգրացիայի պատճառներին, նպատակակետ երկրում իրավական կարգավիճակին, ցանցերին ու միջնորդներին:

Որպես անկախ պետություն՝ Հայաստանի պատմության ամբողջ ընթացքում արտագաղթի հոսքը մշտապես գերակայել է միգրացիոն ամբողջ պատկերի սահմաններում, և զանգվածային բնույթ է կրել 1990-ական թվականներին՝ աստիճանաբար նվազելով մինչև մեր օրերը: Այսպիսով, գնահատականների համաձայն՝ 1988-2001 թվականներին Հայաստանից արտագաղթել է 1.0-1.1 միլիոն մարդ, և 150.000 մարդ՝ 2002-2007 թվականներին (Չոբանյան, 2012): 3) Այս հետազոտությունում վերլուծվում են ընդհանուր առմամբ միգրացիոն արտահոսքերը 2007 թվականից ի վեր:

Այս հետազոտության իմաստով՝ արտագաղթածն այն անձն է, որն ապրել է Հայաստանի Հանրապետությունում գտնվող տնային տնտեսությունում, սակայն մեկնել է հարցազրույցից առաջ՝ արտերկրում առնվազն 3 ամիս ապրելու նպատակով:

Սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները

Մի շարք հարցեր են նախապատրաստվել՝ Հայաստանի Հանրապետությունից միգրանտների կազմը և հոսքը (չափը) գնահատելու համար: Ինչպես և միշտ՝ ծննդավայրն օգտագործվել է՝ բնակչության կազմը որոշելու համար, մինչդեռ բնակչության վայրը (մարզը) օգտագործվել է միգրացիոն հոսքերը չափելու համար: Հաշվետու ժամանակահատվածը եղել է 2007 թվականի հունվարի 1-ից առաջ և հետո:

Հետազոտության տվյալներից մենք եզրահանգում ենք, որ հետազոտված տնային տնտեսության անդամների մոտ 7.2%-ը առնչություն են ունեցել արտագաղթին (արտահոսքերին), որը համապատասխանում է մոտ 2250 հարցվածների կամ Հայաստանի Հանրապետության բնակչության մոտ 224.000 մարդու, եթե հաշվի է առնվում ընտրանքի կշիռը: Դա նախկին ժամանակահատվածներում բնակչության արտահոսքի մակարդակի շարունակականության ցուցանիշ է, ինչպես առաջարկվել է Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի կողմից 2008 թվականին իրականացված հետազոտությունում կամ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2009 թվականին ներկայացված զեկույցում: Այս հետազոտության միջոցով հնարավոր է որոշել, որ միջինում տարեկան 35 հազար մարդ է մեկնել Հայաստանից 2007-2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:²⁰ Դա անսպասելի արդյունք է՝ պայմանավորված

20 Հետազոտությունը նույնացրել է 224.048 անհատների (տնային տնտեսության անդամներ), ովքեր 2007 թվականից սկսած կատարել են միգրացիոն ուղևորություն (մեկ կամ ավելի) (անհատների թվաքանակը որոշվել է հետազոտության հարցաշարի Բաժին 2-ի «2.3. Ուղևորության բնույթը» հարցի «2. Մեկնում արտերկիր» պատասխանով): Տվյալները հավաքագրվել են 2013 թ առաջին կիսամյակում, այդ իսկ պատճառով տվյալ տարին հաշվված է 0.5: Հետևաբար, 6.5 բաժանարարն է կիրառվել 224.048 բաժանելիի համար:



2008 թվականի հետտնտեսական ճգնաժամով, սակայն, ինչպես մենք դա կներկայացնենք ստորև, կարող է կապված լինել նպատակակետ երկրների փոփոխության հետ և դեպի Ռուսաստանի Դաշնություն (որը վերջին տարիներին հիմնական նպատակակետ երկիրն է հայերի համար) մեկնողների թվի աճով: Այդ արտագաղթածներից՝ 82.1%-ը եղել են տղամարդիկ, իսկ 17.9%-ը՝ կանայք, որը նշանակում է երկրում միգրացիայի ուղին բռնած տղամարդկանց շատ բարձր մակարդակ, որին պետք է արձագանքել և որպես խնդիր դիտարկել միգրացիայի վերաբերյալ հետազոտություններում ու ՀՀ միգրացիոն քաղաքականությունում: Միջազգային միգրացիայում տղամարդկանց թվի ավելացումը պետք է ընկալվի որպես կառուցվածքային գործոնների թվի համակցություն՝ մակրո, մեսո և միկրո մակարդակներում՝ թե ուղարկող, և թե՛ ընդունող հասարակություններում: Մակրո մակարդակում, պետք է անդրադառնալ պատմական իրադարձություններին, մակրոտնտեսական միտումներին, ժողովրդագրական անցումներին, քաղաքական ինստիտուցիոնալ առանձնահատկություններին, մակրոտնտեսական փոփոխություններին գենդերային համակարգերում և միգրացիոն ցանցերում: Մեսո մակարդակում նաև պետք է հասկանալ, մասնավորապես, ուղարկող հասարակության մշակութային ու սոցիոլոգիական առանձնահատկությունները, որոնք խթանում կամ խոչընդոտում են կանանց՝ որպես անկախ միգրանտների:

Արտագաղթածների տարիքային խմբերի վերլուծության արդյունքում բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում տարբեր ժամանակակից արտագաղթածների խմբերի առաջին ընդհանուր պատկերը: Մինչդեռ պետք է ընդգծել ՀՀ ամբողջ բնակչությունը ներկայացնող բոլոր տարիքային խմբերի արտագաղթածների ներկայությունը, արտագաղթածների շրջանում մեծ թիվ են կազմում ակտիվ տարիքային խմբերը (20-54), և փոքր թիվ թե՛ երիտասարդ տարիքային խմբերում, և թե՛ տարեց տարիքային խմբերում: Գերակշռող տարբերակումը՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչության ներկայացուցչական ընտրանքում ընդգրկված նույն խմբերի, նկատվում է 20-54 տարեկանների տարիքային խմբերում (տես ստորև՝ Աղյուսակ 38-ը):

Աղյուսակ 38. 2007 թվականի հունվարից հետո արտերկիր մեկնած տնային տնտեսության անդամները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված)

	Տղամարդիկ	Կանայք	ՀՀ ընդհանուր միջինը	Միգրանտները ըստ տարիքային խմբերի
0-4	7	5.6	6.3	1.8
5-9	6.2	4.6	5.4	2.2
10-14	5.5	4.4	5	1.2
15-19	6.8	6.2	6.5	1.4
20-24	10	9.7	9.9	13.7
25-29	9.8	8.8	9.3	18.3
30-34	7.8	7.3	7.5	13.6
35-39	6	5.7	5.8	9.2
40-44	5.5	5.6	5.5	9.0
45-49	5.9	6.8	6.4	9.0
50-54	7.9	8.7	8.3	10.3
55-59	7.2	7.3	7.3	6.7
60-64	4.9	5.6	5.3	2.6
65 տարեկան և դրանից բարձր	9.4	13.6	11.6	0.8
Ընդամենը	100	100	100	100



Անձանց թվին վերաբերող տվյալները վերլուծելիս՝ ըստ արտագաղթի հետ կապված տնային տնտեսությունների, մենք նկատել ենք, որ տվյալներն անհավասարակշռված են ըստ մարզերի: Երևանից մեկնողների թվում ընդգրկված տնային տնտեսության անդամների համամասնությունը համապատասխանում է ընդհանուր արտագաղթի հոսքի 16.2%-ին, 15.1%՝ Շիրակում, 12.2%՝ Գեղարքունիքում, 12%՝ Կոտայքում, 8%՝ Տավուշում, 7.2%՝ Արմավիրում, 7.0%՝ Արարատում, 5%՝ Վայոց Ձորում, 4.6%՝ Սյունիքում, և 3.6%՝ Արագածոտնում (տես ստորև՝ Աղյուսակ 39-ը): Առաջին եզրահանգումն այն է, որ արտագաղթն ազդեցություն չի ունենում Հայաստանի Հանրապետության շրջանների վրա համասեռ կերպով, և կարելի է գտնել միգրացիայի տարատեսակներ ՀՀ-ում: Արտագաղթի պատճառի հիմքում, կարծես, ընկած է Հայաստանի Հանրապետության տնտեսությունում աշխատանք չունեցողների աճը: Գործազրկության աճի այս միտումը էլ ավելի է բարդանում երկրի սահմաններում զարգացման մասով տարածքային անհավասարակշռությամբ, որը կարող էր հավաքական առումով արագացնել միգրացիայի երևույթը: Միգրացիայի վերաբերյալ բոլոր տեսություններն ընդունում են, որ միգրացիան տեղի է ունենում, երբ ծագման շրջանում բացակայում են այն հնարավորությունները, որոնք խոստանում է նպատակակետ վայրը: Դա, ըստ էության, վանող և ձգող գործոնների համակցություն է: Շրջաններում տնտեսական զարգացման առումով տատանումը դեպի ավելի բարենպաստ վայրեր միգրացիայի հիմնական շարժառիթն է: Միգրանտների տնտեսական ներգրավվածության տվյալները միգրացիայից առաջ և հետո կոգնեն բացատրել այդ վարկածը:

Աղյուսակ 39. 2007 թվականի հունվարից հետո արտերկիր մեկնած տնային տնտեսության անդամները՝ ըստ մարզերի

	Թիվ	Թիվը՝ կշռված	Տոկոս
Երևան	364	41,218	16.2
Արագածոտն	80	7,339	3.6
Արարատ	158	14,227	7.0
Արմավիր	162	18,650	7.2
Գեղարքունիք	275	26,213	12.2
Լոռի	205	25,798	9.1
Կոտայք	271	25,065	12.0
Շիրակ	340	39,449	15.1
Սյունիք	104	7,307	4.6
Վայոց Ձոր	112	3,944	5
Տավուշ	179	14,788	8
Ընդամենը	2.250	224,048	100

Կրթության և արտագաղթի միջև կապը

Արտագաղթի ու կրթության միջև առկա ավանդական կապը կարգավորող հարցը կարելի է ձևակերպել շատ հեշտ՝ արդյո՞ք առկա է միաուղի կապ կրթության ու միգրացիայի միջև, որտեղ մեծ հավանականություն կա, որ կամ բարձր մակարդակի կրթություն ունեցողները կամ ավելի ցածր մակարդակի կրթություն ստացած անձինք կբռնեն միգրացիայի ուղին:

Կրթական կարգավիճակից կախված՝ Հայաստանի Հանրապետությունից արտագաղթածները կարող են բաժանվել առնվազն չորս կատեգորիաների՝ 1) կրթություն ստա-



ցած միգրատներ՝ բուհական աստիճանի կրթությամբ, որը կազմում է ընդհանուր արտագաղթածների 17.2%-ը, 2) բարձր որակավորում ունեցող միգրանտներ, որոնք բաղկացած են հետբուհական աստիճանի կրթություն ստացած անձանցից և որոնք կազմում են 0.6%, 3) ցածր որակավորում ունեցող միգրանտներ, որոնք ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, որոնք կազմում են արտագաղթածների ընդհանուր թվի 49.8%-ը, և 4) նախամասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությամբ անձինք (23.9%) (տես ստորև՝ Աղյուսակ 40-ը): Արտագաղթածների ենթաընտանյակի ու ընդհանուր ընտանյակի միջև տարբերությունները վերլուծելիս մենք ընդունում ենք, որ ընտանյակում ընդգրկված արտագաղթածները միջինում ավելի շատ են կրթված, քան ընտանյակի միջինը՝ բացառությամբ հարցազրույցի մասնակցած՝ բարձրագույն կրթություն ունեցող արտագաղթածների: Այս տվյալները կարող են մեզ ուղղորդել՝ հեռանալու այն վարկածից, որ բարձր հավանականություն կա, որ կամ բարձր մակարդակի կրթություն ունեցողները կամ ավելի ցածր մակարդակի կրթություն ստացած անձինք կբռնեն միգրացիայի ուղին: Տվյալները առաջարկում են, մյուս կողմից, որ միջին մակարդակի կրթությամբ անձանց (ընդհանուր միջնակարգ կրթություն ստացածները) մոտ, միջինում, արտերկիր մեկնելու մի փոքր ավելի մեծ հավանականություն կա:

Մեր տվյալները ցույց են տալիս, հետևաբար, ավելի կոմպլեքս, բազմուղի և ուստի անորոշ կապ կրթության և արտագաղթի միջև՝ առանց որևէ միասնական համընդհանուր շրջանակի, որը որ կառաջանար կրթության և արտագաղթի միջև կապից: Ուստի, այս հետազոտության միջոցով հնարավոր չէ նախանշել բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքը՝ չնայած որ գնահատվում է, որ բուհական և հետբուհական կրթությամբ մոտ 39.000 մարդ է լքել երկիրը վերջին 6 տարվա ընթացքում (սակայն նույն ժամանակահատվածում բուհական և հետբուհական կրթությամբ 21.000 մարդ է վերադարձել արտերկրից կամ ներգաղթել է Հայաստանի Հանրապետություն):

Աղյուսակ 40. Արտագաղթածների կրթական կարգավիճակը

	« ընդհանուր միջինը	Արտերկրից վերադարձը	Ներգաղթածներ	Ներքին միգրանտներ	Արտագաղթածներ (%)
Տարրական և ցածր	10.4	5.2	18.7	7.7	3
Հիմնական դպրոց (8-9-րդ դասարաններ)	9	8	21.3	4.8	5.5
Միջնակարգ ընդհանուր	37.3	41.7	27.8	32.2	49.8
Նախամասնագիտական (քոլեջ)	2.2	3.1	0.9	1.8	3
Միջին մասնագիտական	18.5	21.5	11.1	17.7	20.9
Բուհական	22.1	20.6	19.4	35.1	17.2
Հետբուհական	0.4	0	0.9	0.8	0.6

Մինչև «-ից մեկնելը՝ արտագաղթածների տնտեսական ու մասնագիտական վիճակը

Տնտեսական ներգրավվածության մասով կարևորություն տալու հիմնական տարրերն այն են, որ հարցվածների 62.8%-ը աշխատանք չի ունեցել Հայաստանի Հանրապետությունում հենց արտագաղթելուց առաջ, և միայն չորսից մեկն է (25%) աշխատանք ունեցել (այդ թվում՝ ինքնազբաղվածությունը), 5.2%-ը եղել են ուսանողներ, 2.3%-ը եղել են տնային տնտեսություն վարողներ, իսկ 3.6%-ը եղել են խնամքի տակ: Այդ անձանցից՝ չորսից երեքը աշխատանք չի ունեցել վերջին վեց ամիսների ընթացքում մինչև «-ից մեկնելը, և միայն



14%-ն է աշխատել այդ ամբողջ վեց ամիսը: Դրանք լուրջ վանող գործոններ են արտագաղթի համար: Զարմանալի չէ, որ երկար ժամանակ աշխատանք չունեցողները հուսալքվել են:

Ընդհանուր առմամբ, արտագաղթածների 51.8%-ը աշխատանք չի փնտրել երկրից հեռանալուց վեց ամիս առաջ (անհույս՝ աշխատանք չունեցողներ), սակայն 22.5%-ն ակտիվորեն փնտրել է աշխատանք այդ ամբողջ կես տարվա ընթացքում՝ մինչև մեկնելը, առանց աշխատանք գտնելու: Վանող գործոնը այդ անձանց համար եղել է աշխատանքի բացակայությունը կամ աշխատանքի հնարավորության բացակայությունը, և այդ փաստը հաստատում է, որ Հայաստանից ժամանակակից միգրացիայի հիմնարար պատճառը «տնտեսական գործոններն են»:

Աղյուսակ 41. Արտերկիր մեկնած՝ հարցված տնային տնտեսությունների անդամների սոցիալ-տնտեսական վիճակը (%)

	Նախքան մեկնելը (%)
Զբաղվածություն ունեցողներ (այդ թվում՝ ինքնազբաղվածությունը)	25.1
Աշակերտներ/ուսանողներ	5.2
Տնային տնտեսություն վարողներ	2.3
Թոշակառուներ / նպաստառուներ	0.5
Խնամքի տակ գտնվողներ	3.6
Աշխատանք չունեցողներ	62.8
Այլ	0.5

Հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների անդամներից, որոնք աշխատանքի են ընդունվել նախքան մեկնելը, 53%-ը ունեցել է գրավոր պայմանագրեր, իսկ 47%-ը աշխատել է առանց պայմանագրի, սա ոչ պաշտոնական տնտեսությունում: Ավելին, տվյալները ցույց են տալիս, որ պետական լիազոր մարմինը չի գրանցել գործունեության մինչև 90.4%-ը: Այն փաստը, որ արտագաղթածները աշխատանք չեն ունեցել, կապված է աշխատանքի անհուսալիության և ոչ պաշտոնական աշխատանքային շուկայում նրանց աշխատանքի հետ, միաժամանակ բարձրացրել է աշխատանք չունենալու և ազգային աշխատաշուկայից դուրս մղվելու վտանգը, և հետևաբար համարվել է արտագաղթի մասով վանող գործոն:

Աղյուսակ 42. Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը՝ արտագաղթածների սոցիալ-տնտեսական կարգավիճակը

	Նախքան ՀՀ-ից մեկնելը (%)
Վարձու աշխատող՝ պետական հատվածում	6.8
Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	52
Ինքնազբաղվածներ՝ գյուղացիական տնտեսությունում	21
Ինքնազբաղվածներ՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	16.8
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	3.4
Ընդամենը	100



Աղյուսակ 42-ում ցույց է տրվում արտագաղթածների համար ՀՀ ոչ պետական հատվածի՝ որպես գործատուի գերակշռությունը (52%), տնային տնտեսության հարցված անդամների 21%-ը եղել են ինքնագաղթածներ՝ գյուղացիական տնտեսությունում կամ ոչ գյուղացիական տնտեսությունում (16.8%): Ընդհանուր թվի 6.8%-ը եղել են վարձու աշխատողներ՝ ՀՀ պետական հատվածում, 3.4%-ը՝ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամներ:

Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը՝ արտագաղթածների աշխատանքի բնույթը սահմանվել է, 70.1% դեպքերում, որպես անժամկետ, 26.7% դեպքերում՝ որպես ժամանակավոր (7.9%-ը՝ 3 ամսից քիչ՝ գումարած 18.6%՝ մեկ տարուց պակաս):

Մինչև մեկնումն ընկած ժամանակահատվածը՝ ՀՀ-ից արտագաղթածները ներգրավված են եղել գյուղատնտեսության ոլորտում (27.1%), շինարարությունում (25.4%), այլ ծառայություններում (20.1%), առևտրի ու նորոգման ոլորտներում (12%), արդյունաբերությունում (7.9%), պետական կառավարման ոլորտում (6.8%) և առողջապահության ոլորտում (0.7%):

Նախքան մեկնելը՝ ՀՀ-ում աշխատանք ունեցող հարցվածների 26%-ի (n=558) դեպքում աշխատանքը համապատասխանել է իրենց մասնագիտությանը, 17%-ի դեպքում՝ համապատասխանել է գոնե մասնակիորեն, 14%-ի դեպքում՝ իրենց մասնագիտությունից ավելի բարձր է եղել, իսկ 21.8%-ի դեպքում՝ մասնագիտական անկում է գրանցվել: 21.3% դեպքերում նրանք հայտարարել են, որ արտագաղթից առաջ մասնագիտություն չեն ունեցել:

Ինչ վերաբերում է որակավորումներին, ապա հարցված տնային տնտեսությունների անդամների 38.9%-ի համար աշխատանքը համապատասխանել է ամբողջությամբ, իսկ 28.1%-ի համար՝ մասնակիորեն: 30.1% դեպքերում, իրենց ունեցած աշխատանքը իրենց որակավորումից ավելի ցածր է եղել, 2.2% դեպքերում՝ իրենց որակավորումից ավելի բարձր: Թվում է՝ հարցվածներից շատերը միգրացիան դիտարկել են որպես իրենց երկրում գործազրկության այլընտրանք կամ իրենց զարգացրած հմտությունների համար հնարավորությունների բացակայության այլընտրանք:


Ինչ վերաբերում է աշխատանքային ժամերին, ապա հետազոտությունում առկա է նաև դրա վերաբերյալ տեղեկատվություն: Տնային տնտեսությունների հարցված անդամների 19%-ը շաբաթական աշխատել է 10-ից 35 ժամ, 12.5%-ը՝ շաբաթական 35-ից 40 ժամ, 21.5%-ը՝ շաբաթական 41-ից 50 ժամ, 13.8%-ը՝ շաբաթական 51-ից 60 ժամ, 14%-ը՝ շաբաթական ավելի քան 61 ժամ:

Հարցվածների ընդհանուր թվի 34.6%-ը կանոնավոր ունեցել է հանգստյան օրեր, 40.9%-ը՝ ունեցել է հանգստյան օրեր, բայց ոչ կանոնավոր, իսկ հարցվածների 23.5%-ը՝ հանգստյան օրեր գրեթե չի ունեցել:

Ինչպես ցուցադրված է Գծապատկեր 3-ում, նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը՝ արձանագրվել է արտագաղթածների կողմից ստացվող աշխատավարձի տարբեր չափեր: Հարցվածներից երեքից մեկի դեպքում աշխատավարձը կազմել է 60.000 ՀՀ դրամից ցածր՝ առանց հարկերի, երեքից մեկը ստացել է 60.001 ՀՀ դրամից ավելի գումար՝ առանց հարկերի: Բացի դրանից՝ այս հարցի շրջանակներում հարցված տնային տնտեսությունների 5.6%-ը եկամտի այլ աղբյուր է ունեցել (օրինակ՝ թոշակ, նպաստ, եկամուտ գույքի վարձակալությունից), որը համապատասխանել է 30.000 ՀՀ դրամից քիչ եկամտին՝ 55% դեպքերում: Ընդհանուր առմամբ, ինչպես և սպասվում էր, մեծ թիվ են կազմել այս անձինք, որոնք չեն պատասխանել այս հարցին:



Գծապատկեր 3. Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ արտագաղթածների համախառն եկամուտը (%)




Հարցված տնային տնտեսություններից 92%-ի դեպքում (15.1%-ը նշել է, որ իրենք պարտքեր են կուտակել շատ ցածր եկամտի պատճառով) ամբողջ եկամուտը բավարար չի եղել խնայողություններ կուտակելու համար: Հարցված տնային տնտեսությունների անդամների միայն 0.1%-ն է հաստատել, որ նախքան արտագաղթելը՝ ՀՀ-ում իրենց ունեցած եկամուտը բավարար է եղել գումար կուտակելու համար:

Տվյալների վերլուծությունից հետո զարմանալի չի թվում, որ տնտեսական գործոններն են ՀՀ-ից միգրացիոն հոսքերի մեծ մասի պատճառ դարձել: Միգրացիայի պատճառը հիմնականում եղել է աշխատանքի կամ ավելի լավ զբաղվածության որոնումը, բայց ընտանիքին առնչվող պատճառները նույնպես միգրացիայի էական շարժառիթ են եղել: Տնային տնտեսությունների արտագաղթած անդամներին առաջարկվել է գործոնների ցանկից ընտրել այն երեքը, որոնք ստիպել են նրանց լքել երկիրը: Ստացված արդյունքները մատնանշում են այն փաստը, որ աշխատատեղերի բացակայությունը (30.4%), տնային տնտեսությանն աջակցելու համար եկամուտը բարձրացնելու անհրաժեշտությունը (24.9%) և ավելի լավ աշխատանք որոնելը (21.1%) հաստատված հիմնական պատճառներն են եղել: Տարբեր ու լրացուցիչ ընտանեկան դրդապատճառները նույնպես միգրացիայի մասով վանող գործոններ են եղել, ինչպիսիք են՝ ընտանիքի վերամիավորումը (2,8%), ամուսնությունը (1,9%) և ընտանեկան այլ դրդապատճառներ (6.5%): Այս տվյալները համեմատելի են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (2007) զեկույցում առկա նախկին հետազոտության հետ (միգրանտների 75%-ը աշխատանքային միգրանտներ են եղել, մյուս մասը՝ իրենց ընտանիքի անդամները), ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (2009) զեկույցի հետ, որտեղ նախանշվել են 2002-ից 2008 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի արտագաղթի հոսքերը, որտեղ հիմնականում ներառված են եղել աշխատանքային միգրանտներ:



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունից միգրացիայի հիմնական պատճառները (%)



(ՀՀ-ում աշխատանքի բացակայություն, գտնել ավելի լավ աշխատանք, գումար վաստակել տնային տնտեսության համար, բնակարանային վատ պայմաններ, բիզնեսի հետ կապված ռիսկեր, Կրթություն/վերապատրաստում, կրթության ցածր որակ, ընտանիքի վերամիավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, ... նկատմամբ անորոշություն, անառողջ բարոյահոգեբանական ..., խտրականություն, այլ)

Միգրացիայի ուղին բռնելու որոշումը սովորաբար ընդունվում է ընտանիքում՝ կամ հենց միգրանտի (53.9%) կողմից կամ ընտանիքի (45%): Միայն շատ քիչ դեպքերում որոշումը չի ընդունվել միգրանտի կամ ընտանիքի կողմից: Ավելի հաճախ միգրանտի համար միգրացիայի ուղին բռնելու հարցում շարժառիթ են հանդիսացել իր ընտանիքի անմիջական անդամները, իսկ նրա հարազատները օգնել են իրեն արտագաղթի նախնական փուլում՝ կամ ֆինանսական աջակցության կամ նպատակակետ երկրում տեղավորմանն աջակցելու (բնակարանով ապահովում կամ օգնություն աշխատանք գտնելու հարցում) միջոցով:

Միգրացիոն ծրագրին աջակցելու հիմնական եղանակը եղել է ինքնաֆինանսավորումը՝ 35.5% դեպքերում, հիմնականում տնային տնտեսությունների խնայողությունների միջոցով, գույքի վաճառքի միջոցով՝ 4.8%, անհատույց տրված օգնության միջոցով՝ 9.7%: 12.9% դեպքերում գործատուն է հոգացել միգրացիայի համար անհրաժեշտ միջոցները: Շատ կարևոր ֆինանսական աջակցություն է ստացվել նաև ֆինանսական հաստատություններից՝ բանկից փոխառություն (5.5%), սեփականության գրավադրում (1.2%) և ամենաշատը՝ պարտքեր (28.9%): Առկա են եղել նաև 1.3% տոկոս կազմող այլ ֆինանսական աղբյուրներ, որոնք չեն նշվել:

Նպատակակետ վայրերը

Հայաստանի Հանրապետությունից միգրացիայի վերջին տասնամյակի պատմության վերաբերյալ գրականության համաձայն՝ սովորաբար ընդունված է, որ Հայաստանի միգրանտների համար ավանդական նպատակակետ երկրներն են եղել Ռուսաստանի Դաշնությունը, Եվրոպական միությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Հետազոտության արդյունքում



պարզվել է, որ մինչդեռ ՌԴ-ն ու ԵՄ-ն շարունակել են նախընտրելի նպատակակետ երկրները մնալ, հետազոտության կարևոր արդյունքներից է նաև այն, որ միգրանտների փոքր թիվն է մեկնել ԱՄՆ, ինչպես նաև նպատակակետ երկրների ցրվածությունը:

Համաշխարհային բանկի տվյալներով (2011) Հայաստանից նպատակակետ երկրների ցանկը գլխավորել են Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ն, Ուկրաինան, Ադրբեյջանը, Իսրայելը, Գերմանիան, Ֆրանսիան, Իսպանիան և Հունաստանը: Հետազոտության արդյունքում ստացված տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես հիմնական նպատակակետ, դեպի արտերկիր վերջին միգրացիոն նպատակակետ երկիրն է (90.6%): ԼՂ-ն (1,3%), ԱՄՆ-ն (0.8%), Ուկրաինան (0.6%), Լեհաստանը (0.4%), Բելգիան (0.2%), Գերմանիան (0.6%), Ֆրանսիան (1.2%), Իսպանիան (0.8%), Վրաստանը (0.3%), Թուրքիան (0.4%), Բրազիլիան (0.1%) նույնպես համարվել են նպատակակետ վայրեր: Եթե միավորենք Եվրոպական միության 28 անդամ երկրները, ապա ԵՄ-ն դառնում է երկրորդ կարևոր նպատակակետը՝ ընդհանուր առմամբ 4.1%:

Տվյալներից կարելի է հասկանալ, որ միգրացիոն հիմնական նպատակակետը Ռուսաստանի Դաշնությունն է, մի երկիր, որը համեմատաբար մոտ է Հայաստանին աշխարհագրորեն, և որը համարվում է բարեկամական պետություն և հայտնի է արագ աճող տնտեսությամբ, և ունի ազատ վիզային ռեժիմ Հայաստանի հետ: Զարմանալիորեն, կամ ոչ այդքան, վերջին միգրացիոն ուղիները վերլուծելիս մենք պարզեցինք, որ ավելի շատ մարդ արտագաղթում է ՌԴ, քան տեղաշարժվում է ՀՀ-ի տարածքում:


Աղյուսակ 43. Վերջին ուղևորության նպատակակետը

	Թվաքանակ	Տոկոս
ՀՀ	846	20.9
ԼՂ	112	2.8
Ռուսաստանի Դաշնություն	2734	67.5
ԱՄՆ	31	0.8
Այլ	330	9.1
Ընդամենը	4,043	100

Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառների մասին նույնպես մի շարք կոնկրետ հարցեր են նախատեսվել: Հարցվածների կողմից երեք հիմնական տարբերակները լրացնելու արդյունքում պարզ է դարձել, որ ցանցային միգրացիան գերակշռող է եղել (ընկերների և (կամ) հարազատների առկայությունը նպատակակետ երկրում) գրեթե 30% դեպքերում, այսինքն՝ նախկին միգրացիոն հոսքերը բացատրում են ներկայիս հոսքերը: Այստեղ անհրաժեշտ է նշել աշխատանքային շուկան (աշխատանքի առաջարկները կազմել են ընտրված նպատակակետի 26.5%-ը), լեզվական խնդիրը (լեզվի իմացությամբ է բացատրվում նպատակակետ երկիր ընտրելու տարբերակի 14.3%-ը, մուտքի վիզայի բացակայությունը՝ (6.8%), այլընտրանքային տարբերակների բացակայությունը (6.7%): Նպատակակետ երկրում նախկինում բնակվելու փաստով է բացատրվում հարցված տնային տնտեսությունների անդամների 6.2%-ի համար այդ նույն նպատակակետն ընտրելու նախընտրությունը: Դա ներկայիս արտագաղթածների շրջանում շրջանառու կամ կրկնվող միգրացիայի պոտենցիալ բարձր մակարդակի բավականին մեծ ցուցանիշ է:



Գծապատկեր 5. Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառները (%)




(Վիզայի բացակայություն, լեզվի իմացություն, աշխատանքի առաջարկ, բնակության փորձառություն, ծանոթ/բարեկամ/հարազատ, տնտեսական գրավչություն, մեկնման և այլ ծախսերի մատչելիություն, այլընտրանքի բացակայություն, այլ)

Նպատակակետ երկրում արտագաղթածների կարգավիճակը

Նպատակակետ երկրում արտագաղթածների կարգավիճակի վերաբերյալ արդյունքները հետաքրքիր միտումներ են ի հայտ բերում. մինչդեռ միգրանտների մեծ մասը չի ընդունել ներկայիս բնակության վայրի քաղաքացիությունը, վերջին շրջանում արտագաղթած բնակչության հիմնական մասը (6.8%) արդեն ընդունել է քաղաքացիությունը (տես ստորև՝ Գծապատկեր 6-ը): Չնայած որ նրանց գերակշիռ մեծամասնությունը ունեցել է օրինական կարգավիճակ (երեքից երկուսը)՝ նրանց բավականին մեծ մաս ունեցել է միայն ժամանակավոր գրանցում կամ ոչ մշտական: Հյուրընկալող երկրում հարցվածների 4.9%-ը անօրինական կարգավիճակ է ունեցել հյուրընկալող երկրում:

Գծապատկեր 6. Կարգավիճակը նպատակակետ երկրում



(Երկրի քաղաքացի, բնակության/կացության իրավունք, աշխատանքի իրավունք, ապաստան հայցողներ, ժամանակավոր գրանցում, չի ունեցել օրինական կարգավիճակ, այլ, նշված չէ)



Տնային տնտեսության արտագաղթածները սովորաբար բնակվել են վարձակալած բնակարաններում/տներում (34.5%), վարձակալած սենյակներում (23.7%), հարազատի կամ ընկերոջ տանը (15.6%), հանրակացարաններում (11.5%), ոչ բնակելի կացարաններում (8.2%) և առանձնատներում (5.1%):


Ինչ վերաբերում է առողջության ապահովագրությանը, ապա հարցվածների ընդհանուր թվի 76.7%-ի դեպքում այն բացակայել է, 6.1%-ը ունեցել է մշտական ապահովագրություն, իսկ 12.6%-ը՝ ժամանակավոր ապահովագրություն:

Ցանցերն ու միջնորդները

Հարցված տնային տնտեսության անդամների տասից ութը ունեցել է ընկերներ և (կամ) հարազատներ՝ նպատակակետ երկրում՝ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկնելը: Դա շատ մեծ համամասնություն է և կապված է Հայաստանի՝ միգրացիային վերաբերող երկարամյա պատմությամբ XX դարում ու ներկայումս: Մեծ սփյուռքի առկայությունը և վերջին երկու տասնամյակի ընթացքում մեկնումների շարունակական հոսքերը վստահեցրել են նորեկներին միգրացիայի ցածր վտանգի մասին և բացատրել միգրանտների կողմից կոնկրետ գտնվելու վայրի վերաբերյալ որոշում կայացնելու մասին երեք ուղու միջոցով՝ առաջին, նրանք ներկայացրել են տեղեկատվություն հյուրընկալող երկրի (տարածաշրջանի) աշխատանքային շուկայի մասին, երկրորդ, միգրանտների կոմունալ ծախսերն ավելացել են տվյալ վայրում առկա՝ էթնիկ ապրանքների թվի հետ մեկտեղ, երրորդ՝ միգրանտներն ակնկալել են, որ նախկին միգրանտներն իրենց կօգնեն տեղավորվելու հարցում:

Այդ ցանցի արտաքին գործոնների ազդեցությունը կարող է տարբերվել միգրանտների տարբեր տեսակների համար: Օրինակ՝ անօրինական կարգավիճակով միգրանտները կամ ոչ պաշտոնական աշխատանքային շուկաներում աշխատող միգրանտները կարող են ավելի շատ կախված լինել միգրացիոն ցանցերից, քան օրինական կարգավիճակով միգրանտները:

Գծապատկեր 7. Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ նպատակակետ երկրում ընտանիքից (ընկերներից) ստացված աջակցությունը




(Վիզայի ստացում, ճամփորդության ծախսեր, բնակություն, աշխատանք գտնելու համար, այլ, որևէ օգնություն չի ստացվել)



Երբ համեմատում ենք միգրանտների կողմից ՀՀ-ից ստացվող աջակցության ձևերը (դա վերադարձած միգրանտներն են) նոր միգրանտների կողմից վերջին տարիներին ստացվող աջակցության ձևերի հետ, դրանք համընկնում են բոլոր կատեգորիաներում՝ բացառությամբ նպատակակետ երկրում աշխատանքի անցնելու հետ կապված օգնությանը (տես ստորև՝ Գծապատկեր 8-ը): Ստացվող աջակցության գերակշռության պատճառների խելամիտ բացատրությունն այն է, որ միգրացիոն ցանցը ներկայումս ավելի է հաճախ հանդիպող է ու արդյունավետ կոնկրետ աշխատանքային շուկաներում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն) և տեսականորեն ավելի ճշգրիտ հայրենակիցների համար աշխատանք գտնելու մասով:

Գծապատկեր 8. Նախքան ՀՀ-ից մեկնելը՝ հյուրընկալող նպատակակետ (հյուրընկալող) երկրում ընտանիքից (ընկերներից) ստացվող աջակցության համեմատումը (արտագաղթածներ՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ)



(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ վիզայի ստացում, ճանապարհածախսեր, աշխատանք, կացարան, այլ, ոչ)


Նպատակակետ երկրում միգրանտների տնտեսական առանձնահատկությունները

Աշխատանքային միգրացիայի հոսքը հաստատվում է այն փաստով, որ արտագաղթածների 79.3%-ը մտադիր է եղել աշխատել արտերկրում մինչև ՀՀ-ից մեկնելը: Հարցված տնային տնտեսությունների թվից՝ 71.5%-ը ստացել է աշխատանքի խոստում՝ նախքան ՀՀ-ից մեկնելը, 4.4%-ն ունեցել է աշխատանքային գրավոր պայմանագիր և 1.1%-ը՝ աշխատանք ստանալու այլ պայմանավորվածություն: Հարցվածների 22.9%-ը չի ունեցել աշխատանքի որևէ տեսակի առաջարկ կամ դրա վերաբերյալ համաձայնություն:

Ինչպես կարելի է հասկանալ Գծապատկեր 9-ից, այդ պայմանավորվածությունները ձեռք են բերվել օտարերկրյա գործատուների, միջնորդների կամ բրիգադիրների հետ: Հայաստանի Հանրապետությունում բնակվող բրիգադիրները կամ միջնորդները հուսալի են աշխատանքների հետ կապված հարցերի կազմակերպման դեպքերից 19%-ի դեպքում:



Գծապատկեր 9. Աշխատանքի առաջարկի համար պատասխանատու անհատը կամ կառույցը



(ՀՀ զբաղվածության պետական ..., ՀՀ մասնավոր գործակալություն, ՀՀ-ում բնակվող գործատու, ՀՀ-ում բնակվող աշխատանքներ կազմակերպողներ, ՀՀ-ում բնակվող միջնորդներ, օտարերկրյա պետության ծառայություն, ... մասնավոր գործակալություններ, օտարերկրյա գործատուներ, օտարերկրյա բրիգադիրներ, օտարերկրյա միջնորդներ, այլ)

Ընդհանուր թվից միայն 1.7%-ի դեպքում է, որ աշխատանքի հետ կապված կազմակերպչական հարցեր չեն իրականացվել: Հարցված տնային տնտեսությունների 39.7%-ի դեպքում, այդ հարցերը ամբողջությամբ իրականացվել են, 48.9%-ի դեպքում՝ հիմնականում իրականացվել են, 9.3%-ի դեպքում՝ առնվազն մասնակիորեն իրականացվել են: Ձախողումների պատճառը հիմնականում վերագրվել է անկանխատեսելի իրավիճակներին՝ 46.1% դեպքերում, գործատուին՝ 29.1% դեպքերում կամ միջնորդին՝ 19.1% դեպքերում:

Նպատակակետ երկրում արտագաղթածների տնտեսական կարգավիճակը

Միգրացիայի վերաբերյալ գրականության համաձայն՝ միգրանտները սովորաբար պատրաստակամ են եղել ընդունելու ցածր վարձատրությամբ աշխատանք, որովհետև նրանք կարծել են, որ այդ աշխատանքը միայն ժամանակավոր է և կարճաժամկետ: Մյուս կողմից, այդ աշխատանքի համար նրանք վարձատրվել են ավելի շատ, քան նրանք կվաստակեին իրենց երկրում, և ուստի, կարողացել են ավելի շատ գումար ուղարկել և ավելի շատ գումար կուտակել կարճ ժամանակահատվածում: Այս հետազոտությամբ էլ կարելի է հաստատել այդ միտումը, քանի որ արտագաղթածների տնտեսական կարգավիճակը թվում է՝ բարելավվել է հարցվածների ճշող մեծամասնության դեպքում՝ ի տարբերություն ՀՀ-ում նրանց նախկին պայմանների: Աշխատանքային շուկայի կարգավիճակի մասով փոփոխությունն էական է եղել աշխատանք չունեցողների համար, որոնց մեծ մասը կարողացել է վարձատրվող աշխատանք գտնել միգրացիայի ուղին բռնելուց հետո:

Հարցված տնային տնտեսությունների արտագաղթած անդամների 12.9%-ը աշխատանք չի ունեցել ամբողջ վեց ամիսը՝ մինչև հետազոտությունը, իսկ 36.3%-ը աշխատել է այդ ամբողջ վեց ամիսը: Ընդհանուր առմամբ, աշխատանք չունեցող արտագաղթածների միայն 12%-ը չի փնտրել աշխատանք վեց ամիս մինչև հետազոտությունը, մնացած 88%-ը ակտիվորեն փորձել է աշխատանքի հնարավորություն գտնել:



Շրջանառության ու միգրացիայի միջև կապը բացահայտելը

Տնից հյուրընկալող երկրներ «հետ ու առաջ» աշխատանքային տեղաշարժի առավելությունները ներկայումս ներկայացվում են միգրացիայի վերաբերյալ գրականությամբ, միգրացիայի վերաբերյալ քաղաքականությամբ և միգրացիայի հետ առնչություն ունեցող տարբեր մարմինների կողմից: Շրջանառու կամ կրկնվող միգրացիայի ի հայտ եկող կարևորությունը առաջանում է միգրացիայում ընդգրկված բոլոր երկրների համար հնարավոր առավելություններից՝ անկախ այն հանգամանքից՝ դա հայրենի երկիրն է, թե՛ ուղարկող, հյուրընկալող երկիրն է, թե՛ ընդունող կամ որևէ երրորդ երկիր, ինչպես նաև հենց միգրանտների համար հնարավոր առավելություններից: Սակայն անհրաժեշտ է պատասխանել մի կարևոր հարցի՝ ինչպե՞ս կարող ենք բացահայտել ու չափել շրջանառու կամ կրկնվող միգրացիայի կարևորությունը միգրացիոն հոսքերում: Դժբախտաբար, շրջանառու միգրացիայի վերաբերյալ փորձով հիմնավորված ապացույցները սակավ են, իսկ փորձով հիմնավորված վերլուծություններն էլ սահմանափակ՝ բացակայող կամ խնդրահարույց տվյալներով պայմանավորված:

Ինչպե՞ս կարելի է սահմանել շրջանառու միգրացիան: Առաջին, շրջանառու միգրացիան պետք է տարբերակել մեկանգամյա արտագաղթից կամ միգրացիոն արտահոսքից և վերջնական մշտական վերադարձի միգրացիայից: Երկրորդ, առկա է շրջանառու միգրացիայի լիարժեք տիպաբանություն՝ սկսած սեզոնային և ոչ սեզոնային միգրացիայից, մասնագետների շարժունակությունից կամ «ուղեղների շրջանառությունից» [բարձր որակավորում ունեցող մասնագետների տեղաշարժ], և անհրաժեշտ է այս տարատեսակների մեջ տարբերակում մտցնել: Երրորդ, չկարգավորվող համակարգերը և տարերային շրջանառությունը (օրինակ՝ թափառաշրջիկներն ու առևտրականները) նույնպես պետք է տարբերակվեն կարգավորվող համակարգերից ու ղեկավարվող շրջանառությունից: Պաշտոնական շրջանառու միգրացիան կարող է կարգավորվել քաղաքական տեսանկյունից: Ոչ պաշտոնական կամ կրկնվող միգրացիան պետք է ընկալվի խորությամբ (Նյուլենդ և այլոք, 2008) [Newland et al., 2008]:

Այս հետազոտությունում մի քանի հարց է ուղղվել՝ պարզելու համար, թե արդյոք Հայաստանի Հանրապետության ու մեկ կամ մի քանի նպատակակետ երկրների միջև առկա է մեծաթիվ շրջանառու կամ կրկնվող միգրացիա: Միգրացիային վերաբերող ուղևորությունների թվի, այդ ուղևորությունների ամիսների ու տարվա վերաբերյալ տվյալները, միգրացիայից առաջ և դրանից հետո փորձի վերաբերյալ տեղեկատվությունը կարող են նպաստել շրջանառու միգրացիայի վերաբերյալ ունեցած մեր գիտելիքին: Այնուամենայնիվ, հավաքված տվյալների հետ կապված որոշակի սահմանափակումներ կան, մասնավորապես՝ միգրացիոն ուղևորությունների տևողությունը կամ այդ միգրացիոն ուղևորություններից յուրաքանչյուրի նպատակակետ երկրները հստակ ներկայացված չեն հետազոտությունում: Այլ սահմանափակումներ են ի հայտ գալիս, քանի որ այս հետազոտությամբ պարզապես հավաքվել է միգրացիոն պատմությունը սահմանափակ ժամանակահատվածի համար (վերջին վեց տարիները) և ներկայացվել են որոշ միգրանտների կյանքի վերաբերյալ դիտարկումներ:

Հաշվի առնելով վիճակագրական հստակեցումները, երբ դիտարկվում են ամբողջ ամսվա կտրվածքով տարբեր ուղևորություններից ստացված տվյալները՝ ստուգելով ամեն տարի կրկնվող ուղևորությունները նույն սեզոնի ընթացքում, հնարավոր չէ որոշել շրջանառու միգրացիային առնչվող պարբերական շրջանակ, ոչ էլ սեզոնային միգրացիայի համար հատուկ սեզոններ (տե՛ս ստորև՝ Աղյուսակ 44-ը): Չնայած հայտնի է, որ հայ միգրանտները շատ հաճախ ներգրավվում են ժամանակավոր միգրացիոն գործըն-




թացնելու՝ տեղափոխվելով մեկ այլ երկիր և փնտրելով ցածր որակավորում պահանջող աշխատանք նախքան ՀՀ վերադառնալը, այնուամենայնիվ դրա մասին հստակ չի արտացոլվում այս հետազոտությունում: Բացառություններ կարելի է գտնել վերադարձած միգրանտների վերաբերյալ տվյալներում: Մեկ հարցին, որը վերաբերել է ՀՀ-ի իշխանություններին վերադարձի մասին չհայտնելու պատճառներին, վերադարձած միգրանտների 8.2%-ը պատասխանել է, որ իրենք ժամանակավոր միգրանտներ են եղել (Հայաստանի Հանրապետության տարածքից վեց ամսից պակաս բացակայողներ): Այս համամասնությունը համապատասխանել է մոտավորապես 4.000 անձի՝ կշռված ընտրանքում:

Օտարերկրյա պետություններում նախկինում (ներկայում) գտնվող միգրանտները (արտագաղթածներ, վերադարձած միգրանտներ ու ներգաղթածներ) միջինում 3.2 ուղևորություն են կատարել 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում:

Աղյուսակ 44. Ուղևորության ամիսը (կշռված)

	Ուղևորություն 1	Ուղևորություն 2	Ուղևորություն 3	Ուղևորություն 4	Ուղևորություն 5	Ուղևորություն 6	Ուղևորություն 7	Ուղևորություն 8	Ուղևորություն 9	Ուղևորություն 10	Ուղևորություն 11	Ուղևորություն 12	Ուղևորություն 13
Հունվար	6% 23,961	4.6% 8,647	6.7% 8,718	2.9% 2,683	6.7% 4,978	3.4% 1,656	7.1% 2,927	2.9% 666	5.2% 1,081	3.8% 170	14.6% 279	0% 0	0% 0
Փետրվար	11.2% 44,841	4.1% 7,725	16.2% 21,040	3.8% 3,512	13.4% 9,995	3.2% 1,564	13.8% 5,730	3.2% 730	12.7% 2,643	1.6% 70	0% 0	0% 0	0% 0
Մարտ	19% 75,683	3.6% 6,811	27.5% 35,797	3.8% 3,445	37.3% 27,856	3% 1,444	32.3% 13,410	5.2% 1,191	39.6% 8,237	22.7% 1,004	35.7% 684	0% 0	64.3% 677
Ապրիլ	15.7% 62,483	3.9% 7,381	19.6% 25,458	2.9% 2,687	20.7% 15,504	2.5% 1,239	27.8% 11,546	2.3% 527	21.6% 4,505	4.5% 201	37.6% 721	8.7% 100	18.5% 195
Մայիս	12% 47,925	6.5% 12,417	8.6% 11,208	4.3% 3,937	7.7% 5,737	2.9% 1,408	8.2% 3,414	2.0% 453	8.1% 1,694	12.7% 562	4.2% 81	0% 0	17.2% 181
Հունիս	7.8% 30,989	5.9% 11,144	5.3% 6,912	2.1% 1,939	2.9% 2,171	3.7% 1,792	1.7% 695	1.6% 381	1.8% 373	3.4% 153	0% 0	0% 0	0% 0
Հուլիս	4.1% 16,326	2.6% 4,950	2.0% 2,625	1% 927	0.3% 216	1.0% 497	0.7% 271	1.4% 317	1.3% 260	0% 0	0% 0	0% 0	0% 0
Օգոստոս	6.4% 25,460	4.3% 8,106	1.3% 1,731	1.7% 1,515	1% 768	1.4% 661	1% 397	4.3% 984	0.6% 130	3.9% 174	0% 0	0% 0	0% 0
Սեպտեմբեր	6.5% 25,904	6.3% 12,003	3.7% 4,787	3.1% 2,838	4.3% 3,228	3.6% 1,733	1.9% 805	1.8% 412	3.0% 620	0% 0	8% 153	0% 0	0% 0
Հոկտեմբեր	4.8% 19,354	19.6% 37,242	2.8% 3,657	25% 22,806	2.1% 1,541	27.5% 13,394	2.4% 1,004	30.9% 7,146	2.6% 531	12.3% 546	0% 0	22.4% 259	0% 0
Նոյեմբեր	3.4% 13,753	21.7% 41,239	2.0% 2,640	26.9% 24,594	2.3% 1,683	27.5% 13,394	1.1% 465	26.1% 6,041	2.5% 527	16.9% 747	0% 0	50% 576	0% 0
Դեկտեմբեր	3.1% 12,397	17% 32,313	4.3% 5,619	22.4% 20,495	1.4% 1,068	21% 10,220	2.0% 821	18.5% 4,267	1.0% 212	18.1% 802	0% 0	18.9% 218	0% 0

Գծապատկեր 10. Հաջորդական ուղևորությունների բաշխումը՝ ըստ միգրանտների (%)



(ուղևորություն 1, ուղևորություն 2, ուղևորություն 3, ուղևորություն 4, ուղևորություն 5, ուղևորություն 6, ուղևորություն 7, ուղևորություն 8, ուղևորություն 9, ուղևորություն 10, ուղևորություն 11, ուղևորություն 12, ուղևորություն 13)




Հարցվածներից երեքից երկուսը կատարել է մեկից երեք ուղևորություն ՀՀ-ի և հյուրընկալող երկրի միջև վերջին վեց տարվա ընթացքում: Դժբախտաբար, այդ ուղևորությունների տևողության ու պարբերականության վերաբերյալ տվյալներ չկան, այնպես որ հնարավոր չէ սահմանել շրջանառու կամ կրկնվող միգրացիայի վերաբերյալ շրջանակ: Ապագայում իրականացվելիք հետազոտությունների միջոցով պետք է անդրադարձ կատարվի այս հարցին առավել անմիջական եղանակով՝ տարանջատելու սեզոնային միգրացիոն հոսքերը որպես շրջանառու տեղաշարժեր սահմանվողներից:

Միգրանտի ու իր ընտանիքի անդամների միջև հաղորդակցումն ու կապը

Այս բաժնում ներկայացվում են մանրամասներ միգրանտի ու իր ընտանիքի միջև հաղորդակցման ու կապի մասին: Միգրանտները պարբերական կապի մեջ են եղել իրենց ընտանիքների հետ, շատ հաճախ՝ ամեն օր (արտերկրում ապրող՝ տնային տնտեսությունների հարցված անդամների 52%-ը շփվել է իրենց ընտանիքի անդամների և (կամ) ընկերների հետ ամեն օր, 38.5%-ը՝ շաբաթը մեկ անգամ և 1.5%-ը՝ հազվադեպ): Միգրանտների մեծամասնությունը որպես հաղորդակցման միջոց օգտագործել է իրենց հեռախոսները (ընդհանուր թվի 57%-ը): Ինտերնետը նույնպես կարևոր դեր է խաղացել հաղորդակցման հարցում (հարցվածների 15.4%-ն օգտագործել է էլեկտրոնային փոստ ու սկայպ): Փաստացի, տեխնոլոգիական զարգացումները, ինչպիսիք են՝ բջջային հեռախոսները, էժան՝ հեռահար հեռախոսային զանգերը, սոցիալական ցանցերը և սկայպը հեշտացրել են միգրանտների համար ընտանիքի անդամների ու ընկերների հետ շփվելու գործը՝ այդպիսով հեշտացնելով միգրացիոն գործընթացը: Որոշ չափով, էլեկտրոնային փոստը, սկայպը և մատչելի հեռախոսային զանգերը հնարավորություն են տվել պահպանելու ամուր կապեր ընտանիքի անդամների ու ընկերների հետ ծագման երկրում:

Գծապատկեր 11. Բացակայողի ընտանիքի և (կամ) ընկերների հետ հաղորդակցումը (%)



(հեռախոս, էլեկտրոնային փոստ/սկայպ, այլ, որևէ ցանկություն չկա, որևէ հնարավորություն չկա)



Միգրացիոն ծրագրի շարունակական գնահատումն ու պլանները

Հարցվածների 22.9%-ի դեպքում նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները էականորեն բարելավվել են արտագաղթի ընթացքում, 43.1%-ի դեպքում նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները բարելավվել են որոշ չափով, իսկ 30.6%-ի դեպքում՝ նրանց գիտելիքները և հմտությունները չեն զարգացել:

Միգրացիան Հայաստանի Հանրապետությունից մինչև 2007 թվականը

Հայկական սփյուռքը պետք է բաժանել «հին» և «նոր» սփյուռքի: «Հին» սփյուռքը «էթնիկ հայերի» հետնորդներն են (այդ համայնքները հիմնականում առաջացել են 20-րդ դարի սկզբին՝ Ցեղասպանությունից ու Օսմանյան կայսրությունից արևմտյան շրջաններում բնակվող հայերի զանգվածային արտաքսումից):²¹ Սփյուռքի այն ներկայացուցիչները, որոնք մեկնել են Սովետական Հայաստանից ԽՍՀՄ-ի փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո (1991 թվականից ի վեր) համարվում են «նոր» սփյուռքի անդամներ:

Ստացված և հավաքված պատասխանների համաձայն՝ այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնց անդամները արտագաղթել են 2007 թվականին նախորդող ժամանակահատվածում, տասից մեկն է եղել, դա, մոտավորապես 7890 հարցված տնային տնտեսությունների 10.3%-ն է եղել: Այս տնային տնտեսություններից, տնային տնտեսության հարցված անդամների պարագայում, որոնք արտագաղթել են մինչև 2007 թվականը և այլևս չեն վերադարձել արտերկրից (n=2.360), 60%-ը եղել են տղամարդ միգրատներ, իսկ 40%-ը՝ կին միգրանտներ: Այս համամասնությունը համապատասխանում է մոտավորապես 245.000 անձի՝ կշռված ընտրանքում:

Աղյուսակ 45. Հետազոտված տնային տնտեսությունների՝ ՀՀ-ից արտագաղթածների բաշխումը՝ ըստ սեռի

Տարիքային խմբեր	Տոկոս
0-9	5
10-19	10
20-29	15
30-39	24
40-49	25
50-59	13
60-69	3
70+	1
Նշված չէ	4
ԸՆդամներ	100

21 Պ. Ռոսսի-Լոնգի, Թ. Լինդսթրոմ և Ք. Գալստյան Միգրացիայի միջազգային կազմակերպության համար, «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույց», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2008)



Աղյուսակ 46. Մինչև 2007 թվականը ՀՀ-ից մեկնած՝ տնային տնտեսության հարցված անդամների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (%)

	Տղամարդիկ	Կանայք
Զբաղվածություն ունեցողներ (այդ թվում՝ ինքնազբաղվածությունը)	89.8	10.2
Աշակերտներ/ուսանողներ	58.6	41.4
Տնային տնտեսություն վարողներ	2	98
Թոշակառուներ / նպաստառուներ	45.5	54.5
Խնամքի տակ գտնվողներ	57.5	42.5
Աշխատանք չունեցողներ	85.6	14.4
Այլ	90.9	9.1
Ընդհանուր միջինը	82.2	17.8

Այս տարիքային բաշխման համաձայն՝ 2007 թվականից առաջ մեկնած արտագաղթածների գերակշիռ մեծամասնությունը աշխատանքային տարիքային խմբում են եղել (մինչև 2007 թվականը մեկնած՝ հետազոտված տնային տնտեսությունների՝ ՀՀ-ից արտագաղթածների 79.5%-ը 20-ից 65 տարեկան անձինք են եղել): այս ենթաընտրանքի 2.2%-ը ծնվել է արտերկրում 2007 թվականից հետո, իսկ արտագաղթածների ընդհանուր թվի 2%-ը մահացել է արտերկրում:

Աղյուսակ 47. Վերադարձած միգրանտների կրթական կարգավիճակը

	ՀՀ ընդհանուր միջինը	Արտերկրից վերադարձը	Ներգաղթածներ	Ներքին միգրանտներ	Արտագաղթածներ (%)	Մինչև 2007 թվականը մեկնած արտագաղթածները
Տարրական և ցածր	10.4	5.2	18.7	7.7	3	9.6
Հիմնական դպրոց (8-9-րդ դասարաններ)	9	8	21.3	4.8	5.5	10.7
Միջնակարգ ընդհանուր	37.3	41.7	27.8	32.2	49.8	35.3
Նախամասնագիտական (քոլեջ)	2.2	3.1	0.9	1.8	3	2.3
Միջին մասնագիտական	18.5	21.5	11.1	17.7	20.9	18.6
Բուհական	22.1	20.6	19.4	35.1	17.2	23.2
Հետբուհական	0.4	0	0.9	0.8	0.6	0.2

Տվյալներով հիմնավորվում է, որ 2007 թվականից առաջ մեկնած արտագաղթածների 35.3%-ը ունեցել է ընդհանուր միջնակարգ կրթություն (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 37.3%-ի հետ), 2.3%-ը ունեցել է նախամասնագիտական (քոլեջ) կրթության դիպլոմ (ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 2.2%-ը), 18.6%-ը՝ միջին մասնագիտական դիպլոմ (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 18.5%-ի հետ):



Հարցված տնային տնտեսությունների արտագաղթածների մեկնումը ՀՀ-ից (մինչև 2007 թվականը մեկնածներ)

Հայաստանն ունի զգալի ու հին սփյուռք, որը հասնում է մոտ 8 միլիոն մարդու՝ ի տարբերություն երկրում առկա բնակչության, որը 2010 թվականին 3.2 միլիոնից մի փոքր ավելի է եղել: Սփյուռքի այս բնակչությունն ընդգրկում է միգրանտների շատ սերունդներ ու փախստականներ, ինչպես նաև զգալի թիվ են կազմում Հայաստանում ծնված անձանց վերջին հոսքերը: Երկրի սահմաններից դուրս ապրողների թիվը, ըստ գրանցված տվյալների, 870.200 միգրանտ է (ընդհանուր բնակչության 28.3%-ը) (Եվրոպական վերապատրաստման հիմնադրամ 2013):

Հայաստանն անկախացել է Սովետական Միությունից 1990 թվականին, և ինչպես նախկին Սովետական Միության մյուս հանրապետությունների դեպքում, այստեղ արձանագրվել է էական արտագաղթ անկախացումից հետո՝ հատկապես էթնիկ փոխրամասնությունների շրջանում (հիմնականում ռուսներ): 2010 թվականին Հայաստանի բնակչությունը կազմել է 3 միլիոն մարդ՝ անկախացումից ի վեր գրեթե մեկ միլիոնի անկում:

Հետազոտության տվյալների համաձայն՝ մինչև 2007 թվականը մեկնած՝ տնային տնտեսությունների հարցված՝ ՀՀ-ից արտագաղթածների մեկնման տարեթվերը ներկայացված են հետևյալ բաշխմամբ՝ 36.4%-ը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից 1991-ից 1999 թվականներն ընկած ժամանակահատվածում (նրանցից 62%-ը եղել են տղամարդ միգրանտներ), 46.5%-ը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից 2000-ից 2006 թվականներն ընկած ժամանակահատվածում (նրանցից 59%-ը եղել են տղամարդ միգրանտներ):

2007 թվականից առաջ մեկնածներից (n=1.924)՝ 77%-ը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն (61%-ը տղամարդ միգրանտներ), 14.8%-ը տեղափոխվել է մարզեր կամ արտերկիր (55%-ը տղամարդ միգրանտներ), 6.3%-ը տեղափոխվել է ԱՄՆ (53.3%-ը տղամարդ միգրանտներ), իսկ 1%-ը՝ ԼՂ (67.9%-ը տղամարդ միգրանտներ), 1%-ից պակասը չի նշել նպատակակետ մարզը (երկիրը):

2007 թվականից հետո մշտական հիմունքներով տնային տնտեսությունից մեկնած տնային տնտեսության անդամները

Մենք նաև տեղեկատվություն ունենք տնային տնտեսությունների այն անդամների վերաբերյալ, որոնք մեկնել են տնային տնտեսությունից մշտական հիմունքներով 2007 թվականից հետո (n=470 կամ տնային տնտեսության անդամների ընտրանքի ընդհանուր թվի 1.5%-ը): Այդ 470 անձանցից՝ 28%-ը միգրացիայի փորձ է ունեցել, և նրանցից՝ 93% դեպքերում դա համապատասխանել է մեկ միգրացիոն ուղևորության (3%-ը ներգրավված է եղել երկու միգրացիոն ուղևորություններում, 4%-ը՝ երեք միգրացիոն ուղևորություններում): Այս տվյալների համաձայն՝ առկա է շրջանառության ցածր մակարդակ կամ միգրացիոն շրջանակային գործընթացին կոնկրետ վերաբերող տվյալներ առկա չեն:


Ապագա միգրացիոն պլանները

Ապագա միգրացիոն պլանները թվում է, թե կախված են Հայաստանի Հանրապետության և հյուրընկալող երկրի սոցիալական և տնտեսական զարգացումից: 37.8% հարցվածների



դեպքում առկա է 2013 թվականին վերադառնալու մտադրություն, 5.1%-ը մտադիր է վերադառնալ 2014 թվականին, 10.8%-ն ի վերջո վերադառնալու է (անհրաժեշտ է ընդգծել, որ հարցվածների ընդհանուր թվի 54.7%-ը վերադառնալու մտադրություն ունի): 22.7%-ի համար դա կախված կլինի իրավիճակի զարգացումից, 12.7%-ը դիտարկում է ՀՀ չվերադառնալու հարցը, 5.1%-ը մտադիր է վերամիավորվել իր ընտանիքի հետ հյուրընկալող երկրում, շատ փոքր թիվ (0.2%-ը) դիտարկում է մեկ այլ հյուրընկալող երկիր վերաարտագաղթելու հարցը:


Գծապատկեր 12. Ժամանակակից արտագաղթածների ապագա պլանները



(Կվերադառնան 2013 թվականին, կվերադառնան 2014 թվականին, ի վերջո կվերադառնան, կախված է համատեքստից, հավանաբար կվերադառնան, արդեն հաստատվել է, փորձում է այնպես անել, որ ընտանիքը միանա ..., պատրաստվում է տեղափոխվել մեկ այլ ..., նշված չէ)

Վերադարձի հիմնական պատճառները ընտանեկան բնույթի են, դրանք են՝ ընտանիքի վերամիավորումը (34.9%), ամուսնությունը (5.7%), ընտանեկան այլ հանգամանքներ (9.9%), միգրացիոն ծրագրի հաջող ավարտը (22.8%), հյուրընկալող երկրում աշխատանքի բացակայությունը (12.9%), աշխատանքի առաջարկը ՀՀ-ում (12.9%), աշխատանքային վատ պայմանները (3.7%), կրթությունը կամ որակավորումը (0,5%), այլ պատճառներ (4,9%):

Գծապատկեր 13. Վերադառնալու հիմնական պատճառները



(Հասել է նպատակին, աշխատանքի բացակայություն, աշխատանքային վատ պայմաններ, կրթություն/որակավորում, ընտանիքի վերամիավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, աշխատանքի առաջարկ ՀՀ-ում, վտարում, այլ)



Միգրանտ ուղարկող տնային տնտեսությունների սոցիալական կարգավիճակում փոփոխությունը

Ակնկալվում է, որ ներգաղթածները կբարելավեն իրենց մասնագիտական դիրքը իրենց միգրացիոն փուլի ընթացքում: Դրանից կարելի է ենթադրել, որ միգրացիոն արտահոսքը օգուտ է բերում այն անձանց, որոնք հմտությունների բաշխման վերին մասում են: Մյուս կողմից, միջին կատեգորիայում գտնվողների տոկոսը աճում է աննշան, իսկ որպես ցածր որակավորում ունեցողների դեպքում՝ այն ընդհանուր առմամբ կայուն է:



Գլուխ 5. Վերադարձած միգրանտների առանձնահատկությունները

Այս գլխում կներկայացվեն տնային տնտեսությունների այն անդամների վերաբերյալ տվյալներ, որոնք վերադարձել են Հայաստան, սակայն ապրել են օտարերկրյա պետությունում ավելի քան երեք ամիս 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում: Շատ տվյալներ ու սոցիալ-տնտեսական նկարագրություններ ընդհանուր առանձնահատկություններ ունեն նախորդ գլխի հետ՝ այն իմաստով, որ ներկայիս միգրանտներն ու վերադարձած միգրանտները ունեն տարբեր կառուցվածք ու բնորոշ գծեր՝ դրանով իսկ ցույց տալով դեպի դուրս տեղաշարժերի շարունակականությունը: Այնուամենայնիվ, այս գլխում ներկայացված տվյալները անմիջականորեն հավաքվել են հարցված՝ վերադարձած միգրանտներից, մինչդեռ նախորդ գլուխներում այդ տվյալները հավաքվել են բացակա անդամների փոխարեն հարցված անձինք:

Հայաստանն ունի միգրացիայի երկարատև պատմություն, և վերադարձն էլ մշտապես եղել է այս միգրացիոն փուլի մի մասը: Այդուհանդերձ, Հայաստանը, ինչպես և երկրների ճնշող մեծամասնությունը, չի գրանցում վերադարձած միգրանտներին: Արդյունքում, շատ քիչ վիճակագրական տվյալներ են առկա՝ վերադարձի երևույթի համապարփակ ու ճշգրիտ գնահատման համար:²²

Վերադարձած միգրանտների ժողովրդագրական առանձնահատկությունները

Տնային տնտեսությունների այս հետազոտությունում մի շարք հարցեր են եղել վերադարձի միգրացիայի վերաբերյալ (տե՛ս հավելվածում ներկայացված հարցաշարի բաժին 3-ը), ինչպես նաև հնարավոր է եղել որոշակի արտարկում (էքստրապոլյացիա) կատարել վերադարձածների ընդհանուր պատկերի մասով: Վերադարձի միգրացիայով նկարագրվում է որպես մի իրավիճակ, երբ միգրանտները վերադառնում են Հայաստանի Հանրապետություն՝ սովորաբար իրենց սեփական նախաձեռնությամբ, հաճախ արտերկրում գտնվելուց որոշ ժամանակահատված անց: Ուղղակիորեն, տնային տնտեսությունների անդամների 2.7%-ը (n=828) առնչություն է ունեցել արտերկրից վերադարձի հետ: Վերադարձած արտագաղթածների մասնաբաժինը կազմել է միգրացիոն արտահոսքերի 37.8%-ը 2007-ից 2013 թվականներն ընկած ժամանակահատվածում, որը համապատասխանում է, կշռված ընտրանքում, 82.530 անձի: Այս թվերը հուշում են, որ վերադարձի միգրացիան բավականին էական է, և վերադարձի հետ կապված հարցերը պետք է հասցեագրվեն՝ անմիջականորեն միգրացիոն ներհույսի հաջողությունը բարելավելուն ուղղված քաղաքականությունների միջոցով:

Նախկին հետազոտությունների համաձայն՝ դեպի Հայաստան վերադարձի վրա հիմնական ազդեցությունն են ունեցել հյուրընկալող երկրում «վանող» գործոնները, քան «ձգող» գործոնները Հայաստանում: Հայաստան վերադարձածները, թվում է, տարբեր սոցիալ-տնտեսական կարգավիճակում են եղել և միգրացիոն փորձն էլ տարբեր է եղել: Վերադարձածների թվում կարելի է գտնել ուսանողներ, աշխատանքային միգրանտներ (բարձր որակավորում ունեցողներ, ցածր որակավորում ունեցողներ, սեզոնային միգրանտներ), և


22 Չոբանյան, Հայկանուշ (2012), Դեպի Հայաստան վերադարձի միգրացիան, վերահնտեգրման հարցեր, CRIS Brief 2012/01, Առաջատար ուսումնասիրությունների Ռոբերտ Շումանի կենտրոն, Եվրոպական համալսարան ինստիտուտ, Ֆլորենցիա:



միգրանտներ, որոնք տեղափոխվել են մշտական բնակության նպատակով, մերժում ստացած ապաստան հայցողներ, անկանոն կարգավիճակով միգրանտներ, թռչակառուններ և այլն:

Ինչպես և ակնկալվում էր, վերադառնալու դեպքերը, գենդերային անհավասարակշռության մասով, համապատասխանում են միգրանտների մեկնման դեպքերին: Վերադարձած միգրանտների 66%-ը եղել են տղամարդիկ՝ հաստատելով Հայաստանի Հանրապետությանից արտահոսքերի մասով տղամարդկանց գերակշռությունը:

Գծապատկեր 14. Արտերկրից վերադարձածները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված)




(14 տարեկան և ավելի ցածր, 15-19, 20-24, 25-29, 30-34, 35-39, 40-44, 45-49, 50-54-55-59, 60-64, 65 տարեկան և ավելի բարձր)

Վերը նշված աղյուսակում ներկայացված տվյալները նշում են, որ վերադարձած միգրանտների տարիքային խմբերի առանձնահատկությունները տարբերվում են այն մասով, թե ինչ մենք կարող ենք ակնկալել ժամանակակից աշխատանքային հոսքերում: Վերադարձածներն առկա են բոլոր տարիքային խմբերում՝ ակտիվ տարիքային խմբերում 81.3% կենտրոնացվածությամբ: Այս տվյալները կարող են, ըստ էության, բացահայտել միգրացիոն արտահոսքի կոնկրետ տեսակ՝ սեզոնային, շրջանառու կամ կրկնվող միգրացիա, իսկ վերադարձի հոսքը կարող է կազմել միգրացիայի զգալիորեն ավելի կոմպլեքս դինամիկայի տեսանելի մասը: Վերադարձի միգրացիայի վերաբերյալ այս հետազոտությունում դեռ համակարծրություն չկա այն մասով, թե արտերկրում միգրանտների գտնվելու տևողությունը հիմնականում որոշվում է շրջափուլի հստակ նկատառումներով՝ ի հակադրություն այն մոտեցման, որ դրանք պայմանավորված են նպատակադրված եկամուտների մակարդակին հասնելու անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, տվյալները ցույց չեն տալիս վերադարձի միգրացիայի շրջափուլը վերադարձի դեպքերի հիմնականում տոկոսային ցուցանիշով: Ուստի, ավելի շատ հետազոտական աշխատանքներ պետք է իրականացվեն՝ հասկանալու վերադարձի միգրացիայի դինամիկան: Ինչպես կներկայացնենք ստորև, դա համապատասխանում է թե՛ մշտական միգրացիայի թվին, և թե՛ շրջանառու, կրկնվող կամ սեզոնային միգրացիոն հոսքերին: ՀՀ-ում տարբեր միգրացիոն հոսքերի ազդեցության հետ կապված հարցերը պետք է լուծվեն հստակ սահմանված ռազմավարությունների միջոցով:



Գծապատկեր 15. Արտերկրից վերադարձած տնային տնտեսությունների անդամները՝ արտագաղթածների հետ համեմատությամբ՝ ըստ մարզերի



(Վերադարձի միգրացիա Արտագաղթածներ

Երևան, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ)

Վերադարձած միգրանտների տարածքային բաշխումը տարբերվում է արտագաղթածների տարածքային բաշխումից՝ տարածքների միջև զգալի տարբերակմամբ: Կարելի է նկատել, որ Երևանին բաժին է ընկնում միջինում վերադարձած միգրանտների 35%-ը, սակայն այն արտագաղթածների 18.4%-ի համար է միայն սկզբնակետ տարածք: Դրան հակառակ՝ Շիրակի տարածքին բաժին է ընկնում վերադարձած միգրանտների միայն 6.7%-ը, սակայն այն ընդհանուր արտագաղթածների 17.6%-ի համար է սկզբնակետ տարածք: Այս տվյալները հուշում են այն մասին, որ որոշ տարածքներում նկատվում է բնակչության կտրուկ նվազում, որը պայմանավորված է միգրացիոն հոսքերով, և դրանից տարբերվող երևույթ Հայաստանի Հանրապետության մյուս մարզերում:

Աղյուսակ 48. Վերադարձած միգրանտների կրթական կարգավիճակը

	ՀՀ ընդհանուր միջինը	Արտերկրից վերադարձը	Վերադարձած միգրանտները (կշռված)	Ներգաղթածներ	Ներքին միգրանտներ	Արտագաղթածներ (%)
Տարրական և ցածր	10.4	5.2	4,476	18.7	7.7	3
Հիմնական դպրոց (8-9-րդ դասարաններ)	9	8	6,607	21.3	4.8	5.5
Միջնակարգ ընդհանուր	37.3	41.7	34,592	27.8	32.2	49.8
Նախամասնագիտական (քոլեջ)	2.2	3.1	2,395	0.9	1.8	3
Միջին մասնագիտական	18.5	21.5	16,174	11.1	17.7	20.9
Բուհական	22.1	20.6	18,286	19.4	35.1	17.2
Հետբուհական	0.4	0	-	0.9	0.8	0.6



Քանի որ տվյալները հավաքվել են թե՛ միգրանտների, և թե՛ միգրանտ չհանդիսացող տնային տնտեսությունների անդամների մասով, մենք կարող են համեմատություններ անել խմբերում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերադարձած միգրանտների կրթությունը որոշ չափով բարելավվել է՝ համեմատած ՀՀ բնակչության միջին թվի հետ: Տվյալներով հիմնավորվում է, որ 2007 թվականից առաջ մեկնած արտագաղթածների 41.7%-ն ունի ընդհանուր միջնակարգ կրթություն (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 37.3%-ի հետ), 3.1%-ն ունի նախամասնագիտական (քոլեջ) կրթություն (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 2.2%-ի հետ), 21.5%-ը՝ միջին մասնագիտական դիպլոմ (համեմատած ընտրանքում ընդգրկված ՀՀ բնակչության միջին թվի 18.5%-ի հետ): Այդուհանդերձ, Աղյուսակ 49-ի համաձայն՝ կարելի է այնպիսի եզրահանգում անել, որ որոշակի սերնդային տարբերություն է առկա Հայաստանում որոշ վերադարձած միգրանտների ավելի ցածր կրթական մակարդակների առնչությամբ՝ հատկապես բուհական կրթության մասով՝ որպես վերջինը ստացած դիպլոմ՝ համեմատած ընդհանուր ընտրանքի կամ արտագաղթածների ենթաընտրանքի հետ:

Միգրացիան և «ուղեղների ներհոսքը» ու Միգրացիան և «հմտությունների ներհոսքը»

Հետազոտության տվյալների վերլուծությունը չի ներկայացնում բարձր որակավորում ունեցող անձանց մեկնումը, ոչ էլ «ուղեղների մասսայական արտահոսքը»՝ գոնե վերջին տարիների ընթացքում, ինչպես ներկայացված է վերևում: Սակայն, «ուղեղների ներհոսք» չի նկատվում նաև վերադարձի հոսքի պայմաններում: Նաև փաստեր չկան այն տվյալների մասին, որ վերադարձած միգրանտները կրթություն են ստացել կամ ուսուցում անցել հյուրընկալող նպատակակետ երկրում: Ինչպես կարող ենք նկատել ստորև՝ Աղյուսակ 50-ում, վերադարձած հայերի միայն փոքր տոկոսն է ուսում ստացել և (կամ) հաճախել ուսումնական դասընթացներ արտերկրում: Նրանցից՝ հինգից երկուսը հաճախել է քոլեջ, համալսարան կամ ստացել է հետբուհական կրթություն:

Աղյուսակ 49. Հայաստանից՝ վերադարձած միգրանտների կողմից արտերկրում ստացած կրթությունը (%)

	Թիվ	Թիվը՝ կշռված	Տոկոս
Դպրոց	53	5,117	6.6
Արհեստագործական ուսումնարան	2	286	0.2
Քոլեջ	5	396	0.6
Համալսարան	13	1,728	1.6
Ասպիրանտուրա	2	226	0.2
Կարճաժամկետ դասընթաց	11	1,002	1.4
Նշված չէ	717	72,868	89.3
Ընդամենը	803	81,623	100

Ինչ վերաբերում է հնարավոր «հմտությունների ներհոսքին», ապա արտերկրից վերադարձած՝ հարցված տնային տնտեսություններից երկուսից մեկը հայտարարել է, որ իրենք ավելացրել են իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները արտերկրում գտնվելու ընթացքում (15.5%-ը ավելացրել է էականորեն, 36.9%-ը՝ ավելացրել է որոշ չափով):



47.5%-ի համար նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները չեն ավելացել արտերկրում գտնվելու ընթացքում:

Նպատակակետ երկրում վերադարձած միգրատների ցանցը

Հարցվածների 78.5%-ը, որոնք վերադարձել են արտերկրից (n=766), ունեցել են հարազատներ (ընկերներ) նպատակակետ երկրում՝ նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը, որը հզոր աջակցության ցանցի նշան է: Այս աջակցության ցանցը տեսանելի է՝ հաշվի առնելով օժանդակության տեսակը, որ նրանք ստանում են՝ 29.6%-ը օգնություն է ստացել աշխատանք գտնելու հարցում, 24.2%-ը՝ կացարան գտնելու հարցում, 18%-ը՝ օգնություն է ստացել ուղևորության ծախսերի հարցում, 13.7%-ը՝ սննդի կամ կացարանի, 1.4%-ը՝ վիզա ստանալու հարցում, իսկ 0.5%-ը՝ այլ տեսակի աջակցություն: Միայն 12.6%-ն է, որ ոչ մի օգնություն չի ստացել:

Աղյուսակ 50. Միգրացիայի նախնական փուլում հարազատների (ընկերների) կողմից աջակցությունը

	Տոկոս
Այո, աջակցություն վիզա ստանալու հարցում	1.4
Այո, աջակցություն ճամփորդության ծախսերի հարցում	18
Այո, աջակցություն սննդի (կացարանի) հարցում	13.7
Այո, աշխատանք գտնելու հարցում	29.6
Այո, կացարան գտնելու հարցում	24.2
Այլ	0.5
Ոչ	12.6
Ընդամենը	100

Միգրացիայի ուղին բռնելու որոշումը որոշ դեպքերում անհատական բնույթ է կրել (52%), իսկ 46.6%-ի դեպքում՝ միգրացիոն ծրագրի մի մաս է կազմել:


Աղյուսակ 51. Միգրացիոն ուղևորությանը աջակցելու բնույթը

	Տոկոս
Տնային տնտեսության խնայողություններ	39.3
Գույքի վաճառք	4.6
Անհատույց տրված օգնություն	16.6
Գույքի գրավադրում (վարկ)	1
Բանկից փոխառություն	3
Պարտք	26.1
Գործատու	6.4
Այլ	2.5
Ընդամենը	100

Ինչպես նշված է վերը՝ Աղյուսակ 51-ում, վերադարձած միգրանտների 39.3%-ը հոգացել է իր միգրացիոն ուղևորությունը սեփական խնայողությունների հաշվին, 26.1%-ը՝ ֆինանսավորել է իր ուղևորությունը՝ պարտքեր կուտակելով, 16.6%-ը՝ անհատույց տրված օգնության միջոցով, 6.4%-ի ուղևորության համար վճարել է գործատուն, 4.6%-ը՝ վաճառել է գույք, 3%-ը՝ բանկից փոխառություն է վերցրել, իսկ 1%-ը՝ ուղևորության համար միջոցներ է ձեռք բերել գույքի գրավադրմամբ կամ վարկով:




Գծապատկեր 16. Մեկնելու պատճառները (վերադարձած միգրանտներ)



(Այստեղ աշխատանք չկա, ավելի լավ աշխատանք՝ ավելի բարձր վարձատրությամբ, տնային տնտեսության համար գումար վաստակել, աշխատանքային վատ պայմաններ, բիզնեսի հետ խնդիրներ, կրթություն և վերապատրաստման բարելավում, կրթության ցածր որակ, արտերկրում ապրող հարազատների հետ միավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, ապագայի նկատմամբ անորոշություն, աղտոտված միջավայր/անբարենպաստ միջավայր, խտրականություն, քաղաքական հայացքների համար հետապնդում/քաղաքական ... մասով վախ, այլ)

Տարբեր միգրացիոն խմբերին համեմատելիս վանող գործոնները շարունակում են մնալ համարժեք՝ մեզ հնարավորություն տալով սահմանելու տնտեսական պայմանները հայրենի երկրում որպես միգրացիայի հիմնական պատճառ:

Գծապատկեր 17. Մեկնելու պատճառները (վերադարձած միգրանտների, պոտենցիալ միգրանտների, արտագաղթածների համեմատություն)



(Վերադարձած միգրանտներ Հավանական միգրանտներ Արտագաղթածներ)


Այստեղ աշխատանք չկա, ավելի լավ աշխատանք գտնել ..., տնային տնտեսության համար գումար վաստակել, աշխատանքային վատ պայմաններ, բիզնեսի հետ խնդիրներ, կրթություն և ..., կրթության ցածր որակ, ... հետ միավորում, ամուսնություն, ընտանեկան այլ ..., անառողջ բարոյա ..., ... նկատմամբ անորոշություն, աղտոտված միջավայր/..., խտրականություն, քաղաքական ..., այլ)



Հյուրընկալող երկրները՝ նախքան վերադարձը

Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառների մասին՝ վերադարձած միգրանտներին առնչվող նույնպես մի շարք կոնկրետ հարցեր են նախատեսվել: Հարցվածների կողմից հիմնական տարբերակներն ընտրելու արդյունքներից պարզ է դարձել, որ 40.5% դեպքերում գերակշռող է եղել ցանցային միգրացիան (ընկերների և (կամ) հարազատների առկայությունը նպատակակետ երկրում): Այստեղ անհրաժեշտ է նշել աշխատանքային շուկան (աշխատանքի առաջարկները կազմել են ընտրված նպատակակետի 21.9%-ը), լեզվական խնդիրը (լեզվի իմացությամբ է բացատրվում նպատակակետ երկիր ընտրելու տարբերակի 11.7%-ը, մուտքի վիզայի բացակայությունը՝ (5.7%), այլընտրանքային տարբերակների բացակայությունը (6.3%): Նպատակակետ երկրում նախկինում բնակվելու փաստով է բացատրվում հարցված տնային տնտեսությունների անդամների 3%-ի համար այդ նույն նպատակակետն ընտրելու նախընտրությունը:


Գծապատկեր 18. Վերադարձած միգրանտների դեպքում կոնկրետ հյուրընկալող երկրի ընտրության հիմնական պատճառները (%)



(Վիզայի բացակայություն, լեզվի իմացություն, աշխատանքի առաջարկ, բնակության մասով փորձ, ծանոթություն/ընկերներ/հարազատ..., տնտեսական գրավչություն, մեկնում և, այլընտրանքի բացակայություն, այլ)

Քանի որ դա հնարավոր է ստուգել, վերադարձած միգրանտների ու արտագաղթածների միջև համեմատությունից հետո, կոնկրետ նպատակակետ ընտրելու պատճառները բավականին նման են՝ բացառությամբ ազգականների կամ ընկերների ցանցին առնչվող շարժառիթներից՝ վերադարձած միգրանտների դեպքում:

Գծապատկեր 19. Կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառների համեմատությունը (վերադարձած միգրանտներ՝ արտագաղթածների հետ համեմատությամբ) (%)



(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ)

Վիզայի ստացում, ճանապարհածախս, աշխատանք, կացարան, այլ, ոչ)




Ինչ վերաբերում է հյուրընկալող երկրում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկում գրանցվելուն, ապա վերադարձած միգրանտների ընդհանուր թվի միայն 26.4%-ն է այնտեղ գրանցվել: 6.8%-ի համար պատճառը կարճաժամկետ միգրացիան է եղել (6 ամսից պակաս ժամանակահատվածը), 30.4%-ը պնդել է, որ իրենք չեն տեղեկացվել գրանցվելու պարտավորության մասին, 43.8%-ը որոշել է չգրանցվել, քանի որ հարկ չի համարել, 2.5%-ը պնդել է, որ դրա համար ժամանակ չի ունեցել, 4.1%-ը նշել է, որ բյուրոկրատական քաշքշուկներն են շատ եղել, վերադարձած միգրանտների 7%-ը նշել է, որ այդ նպատակակետ երկրում (տարածքում) ՀՀ-ի հյուպատոսական հիմնարկ չի եղել, 3.2%-ի համար դժվար է եղել հասնել Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկ, 1.9%-ի համար այլ չհստակեցված պատճառներ են եղել:

Հյուրընկալող երկրում վերադարձած միգրանտների կարգավիճակը

Նպատակակետ երկրում վերադարձած միգրանտների կարգավիճակի վերաբերյալ արդյունքները հետաքրքիր միտումներ են ի հայտ բերում՝ վերադարձած միգրանտներից 10-ից գրեթե մեկը ձեռք է բերել տվյալ պահին բնակության երկրի քաղաքացիություն (8.5%), այս վերադարձած միգրանտների զգալի մասը ունեցել է բնակության թույլտվություն (15%), 44%-ն ունեցել է ժամանակավոր գրանցում, 18.9%-ը՝ աշխատանքի թույլտվություն, 0.8%-ը եղել են փախստականներ, 0.8%-ը՝ ապաստան հայցողներ, 0.6%-ն ունեցել է այլ կարգավիճակ, որը չի հստակեցվել (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 20-ը): Չնայած որ ճնշող մեծամասնությունն ունեցել է օրինական կարգավիճակ, միևնույն ժամանակ բավականին մեծ թիվ են կազմել անօրինական կարգավիճակ ունեցողները հյուրընկալող երկրում:

Գծապատկեր 20. Հյուրընկալող երկրում վերադարձած միգրանտների կարգավիճակը




(Երկրի քաղաքացի, բնակության/կացության իրավունք, աշխատանքի իրավունք, ապաստան հայցողներ, ժամանակավոր գրանցում, չի ունեցել օրինական կարգավիճակ, այլ, նշված չէ)

Կրկին պետք է նշել, որ դեպի դուրս (արտագաղթածներ) և դեպի ներս (վերադարձի միգրացիա) միջև առկա տարբերությունները շատ աննշան են՝ ցույց տալով Հայաստանի Հանրապետությունից միգրացիոն հոսքերի շրջանակը, մասնավորապես՝ հյուրընկալող երկրում ժամանակավոր միգրացիայի բարձր համամասնությամբ և անօրինական կարգավիճակով միգրանտների համապատասխան համամասնությամբ:



Գծապատկեր 21. Նպատակակետ երկրում վերադարձած միգրանտների՝ արտագաղթածների հետ համեմատությամբ, կարգավիճակի համեմատությունը



(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ

Երկրի քաղաքացի, բնակության/կացության իրավունք, աշխատանքի իրավունք, ապաստան հայցողներ, ժամանակավոր գրանցում, չի ունեցել օրինական կարգավիճակ, այլ, նշված չէ)

Հարցված տնային տնտեսությունները, որոնք վերադարձել են արտագաղթից, հյուրընկալող երկրում գտնվելիս սովորաբար բնակվել են վարձակալված բնակարաններում (առանձնատներում) (30%), ունեցել են ծանոթներ կամ հարազատներ (29%), վարձակալել են սենյակներ (19.7%), հանրակացարաններ (7.3%), սեփական տներ (6.7%), հարմարեցված ոչ բնակելի կացարաններ (5.4%) և այլ չնշված կացարաններ (1,8%):

Վերադարձած միգրանտների ճնշող մեծամասնությունը արտերկրում բնակվելիս չի ունեցել բժշկական ապահովագրություն, 13.7%-ն ունեցել է ժամանակավոր բժշկական ապահովագրություն, իսկ 8.2%-ն ունեցել է մշտական բժշկական ապահովագրություն:

Առողջական վիճակը, արտերկիր մեկնելու պահին, նշվել է որպես լավ՝ հարցված տնային տնտեսությունների՝ վերադարձած միգրանտների 55%-ի կողմից, որպես գերազանց՝ 10.4%-ի դեպքում, որպես վատ՝ հարցազրույցի մասնակցած տնային տնտեսությունների անդամների 3%-ի կողմից: Վերադառնալուց հետո առողջական վիճակը վատացել է, քանի որ հարցվածների միայն 9.4%-ն է նշել, որ գերազանց առողջական վիճակում է, 49%-ը՝ լավ վիճակում, 30.8%-ը՝ բավարար վիճակում, իսկ 10.2%-ը՝ վատ վիճակում:

Տնտեսական ներգրավվածությունը նպատակակետ երկրում


Հարցված տնային տնտեսությունների անդամների 70.4%-ը, նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը, մտադրություն է ունեցել աշխատել արտերկրում: Աշխատանքային միգրացիայի հոսքերը, մեկ անգամ ևս հաստատվում են այն փաստով, որ այդ հարցված տնային տնտեսությունների թվից՝ 58.3%-ը ստացել է աշխատանքի խոստում՝ նախքան ՀՀ-ից մեկնելը, 5.9%-ը՝ աշխատանքային գրավոր պայմանագիր և 0.7%-ը՝ աշխատանք ստանալու այլ պայմանավորվածություն: Հարցվածների 34.9%-ը չի ունեցել աշխատանքի որևէ տեսակի առաջարկ կամ դրա վերաբերյալ համաձայնություն:

Ինչպես կարելի է հասկանալ Գծապատկեր 22-ից, այդ պայմանավորվածությունները ձեռք



են բերվում օտարերկրյա գործատուներից, միջնորդներից կամ բրիգադիրներից: Բրիգադիրները կամ միջնորդները, մասնավոր և պետական գործակալությունները Հայաստանի Հանրապետությունում հուսալի են աշխատանքների հետ կապված հարցերի կազմակերպման դեպքերից 24.6% դեպքում:

Գծապատկեր 22. Նախքան ՀՀ մեկնելը՝ հյուրընկալող երկրում ընտանիքից (ընկերներից) ստացված աջակցությունը



(ՀՀ զբաղվածության պետական ծառայություն, ՀՀ մասնավոր գործակալություն, ՀՀ-ում բնակվող գործատուներ, ՀՀ-ում բնակվող բրիգադիր, ՀՀ-ում բնակվող ծանոթներ/միջնորդներ, արտերկրի պետական ծառայություն, արտերկրի մասնավոր կառույց, արտերկրի գործատուներ, արտերկրի բրիգադիրներ, արտերկրի ծանոթներ/միջնորդներ, այլ)

Ընդհանուր թվից 5.4%-ի դեպքում, աշխատանքի հետ կապված կազմակերպչական հարցեր չեն իրականացվել: Հարցված տնային տնտեսությունների 40.9%-ի դեպքում, այդ հարցերը ամբողջությամբ իրականացվել են, 38.3%-ի դեպքում՝ հիմնականում իրականացվել են, 15.4%-ի դեպքում՝ առնվազն մասնակիորեն իրականացվել են: Ձախողումների պատճառը հիմնականում վերագրվել է անկանխատեսելի իրավիճակներին 40.3% դեպքերում, գործատուին՝ 29.2% դեպքերում կամ միջնորդին՝ 23.6% դեպքերում:

Հարցված տնային տնտեսությունների վերադարձած միգրանտների 36.3%-ը աշխատանք չի ունեցել ամբողջ վեց ամիսը մինչև հետազոտությունը, իսկ 40.6%-ը աշխատել է այդ ամբողջ վեց ամիսը: Եթե վերջին խմբին ավելացնենք նաև թոշակառուներին (նպաստառուներին) (5.9%), ապա կհասկանանք, որ ընտանիք կերակրողների թիվը կազմել է վերադարձածների 50%-ից քիչ: Ընդհանուր առմամբ, աշխատանք չունեցող արտագաղթածների միայն 13.4%-ը չի փնտրել աշխատանք վեց ամիս մինչև հետազոտությունը, մնացած 86.4%-ը ակտիվորեն փորձել է աշխատանքի հնարավորություն գտնել:



Աղյուսակ 52. Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը և վերադառնալուց հետո վերադարձածների սոցիալ-տնտեսական կարգավիճակը (%)


	Նախքան ՀՀ-ից մեկնելը	ՀՀ վերադառնալուց հետո
Վարձու աշխատող՝ պետական հատվածում	8.9	2.0
Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	15.7	86.7
Գործատուներ	0.6	0.8
Ինքնազբաղված՝ գյուղացիական տնտեսությունում	7.4	10.2*
Ինքնազբաղված՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	5.3	
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	2.7	0.2
Աշակերտներ/ուսանողներ	8.5	-
Տնային տնտեսություն վարողներ	5	-
Թոշակառուներ / նպաստառուներ	5.9	-
Խնամքի տակ գտնվողներ	4.8	-
Աշխատանք չունեցողներ	35.1	-
Ընդամենը	100	100

* Ինքնազբաղված աշխատողներ՝ չբաշխված ըստ հատվածների

Հարցազրույցի մասնակցած՝ հյուրընկալող երկրում աշխատանքի ընդունվածներից միայն 22.9%-ն է գրավոր պայմանագիր ունեցել, իսկ չորսից երեքը զրկված է եղել պայմանագրից, այսինքն՝ աշխատել է ոչ ֆորմալ կամ «ստվերային» տնտեսությունում: Բացի դրանից՝ պետական լիազոր մարմինը չի գրանցել գործունեության 63.6%-ը՝ այդպիսով այդ միգրանտներին դնելով դժվարին կացության մեջ դժբախտ պատահարների, աշխատավայրում չարաշահումների կամ աշխատանքից հեռացնելու դեպքում:

Աշխատանքի հավանականությունը բավականին բարձր է վերադարձած միգրանտների այդ խմբի համար: Չնայած որ, մինչև վերադարձը, 7.8%-ն ունեցել է երեք ամսից պակաս ժամանակավոր աշխատանք, 48.4%-ը՝ մեկ տարվանից քիչ ժամանակավոր պայմանագիր և 42.6%-ը՝ անժամկետ պայմանագիր: Մինչև միգրացիան և միգրացիայից հետո աշխատանքի բնույթի համեմատությունները հետաքրքիր փոփոխություններ են արձանագրում (տես ստորև՝ Գծապատկեր 23-ը): Կարճաժամկետ աշխատանքից ավելի քիչ անկայուն աշխատանքի տեղափոխվելը, թվում է շատ ակնհայտ:

Գծապատկեր 23. Աշխատանքի բնույթի համեմատությունը ՀՀ-ից մեկնելուց առաջ և հյուրընկալող երկրում (%)




(Մինչև ՀՀ-ից մեկնելը Հյուրընկալող երկրում

Ժամանակավոր (երեք ամսից պակաս, ժամանակավոր (մեկ տարուց պակաս, անժամկետ)



Նախքան Հայաստանի Հանրապետությունից մեկնելը՝ միգրանտների 60.7%-ն աշխատել է շինարարության ոլորտում, 10.2%-ը՝ առևտրի ու նորոգումների, 8.6%-ը՝ արդյունաբերության, 1.4%-ը՝ կրթության, 1.2%-ը՝ գյուղատնտեսության, 0.8%-ը՝ պետական կառավարման և 16.6%-ը այլ ծառայություններում: Մինչև ՀՀ-ից մեկնելը և հյուրընկալող երկրում զբաղվածության ոլորտների համեմատությունները ցույց են տալիս շարժ՝ գյուղատնտեսությունից շինարարություն, որպես ամենաեական փաստը (տես ստորև ներկայացված գծապատկերը):

Գծապատկեր 24. Աշխատանքային հատվածների համեմատությունը նախքան միգրացիան և դրա ընթացքում (%)



(Մինչև ՀՀ-ից մեկնելը հյուրընկալող երկրում)

Գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր և նորոգում, արդյունաբերություն, պետական կառավարում, առողջապահություն, կրթություն, այլ ծառայությունները)


Հարցվածների 23.8% դեպքերում, հյուրընկալող երկրում իրենց զբաղվածության մասով (n=488)՝ իրենց ունեցած աշխատանքը ամբողջությամբ համապատասխանել է իրենց մասնագիտությանը, 19.3% դեպքերում այն համապատասխանել է մասնակիորեն, 12.1% դեպքերում այն ավելի բարձր է եղել իրենց մասնագիտական մակարդակից, 21.5% դեպքերում տեղի է ունեցել մասնագիտական արժեզրկում: 23.4% դեպքերում նրանք նշել են, որ արտագաղթից առաջ մասնագիտություն չեն ունեցել:

Ինչ վերաբերում է որակավորումներին, ապա հարցված տնային տնտեսությունների անդամների 38.7%-ի համար աշխատանքը համապատասխանել է ամբողջությամբ, իսկ 35.7%-ի համար՝ մասնակիորեն: 22.1% դեպքերում, իրենց ունեցած աշխատանքը իրենց որակավորումից ավելի ցածր է եղել, 2.0% դեպքերում՝ իրենց որակավորումից ավելի բարձր: Թվում է, ինչպես և վերջին արտագաղթածների դեպքում, թե հարցվածներից շատերը միգրացիան դիտարկել են որպես իրենց երկրում գործազրկության այլընտրանք կամ իրենց զարգացրած հմտությունների համար հնարավորությունների բացակայության այլընտրանք:

Ինչ վերաբերում է շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերին, ապա հետազոտությունում առկա է նաև դրա վերաբերյալ տեղեկատվություն: Հարցված տնային տնտեսությունների անդամների 4.4%-ը շաբաթական աշխատել է 4-ից 35 ժամ, 12.5%-ը՝ շաբաթական 36-ից 40 ժամ, 25.5%-ը՝ շաբաթական 41-ից 50 ժամ, 24.5%՝ շաբաթական 51-ից 60 ժամ, 25%՝ շաբաթական ավելի քան 61 ժամ: Հարցվածների 7.9%-ը որոշել է չպատասխանել այս հարցին: ՀՀ-ից մեկնելուց հետո և առաջ շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերի համեմատությունը ցույց է տալիս աշխատանքային ժամերի ան թե՛ բացարձակ, և թե՛ տոկոսային արտահայտությամբ:



Գծապատկեր 25. ՀՀ-ում և հյուրընկալող երկրում շաբաթական կտրվածքով աշխատանքային ժամերի համեմատությունը



(Մինչև մեկնելը Հյուրընկալող երկիր

4-45, 36-40, 41-50, 51-60, 61 տարեկան և ավելի բարձր, նշված չէ)

Հարցվածների ընդհանուր թվի 34.4%-ը կանոնավոր ունեցել է հանգստյան օրեր, 44.1%-ը՝ ունեցել է հանգստյան օրեր, բայց ոչ կանոնավոր, իսկ հարցվածների 20.7%-ը՝ հանգստյան օրեր գրեթե չի ունեցել:

Հյուրընկալող երկրում արտագաղթածների կողմից ստացվող աշխատավարձերի տարբեր չափեր են գոյություն ունեցել՝ 0-ից մինչև 4.000.000 հայկական դրամ կամ 0-ից 7.000 դոլար (ԱՄՆ դոլար): Ինչպես և ակնկալվում էր, շատ մեծ թիվ են կազմել այն անձինք, որոնք չեն պատասխանել այս հարցին՝ թե՛ հայկական դրամի, և թե՛ ԱՄՆ դոլարի մասով (միջինում հինգից չորսը հրաժարվել է պատասխանել կամ նշել է զրո աշխատավարձ): Ինչ վերաբերում է ռուսական ռուբլիի առնչությամբ հնչած հարցին, ապա ընդհանուր հարցվածների թվից երեքից երկուսը չի պատասխանել այդ հարցին կամ նշել է զրո աշխատավարձ: Հյուրընկալող երկրում արտագաղթածների կողմից ստացվող աշխատավարձերի չափը տատանվել է 0-ից մինչև 45.000 ռուսական ռուբլի: Եվրոյի առնչությամբ նույն հարցի շրջանակներում, 98.8%-ը նշել է, որ իր եկամուտը զրո է եղել: Հաշվի առնելով հարցվածների փոքր թիվը՝ հնարավոր չի եղել համապարփակ ցուցանիշներ ստանալ՝ նշված եկամուտների ցրվածության պատճառով:

Հարցվածներից՝ 11.3%-ը եղել են ինքնազբաղվածներ, ընդհանուր թվի 9.8%-ի դեպքում գործատունն եղել է հայաստանցի հայրենակից, 49.2%-ի դեպքում՝ տեղացի հայրենակից կամ տեղական կառույց, 24.2%-ի դեպքում՝ պետությունը, իսկ 0.8%-ի դեպքում այլ գործատուներ, որոնք չեն նշվել:

44% դեպքերում հարցվածներն իրենց աշխատանքը գտել են հյուրընկալող երկրում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 19.6% դեպքերում՝ Հայաստանում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 13.1% դեպքերում՝ օտարերկրյա գործատուի միջոցով, 4.2% դեպքերում՝ Հայաստանում բրիգադիրների միջոցով, 2.7% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով, 2.3%-ը՝ սեփական կամ ընտանեկան բիզնես է ունեցել արտերկրում, Հայաստանում ապրող գործատուի միջոցով, 1.3%-ը՝ ինտերնետով, 1.1% դեպքերում՝ օտարերկրյա պետության գործակալության միջոցով, 1% դեպքերում՝ մասնավոր գործակալության միջոցով, 2.7% դեպքերում՝ չի նշվել, և միայն մեկ անձ է աշխատանք գտել ՀՀ զբաղվածության պետական ծառայության միջոցով:




Հարցվածների 94.3%-ը չի ունեցել սոցիալական կամ տնտեսական որևէ եկամուտ՝ բացի արտերկրում իրենց գտնվելու ընթացքում աշխատանքից ստացվող եկամտից (թոշակ, նպաստ, եկամուտ գույքի վարձակալությունից և այլն):

Հարցված տնային տնտեսություններից 47%-ի դեպքում (2%-ը նշել է, որ իրենք պարտքեր են կուտակել շատ ցածր եկամտի պատճառով) ամբողջ եկամուտը բավարար չի եղել խնայողություններ կուտակելու համար: Հարցվածների 8.2%-ի դեպքում, եկամուտը բավարար է եղել խնայողություններ կուտակելու համար, 29.6%-ը նշել է, որ մասամբ է հնարավոր եղել խնայել որոշ գումար, և հարցվածների 8%-ն է կարողացել շատ քիչ գումար խնայել իրենց եկամտից:

Վերը նշված խնայողություններից կատարված ծախսերից՝ ամենամեծ մասնաբաժինն ընկել է տնային տնտեսության ընթացիկ կարիքների վրա (40.8%): Ծախսերի զգալի մասը բաժին է ընկել ընդհանուր ծախսերին (13%) կամ սոցիալական կարիքներին, ինչպիսիք են՝ կրթությունը, առողջապահությունը և այլն (9.1%), անկանխատեսելի հանգամանքների դեպքում կատարված ծախսերը կազմել են 7.6%, իսկ եկամուտներից խնայողությունները՝ 11.5%:

Գծապատկեր 26. Հյուրընկալող երկրում գտնվելիս տնային տնտեսության եկամուտը ծախսելը




(Տնային տնտեսության օրական ծախսեր, արարողություններ, ընդհանուր ծախսեր, կրթություն, առողջություն և այլ սոցիալական կարիքներ, գույքի կամ երկարաժամկետ օգտագործման նպատակով պարագաների ձեռքբերում, սեփականության ձեռքբերում, ներդրումներ արտադրության ոլորտում/բիզնես, ֆինանսական ներդրումներ, խնայողություններ, չկանխատեսված հանգամանքներ, այլ չնշված)

Խնդիրներն արտերկրում

Հարցվածների 63.3%-ը արտերկրում աշխատանքի հետ կապված խնդիրներ չի ունեցել: Այդուհանդերձ, 15.6%-ի դեպքում եղել են աշխատավարձի ուշացումներ կամ նրանց վճարել են մասնակի, 9.2%-ը շատ ծանր աշխատանքային պայմաններում է եղել, 8.7%-ը աշխատել է առանց որևէ աշխատավարձ ստանալու:



Գծապատկեր 27. Նպատակակետ երկրում աշխատանքին առնչվող խնդիրները (%)




(Չվճարվող աշխատանք, աշխատանքային ծանր պայմաններ, անցանկալի աշխատանքի նշանակում, աշխատավարձի վճարման ուշացումներ կամ մասնակի վճարումներ, ղեկավարության հետ խնդիրներ, այլ, որևէ խնդիր չի ունեցել)

Վերադարձած միգրանտների ճնշող մեծամասնությունը հայտարարել է, որ իրենք խնդիրներ չեն ունեցել արտերկրում գտնվելու ընթացքում (86.2%): Հարցվածների մնացած մասի դեպքում՝ 5.1%-ը հյուրընկալող երկրում խնդիրներ է ունեցել ոստիկանության հետ, 3.1%-ը՝ իր գործատուի հետ, իսկ առողջության հետ կապված խնդիրներին բաժին է ընկել ընդհանուր թվի 1.6%-ը:

38.7% դեպքերում այդ խնդիրները լուծվել են հյուրընկալող երկրում գտնվող ծանոթների միջոցով, 21.7% դեպքերում այդ խնդիրներն ընդհանրապես չեն լուծվել, 12.3% դեպքերում այդ խնդիրները լուծվել են գործատուի կողմից և շատ քիչ դեպքերում՝ դատարանի (6.6%) կամ ոստիկանության (7.5%) միջամտությամբ:

Գծապատկեր 28. Արտերկրում գտնվելիս խնդիրների լուծմանն օժանդակող կառույցները



(Ոստիկանություն, հարկային ծառայություն, ղեկավարություն, ոչ մեկը, հարևաններ, գործընկերներ, այլ ազգության միգրանտներ, գործատուներ, այլ, առողջապահություն)

Հարցվածների 54%-ի համար ողջունելի կլինեն, մինչև մեկնելը, իրավական հարցերի, առկա վտանգների, իրավունքների ու պարտականությունների մասին խորհրդատվություն ստանալ:

Հարցվածների 91.4% ճնշող մեծամասնությունը չի մասնակցել պետության կողմից իրականացվող ինտեգրման որևէ ծրագրի (լեզվի դասընթացներ, մասնագիտական վերապատրաստումներ և այլն) արտերկրում իրենց բնակության ընթացքում:




Հարցվածների 77.2%-ի մոտ այնպիսի տպավորություն չի եղել, որ իրենք իրենց հայ հայրենակիցների կողմից որևէ տեսակի աջակցության կարիք են ունեցել հյուրընկալող երկրում գտնվելու ընթացքում: Եթե օգնություն է անհրաժեշտ եղել, 13.7%-ի դեպքում, նրանք օգնություն չեն փնտրել հայկական համայնքներում, 1.3%-ը դիմել է հայկական համայնքներին խնդիրների դեպքում, սակայն աջակցություն չի ստացել, իսկ 2.1% դեպքերում՝ նրանք ստացել են իրենց համար անհրաժեշտ օգնությունը: 13.7% դեպքերում, հյուրընկալող երկրում հայկական համայնք չի եղել:

Վերադառնալու պատճառները

Վերադառնալու վերաբերյալ որոշումը, թվում է, ավելի շատ կապված է եղել ընտանիքի հետ, քան տարբեր երկրներում եկամտի հնարավորությունների (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 31-ը): Թվում է, թե վերադարձի միգրացիան ստանում է պրակտիկ բնույթ տնային տնտեսության մասով կայացված որոշման համատեքստում: Վերադարձը նաև տեղի է ունենում կոնկրետ շրջափուլի սահմաններում, երբ միգրացիոն ծրագիրն ավարտվում է (20.9%): Տնային տնտեսությունները նաև ընտրում են արտերկրում գտնվելու այնպիսի տևողություն, որի պարազայում հավասարակշռություն է ապահովվում արտերկրում ավելի մեծ խնայողություններից ստացվող առավելագույն օգուտի (հետևաբար կյանքի ընթացքում սպառման ավելի մեծ ծավալի) և արտերկրում աշխատանքի հետ կապված առավելագույն ծախսերի միջև: Որոշ միգրանտների համար դա նշանակում է շատ կարճ, ժամանակավոր, սեզոնային կամ շրջանառու միգրացիա, կրկնվող վերադարձով, իսկ մյուսների համար մի ժամանակահատված (կարճ կամ երկար), որը կախված է տնային տնտեսությունից ֆինանսական կարիքներից կամ ակնկալիքներից (տե՛ս նաև փոխանցումների վերաբերյալ գլուխը):

Գծապատկեր 29. Վերադառնալու հիմնական պատճառները (%)



(Նպատակի իրագործում, աշխատանքի բացակայություն, աշխատանքային վատ պայմաններ, բիզնեսի հետ խնդիրներ, կրթություն և որակավորման բարձրացում, կրթության ցածր որակ, ընտանիքի/հարազատների հետ վերամիավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, քաղաքական հայացքների համար հետապնդումներ/վախ ահաբեկումից, վտարում, աշխատանքի առաջարկ չէ-ում, ապագայի նկատմամբ անորոշություն, աղտոտված միջավայր, խտրականություն, այլ)

Միգրացիոն ծրագրի գնահատումը վերադարձից հետո չէ աշխատանքային շուկայում մրցունակության տեսանկյունից, միջինում, լավատեսական չէ: Հարցվածների 47.5%-ի համար իրենց մրցունակությունն աշխատանքային շուկայում չի բարելավվել, 18.3%-ի համար՝ թվում է, թե չի բարելավվել: Հարցվածների 13.4%-ի համար միգրացիոն ծրագիրը նրանց մրցակցային առավելություն է տալիս չէ աշխատանքային շուկայի հետ համեմատությամբ, իսկ 20.1%-ը համոզված է, որ դա բավականին դրական է եղել:




Վերադարձած միգրանտների համար ամենամեծ խնդիրը տեղեկատվության պակասն է, որը վերադարձի ու վերաբնակեցման խոչընդոտի է վերածվում: Այս տեղեկատվությունը կարող է փոխադարձաբար բարենպաստ լինել, սակայն անհրաժեշտ է ձևավորել տվյալների հավաքման կառուցվածք:

Վերադարձած միգրանտների միայն 30.4%-ն է տեղեկացրել Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը իրենց վերադարձի մասին:

Իրենց վերադարձի մասին չհայտնելու պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը շատ հստակ է, և բացատրվում է վերադարձած միգրանտների տարբեր առանձնահատկություններով, մասնավորապես՝ 8.2%-ը ժամանակավոր միգրանտներ են եղել (ՀՀ-ից բացակայել են վեց ամիս կամ ավելի քիչ), 43.3%-ի կարծիքով՝ իրենց վերադարձի մասին հայտնելու որևէ իմաստ չի եղել, հարցվածների 38.9%-ն ասել է, որ իրենց չեն տեղեկացրել՝ վերադարձի վերաբերյալ պաշտոնապես հայտնելու մասին, 0.6%-ի համար դա շատ բյուրոկրատական է եղել, 5.3%-ը դրա համար ժամանակ չի ունեցել, իսկ մյուսների դեպքում պատճառները չեն նշվել (2.8%):

Վեց ամսից հետո վերադարձածները աշխատանք են գտել հարցվածների ճնշող մեծամասնության դեպքում: Միայն 5.9%-ն է շարունակել փնտրել՝ 72.3% մեկնման համամասնության համեմատությամբ՝ ՀՀ վերադարձի հստակ պահին: Հինգից մեկը աշխատանք չի ունեցել, և ժամանելուց վեց ամիս հետո էլ չի փնտրել:

Գծապատկեր 30. Աշխատանք չունենալը, զբաղվածությունն ու աշխատանք փնտրելը վերադառնալուց հետո (%)



(ունեցել է աշխատանք փնտրել է աշխատանք չի փնտրել աշխատանք)


Վերադարձած միգրանտների 52.7%-ի համար իրենց վիճակը չի փոխվել վերադարձից հետո, այդ վիճակն էլ ավելի է վատացել 32.8%-ի համար, այն բարելավվել է 12.8%-ի համար և հիմնականում բարելավվել է Հայաստանի Հանրապետություն վերադարձածների 1.6%-ի համար:

Ճնշող մեծամասնությունը ոչ մի խնդիր չի ունեցել Հայաստանում վերադարձից հետո (67.1%), իսկ 14.9%-ը՝ շատ քիչ խնդիրներ է ունեցել: 8.1%-ի համար վերադառնալը խնդրահարույց է եղել, իսկ 9.8%-ի համար՝ բավականին խնդրահարույց:

Հայաստանում կրկին հարմարվելու հարցում հիմնական խնդիրները առնչվել են աշխատանքային շուկայում վերաինտեգրվելուն (46%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են աշխատանքին), ինչպես նաև հանգստի կազմակերպման կարողություններին (24.8%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են հանգստի կազմակերպման կարողություններին): (Տես ստորև՝ Գծապատկեր 31-ը):



Գծապատկեր 31. Հայաստանում կրկին հարմարվելու հարցում դժվարությունների մակարդակները (5)



Շեմը = «1»-ից (մեծապես առնչվել է) մինչև «5» (չի առնչվել)


(Օրինակ փաստաթղթեր, տնային տնտեսության հետ կապված խնդիրներ, աշխատանքի հետ կապված խնդիրներ, կրթության/առողջության հետ կապված խնդիրներ, սոցիալական ապահովության հետ կապված խնդիրներ, միջավայրին վերաադապտացում, հանգստի կարողություններ)

Վերահնտեգրման ծրագրերը

Վերադարձած միգրանտների 79.6%-ը երբեք չի լսել վերադարձած միգրանտների համար նախատեսված վերահնտեգրման ծրագրերի մասին, իսկ 99.4%-ը երբեք ներգրավված չի եղել այդ ծրագրերից և ոչ մեկում: Այդ ծրագրերի մասին տեղեկացվածներից՝ 11.6%-ը չի մասնակցել դրանց, որովհետև կարծել է, որ այդ ծրագրերը կամ օգտակար չեն, կամ հետաքրքիր չեն, 3.3%-ը՝ որովհետև պայմանները բավարար չեն, 3.3%-ին չեն տեղեկացրել պատշաճ ժամանակին:

Վերադարձից հետո բխվելով ընտրության ենթակա դասընթացների տեսակների հետ՝ 47.9%-ի կարծիքով՝ դասընթացների մասով առաջարկներից ոչ մեկն օգտակար չի լինի, 15.5%-ի կարծիքով՝ արհեստագործության դասընթացները կարող են օգտակար լինել, 14,8%-ի կարծիքով՝ գործարարության ու կառավարման վերաբերյալ դասընթացները, 11,4%-ի կարծիքով՝ ինֆորմատիկայի վերաբերյալ դասընթացները, իսկ 9.5%-ի կարծիքով՝ լեզվի դասընթացները:

Գծապատկեր 32. Վերադարձած միգրանտների համար օգտակար դասընթացների տեսակները (%)



(Բիզնես կազմակերպ. և կառավարում, համակարգչային հմտություններ, արհեստագործության դասընթացներ, լեզվի դասընթացներ, այլ, վերը նշվածից ոչ մեկը)



Գլուխ 6. Միգրանտ բնակչության առանձնահատկությունները (ներհոսքերը, այդ թվում՝ դեպի ԼՂ), (ներգաղթածները)

Այս գլխում հատուկ ուշադրություն կդարձվի միգրանտ բնակչության (դեպի ներս հոսքեր) սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական առանձնահատկությունների վերաբերյալ դաշտային հետազոտության արդյունքներին:


Տնային տնտեսությունների այս հետազոտությունում նշվել են մի շարք հարցեր (ընդհանուրը 37 հարց) միգրացիոն ներհոսքերի վերաբերյալ (տես հավելվածում ներառված հարցաշարի բաժին 5-ը): Ներգաղթածների ընտրվածությունը կարելի է նկատել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների միջոցով՝ նպատակակետ երկրում միգրանտներ չհանդիսացողների մասով նույն առանձնահատկությունների կամ միգրացիոն այլ հոսքերի հետ համեմատած:

Արտերկրից առաջին անգամ վերադարձածները հարցվածների շատ փոքր թիվն են կազմել (այս անձինք եղել են ներգաղթածներն ու արտերկրում ծնված հայերի ժառանգները), 129 անձանց ընդհանուր թվում, համապատասխանելով, կռված ընտրանքում, 14.312 անձի: Հարցվածների այս շատ սահմանափակ թիվը, ինչպես և ակնկալվում էր, վիճակագրական հետևանքներ ունի շատ փոփոխականների մասով՝ հնարավորություն չտալով խորը վերլուծության համար:

Հարցվածների ընդհանուր թվից՝ 41.2%-ը եղել են տղամարդիկ (կռված ընտրանքում համապատասխանում է 5.893 անձի), իսկ 58.8%-ը՝ կանայք (կռված ընտրանքում համապատասխանում է 8.419 անձի)

Ինչպես կարելի է տեսնել մյուս գծապատկերում, տարբեր միգրացիոն հոսքերի համեմատությունը ցույց է տալիս շատ հստակ գենդերային կազմ՝ տղամարդկանց գերակշռությամբ (որը կապված է հայերի միջազգային ներհոսքերի ու արտահոսքերի) և ներքին միգրանտների ու դեպի ՀՀ միգրանտների ներհոսքի հետ:

Գծապատկեր 33. Տարբեր միգրացիոն հոսքերի գենդերային կազմի համեմատությունը (%)




(Տղամարդիկ Կանայք)

Արտերկրից վերադարձ, արտագաղթածներ, ներգաղթածներ, ներքին միգրանտներ)



Դեպի Հայաստանի Հանրապետություն հոսքերը ցույց են տալիս հստակ շրջանակ՝ այս հետազոտությունում աշխարհագրական բաշխմանը վերաբերող այլ միգրացիոն հոսքերի մասով: Արտերկրում ծնվածների մեծ մասը տեղափոխվել է Երևան, Արարատ և Տավուշ: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տրված Գծապատկեր 34-ում, Երևանը ներհոսքերի գերակայող նպատակակետն է եղել (ընդհանուր թվի 45%-ը):


Գծապատկեր 34. 2007 թվականի հունվարից հետո արտերկրից առաջին անգամ ժամանած՝ տնային տնտեսության անդամները՝ ըստ մարզերի



(Երևան, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ)

Հայաստանի Հանրապետությունում տարբեր միգրացիոն հոսքերը համեմատելիս ի հայտ են գալիս տարբերություններ (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 35-ը): Երևանը համարվում է ներհոսքերի համար հիմնական նպատակակետը (ներգաղթ և վերադարձի միգրացիա), սակայն ոչ գերակա նպատակակետը ներքին միգրացիայի համար: Արարատը ներգաղթածների երկրորդ նպատակակետն է, իսկ Կոտայքը ներքին միգրացիայի կարևոր նպատակակետն է:

Գծապատկեր 35. Հայաստանի Հանրապետության սահմաններում միգրանտների տարածքային բաշխումը (%)




(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ Ներգաղթածներ Ներքին միգրանտներ Երևան, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ)



Տնային տնտեսությունների բաշխումն ըստ չափի կտրուկ տարբերվում է միգրացիոն հոսքերում, ինչպես ցույց է տրված հաջորդ գծապատկերում: Արտերկրում ծնված՝ տնային տնտեսությունների անդամների շրջանում մոտավորապես նույն համամասնությունն ունեցել է 1 (4,3%) և 8 կամ ավելի անդամ (5,5%): Տնային տնտեսություններից երկուսը ունեցել է 3-ից 5 անդամ:

Գծապատկեր 36. Տնային տնտեսությունների համեմատական չափերը (անձինք տնային տնտեսությունում)




(8 և ավելի Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ Ներգաղթածներ Ներքին միգրանտներ)

Դեպի Հայաստանի Հանրապետություն միգրացիայի ուղին բռնելու վերաբերյալ որոշումը 34.3% դեպքերում կայացվել է անհատապես հարցվողի կողմից, իսկ մնացած 65.7% դեպքերում դա եղել է ընտանիքի որոշումը:

Հետազոտված՝ արտերկրում ծնվածների շրջանում միայն 43.3%-ն է ամուսնացած եղել, բոլոր հետազոտված միգրացիոն խմբերից ամենափոքր համամասնությունը: Միակ բացատրությունը կարելի է գտնել միգրացիոն հոսքի տարիքային կազմում (ինչպես ցույց է տրված ստորև):

Գծապատկեր 37. Միգրացիոն հոսքերում ընտանեկան դրության համեմատությունը (%)




(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ Ներգաղթածներ Ներքին միգրանտներ երբեք ամուսնացած չեն եղել, Ամուսնուցած, Այրի, Ամուսնալուծված)



Օտարերկրյա պետություններից միգրացիայի ուղին բռնած՝ հարցված տնային տնտեսությունների առանձնահատկությունները

Ներգաղթածների տարիքային խմբերի վերլուծության միջոցով բացահայտվել են դեպի Հայաստանի Հանրապետություն ժամանակակից տարբեր ներհոսքերի առաջին տվյալները, որտեղ ներգաղթի շատ մեծ թիվ են կազմել երիտասարդ տարիքային խմբերը (0-24), և նվազ թվով՝ ակտիվ տարիքային խմբերը (25-29): Իրականում, դեպքերի մեծ մասում այս ներհոսքը անմիջականորեն կապված չի եղել ներգաղթային հոսքի հետ, սակայն դա երկրորդ սերնդի արտագաղթածների վերադարձի արդյունքն է, որոնք ծնվել են արտերկրում և վերադարձել են իրենց ծնողների հետ Հայաստանի Հանրապետություն: Նորեկների 13,2%-ը ծնվել է 2007 թվականից հետո: Դա, մասամբ, արտացոլում է ՀՀ-ի նախկին միգրացիոն պատմությունը և, միաժամանակ, երկրի աշխարհաքաղաքական ներգրավվածությունը հետկոնֆլիկտային տարածաշրջանում:

Գծապատկեր 38. 2007 թվականի հունվարից հետո արտերկրից առաջին անգամ ժամանած տնային տնտեսության անդամները՝ ըստ տարիքային խմբերի (կշռված)



(14 տարեկան և ավելի ցածր, 15-19, 20-24, 25-29, 30-34, 35-39, 40-44, 45-49, 50-54-55-59, 60-64, 65 տարեկան և ավելի բարձր)

Մինչմիջնակարգ կրթությամբ հարցվածների մասնաբաժինը անհամաչափ է եղել ՀՀ միջին թվի և վերլուծության ենթարկվող այլ միգրացիոն խմբերի հետ: Տեղացի բնակչության և նորեկների միջև կրթության ստացման հարցում բաժանումը ամենայն հավանականությամբ կնվազի ապագայում, եթե ներհոսքային բնակչությունը ինտեգրվի ՀՀ կրթական համակարգում:


Աղյուսակ 53. Ներքին միգրանտների կրթական կարգավիճակը (%)

	ՀՀ ընդհանուր միջինը	Արտերկրից վերադարձը	Ներգաղթածներ	Ներքին միգրանտներ	Արտագաղթածներ
Տարրական և ցածր	10.4	5.2	18.7	7.7	3
Հիմնական դպրոց (8-9-րդ դասարաններ)	9	8	21.3	4.8	5.5
Միջնակարգ ընդհանուր	37.3	41.7	27.8	32.2	49.8
Նախամասնագիտական (քոլեջ)	2.2	3.1	0.9	1.8	3
Միջին մասնագիտական	18.5	21.5	11.1	17.7	20.9
Բուհական	22.1	20.6	19.4	35.1	17.2
Հետբուհական	0.4	0	0.9	0.8	0.6



Քաղաքական տեսանկյունից կարևոր է ընդունել կրթություն ստացած և հմտություններով օժտված միջազգային միգրանտներ՝ երկրի հետագա զարգացման համար: Ինչ վերաբերում է դեպի ՀՀ ներհոսքերին, ապա տվյալները ցույց են տալիս հետաքրքիր համաչափություն հետբուհական կրթությամբ անձանց շրջանում (0.9), որը բարձր է ՀՀ-ում միջին թվից: Այնուամենայնիվ, ինչպես և ակնկալվում էր, ըստ ներգաղթածների տարիքային բաշխման, հարցվածների ճշող մեծամասնությունը գտնվում է միջնակարգ կամ տարրական կրթական հատվածներում (տե՛ս ստորև՝ Գծապատկեր 39-ը):

Գծապատկեր 39. Նախքան ՀՀ ժամանելը՝ հաճախած կրթական հաստատությունը



(Դպրոց Քոլեջ Համալսարան Ոչ)

Ինչ վերաբերում է մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը հաճախած կրթական հաստատություններին, ապա ճշող մեծամասնությունը դրա վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել: Այս հարցին պատասխանած՝ հարցվածների փոքր թվից (մեկ երրորդը)՝ 5.6%-ը հաճախել է համալսարան, 1.2%-ը՝ քոլեջ, իսկ 28.4%-ը՝ դպրոց:

Ազգությունը՝ ի տարբերություն նորեկների քաղաքացիության

Ինչպես նշվել է ավելի վաղ, կարևոր տարբերակում կարելի է մտցնել «քաղաքացիություն» և «ազգություն» փոփոխականներից ստացվող տվյալների միջև: Անակնկալ տվյալներ են ստացվում հետազոտությունից հարցազրույցի մասնակցած՝ տնային տնտեսությունների այն անդամների քաղաքացիության մասով, որոնք միգրացիոն ուղին բռնել են արտերկրից՝ 34.2%-ը արտերկրում ծնված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են եղել, այդ տնային տնտեսությունների 24%-ը ունեցել է Հայաստանի քաղաքացիություն և մեկ այլ երկրի քաղաքացիություն, այսինքն՝ երկքաղաքացիություն, 40.7%-ը ունեցել է օտարերկրյա քաղաքացիություն, իսկ 1.1%-ը քաղաքացիություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է ազգությանը, ապա 97.7%-ը նշել է, որ իրենք հայեր են, 0.7%-ը՝ ռուսներ, 0.6%-ը՝ հնդիկներ, 0.8%-ը՝ այլ ազգություն:

Նորեկների այս ազգություն - քաղաքացիություն պատկերը թերևս խոսում է ներգաղթի հատուկ տեսակի մասին, որն արդյունք է նախկին արտագաղթի հոսքերի և որպես հակառակ ուղղությամբ հոսքեր նախկին միգրացիոն արտահոսքերից (կին, ամուսին):




Հայաստանի Հանրապետությունը՝ որպես նպատակակետ երկիր

Որոշ մարդկանց կողմից միգրացիայի ուղին բռնելու պատճառների, կոնկրետ նպատակակետ երկիր ընտրելու պատճառների և նպատակակետ երկրի հասարակությունում ինտեգրվելու եղանակների վերաբերյալ գիտելիքները բավականին քիչ են: Արտագաղթելուն մղող երկու ընդհանուր ազդեցության տեսակներ սովորաբար տարբերակված են՝ «վանող», կամ առաջարկին ուղղված գործոններ, որոնք ազդեցություն են ունենում արտագաղթելու հետաքրքրության ու ցանկության վրա, և «ձգող»՝ պահանջարկին ուղղված գործոններ, որոնք ազդեցություն են ունենում նպատակակետ երկրում արտագաղթածների պահանջարկի վրա:

Այս ներգաղթային հոսքում «վանող» գործոնները, թվում է, հիմնական գործոններն են եղել: Ստացված տվյալների արդյունքում արված հետաքրքիր բացահայտումն այն է եղել, որ աշխարհաքաղաքական անկայունությունն առաջ է բերում հյուրընկալող երկիրը լքելու կարևոր պատճառ (37.4%), քաղաքական հայացքների համար հետապնդվողների լրացուցիչ 2.8%-ը դա նշել է որպես միգրացիայի պատճառ: Ընտանեկան պատճառները կապված են եղել արտագաղթի պատճառների 36.5%-ի հետ, զբաղվածության բացակայությունը կամ այլ տնտեսական պատճառները վերաբերել են հարցվածների շատ փոքր թվին:

Գծապատկեր 40. Հայրենի երկիրը լքելու և դեպի ՀՀ մեկնելու հիմնական պատճառները (%)




(Ավելի լավ աշխատանք գտնել, աշխատանքային վատ պայմաններ, կրթություն և ... բարձրացում, ընտանիքի հետ վերամիավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, հարազատների/... կարոտ , ապագայի նկատմամբ անորոշություն, քաղաքական հայացքների համար հետապնդում/ահաբեկման մասով վախ, աշխարհաքաղաքական անկայունություն, այլ)

ՀՀ-ն որպես նպատակակետ ընտրելու հիմնավորումը հիմնականում կապված է եղել զգացմունքային պատճառների կամ ընտանիքի հետ (ընդհանուր թվի 58.2%-ը), հարցվածների փոքր թվի դեպքում, տնտեսական կամ զբաղվածության պատճառներ են նշվել (4.7%), կրթությունը կամ վերապատրաստումը կարևոր է եղել ընդհանուր թվի 4.6% դեպքերում, մյուս չնշված շարժառիթները կազմել են 10.3%:



Գծապատկեր 41. ՀՀ-ն որպես նպատակակետ երկիր ընտրելու հիմնական պատճառները



(Աշխատանքի առկայությունը, ավելի լավ աշխատանքի առկայություն՝ առավել բարձր վարձատրությամբ, կրթություն/վերապատրաստումներ, ընտանիքի վերամիավորում, ամուսնություն, ընտանեկան այլ հանգամանքներ, հարազատների/հայրենի երկրի կարոտ, կայուն աշխարհաքաղաքական միջավայր, կացարանի առկայություն, այլ)

Հարցվածների ընդհանուր թվի 65.5%-ի համար, դեպի Հայաստանի Հանրապետություն միգրացիան միակ հասանելի նպատակակետն է եղել: Լրացուցիչ ուսումնասիրություններ են անհրաժեշտ այս երևույթի պատճառները հասկանալու համար:

Բնակչության ներհոսքերի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները

Ներհոսքային բնակչության առանձնահատկությունները տարբերվում են վերը նշված նախկին միգրանտների ընդհանուր նկարագրերից մի քանի կարևոր առումներով: Մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակին վերաբերող տվյալների վերլուծությունը ցույց է տվել անգործության մեծ թիվ հարցվածների շրջանում (60.6%), միգրացիայից առաջ հինգից մեկն առանց աշխատանքի է եղել: Չնայած այն հանգամանքին, որ չափազանց պարզ է նշել ներգաղթի, անգործության չափի և գործազրկության միջև կապը, այնուամենայնիվ, միգրացիոն ներհոսքի շրջանակներում պետք է ակնկալել աշխատանքային միգրանտների ավելի բարձր թիվ: Այս առանձնահատկությունները մեզ մղում են մի վարկածի՝ այս հոսքը արտագաղթի պատմական տեղաշարժերի հակադարձ հոսքն է ավելի շատ, քան աշխատանքային միգրացիոն հոսքը:


Աղյուսակ 54. Մինչև Հայաստան ժամանելը՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակը

	Թիվ	Թիվը՝ կշռված	Տոկոս
Վարձու աշխատող՝ պետական հատվածում	5	742	3.9
Վարձու աշխատող՝ ոչ պետական հատվածում	10	1,466	7.8
Գործատուներ	1	61	0.8
Ինքնազբաղվածներ՝ ոչ գյուղացիական տնտեսությունում	15	1,908	11.6
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	2	221	1.6
Աշակերտներ/ուսանողներ	41	4,461	31.8
Տնային տնտեսություն վարողներ	5	494	3.9
Թոշակառուներ / նպաստառուներ	4	506	3.1
Խնամքի տակ գտնվողներ	26	2,211	20.2
Առանց աշխատանքի անձինք	20	2,244	15.5
Ընդամենը	129	14,314	100



Արտերկրում ծնվածների միջին ամսական աշխատավարձը հայրենի երկրում 200 ԱՄՆ դոլարից ցածր է եղել հարցվածների 89%-ի դեպքում: Պետք է նշել, որ բարձր թիվ են կազմել եկամտին վերաբերող հարցերը՝ չպատասխանելու շատ բարձր ցուցանիշով:

Գծապատկեր 42. Հայրենի երկրում միջին ամսական աշխատավարձը (ԱՄՆ դոլարով)



Ինչ վերաբերում է արտերկրում եկամտի այլ աղբյուրներին, ապա արտերկրում ծնված հարցվածների միայն 8.3%-ն է ստացել թոշակ, նպաստ, եկամուտ գույքից և այլն:

Արտերկրում ծնվածների շրջանում ամբողջ եկամուտը բավարարչի եղել խնայողություններ անելու համար հարցված ներգաղթածների տնային տնտեսությունների 54.7%-ի դեպքում: Հարցվածների 17.5%-ի դեպքում, եկամուտը բավարար է եղել խնայողություններ կուտակելու համար, 20.8%-ը նշել է, որ մասամբ է հնարավոր եղել խնայել որոշ գումար, և հարցվածների 6.2%-ն է կարողացել շատ քիչ գումար խնայել իրենց եկամտից:

Ինչ վերաբերում է աշխատանքային պայմանագրի առկայությանը կամ խոստմանը՝ նախքան ծագման երկրից մեկնելը, ապա արտերկրում ծնված հարցվածների 96.1%-ը չի ունեցել որևէ պայմանագիր կամ խոստում, 2.5%-ը ունեցել է աշխատանքային պայմանագրի խոստում, իսկ արտերկրում ծնված հարցվածների 1.4%-ը ունեցել է գրավոր պայմանագիր:

Գծապատկեր 43. ՀՀ-ում վերջին վեց ամսում աշխատանքային ներգրավվածությունը (%)




(Ունեցել է աշխատանք Փնտրել է աշխատանք Աշխատանք չի ունեցել և չի փնտրել)



Արտերկրում ծնված հարցվածներից յուրաքանչյուրը և բոլորը, եթե աշխատանք ունենային, աշխատելիս կլինեին ոչ պետական հատվածում: Այդանձանցից 78%-ը ունեցել է գրավոր պայմանագիր: Պայմանագրերից 72.5%-ը ժամանակային սահմանափակում չի ունեցել, իսկ 27.5% դեպքերում դրանք ժամանակավոր են եղել (մեկ տարուց պակաս):

Գծապատկեր 44. ՀՀ-ում զբաղվածության հատվածները (%)



(Շինարարություն Առևտուր և նորոգում)

Աշխատանքի ընդունված՝ արտերկրում ծնվածներից 55.5%-ը աշխատանք է ունեցել շինարարության ոլորտում, իսկ 44.5%-ը՝ առևտրի ու նորոգումների. նշվել են միայն այդ երկու հատվածները: Հարցվածների 49.4%-ը չի ունեցել մասնագիտություն, 22.6%-ի համար իրենց աշխատանքը համապատասխանել է իրենց մասնագիտությանը, իսկ 28%-ի համար՝ այն չի համապատասխանել:

Արտերկրում ծնված հարցվածների 72%-ի համար աշխատանքը առնվազն մասնակիորեն համապատասխանել է իրենց որակավորումներին, իսկ մնացած 28%-ի համար՝ իրենց որակավորումից ավելի ցածր է եղել: Բացի դրանից՝ 49.4%-ի համար աշխատանքը հիմնականում բավարարել է իրենց, 22.6%-ի համար՝ ամբողջությամբ բավարարել է, իսկ 28%-ի համար՝ ընդհանրապես չի բավարարել:

Արտերկրում ծնվածների 55%-ը նշել է, որ իրենք աշխատել են շաբաթը 48 ժամ, 22.6%-ը՝ շաբաթը 50 ժամ, 22%-ը աշխատել է միջինում շաբաթը 54 ժամ:


Արտերկրում ծնված՝ հարցված բոլոր աշխատողները (100%) նշել են, որ իրենք ունեցել են հանգստյան օրեր, սակայն ոչ կանոնավոր:

Արտերկրում ծնված հարցվածների 27.5%-ը վաստակել է ամսական կտրվածքով միջինը մինչև 50.000 դրամ առանց հարկերի, 28%-ը վաստակել է ամսական կտրվածքով միջինը մինչև 60.000 դրամ, 22%-ը վաստակել է ամսական կտրվածքով միջինը մինչև 120.000 դրամ, իսկ 22.6%-ը չի պատասխանել այդ հարցին:

Արտերկրում ծնված հարցվածների 90.4%-ի համար աշխատավարձը եկամտի միակ աղբյուրն է եղել, իսկ 94.5%-ի դեպքում՝ հնարավոր չի եղել, այդ եկամտով, գումար խնայել:



Գծապատկեր 45. ՀՀ-ում աշխատանք գտնելու հարցում աջակցություն տրամադրող կառույցը (%)




(ՀՀ զբաղվածության պետական գործակալություն, ՀՀ-ում բնակվող գործատու, ՀՀ-ում բնակվող միջնորդ / ընկեր, արտերկրի միջնորդ/ընկեր, Ինտերնետ, գանգվածային լրատվամիջոց, նշված չէ)

Հայաստանի Հանրապետությունում միջնորդները (28,8%), Հայաստանի Հանրապետությունում ապրող գործատուները (16,3%) օտարերկրյա միջնորդները կամ արտերկրի ընկերները հիմնական միջնորդներն են եղել աշխատանք փնտրողների ու ՀՀ-ում աշխատանքային շուկայի միջև:

Իրավական կարգավիճակը և ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունը

Ինչ վերաբերում է արտերկրում ծնվածների իրավական կարգավիճակին Հայաստանի Հանրապետությունում, ապա 41.3%-ը եղել են ՀՀ քաղաքացիներ, արտերկրում ծնվածների 17.4%-ը դիմել է ՀՀ քաղաքացիության համար, արտերկրում ծնվածների 4.8%-ն ունեցել է կացության թույլտվություն, 2.5%-ն ունեցել է աշխատանքի իրավունք, արտերկրում ծնվածների 14.5%-ը ունեցել է ժամանակավոր գրանցում, իսկ արտերկրում ծնվածների 17.6%-ը (համապատասխանում է 1787 անձի կշռված արժեքի) չի ունեցել օրինական կարգավիճակ:

Գծապատկեր 46. Հայաստանի Հանրապետությունում իրավական կարգավիճակը (%)



(ՀՀ քաղաքացի, Դիմել է ՀՀ քաղաքացիության համար, Կացության թույլտվություն, Աշխատանքի իրավունք, Ժամանակավոր գրանցում, Օրինական կարգավիճակ չունի)




Նորեկների 42.9%-ը տեղեկացրել է Սփյուռքի նախարարությանը՝ ժամանելուն պես, 40.4%-ը՝ Ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչությանը, արտերկրում ծնվածների ընդհանուր թվի 15%-ը չի տեղեկացրել ՀՀ իշխանություններին:

Արտերկրում ծնվածների մեծ մասը (հարցվածների 98.9%-ը) պատասխանել է, որ իրենք ՀՀ-ում երբեք խնդիրներ չեն ունեցել, սակայն հարցվածների մի փոքր թիվ, որն ունեցել է խնդիրներ, դրանք լուծել է նվերի (կաշառքի) միջոցով:

Արտերկրում ծնված հարցվածների մեծամասնության համար Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն ծրագիրը ամբողջությամբ հաջողված է եղել (22.6%) կամ առնվազն մասնակիորեն հաջողված է եղել (39.2%): Հարցվածների ընդհանուր թվի 35.7%-ը նշել է, որ միգրացիոն ծրագիրը այդքան արդյունավետ չի եղել կամ որ իրականում դա իրեն չի արդարացրել (2.5%):

Արտերկրում ծնվածների ճնշող մեծամասնությունը (48.2%) դժվարություններ չի ունեցել ՀՀ-ում հարմարվելու տեսանկյունից, 4.2%-ը՝ ունեցել է քիչ դժվարություններ, 23.3%-ը՝ միջին մակարդակի դժվարություններ, 24.3%-ը ունեցել է լուրջ դժվարություններ:

Գծապատկեր 47. ՀՀ-ում հարմարվելու հարցերում առաջացած խնդիրները (%)



Շեմը = «1»-ից (մեծապես առնչվել է) մինչև «5» (չի առնչվել)

(Օրինական փաստաթղթեր, Ապաստարանի հետ կապված/ներքին հարցեր, զբաղվածության հետ կապված հարցեր, կրթության / առողջության հետ կապված հարցեր, սոցիալական պաշտպանության հետ կապված հարցեր, խնդիրների հարմարեցում, հանգստի հետ կապված կարողություններ)

Արտերկրում ծնվածների համար Հայաստանում հարմարվելու հետ կապված հիմնական խնդիրները առնչվել են աշխատանքային շուկայում վերաինտեգրվելուն (64.9%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են ընդհանրապես հարմարվելուն), կրթությանը (54.9%), ինչպես նաև հանգստի կազմակերպման կարողություններին (48%-ը պատասխանել է, որ խնդիրները մեծապես վերաբերել են հանգստի կազմակերպման կարողություններին): (տես Գծապատկեր 47-ը):



Գլուխ 7. Փոխանցումները, դրանց օգտագործումը և ֆինանսական բարգավաճումը

Այս գլխում հատուկ ուշադրություն է դարձվում փոխանցումների վերաբերյալ դաշտային հետազոտությունների արդյունքներին, մասնավորապես՝ Հայաստանում գտնվող տնային տնտեսություններին փոխանցված գումարները, Հայաստանից փոխանցված գումարները, փոխանցումների հաճախականությունը, փոխանցման եղանակները, օգտագործումը (սպառման, կրթության, տնային պայմանների բարելավման, վերստին միգրացիայի ուղին բռնելու, սեփական բիզնեսում ներդրում կատարելու և այլն), ֆինանսական վարքագիծն ու ձեռնարկատիրության հնարավորությունը: Տնային տնտեսության այս հետազոտությունում նշվել են մի շարք հարցեր (ընդհանուր առմամբ 20 հարց) փոխանցումների ու ֆինանսական բարգավաճման հետ կապված հարցերի վերաբերյալ (տե՛ս հավելվածում նշված հարցաշարի 7-ր բաժինը), և երկու հարց 3-րդ բաժնում և ևս երկու հարց 4-րդ բաժնում (արտերկրում գտնվող անձինք):

ՀՀ արտագաղթածների կողմից իրենց ընտանիքներին ուղարկված մեծածավալ փոխանցումներն օգնել են աղքատության նվազեցման հարցում, նպաստել են մարդկային զարգացմանը և մեղմացրել են սոցիալական լարվածությունը: Հայաստանը առաջին 20 երկրների շարքում է, որոնք ստանում են ամենաբարձր փոխանցումները (իրենց ՀՆԱ-ի մասով) (Մակարյան և Գալստյան, 2012:7):

Փաստորեն, Հայաստանը անսովոր կերպով կախված է փոխանցումներից: 2003-ից 2007 թվականներն ընկած ժամանակահատվածում փոխանցումները կազմել են ՀՆԱ-ի 17%-ից 24%-ը, և նշվել է, որ երկրում բոլոր տնային տնտեսությունների 36%-ը ստացել է փոխանցումներ (ԱՄԿ 2009): Անկախացումից ի վեր՝ Հայաստանը ձգտել է ապահովման միջոցներ ստեղծել շարունակական արտագաղթի համար չորս նպատակակետ երկրների հետ (Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա և Բելառուս)՝ միգրացիայի վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի միջոցով, սակայն այդ համաձայնագրերի իրականացումը միշտ չէ որ արդյունավետ է իրականացվել: Անկախացումից ի վեր՝ Հայաստանը նաև ստորագրել է հետընդունման [ռեադմիսիա] մասին համաձայնագրեր տասը պետությունների, այդ թվում՝ ԵՄ անդամ հանդիսացող մի քանի պետությունների հետ (Եվրոպական վերապատրաստման հիմնադրամ 2013թ. հունիս): Օրինակ՝ Հայաստանը ստորագրել է Շարժունակության շուրջ գործընկերության փաստաթուղթ ԵՄ-ի հետ 2011 թվականին:²³ Ամենապարզ իմաստով՝ փոխանցումները արտերկրից ստացված կամ ուղարկված՝ տնային տնտեսության ամբողջ եկամուտն է (ռեզիտենտ

²³Դիտարկելով եվրոպական ինտեգրումը որպես Հայաստանի Հանրապետության համար քաղաքական առաջնահերթություն՝ մարդկանց շարժունակության դյուրացումը և Հայաստանի ու ԵՄ-ի քաղաքացիների միջև շփումների խթանումն ու ակտիվացումը՝ որպես ԵՄ-ին Հայաստանի մերձեցման կարևոր տարրեր՝ անհրաժեշտ է ընդգծել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև շարժունակության շուրջ գործընկերության վերաբերյալ» 2011 թվականի հոկտեմբերի 27-ին ստորագրված համատեղ հռչակագիրը: Այդ աշխատանքներին մասնակցել է ԵՄ տասը անդամ պետություն (Բելգիա, Բուլղարիա, Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Ռումինիա և Շվեդիա): Դա մարդկանց արդյունավետ կառավարվող տեղաշարժի ճկուն և իրավական տեսանկյունից պարտադիր բնույթ չկրող շրջանակ է, և ակնկալվում է, որ դրա միջոցով կբարձրացվի միգրացիան կառավարելու, միգրանտներին ու վերադարձածներին իրազեկելու, ինտեգրելու և պաշտպանելու հարցում Հայաստանի կարողությունների մակարդակը, ինչպես նաև խթանելու՝ անկանոն միգրացիան և մարդկանց թրաֆիքինգը դադարեցնելու Հայաստանի կարողությունները:



և ոչ ռեզիդենտ հանդիսացող տնային տնտեսություններ՝ անկախ ուղարկողի ու ստացողի միջև փոխհարաբերությունից: «Տնային տնտեսության եկամուտը» ոչ միայն ներառում է գումարը, այլ նաև բնեղենով կատարված փոխանցումները: Հետաքրքիր է նշել, որ արտագաղթածների տեսանկյունից՝ փոխանցումները դիտարկվում են որպես ծախսի պարբերական և ֆիքսված տեսակ: Դրանով է բացատրվում, թե ինչու որևէ հակասություն չկա վերը նշված տվյալների հետ այն շատ քիչ թվով արտագաղթածների մասով, որոնք կարող էին գումար խնայել:


Տնային տնտեսությունների հետազոտությունների միջոցով կարող ենք տեղեկանալ փոխանցումներ կատարող միգրանտների, ինչպես նաև այդ փոխանցումները ստացողների առանձնահատկությունների մասին: Դրանք իրենց հերթին կարող են օգնել գնահատելու այն ազդեցությունը, որը կարող է ունենալ այն անձանց վրա, որոնք ապրում են ուղարկող և ստացող երկրներում: Փոխանցումները գնահատելու համար՝ ամենահիմնական հարցն այն է, թե արդյոք անձը (տնային տնտեսությունը) ուղարկել կամ ստացել է գումար (կամ ապրանքներ) այն անձին կամ անձից, որն ապրում է արտերկրում, սովորաբար 12 ամսյա ժամանակահատվածում, ինչպես նաև ստացված գումարը: Լրացուցիչ հարցեր են հաճախ տրվում ուղարկելու հաճախականության, փոխանցումների կատարման եղանակների, ինչպես նաև գործարքների վերաբերյալ տեղեկատվության ու գումարի օգտագործման նպատակների մասին:

Փոխանցումները ներառում են ուղարկված կամ այլ անձանց տրված կանխիկ գումարը, ինչպես նաև դրամական փոխանցումների ու չեքերի և այլնի միջոցով կատարված վճարումները՝ կամ պաշտոնական կամ ոչ պաշտոնական ուղիներով (Շախտեր, 2008): «Բնեղենով» փոխանցումները ներառում են տարբեր իրեր, ինչպիսիք են՝ ապրանքները, նվիրատվությունները կամ այլ անձանց անունից կատարված վճարումները: Փոխանցումները միգրացիայի անբաժանելի մասն են կազմում և կայունություն ապահովող են ցանկացած տնտեսական անկման կամ բիզնես շրջափուլի մասով: Ֆինանսական այս աջակցությունն անհատ ստացողներին օգնում է միկրոմակարդակներում, ինչպես նաև կառավարություններին՝ մակրոմակարդակներում:

Տարբեր միգրացիոն հոսքերի կողմից արտերկրից ստացված փոխանցումների ընդհանուր նկարագիրը ցույց է տալիս փոխանցումների մասով տարբեր պատկերներ (տես ստորև՝ Գծապատկեր 48-ը): Ինչպես և ակնկալվում էր, ստացված փոխանցումները համամասնորեն ավելի բարձր են եղել ժամանակակից արտագաղթած տնային տնտեսությունների շրջանում, քանի որ արտագաղթածներ ունեցող տնային տնտեսությունների 78.5%-ը արտերկրից փոխանցումները ստացել է վերջին 12 ամսվա ընթացքում: Ներքին միգրանտներից չորսից մեկը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին մեկ տարում, վերադարձած միգրանտներից տասից չորսը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին 12 ամսվա ընթացքում, իսկ արտերկրում ծնված բնակիչներից երկուսից մեկը ստացել է փոխանցումներ արտերկրից վերջին 12 ամսվա ընթացքում:



Գծապատկեր 48. Վերջին 12 ամիսների ընթացքում արտերկրից ստացված գումարները՝ ըստ միգրացիոն հոսքերի (%)




(Այո Ոչ

Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ Ներգաղթածներ Ներքին միգրանտներ)

Ներկայիս արտագաղթածների կողմից «կատարված փոխանցումները

Երբ հարց է հնչել, թե արդյոք արտերկրում գտնվող տնային տնտեսության անդամները օգնում են տնային տնտեսությանը (կամ «-ում ապրող այլ անձանց), արդյունքները ցույց են տվել կախվածության հստակ կապի առկայություն: Ոչ միայն չորսից երեքը ստացել են փոխանցումները արտերկրից վերջին 12 ամսվա ընթացքում, այլ նաև հարցված տնային տնտեսությունների 47.7%-ը պարբերաբար ստացել է փոխանցումներ, 22.1%-ը ստացել է փոխանցումներ ժամանակ առ ժամանակ, իսկ 9.1%-ը արտերկրից գումար է ստացել հազվադեպ: Մոտ 15%-ը ի վիճակի չի եղել օգնել իր տնային տնտեսությանը, 4% դեպքերում, անհրաժեշտ չի եղել և 0.7% դեպքերում «-ում գտնվող տնային տնտեսությունն է ուղարկել գումար արտերկիր:

Գծապատկեր 49. Ներկայիս արտագաղթածների կողմից տնային տնտեսություններին ցուցաբերված ֆինանսական աջակցության հաճախականությունը



(Պարբերաբար, երբեմն, հազվադեպ, ոչ, դա հնարավոր չէ, ոչ՝ չի կարող, ոչ՝ անհրաժեշտություն չկա, ոչ, ցանկություն չկա, ոչ՝ տնային տնտեսության անդամներն են օգնում նրան, չի նշված)




Վերադարձած միգրանտների կողմից դեպի ՀՀ կատարվող փոխանցումները

Երբ հարց է ուղղվել ժամանակակից վերադարձած միգրանտներին այն մասին, թե արդյո՞ք իրենց օգնել են տնային տնտեսության անդամները արտերկրում գտնվելու ընթացքում, ապա արդյունքները ցույց են տվել կախվածության հստակ կապի առկայություն (տես ստորև՝ Գծապատկեր 50-ը): Վերադարձած միգրանտներից չորսից երկուսը ուղարկել են փոխանցումներ իրենց տնային տնտեսության անդամներին՝ արտերկրում գտնվելու ընթացքում: Հարցվածների 47.7%-ը դա արել է պարբերաբար, 13.1%-ը՝ ժամանակ առ ժամանակ, իսկ 4.4%-ը՝ հազվադեպ: Մոտ 15.9%-ը ի վիճակի չի եղել օգնել իր տնային տնտեսությանը, 11.4% դեպքերում՝ անհրաժեշտ չի եղել, իսկ 0.7% դեպքերում ՀՀ-ում գտնվող տնային տնտեսությունն է ուղարկել գումար արտերկիր:

Ներկա և նախկին արտագաղթածների միջև դրամական փոխանցումների կազմաձևերը համեմատելիս, պատկերը թվում է շատ հստակ կանոնակարգված: Ներկայումս, արտագաղթածները հակված են ավելի պարբերաբար գումարներ փոխանցել իրենց տնային տնտեսություններին (քանի որ տնտեսական պատճառները ՀՀ-ից մեկնելու հիմնական շարժառիթն են եղել, և դա բնական է թվում): Վերադարձած միգրանտների որոշակի համամասնության համար անհնար է եղել փոխանցումներ կատարել իրենց տնային տնտեսություններին (և կարող ենք ենթադրել, որ անձանց այդ մասի համար դա եղել է վերադառնալու հիմնական պատճառը):

Գծապատկեր 50. Արտագաղթածների կողմից՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ, տնային տնտեսությունների անդամներին ցուցաբերված ֆինանսական աջակցությունը



(Վերադարձած միգրանտներ Արտագաղթածներ

Կանոնավոր, երբեմն, հազվադեպ, ոչ՝ դա հնարավոր չէ, ոչ՝ չի կարող, ոչ՝ անհրաժեշտություն չկա, ոչ՝ ցանկություն չկա, ոչ՝ տնային տնտեսության անդամներն են օգնում նրան, չի նշված)




Արտերկրից ֆինանսական աջակցությունը փոխանցելու եղանակները

Տնային տնտեսության հետազոտության տվյալները կարող են ոչ միայն օգնել կանխիկով և բնեղենով կատարված փոխանցումները չափելու միջոցով փոխանցումների հոսքերի ծավալներն ու միտումները չափելու հարցում, այլ նաև փոխանցման եղանակների որոշման միջոցով, օրինակ՝ փոխանցումների որ տոկոսն է ուղարկվում կամ ստացվում ոչ բանկային կամ ոչ պաշտոնական ուղիներով:

Արտերկրում գտնվող ժամանակակից միգրանտները սովորաբար ֆինանսական փոխանցումներ են կատարել Հայաստանի Հանրապետություն բանկային փոխանցումների (82.8%), փոխանցման ծառայություններ մատուցողների (օրինակ՝ Վեսթերն Յունիոնը [Western Union]) միջոցով՝ (8.5%), սուրհանդակի միջոցով՝ (0.2%), նրանք գումարներն իրենց հետ են բերել՝ տուն այցելելիս (3.8%) կամ նրանք գումարն ուղարկել են եկողների միջոցով (4.5%):

Նախկին միգրանտները նույնպես շատ նման եղանակով են գործել: Տնային տնտեսություններին փոխանցումներն ուղարկելու նախընտրելի եղանակը բանկային ուղին է եղել (79.1%), փոխանցման ծառայություններ մատուցողները (Վեսթերն Յունիոնը [Western Union])՝ (7.3%), փոստով՝ (0.4%), սուրհանդակի միջոցով՝ (0.2%): Գումարի մի մասնաբաժինն էլ փոխանցվել է ընկերների կամ հարազատների միջոցով, երբ նրանք այցելել են իրենց երկիր (5.3%), կամ հենց միգրանտների միջոցով, երբ նրանք տուն են այցելել (7.3%) (տես ստորև՝ Գծապատկեր 52-ը): ԱՄԿ-ի 2007 թվականի հետազոտությունում նշված փոխանցումների կառուցվածքը տարբերվում է սույն հետազոտությունում նշված կառուցվածքից՝ մասնավորապես, բանկային փոխանցումներ (40.0%), տուն ուղևորվող ընկերների/հարազատների միջոցով (27.5%) և դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ (18.3%) (ԱՄԿ 2009):

Գծապատկեր 51. Արտերկրից ֆինանսական փոխանցումներ կատարելու եղանակները, արտագաղթածներ՝ վերադարձած միգրանտների հետ համեմատությամբ (%)



(Ներկայիս արտագաղթածներ Վերադարձած միգրանտներ

Բանկային փոխանցումներ, դրամական փոխանցումների համակարգ, փոստ, սուրհանդակ, անձամբ է բերվել, փոխադրող)




«-ում արտերկրից փոխանցումներ ստացող տնային տնտեսությունները

Միգրանտ չհանդիսացող անձինք կարող են տեղեկատվություն տրամադրել արտերկրում բնակվողներից փոխանցումների ստացման մասին: Այս հետազոտության համաձայն՝ միգրանտ ունեցող տնային տնտեսություններից չորսից մեկը փոխանցումներ է ստացել իրենց միգրանտ գործընկերներից: Դա համապատասխանում է ներքին միգրանտների գրեթե 25.5%-ին: Դա մի փոքր քիչ է 28% կազմող պետական միջին թվից՝ դիտարկելով հարցվածների ընդհանուր թիվը:

Ֆինանսական փոխանցումները, որոնք ստացվում են Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ քառորդի կողմից, դարձել են շատ տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու կարևոր եղանակ:

Գծապատկեր 52. Տնային տնտեսություններում արտերկրից ստացվող փոխանցումները (ըստ մարզերի) (%)



(Երևան, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ)


Փոխանցումները լայնորեն բաշխված չեն Հայաստանի տարածքով մեկ (տես վերևում՝ Գծապատկեր 52-ը): Մեծ անհամապատասխանություն է առկա շրջանների միջև՝ Տավուշի մարզում տասը տնային տնտեսություններից չորսը արտերկրից փոխանցումներ է ստացել (40,7%), Երևանում՝ տասից միայն երկուսն է (19,6%) արտերկրից փոխանցումներ ստացել, իսկ Արագածոտնում տնային տնտեսությունների միայն 16,7%-ն է փոխանցումներ ստացել արտերկրից:

Արտագաղթածների և (կամ) վերադարձած միգրանտների տարածքային բաշխման համեմատությունները ցույց են տալիս մեկ այլ անհամաչափություն փոխանցումների ստացման մասով: Այնպիսի վայրերում ապրող տնային տնտեսությունները, ինչպիսին՝ Շիրակն է, անհամաչափ բացասական ցուցանիշով ստացողներ են՝ ի տարբերություն արտագաղթածների, և հակառակը՝ տնային տնտեսությունները այն վայրերում, ինչպիսին Երևանն է, դրական ցուցանիշով ստացողներ են: Դա կարող է կապված լինել համընկնող միգրացիոն հոսքերի հետ (օրինակ՝ ներքին միգրացիոն հոսքերը և միջազգային միգ-



րացիոն հոսքերը), տարբեր շրջաններից միգրացիոն հոսքերի տարբեր ժամանակային սահմանների հետ և տարբեր նպատակակետ երկրների ու այդ նպատակակետ երկրների միջև կապին կամ տնտեսական տարբերությանը այդ նպատակակետ երկրներում:

Գծապատկեր 53. Արտագաղթի, վերադարձի միգրացիայի հետ կապ ունեցող և փոխանցում ստացող տնային տնտեսությունների տարածքային բաշխումը (%)



(Ստացված փոխանցումներ Վերադարձի միգրացիա Արտագաղթածներ

Երևան, Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ)

Միգրացիոն փոխանցումների տնտեսական ազդեցությունը

Միգրացիոն փոխանցումների տնտեսական ազդեցությունը կարելի է գնահատել այն անձանց թվով, որոնց հույսը արտերկրից ստացվող գումարներն են: Հետազոտությունում տարբեր հարցեր օգնել են գնահատելու այդ ազդեցությունը, սակայն տոկոսները (կամ փոխանցումներից կախված անձանց բացարձակ թիվը) ցույց են տալիս փոխանցումների կախվածության կապի մասով շատ էական պատկեր:

Աղյուսակ 55. Տնային տնտեսության կեցության միջոցների հիմնական ընթացիկ աղբյուրները (%)

Տնային տնտեսության կեցության միջոցների հիմնական աղբյուրները	%	Թիվը՝ կշռված
Արտերկրում մշտապես բնակվող տնային տնտեսությունների եկամուտները	1.9	61,063
Արտերկրում տնային տնտեսությունների ժամանակավոր աշխատանքը	11.2	353,869
Աջակցություն արտերկրում գտնվող անձանցից	1.6	49,497
ՀՀ-ում մշտական աշխատանքը	53.4	1,693,534
ՀՀ-ում ոչ պարբերական եկամուտները	4.3	136,158
Թոշակ (Նպաստ)	14.7	466,299
ՀՀ-ում ապրողներից ստացվող աջակցություն	0.7	23,008
Անձնական բիզնես	10.9	346,637
Այլ աղբյուրներ	1.3	43,738



Հարցվածների ընդհանուր թվի 1.9%-ի համար (61.063 անձ կշռված ընտրանքում), կեցության հիմնական միջոցը արտերկրում մշտապես բնակվող՝ տնային տնտեսության անդամների եկամուտն է եղել: Այդ փոխանցումները Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 127.000 մարդու (կամ 4%) կեցության շատ կարևոր աղբյուրն է եղել:


Հարցվածների ընդհանուր թվի 11.2%-ի համար (353.869 անձ կշռված ընտրանքում), կեցության հիմնական միջոցը արտերկրում ժամանակավորապես բնակվող՝ տնային տնտեսության անդամների եկամուտն է եղել: Այդ փոխանցումները Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 500.000 մարդու (կամ 17%) կեցության շատ կարևոր աղբյուրն է եղել:

Հարցվածների ընդհանուր թվի 14.7%-ը նշել է, որ փոխանցումները իրենց տնային տնտեսության կեցության հիմնական աղբյուրն է եղել, իսկ 28%-ի համար՝ կեցության շատ կարևոր աղբյուր, այսինքն՝ արտերկրից փոխանցումները Հայաստանի Հանրապետությունում ավելի քան 870.000 հազար մարդու համար եկամտի կարևոր աղբյուր է եղել:

«-ից օտարերկրյա պետություններում ապրող տնային տնտեսություններին կատարվող փոխանցումները

Միգրանտների բոլոր խմբերին պատկանող անձանց զգալի մեծամասնությունը վերջին 12 ամիսների ընթացքում արտասահման դրամական միջոցներ կամ ապրանքներ չի ուղարկել:

Գծապատկեր 54. Վերջին 12 ամիսների ընթացքում արտերկիր ուղարկված գումարը կամ ապրանքները՝ ըստ խմբերի (%)




(Վերադարձած միգրանտներ, արտագաղթածներ, ներգաղթածներ, ներքին միգրանտներ)

Երբ հարց է հնչել «քանի՞ անգամ եք գումար ուղարկել վերջին 12 ամիսների ընթացքում», հարցվածների (վերադարձած միգրանտների) 68%-ը, արտագաղթածների 63%-ը և ներքին միգրանտների 35%-ն ու (ներգաղթածների) 25%-ը գումար է ուղարկել միայն մեկ անգամ, ներգաղթածների 47%-ը, ներքին միգրանտների 34%-ը, վերադարձած միգրանտների 31%-ը և արտագաղթածների 22%-ը արտերկիր գումար է ուղարկել տնային տնտեսության անդամներին երկու անգամ: Ներգաղթածների 26%-ը, ներքին միգրանտների 25%-ը և ներգաղթածների 13%-ը գումար է ուղարկել երեք անգամ:



Գծապատկեր 55. Տնային տնտեսություններին ցուցաբերված ֆինանսական աջակցության թվաքանակը (%)




(Վերադարձած միգրանտներ, Արտագաղթածներ, Ներգաղթածներ, Ներքին միգրանտներ)

Արտերկրից ստացված փոխանցումների օգտագործումը

Ավելի քիչ հայտնի, սակայն հավանաբար առավել էական է մարդկային կապիտալի մակարդակների վրա միգրացիայի ազդեցությունը վերաբերում է այն հարցին, թե ինչպես են օգտագործվում փոխանցումները: Մարդկանց կողմից փոխանցումների օգտագործման եղանակները ավանդաբար քննադատության են ենթարկվել զարգացման հարցերով տնտեսագետների կողմից, քանի որ այդ գումարները սովորաբար օգտագործվում են սպառումը ֆինանսավորելու համար՝ մի գործելակերպ, որը զարգացման առումներով արդյունավետ չի համարվում: Այս համատեքստում, կրթությունը դիտարկվել է որպես արդյունավետ ծախս, սակայն դա հազվադեպ է նշվել միգրանտների ընտանիքների կողմից փոխանցումների օգտագործման շարքում:

Ինչպես և ակնկալվում էր, փոխանցումների մեծ մասը օգտագործվել է սպառման ուղղությամբ և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ու ծառայությունների համար (օրինակ՝ բժշկական ծառայություններ): Որոշակի միգրացիոն խմբերի միջև տարբերությունները էական չեն եղել (տես ստորև՝ Գծապատկեր 56-ը): Միգրանտները նաև ժամանակ առ ժամանակ գումար են ուղարկել կոնկրետ նպատակներով՝ այնպիսի ծախսեր հոգալու համար, ինչպիսիք են՝ անունությունը, բժշկական ծառայությունների համար վճարումը և այլն:

Գծապատկեր 56. Արտերկրից ստացվող գումարը հնարավորություն է տալիս՝




(Վերադարձած միգրանտներ, Արտագաղթածներ, Ներգաղթածներ, Ներքին միգրանտներ)



Գնելու սնունդ կամ հագուստ, գնելու տնային այլ պարագաներ, վճարելու տնային տնտեսության մասնագիտական կրթության համար, վճարելու բժշկական ծառայությունների համար, վճարելու պարտքերը, վճարելու ընտանիքի արարողությունների համար, վճարելու արտերկրում ապրելու համար, վճարելու հանգստի ու ... սպառման համար, ձեռք բերելու հողատարածք, առանձնատուն, բնակարան, վարձակալել հողատարածք, բարեկարգելու հողատարածքը, գնելու սարքավորումներ այգու համար, ներդրում կատարելու ոչ գյուղատնտեսական բիզնեսում, ֆինանսական ներդրումների համար, վճարելու բնակարանի վերանորոգման համար, կատարելու խնայողություններ)

Հարցվածների միայն շատ քիչ մասն է ապրանքներ ստացել արտերկրից: Տարբերությունները էական չեն եղել՝ համեմատելով միգրանտների խմբերը ներքին միգրանտների խմբի հետ՝ որպես ստացողների նվազ համամասնություն (3,7%), իսկ վերադարձած միգրանտների շրջանում մենք հայտնաբերել ենք արտերկրից ապրանքներ ստացող տնային տնտեսությունների ամենամեծ համամասնությունը:

Գծապատկեր 57. Միգրանտների խմբի կողմից արտերկրից ստացված ապրանքները (%)



(Այո Ոչ

Վերադարձած միգրանտներ, Արտագաղթածներ, Ներգաղթածներ Ներքին միգրանտներ)



Եզրակացություններ և առաջարկություններ

Քաղաքականություններն ու միջամտությունները գնահատելու համար ցուցանիշների մասով աճող պահանջարկը նշանակում է, որ էական անհրաժեշտություն է առաջանում հետազոտության արդյունքները հաղորդելու տնային տնտեսությունների հետազոտության վերջնական օգտագործողներին, քաղաքականություն մշակողներին և (կամ) որոշումներ կայացնողներին: Այս բաժնում կդիտարկվեն հետազոտության արդյունքների վրա հիմնված առանցքային եզրակացություններն ու քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները:

Միգրացիան մեծապես ընկալվում է որպես ժողովրդագրական, տնտեսական ու սոցիալական գործոն, որը նպաստում է ժողովրդագրական այնպիսի պարամետրերում փոփոխություններին, ինչպիսիք են՝ բնակչության չափը, աճը, կազմը և աշխարհագրական բաշխվածությունը, ինչպես նաև տնտեսական զարգացման աճին կամ անկմանը և սոցիալական վերափոխմանը: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում միգրացիան, լինի դաներքին թե միջազգային, ի հայտ է եկել որպես աշխարհի բոլոր տարածաշրջաններում զարգացման ու սոցիալական վերափոխման հիմնական գործոն (Castles, 2000; IOM, 2005): Դեպի որևէ երկիր կամ այդ երկրից միգրացիոն ծավալները, տեսակներն ու հոսքերը (ուղղությունները), երկրի սահմաններում շրջաններն ու ենթաշրջանները, ինչպես նաև միգրացիայի պատճառներն ու հետևանքները փոխվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունից, սոցիալական ու քաղաքական գործընթացներից առաջացած վերափոխումներով (Skeldon, 1997, 2003; Hass և այլք, 2010; Castles, 2000):

Թե՛ ներքին, և թե՛ արտաքին միգրացիան բազմակողմ ազդեցություն ունեն սոցիալական իրականության (մեր կյանքի) ժողովրդագրական ու սոցիալ-տնտեսական տարածաչափի վրա: Որպես ժողովրդագրական բաղադրիչ՝ միգրացիան ազդեցություն է ունենում կոնկրետ բնակչության չափի, աճի, բաշխվածության և կազմի վրա: Միջազգային միգրացիան (ինչպես նաև ներքին միգրացիան) կարող է հանգեցնել տնտեսական աճի և զարգացման առաջխաղացման, սակայն այն կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ տարբեր տարածքների տնտեսության ու զարգացման վրա: Ներքին միգրացիայի պայմաններում, օրինակ, հաղթել-հաղթել իրավիճակ չի լինում: Եթե որևէ շրջան բնակչություն է կորցնում մեկ այլ շրջանի օգտին, ապա ազդեցությունը կլինի չհավասարակշռված, իսկ հետևանքները՝ անկանխատեսելի: Միգրացիոն տեղաշարժերը նույնպես ազդեցություն են ունենում ոչ միայն հենց միգրանտների, այլ նաև նրանց տնային տնտեսությունների և ավելի լայն իմաստով՝ ամբողջ բնակչության սոցիալական փոփոխությունների, սոցիալական հարմարվելիության և սոցիալական ինտեգրման վրա:

Այս զեկույցում ցույց է տրված, թե ինչպես միգրացիան, լինի դա ներքին, թե՛ արտաքին, կարող է կարևոր լինել ոչ միայն որպես ժողովրդագրական գործընթաց, այլ նաև որպես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համար գործիքային գործոն: Միգրացիայի ծավալների, ձևի և հիմնական բնորոշ գծերի վերլուծությունը օգտակար է քաղաքականություն մշակողների և պլանավորողների համար՝ մոտ ապագայում երկրում սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման վերաբերյալ ավելի լավ քաղաքականություն ձևակերպելու համար: Քաջ հայտնի է, որ կոնկրետ երկրում միգ-



րացիայի ու զարգացման միջև շատ ուժեղ կապ է առկա (ինչպես օրինակ՝ կրթության, բնակարանային ապահովման, էլեկտրականության, աշխատանքային շուկայի և այլնի ոլորտում), իսկ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ այս և նախկին հետազոտությունների միջոցով հավաքված փաստերից կարելի է ենթադրել, որ միգրացիան (և փոխանցումները) էական նշանակություն ունեն երկրում տնային տնտեսությունների մեծ մասի համար:

Միգրացիայի վերաբերյալ վստահելի վիճակագրությունը կենսական նշանակությունը ունի քաղաքականություն մշակողների համար՝ արդյունավետ որոշումներ կայացնելու ու միգրացիայի բացասական հետևանքները մեղմելու համար: Իրականում, այս տեսակի տեղեկատվությունը ոչ միայն անհրաժեշտ է քաղաքականություն մշակողների, այլ նաև միջազգային կազմակերպությունների, առանձին երկրների վիճակագրական գործակալությունների ու հետազոտություն կատարողների համար: Որպես «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» ծրագրի մաս իրականացվող «2007-2013. ՀՀ բնակչության միգրացիայի վերաբերյալ համալիր հետազոտությունը» Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի ու փոխանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության կարևոր աղբյուր է: Տվյալները պարունակում են ժողովրդագրական, տնտեսական, միգրացիոն ու փոխանցումների հետ կապված մի շարք փոփոխականներ, որոնք կենսական օժանդակություն են հետազոտություն ու քաղաքականություն մշակող հանրության համար:

Սույն հետազոտության հիմնական վերապահումների շարքում կարելի է նշել այն փաստը, որ արտագաղթողներին վերաբերող տեղեկատվության մեծ մասը չի հավաքվել հենց արտագաղթողներից, այլ՝ նվազ հուսալի անձանցից (բացակա անդամների փոխարեն հարցված անձինք): Անհրաժեշտություն կա նաև դիտարկելու չպատասխանելու շատ բարձր դեպքերը, քանի որ այն դժվարացնում է ճիշտ գնահատման գործընթացը, ինչպես նաև այն իրավիճակները, երբ արտագաղթում է ամբողջ տնային տնտեսությունը, և այլևս մարդ չի մնում անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու համար: Նմանապես, շատ մեծ թիվ են կազմել հարցված այն տնային տնտեսությունները, որոնք որևէ առնչություն չեն ունեցել միգրացիայի հետ: Հետևաբար, կոնկրետ միգրանտների մասով ընտրանքի ընդգրկվածությունն օպտիմալ չէ, սակայն մեզ կարող է որոշակի պատկեր տալ 2007 թվականից հետո ՀՀ-ում միգրացիայի ու փոխանցումների վերջին ձևերի (որը նախկինում գոյություն չի ունեցել) մասին:

Սույն հետազոտության առավելություններից մեկն այն է, որ այն կարող է Հայաստանի Հանրապետությունից, դեպի Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետության սահմաններում ժամանակակից միգրացիայի վերաբերյալ քաղաքականությունների հետ կապված առկա տարբերակների վերաբերյալ հստակ գաղափար տալ: Սույն հետազոտությամբ նաև նախանշվել են *տվյալների հետ կապված մի շարք հարցեր և մի շարք թեմաներ, որոնք հետագա ուսումնասիրության են արժանի*: Հստակ է, որ միջազգային միգրացիոն արտահոսքերի ուսումնասիրության համար պակասում են համապատասխան տվյալների շարքեր: Ապագայում իրականացվելիք հետազոտությունն առավել բարելավված կլինի, եթե դրանով հնարավոր լինի առավել լավ բնորոշել արտագաղթի հոսքերն ու թվաքանակները: Օրինակ, շատ օգտակար կլինի ունենալ կոնկրետ նպատակակետ երկրներից հայ ներգաղթողների վերաբերյալ տվյալների բազաներ՝ ըստ այդ միգրանտների առանձնահատկությունների (օրինակ՝ ժամանման



տարի, կրթություն, սեռ, տարիք, ՀՀ-ում ծագման մարզը և այլն): Ժամանակին և համեմատելի վիճակագրական տվյալներ տրամադրելու համար՝ պետք է սահմանել արտագաղթի, ներգաղթի, վերադարձի ու ներքին միգրացիայի գործընթացների շարունակական մոնիթորինգ, իսկ հետազոտությունները պետք է իրականացվեն պարբերաբար: Բացի դրանից՝ ավելի լավ ու կենտրոնացած հետազոտության ընտրանքը հնարավորություն կտա հետազոտություն իրականացնողներին համեմատելու և մոնիթորինգի ենթարկելու տարբեր երկրներում իրականացվող ինտեգրման տարբեր փուլերն ու միգրացիոն գործընթացները, որը շատ կարևոր է, քանի որ քաղաքականության վերաբերյալ առաջարկությունները կարող են տարբերվել ըստ համատեքստի: Պետք է ի նկատի ունենալ, որ ցանկացած կոնկրետ տվյալների աղբյուր ոչ միայն բարենպաստ պայման է ստեղծում, այլ նաև իրենից ներկայացնում է որոշակի սահմանափակումներ: Ուստի, առկա չէ տվյալների որևէ եզակի աղբյուր, որով կապահովվի անհրաժեշտ տեղեկատվության քանակն ու որակը: Հետևաբար, բարելավմանն ուղղված աշխատանքներ պետք է տարվեն՝ վարչական աղբյուրներից տվյալներ պարունակող տնային տնտեսությունների հետազոտություններից տվյալներ միավորելու նպատակով: Միգրացիայի հարցերով մշտական դիտորդական կետեր (միգրացիայի և միգրանտների, Հայաստանի Հանրապետությունում նրանց ավելացման ու ազդեցությունների վերաբերյալ վստահելի գիտելիքներ հավաքելու ու տարածելու նպատակով) կարող են նախատեսվել ՀՀ իշխանությունների կողմից:

2001-ից 2011 թվականներն ընկած միջմարդահամարի ժամանակահատվածում, բնակվող բնակչության թիվն անկում է ապրել՝ 3.2 միլիոնից հասնելով 3.0 միլիոնի՝ գումարած 126.000 անձ բնական բալանսը: Մինչդեռ, զուտ միգրացիոն բալանսը ցույց է տալիս, որ ավելի քիչ՝ 320.000 մարդ է առկա, որը համապատասխանում է 2001 թվականի բնակչության 10%-ին: Սույն հետազոտությամբ հաստատվում է 2007-2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում տարվա կտրվածքով մոտ 35 հազար մարդու արտահոսքը, որը նման է 2001-2007 թվականների ընթացքում արձանագրված արտագաղթին: Հիմնական արտահոսքերն ուղղված էին Ռուսաստանի Դաշնություն, Եվրոպական միություն և ԱՄՆ: Արտագաղթի հիմնական վանող գործոնը ժողովրդագրական չէ, այլ տնտեսական ու զբաղվածության համընդհանուր գործոնները: Ուստի, երկրի տնտեսությունում միայն կառուցվածքային փոփոխությունները ազդեցություն կունենան միգրացիոն միտումների վրա: Հայաստանի Հանրապետությունում ներքին ու միջազգային միգրացիայի ներկայիս կարգավիճակը օգուտ կքաղի բնակչության պատշաճ կանխատեսումից ու աշխատուժի կանխատեսումից գալիք ժամանակահատվածների համար՝ բարելավելով քաղաքականության տարբերակները: Միգրացիայի վերաբերյալ քաղաքականությունները չպետք է մեկնարկեն այն մոտեցումից, որ միգրացիան հազվագյուտ դեպք է, հյուսիս-հարավ երևույթ կամ մեկանգամյա իրադարձություն:

Ինչպես ցույց է տվել սույն հետազոտությունը, անհրաժեշտ է, որ քաղաքականությունները հիմնված լինեն միգրացիայի, այդ թվում՝ ժամանակավոր, շրջանառու և սեզոնային միգրացիայի բազմակողմանի բնույթի ընկալման վրա: Առկա են ժամանակավոր միգրացիոն սխեմաներ, որոնք գործում են, և սխեմաներ, որոնք չենք գործում: Գոյություն ունեն ֆորմալ ժամանակավոր միգրացիոն սխեմաներ և, որ ամենաբնորոշն է ՀՀ-ի համար, ոչ ֆորմալ ժամանակավոր միգրացիոն սխեմաներ, որոնք իշխանությունների կողմից չեն գնահատվում: Կասկած չի հարուցում այն փաստը, որ որոշ երկրներում, ինչպիսիք



են՝ Ռուսաստանի Դաշնությունը կամ Եվրոպական միությունը, առկա է աշխատողների պահանջարկ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից աշխատողների պահանջարկ, և այս պահանջարկն ստանում է թե՛ մշտական, և թե՛ ժամանակավոր միգրացիայի ձև: Անհրաժեշտ է ուսումնասիրել փաստերը, քաղել դասերը և հասկանալ, թե ինչ կարելի է անել, որպեսզի երկարաժամկետ միգրացիայի, ժամանակավոր միգրացիայի, շրջանառու միգրացիայի և վերադարձի սխեմաները արդյունավետ գործեն և զարգացմանն ուղղված օգուտներ բերեն բոլոր ներգրավվածների համար:

Հետազոտության արդյունքներով հաստատվում են Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների մասին հետազոտությունների նախկին արդյունքները և հնարավորություն են տալիս բնորոշելու վերջերս տեղի ունեցած միգրացիոն հոսքերը: Հայաստանի քաղաքացիների մեծածավալ արտահոսք է նկատվում տարբեր նպատակակետ երկրներ, չնայած որ Ռուսաստանի Դաշնությունը համարվում է գերակշռող նպատակակետը տասը միգրանտից իննի դեպքում: Ի տարբերություն դրան՝ Եվրոպական միության երկրներին բաժին է ընկնում միգրացիոն արտահոսքի 5%-ից պակաս: Առկա փաստերը վկայում են, որ Հայաստանը երկու տարբեր միգրացիոն համակարգերի խաչմերուկում է՝ Եվրոպական միգրացիոն համակարգի ու Եվրասիական միգրացիոն համակարգի, այսինքն՝ պատկանում է երկուսին էլ, սակայն ներգրավման տարբեր չափերով (**Kritz and Zlotnik, 1992**):

Մեր ընկալմամբ՝ միգրանտներին այս երկու ընդունող նպատակակետերը (Ռուսաստանի Դաշնությունը և Եվրոպական միությունը) պետք է լինեն հետևյալին վերաբերող միգրացիոն համաձայնագրերի հիմնական նպատակակետը՝ վիզայի վերաբերյալ համաձայնագիր, ժամանակավոր, կրկնվող կամ շրջանառու միգրացիա, սոցիալական ապահովություն կամ կենսաթոշակներ,²⁴ դպրոցով ապահովում և կրթություն, փոխանցումներ և հարկում, վերադարձ, բարձր ունակություններով անձանց միգրացիա, ընտանիքի վերամիավորում, վիզայի տրամադրման դյուրացում և հետընդունում: Դա կարող է համագործակցության մասով երկկողմ համաձայնագրերի և (կամ) ծրագրերի տեսք ստանալ: Այդ երկրների հետ սերտորեն աշխատելով՝ այդ նախաձեռնությունները կարող են դյուրացնել օրինական միգրացիան և հավասարակշռել Հայաստանի Հանրապետությունում որակավորումների ու ունակությունների առաջարկը նպատակակետ երկրների աշխատանքային շուկայում առկա զբաղվածության հնարավորությունների հետ:

Ավելին, ՀՀ-ից անկանոն միգրացիայի համամասնության նվազեցման եղանակներից մեկը կարող է լինել օրինական միգրացիայի համար առավել թափանցիկ ու արդյունավետ ուղիներ բացելը: Միգրացիան, հատկապես օրինական միգրացիան, կարող է մի շարք օգուտներ բերել նպատակակետ երկրներին, միգրանտներին ու Հայաստանի Հանրապետությանը: Այդուհանդերձ, մինչդեռ օրինական միգրացիայի համար ուղիներ բացելը կարող է խոչընդոտել թրաֆիքինգով ու մաքսանենգությամբ զբաղվողներին, այն չի նվազեցնի երկրից լատենտային միգրացիայի հավանականությունը: Միգրացիոն գործընթացները դեռ անհրաժեշտ է ղեկավարել, իսկ անօրինական միգրացիայի հետ կապված խնդիրը պետք է լուծել հենց սկզբնականից:

24 Հայաստանը հանդիսանում է «ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների կենսաթոշակային ապահովման բնագավառում իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրի (ուժի մեջ է 1993 թվականից) կողմ պետություն:



Նպատակակետ երկրներում զբաղվածության հնարավորություններին, զբաղվածության պայմաններին, բնակարանով ու դպրոցով ապահովմանը վերաբերող տեղեկատվական կարիքներին արձագանքելու համար՝ առաջարկում ենք հիմնել Ծագման երկրում ներգաղթողների համար աջակցման կենտրոն: Դրա նպատակը կլինի՝ Հայաստանի Հանրապետությունում պոտենցիալ միգրանտներին (ըստ սույն հետազոտության՝ 200 հազար հնարավոր միգրանտներ) աջակցության ու տեղեկատվության տրամադրում՝ ձգտելով, անհատականացված ծառայությունների միջոցով, անհատներին տրամադրել օգտակար ու թարմացված տեղեկատվություն, ապահովել միջոցներ օրինական ներգաղթի համար և անել անհրաժեշտ շեշտադրումներ՝ դեպի նպատակակետ երկրներ ընդունումը դյուրացնելու համար: Ծագման երկրում ներգաղթողների համար աջակցման կենտրոնը կարող է գործել որպես միացնող օղակ ծագման ու նպատակակետ երկրների միջև՝ օժանդակելով, ուղղակիորեն ու գործնականորեն, այդ երկրներում ներգաղթողների ինտեգրմանը:

Այս առումով արժե հիշատակել միգրացիոն ռեսուրս կենտրոնները (ՄՌԿ-ներ), որոնք գործում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքում: Միգրացիոն ռեսուրս կենտրոնները տեղեկացնում, ուղղորդում և վերապատրաստում են աշխատանքային միգրանտներին՝ նրանց նախապատրաստելով արտասահմանում աշխատելու և մնալու համար, և վերադարձից հետո վերաինտեգրվելու համար: ՄՌԿ-երը տրամադրում են տեղեկատվություն նպատակակետ երկրների և նրանց միգրացիոն և աշխատանքային օրենսդրության, մեկնելու և արտասահմանում բնակվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի և օրինական միգրացիայի հնարավորությունների ու անկանոն միգրացիայի վտանգների վերաբերյալ: Տեղակայված լինելով զբաղվածության կենտրոններում, ՄՌԿ-երը նաև տրամադրում են տեղեկություններ թափուր աշխատատեղերի վերաբերյալ Հայաստանում և այն օտարերկրյա պետություններում, որոնց հետ ՀՀ ունի երկկողմ / բազմակողմ աշխատանքային համաձայնագրեր: Առաջին ՄՌԿ-ն Հայաստանում հիմնադրվել է 2006 թվականին ՄՄԿ-ի կողմից և փոխանցվել է ՀՀ ԱՍՀՆ-ի Զբաղվածության պետական գործակալությանը 2010 թվականին: Հետագայում ՄՄԿ-ի ՄՌԿ մոդելով Զբաղվածության պետական գործակալության երկու այլ գրասենյակներում ստեղծվեցին ՄՌԿ-եր ԵՄ կողմից ֆինանսավորվող ԱՄԿ կողմից իրականացվող ծրագրի աջակցությամբ, և չորս այլ գրասենյակներում ԵՄ կողմից ֆինանսավորվող Մարդը կարիքի մեջ հասարակական կազմակերպության ծրագրի աջակցությամբ:

Եթե ուղեկցվող միգրացիայի կոնկրետ դեպք է առկա, ապա այն իրագործելու հստակ եղանակը կախված է ՀՀ Կառավարությունից և Հայաստանի մուս հաստատություններից՝ նախանշելով միգրացիոն «թեժ կետերը» և որոշելով, թե արդյո՞ք նպատակահարմար է հասկանալ արտերկրում հայկական մեծ սփյուռք ունենալու առավելությունները (բայց նաև սահմանափակումները): Իրականում, ի հավելումն թույլ տնտեսական հանգամանքների այդ վերը նշված վանող գործոնին և հստակ կերպով ենթաչափված աշխատանքային շուկային՝ Հայաստանում բնիկ բնակչության կարիքների հետ համեմատությամբ, մեծածավալ սփյուռքի առկայությունը նույնպես դիտարկվում է որպես վանող գործոն՝ դրդելով Հայաստանում գտնվող այլ անձանց հնարավորություններ փնտրել ու աջակցություն գտնել Հայաստանի սահմաններից դուրս առկա ընկերների ու հարազատների խիտ ցանցից: Ուղարկող երկրի տեսանկյունից՝ միգրացիան նվազ բարդ



գործընթաց դարձնելու նպատակով, միգրանտին ցուցաբերվող աջակցության համար պահանջվում է հետևյալի համակցությունը՝ ՀՀ-ում և արտերկրում աշխատանքային շուկայի վերաբերյալ տեղեկատվության ավելի շատ հասանելիություն, ծառայություններից, բնակարանային պայմաններից, մնունդից և այլնից օգտվելու հնարավորություններ տվող, ինչպես նաև արտերկրում գտնվելու ընթացքում ահաբեկման հավանականությունը նվազեցնող մեխանիզմներ, ՀՀ-ում և արտերկրում անձնական ու բարեկեցության ապահովագրում, ինչպես նաև ՀՀ-ում ու արտերկրում միգրանտ ընտանիքների համար բարելավված կրթական հարմարություններ:

Մյուս կողմից, եթե Հայաստանի Հանրապետությունը ցանկանում է օգուտ քաղել իր միգրանտների հարատև վերադարձից, ապա հստակ է, որ այն պետք է որդեգրի քաղաքականություն՝ առավել արդյունավետ կառավարում, նվազ բյուրոկրատական քաջքշուկներ և տնտեսական աճ, որոնք միգրանտների մոտ վերադառնալու ցանկություն կառաջացնեն, ինչպես նաև ապահովել, որպեսզի վերադարձած միգրանտների մոտ այնպիսի զգացում լինի, որ իրենք ու իրենց երկիրը շարժվում են դեպի ավելի պայծառ ապագա: Վերադարձի միգրացիայի վերաբերյալ տվյալներում առկա երկընտրանքը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝ միգրանտը՝ սովորաբար աշխատող միգրանտը, որոշում է մեկնել իր երկրից, որովհետև մեկ այլ տեղ նրան առաջարկում են ավելի լավ պայմաններ (օրինակ՝ եկամուտ, կենսամակարդակ և այլն): Որոշ ժամանակ անց միգրանտը որոշում է վերադառնալ իր հայրենի երկիր, չնայած որ այդ նույն պայմանները, որոնք վանող գործոն են հանդիսացել նրա միգրացիայի համար, դեռ ակնհայտորեն առկա են այդ առաջին վայրում: Ինչն է ստիպում նրան վերադառնալ: Borjas և Bratsberg (1996) նշում են, որ միգրանտը կարող է վերադառնալ հետևյալ պատճառներով՝ ձախողում (ցածր աշխատավարձեր կամ գործազրկություն) կամ հաջողություն: Երկու պատճառներն էլ անկասկած առկա են դեպի Հայաստանի Հանրապետություն իրականացվող վերադարձի միգրացիայում: Այնուամենայնիվ, կարելի է դիտարկել նաև հետազոտված տնային տնտեսությունների շրջանում բովանդակային շրջանառու, կրկնվող կամ ժամանակավոր միգրացիայի ցուցանիշներին վերաբերող երրորդ հնարավորությունը: Այս երրորդ հնարավորության սահմանման համար մեզ անհրաժեշտ է տարբերակում մտցնել վերադարձի միգրացիայի երկու այլընտրանքային շարժառիթների միջև՝ շրջափոխվում գտնվող միգրանտների կողմից վերադարձի վերաբերյալ որոշումներն ու վերադարձի վերաբերյալ այսպես կոչված «թիրախային վաստակողների» կողմից որոշումները: Վերադարձող միգրանտների առաջին կատեգորիան դասական բնույթ է կրում՝ աշխատանքային միգրացիայի կարիերայի փուլից հետո միգրանտները որոշում են կայացնում իրենց ծագման երկիր մշտապես վերադառնալու վերաբերյալ: Երկրորդ տեսակի համար անհրաժեշտ է խրթին բացատրություն: Հայաստանի Հանրապետություն վերադարձի միգրացիայի դեպքում, մեր կարծիքով միգրանտների վերադարձի վարքագծի տարբեր հայեցակետերը հասկանալու համար առանցքային նշանակություն ունի մշտական ու ժամանակավոր միգրացիայի տարբերակումը: Չնայած որ տվյալները չեն բացահայտում մեզ անհրաժեշտ բոլոր փաստերը, այնուամենայնիվ, մեր հիմնական վարկածն այն է, որ արտերկրում ժամանակավոր հիմունքներով գտնվելու հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում հետագա օգտագործման համար միջոցների կուտակումն է՝ կամ սպառման կամ ներդրման նպատակով, և որ միգրացիոն ծրագրի տևողությունը կախված է կուտակված միջոցների առաջարկվող օգտագործումից:



Նպատակակետ երկրների տեսակը, միգրացիայի քաղաքական տնտեսությունը, ինչպես նաև թե՛ ծագման, և թե՛ հյուրընկալող երկրի տնտեսությունների համատեքստային զարգացումը կապահովեն ավելի շատ վերադարձի փուլեր կամ արտերկրում գտնվելու ավելի երկար ժամանակահատվածի փուլեր: Ժամանակավոր միգրացիան կարող է միգրանտներին հնարավորություն տալ ձեռք բերելու նոր հմտություններ և, շատ դեպքերում, կարող է կարևոր դեր խաղալ միգրանտների, ինչպես նաև հյուրընկալող հասարակությունների շրջանում նոր գաղափարների և գործողություններ իրագործելու եղանակների առաջացման մասով, որոնց մի մասը կարելի է օգտակար կերպով շարունակել կամ որդեգրել միգրանտների վերադարձից հետո: Հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա՝ վերադարձող միգրանտների առջև ծառայած սահմանափակումներն ու հնարավորությունները հասկանալու համար, և թե քաղաքականության ինչ տեսակներ կարելի է նախատեսել՝ նրանց օգնելու համար:

Ինչ վերաբերվում է չտեղաշարժվողներին, արտագաղթին-վերադարձին, ապա հետաքրքիր հարց է առաջանում՝ ո՞վ է մեկնում Հայաստանի Հանրապետությունում և ո՞վ է այնտեղ մնում: Արդյոք դեպի դուրս միգրացիան դրական, թե բացասական տեսանկյունից ընտրողական բնույթ ունի: Ինչպես քաջ հայտնի է, միգրացիան կարող է բացասական ազդեցություն ունենալ տեղական մարդկային կապիտալի վրա՝ հեռացնելով կոնկրետ ունակություններ ունեցող անձանց, կամ կարող է դրական ազդեցություն ունենալ՝ խթանելով ներդրումները մարդկային կապիտալի ձեռքբերման ուղղությամբ հավանական պոտենցիալ կողմից (Stark and Wang, 2002): Այս երկու ազդեցությունները կարող են գործել հակառակ ուղղություններով, և միայն երկարաժամկետ ու պարբերական ուսումնասիրությունները կարող են հիմնավորել այդ վարկածներից որևէ մեկը: Սույն հետազոտությունը մեզ հնարավորություն չի տալիս տարածքային կամ ազգային մակարդակում կորսված կամ ձեռք բերված ունակությունների, որակավորումների ու մասնագիտությունների տեսակի վերաբերյալ մանրամասն պատկեր ունենալու համար:

«Հ-ում միգրանտներն ու նրանց ընտանիքի անդամները քաջատեղյակ են փոխանցումների կարևորության մասին, և սույն հետազոտությունը ցույց է տալիս մեծ թվով տնային տնտեսությունների կախվածությունը արտերկրից եկող փոխանցումներից: Եթե փոխանցումների հավանականությունը պետք է առավելագույնի հասցնել, ապա ավելի շատ քայլեր պետք է կատարվեն հասկանալու փոխանցումների ու դրանց օգտագործման հետ կապված հարցերը, ինչպես նաև դեպի ներդրումներ (և ոչ թե միայն դեպի սպառում) փոխանցումների հոսքն ուղղելու եղանակները: Օրինակ, եթե գործարքների հետ կապված ծախսերը հնարավոր լինեն նվազեցնել, ապա փոխանցման ծառայությունների շուկան ավելի լավ կաշխատեր, և ավելի լավ ու էժան ծառայություններ կառաջարկեր տեղեկացված սպառողներին:

Հայաստանի Հանրապետության համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հետևյալի վերաբերյալ հարցերը՝ «ուղեղների արտահոսքը» (բարձր կրթական մակարդակ ունեցող անձանց արտագաղթը), շրջանառու և ժամանակավոր միգրացիային աջակցող քաղաքականությունները, ինչպես նաև վերադարձի միգրացիան խրախուսող (և վերաինտեգրմանը նպաստող) քաղաքականությունները, երկրում աղքատության, ցածր եկամտի ու աշխատանքի բաշխվածության վրա ազդեցություն ունեցող միգրացիան, գյուղից դեպի քաղաք միգրացիան, միգրացիան և ձեռներեցությունն ու ներդրումները (թե՛ վերադարձող միգրանտների համար, և թե՛ փոխանցումների օգտագործման մասով):



Հետևյալ թեմաները, որոնց ցանկը սպառիչ չէ, կարևոր են սույն հետազոտության հիման վրա հետագա հետազոտությունների համար՝

- (i) Անհրաժեշտ է նախանշել, թե որ անհատական, համատեքստային կամ նույնիսկ ինստիտուցիոնալ գործոնները կարող են միգրացիան դարձնել հաջողված կամ ձախողված:
- (ii) Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել, թե աշխատանքային շուկայի միջնորդության որ տեսակներն ավելի արդյունավետ կլինեն աշխատանքի մասով ՀՀ առաջարկն ու նպատակակետ երկրների պահանջարկը համապատասխանեցնելու համար: Դա իր մեջ կներառի առավել մանրակրկիտ ուսումնասիրություն այն մասով, թե ինչպես են միգրանտներն իրենց աշխատանքը գտնում, ինչպես նաև աշխատանքի որոնման մեթոդների ազդեցությունն իրենց գտած զբաղմունքների վրա:
- (iii) Հետազոտության մեկ այլ ուղղություն, որին պետք է անդրադառնալ, վերաբերում է միգրացիայի ու զարգացման միջև կապին: Երկիրն ինչպիսի՞ ազդեցության է ենթարկվում միգրացիայի տարբեր ձևերից, ինչպիսիք են՝ շրջանառու կամ ժամանակավոր միգրացիան: Արդյո՞ք շրջանառու միգրացիան հանգեցնում է տնտեսությունում ավելի շատ գումար ուղղելուն (կամ գումարներն ավելի արդյունավետ ներդնելուն), թե՛ մշտական միգրացիան:
- (iv) Ներքին ու միջազգային միգրացիայի միջև գործակցությունը պետք է առավել խորությամբ ուսումնասիրել: Ներքին ու արտաքին միգրանտների միջև ընտրողականության պատճառով այդ երկու երևույթների համատեքստերն ու քաղաքականության նկատառումները կարող են տարբերվել: Իսկ ինչ նմանություններ կան այդ երկու երևույթների միջև: Եվ ինչպե՞ս կարող են ներքին միգրացիայի վերաբերյալ հետազոտությունները ստացվել միջազգային միգրացիայի վերաբերյալ հետազոտությունների առաջխաղացումներից:
- (v) Հայտնի է և հաստատված սույն հետազոտությամբ, որ արտերկրում գտնվող հայերի ու ՀՀ-ում ներգաղթողների գենդերային հավասարակշռությունը հոգուտ տղամարդկանց է: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել միգրացիոն հոսքերում գենդերային այս անհավասարակշռության տնտեսական ու սոցիալական հետևանքները, քանի որ այն կարող է հանգեցնել երկրում սոցիալական համախմբվածության կորստի: Քաղաքականություն մշակողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն կին միգրանտների փորձին ու մտահոգություններին՝ ապահովելու համար, որպեսզի նրանց միգրացիան բարենպաստ ընթացք ստանա: Ուստի, մոտ ապագայում անհրաժեշտ է իրականացնել միգրացիայի վրա հիմնված գենդերային հետազոտություն:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Bilsborrow, R. E. (2007) Surveys of International Migration: Issues and Tips. Paper presented at the Sixth Coordination Meeting on International Migration United Nations, New York, 1–5. http://www.un.org/esa/population/meetings/sixthcoord2007/Bilsborrow_paper.pdf.

Borjas, George and B. Bratsberg (1996) Who leaves? The outmigration of the foreign-born”, *The Review of Economics and Statistics*, 165–176.

Carletto, C., and A. de Braw (2007) *Measuring Migration using Household Surveys* Operational vehicle, Operation Note no. 2, World Bank, Washington, D.C.

Castles S. (2000) *International Migration at the beginning of the twenty-first century: Global trends and issues*, Oxford, Oxford Blackwell Publishers.

Chambers, R.L. and C.J. Skinner (eds.) (2003). *Analysis of Survey Data*. Chichester. Wiley. 398 p.

Chobanyan, Haykanush (2012) Return Migration to Armenia: Issues of Reintegration, CRIS Brief, 2012/01, Robert Schuman Centre for Advanced Studies, European University Institute, Florence.

European Training Foundation (2013) *Migration and Skills in Armenia and Georgia: comparative report*, Dublin. (accessed 01.03.2014 [http://www.etf.europa.eu/webatt.nsf/0/B711838175EB762EC1257B4D0042FF65/\\$file/Migration&skills_Armenia&Georgia.pdf](http://www.etf.europa.eu/webatt.nsf/0/B711838175EB762EC1257B4D0042FF65/$file/Migration&skills_Armenia&Georgia.pdf)).

Hass. H., Vargas-Silva C. and Vezzoli (2010) *Global Migration Futures: A conceptual and methodological framework for research and analysis*. Oxford. International Migration Institute (IMI). University of Oxford.

ILO (2009) *Migration and Development. Armenia Country Study*, ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, Yerevan. (Available at http://www.ilo.org/public/english/region/eurpro/moscow/info/publ/migr_dev_study_en.pdf accessed 30 March 2014).

International Organization for Migration (IOM) (2005) *World Migration 2005: Costs and Benefits of International Migration*. Geneva. IOM.

Մանկե, Մարինա՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, «Միգրացիոն տվյալների հավաքագրման, մշակման և փոխանակման կատարելագործումը Հայաստանի Հանրապետությունում. Կարիքների գնահատում և առկա բացերի վերլուծություն», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, 2010 թվական

«Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ», «Միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն, գնահատման առաքելության զեկույցի» մասով ձեռնարկված քայլեր, Ք. Գալստյան, Պ. Ռոսսի-Լոնգի և Ֆ. Պրուտց, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2010 թ.)

http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=980

Պ. Ռոսսի-Լոնգի, Թ. Լինդսթրոմ և Ք. Գալստյան Միգրացիայի միջազգային կազմակերպության համար, «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույց», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, (2008թ.)

http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=807

IOM, *Migration in Armenia: A Country Profile* (2008)

http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=42_7&products_id=501

Kritz, M.M., and H. Zlotnik (1992) “Global interactions: migration systems, processes and policies”, in M.M. Kritz, L.L. Lim and H. Zlotnik (Eds), *International Migration Systems. A Global Approach*, Clarendon Press, Oxford: 1–16.

Lehtonen, R. and E.J. Pahkinen (2004). *Practical Methods for Design and Analysis of Complex Surveys*. Second edition. Chichester. Wiley.



Lohr, S.L. (1999). *Sampling: Design and Analysis*. Duxbury Press. 512 p.

Makaryan, Gagik and Galstyan, Mihran (2012) Costs and Benefits of Labour Mobility between the EU and the Eastern Partnership Partner Countries. Country report: Armenia, CASE report. (available at <http://www.case-research.eu/sites/default/files/Armenia%20country%20study%20-%20final.pdf>) accessed 25 February 2014.

McKenzie, David J., and Johan Mistien (2007) Surveying Migrant Households: A Comparison of Census-Based, Snowball, and Intercept Point Surveys. <http://siteresources.worldbank.org/INTMIGDEV/Resources/2838212-1160686302996/mckenziemistiaen.pdf> (accessed on)

Minasyan A., Poghosyan A., Gevorgyan L., Chobanyan H. 2008. *Study on Return Migration to Armenia in 2002-2008*. Yerevan, Asoghik.

http://www.osce.org/yerevan/item_11_35901.html [Ա. Մինասյան, Ա. Պողոսյան, Լ.Գևորգյան, Հ. Չոբանյան, 2002-2008 թթ. Հայաստան վերադարձած միգրանտների հետազոտություն, Երևան, Ասոցիակ]

Newland, K., D. R. Agunias, et al. (2008). "Learning by doing: Experiences of circular migration." Insight, Migration Policy Institute (MPI) (Sept. 2008). <http://www.migrationpolicy.org/pubs/Insight-IGC-Sept08.pdf>

Pfeffermann, D. (1993). "The Role of Sampling Weights When Modeling Survey Data," *International Statistical Review*, 61, pp. 317-337.

Schachter, J. (2008) Enhancing Data on Migration in West and Central Africa. The Utilization of Household Surveys for the Measurement of Migration in West and Central Africa: Past, Present, and Future, IOM; Genève. (Available at http://www.iom.int/jahia/webdav/site/myjahiasite/shared/shared/mainsite/published_docs/brochures_and_info_sheets/Migration%20Profile%20Report.pdf accessed 15 January 2014).

